7188

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՍԻՒՆԵԱՑ ԳՐԱՏԱՆ — Ա. Պ. ԵԱՉՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ԴԱՒԻԹ ԽԱՉԿՈՆՑ

Պատկերազարդ ու Քարտիսաւոր

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԻՋԻՆ ԴԱՍԸՆԹԱՑԻՆ

ԵՐԿԱՄԵԱՑ ՇՐՋԱՆ

57

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՎԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒԱԾ ՈՒ ՃՈՒԱՑԱԾ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

1910

91(07Տ)
Խ-29

91(07s)
Խ-29

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԻՋԻՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ

Ա. ՏԱՐԻ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Երկրագնդի վրայ Ընդհ. Տեսութիւն

Ա. ԵՐԿԻՐՆ ԵՒ ԻՐ ՁԵՒԸ

1. ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ.— *Եթէ գեղի մը կամ Թաղի մը վտակը, ճամբաները, բլուրները, անտառները ու մշակուած դաշտերը Թերթ մը Թղթի վրայ ներկայացնենք ու անոնց դէրքն որոշենք, կ'ուզենանք Գեղին կամ Թաղին Աշխարհացոյցը։*

Ուրեմն գեղի մը կամ Թաղի մը աշխարհացոյցն է Թերթ մը Թուղթ որուն վրայ կը ներկայացուի յարմար նշաններով գեղի մը կամ շրջակայներու մակերեւոյթը։

Այս աշխարհացոյցին միջոցաւ անծանօթ անձ մը կրնայ գտնել գեղի մը կամ Թաղի մը այլ և այլ մասերը։

Այսպէս կրնանք գծել գեղէն կամ Թաղէն աւելի մեծ երկիրներու աշխարհացոյցը, ինչպէս գծեցինք Տարրական Դասընթացքի մէջ ու պիտի գծենք Միջին Դասընթացքի մէջ Թէ Օսմանեան կայսրութեան գաղաններն, սանձագներն ու կուսակալութիւնները և Թէ միւս տէրութեանց երկիրները։

2. ԵՐԿՐԻ ՁՈՒՏ ԳԼԽԱՒՈՐ ԿՈՂՄԵՐԸ. — *ԵնԹադրենք որ երկար ատեն քալելէ ետք մեր տասմիւնէն կորսուած ըլլայ ան տեղն ուրկէ մեկնեցանք և դաշտերուն մէջ մոլորեցանք, ինչպէս պիտի գտնենք մեր ճամբան։ Եթէ առաւօտ է, կրնանք տեսնել նորածագ արեւն որ կը գտնուի ճիշտ արեւելեան կողմը։*



ԵՐԿՐԻ ՁՈՒՏ ԳԼԽԱՒՈՐ ԿՈՂՄԵՐԸ

Ուրեմն եթէ մենք դէպ ի արեւելք դառնանք այն միջոցին, Արեւելքը մեր առջեւ կ'ըլլայ։ Ձիւղ մեր ետին՝ հակառակ կողմը կը գտնուի Արեւմուտքը։ Եթէ ճիշտ դէպ ի արեւելք դարձած ըլլանք, ձ կողմերնիս կը գտնուի Հարաւը. ասիկա այն կէտն է ուր արեւը կը գտնուի ճիւղ կէսօրին=միջօրէին, և ձախ կողմերնիս ալ կ'ըլլայ Հիւսիսը։

Արեւելք, Արեւմուտք, Հիւսիս, Հարաւ կը կոչուին Գլխաւոր չորս կողմերը։

3. ԱՐԵՒԵԼՈՒՄ.— *Երբ մէկը կը ճանչնայ գլխաւոր կողմերը, Աչխարհացոյցի մը միջոցաւ կրնայ դիւրաւ գտնել իր ճամբան։ Հիւսիսը միշտ աչխարհացոյցի մը վերի կողմն կ'ըլլայ։ Մէյ մը որ հիւսիսը գտնուի, ա՛լ դիւրին է որոշել թէ տեղի մը ճամբաները, գետն ևայլն ո՛ր ուղղութեամբ կը գտնուին։*

Արեւելքի կողմը փնտռել գտնել և այնուհետև միւս կողմերն ալ որոշելը կը կոչուի Արեւելում։

4. ՄԻՋԱՆԿԵԱԼ ԿՈՂՄԵՐ. — *Զոյս գլխաւոր կողմերու միջև կան երկրորդական կէտեր որոնք կը կոչուին չորս* Կողմնական=Միջանկեալ կողմեր. *առաջինը են Հիւսիսային արեւելք=Հս. Ե. Հիւսիսին ու Արեւելքին միջտեղ, Հիւսիսային արեւմուտք=Հս. Մ. Հիւսիսին ու Արեւմուտքին միջև, Հարաւային արեւելք=Հր. Ե. Հարաւին ու Արեւելքին միջև, Հարաւային արեւմուտք=Հր. Մ. Հարաւին ու Արեւմուտքին միջև։*

5. ԿՈՂՄՆԱՑՈՅՑ.—*Երբ արեւը չի տեսնուիր, երկրիս կողմերն որոշելու համար՝ կը գործածուի Կողմնացոյցն որ պողպատէ մագնիսացած ասեղ մըն է և յատակի մը վրայ դրուած է. ասիկա ինքնիրեն կը չարժի։ Ասեղին ծայրերէն մէկը կապոյտ գոյն մը ունի և միշտ դէպ ի հիւսիս կը նայի։*

6. ՀՈՐԻԶՈՆ.— *Երբոր պայծառ առեն դաշտի մը մէջ գտնուինք, մեր առջև կը տեսնենք կապտագոյն գիծ մը ուր կարծես Երկինք Երկրի կը կպչի։ Այս գիծը՝ Ծիրը՝ ուրկէ անդին բան մը չի տեսնուիր՝ Շրջանակ մը կը ձեւացնէ մեր բոլորտիքը։ Այդ շրջանակաձև գիծն որ առեղծ կը դնէ մեր աչքերուն՝ կը կոչուի Հորիզոն։*

Որչափ բարձրանանք ծառի մը վրայ, այնչափ մեր տեսողութեան Ծիրը պիտի ընդարձակուի և դարձեալ մենք միշտ շրջապատուած պիտի ըլլանք շրջանակէ մը ուրկէ անդին բան մը չենք տեսներ։

7. ԵՐԿԻՐՔ ԳՆԴԱԿԻ ՆՄԱՆ ԿԼՈՐ Է.—*Երկրի վրայ ուր որ ալ գտնուինք, ծովու վրայ, դաչտի մէջ, Հորիզոնը միշտ Շրջանակաձեւ կ'երեւայ։ Այս շրջանակաձև գիծէն կը հետևի որ Երկիրը կլոր է գնդակի նման։*

Ենթադրենք որ ծովեզերքը կեցած ենք, և կը տեսնենք նաւ մը որ ծովեզերքէն կը հեռանայ։ Մեզի այնպէս կ'երեւայ որ ջուրերուն մէջ կը կորսուի նաւը։ Հետզհետէ նաւուն կողերը մեր տեսողութենէն կը հեռանան, յետոյ առագաստներն և վերջապէս կայմերը։ Եթէ այս միջոցին ծովեզերեայ բարձր տեղ մը կայնինք, դարձեալ պիտի տեսնենք ամբողջ նաւն որ խորոյն նորէն ջուրերու մէջ պիտի կորսուի այն կերպիւ։ Եթէ երկիրը կլոր չըլլար, յաջորդաբար մեր տեսողութենէն չպիտի հեռանային նաւուն զանազան մասերը, այլ միեւնոյն ատեն ամբողջ նաւը պիտի չտեսնէինք։

Երկրիս բարձր լեռները չեն կրնար արգելք ըլլալ Երկրին կլորութեան։ Որովհետև բարձր լեռներն Երկրիս ծաւալին հետ բաղդատմամբ շատ աննշան են, ինչպէս որ Նարնջին խորդուբորդութիւնն ալ արգելք մը չէ անոր կլորութեան։ Նարնջին խորդուբորդութիւնն այնպէս կը համեմատի իր ծաւալին հետ, ինչպէս Երկրիս լեռները կը համեմատին իր ծաւալին հետ։

Ուրեմն Երկիրս կլոր է, գունդ մըն է որով կրնանք կոչել զայն երկրագունդ։



ՀՍՍՌ-ԱԻՄ ՍՍՀ
2004
3488-13

8. ԵՐԿՐԻՆ ԾԱՒԱԼԸ. — *Շատ մեծ է Երկրին Ծաւալը. Տրամագիծն է 13,000 քիլոմեթր, Շրջապատն ալ 40,000 քիլոմեթր։*

Եթէ մէկն ուժգով դիշեր ցորեկ մէկ ժամուան մէջ վեց քիլոմեթր տեղ քալէ, — որով մէկ օրուան մէջ (24 ժամ) 134 քիլոմեթր — 9 ամսէն կրնայ կատարել Աչխարհի չրջանը։

9. ՉԵՆԻԹ. —*Երկնքի այն կէտն որ մեր կեցած տեղին վերև, ուղղահայեաց կը գտնուի՝ կը կոչուի* Չենիթ։

10. ՀԱԿՈՏՆԵԱՅ.— *Այն կէտն որ մեր կեցած տեղին հանդիպակաց կը գտնուի երկրագունդին միւս կողմը՝ կը կոչուի* Հակոտնեայ։

Բ. ԵՐԿՐԱԳՆԴԻՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

1. ԵՐԿՐԱԳՆԴԻՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ.— *Երկիրն ունի երկու չարժում. Օրական ու Տարեկան։*

2. ԵՐԿՐԻ ԹԱՒԱԼՈՒՄԸ.— *Արեւն առաւօտն Արեւելքէն կը ծագի և իրիկունը հակառակ կողմը՝ Արեւմուտքը մարը կը մանէ, ամբողջ ցորեկը Երկինքի երեսը փայլակէն եռքը։ Կարծես Արեւն Երկրիս բոլորտիքը կը դառնայ, մինչ իրականապէս Երկիրն է որ հոլի մը պէս իճի իրեն վրայ կը թաւալի։ Այս թաւալումը կը կոչուի Օրական շարժում որ կը տեւէ մէկ օր, այսինքն 24 ժամ։*

Աւոր ապացոյցը սա է. երբոր երկաթուղով կամ չոգենաւով ճամբորդենք, մեզի այնպէս կ'երեւայ որ մեր առջև պարզուած տեսարանները հակառակ կողմը կը վազեն, մինչդեռ մենք ենք որ կ'երթանք ու առնք անշարժ են։ Եւ սակայն Արեւն ալ անշարժ չէ, ինքն ալ ինքնիրեն վրայ թաւալելով հանդերձ՝ իրմէ մեծ Աւտղի մը բոլորտիքը կը դառնայ։

Թէև մեզի այնպէս կ'երեւայ որ Արեւն Արեւելքէն դէպ ի Արեւմուտք կը դառնայ, մինչ Երկիրս է որ Արեւմուտքէն դէպ ի Արեւելք կը դառնայ՝ երկաթուղիով ճամբորդած առեն տեսածնուս պէս։

3. ՅՈՐԵԿ ՈՒ ԳԻՇԵՐ.—*Գտուչուէ=ձգողութիւն օդապարիկ մը կախենք մոմի մը առջև։ Օդապարիկը կը ներկայացնէ Երկրագունդն և Մոմն ալ՝ Արեւը։ Մենք պիտի տեսնենք որ Օդապարիկին միայն մէկ մասը պիտի լուսաւորուի Մոմէն։ Այնպէս ալ Երկրիս միայն Արեւուն դիմացի կողմը կը լուսաւորուի և կ'ըլլայ Յորեկ, միւս կողմն ալ չի լուսաւորուիր, կ'ըլլայ Գիշեր։*

ԵՐԿԻՐՍ ԱՆՋՐՊԵՏԻՆ ՄԷՋ

Եթէ Օդապարիկը գանգաղօրէն ինք իրեն վրայ դարձնենք ձախէն աջ կողմը, իր Մակերեսին զանազան մասերը յաջորդաբար Մոմին դիմացը պիտի գան ու պիտի լուսաւորուին։ Այսպէս ալ Երկիրը գառնալով՝ յաջորդաբար Արեւուն դիմաց կուգան իր զանազան մասերը. Յորեկ է, երբ արեւու դիմացն են, Գիշեր՝ երբ հակառակ կողմն են։

4. ԵՐԿՐԻՆ ԱՌԱՆՑԻՔՆ ՈՒ ԲԵՒԵՌԸ.— *Եթէ Օդապարիկին տեղ Նարինջ մը առնենք և ձեռագործի ասեղ մը անցնենք մէկ կողմէն միւսը և անոր բոլորտիքը դարձնենք, այդ ասեղը կը ներկայացնէ Երկրիս առանցքը։ Ինչպէս որ Նարինջն Ասեղին բոլորտիքը կը դառնայ, այնպէս ալ Երկիրն Արեւմուտքէն դէպ ի Արեւելք կը դառնայ իր Առանցքին չուրջը։*

Երկրիս առանցքը ճիւրէ չէ ասեղին պէս, այլ երեւակայական ուղիղ գիծ մըն է որ Երկրիս կեդրոնէն կ'անցնի։

Ինչպէս որ Ձեռագործի Ասեղը Նարինջին երկու ծայրէն անցած է, այնպէս ալ Երկրիս Առանցքն Երկրագունդին երկու ծայրէն կ'անցնի։ Այդ երկու ծայրերը կը կոչուին Բեւեռ. մէկն է Հիւսիսային բեւեռ, միւսը՝ Հարաւային բեւեռ։ Հիւսիսային բեւեռին տեղ Հս. կը նշանակուի, Հարաւային բեւեռին տեղն ալ՝ Հր.։

5. ՏԱՐԵԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ.—*Ինչպէս որ Չոլ մը ինքն իրեն վրայ թաւալելով՝ հողին վրայ ճամբայ մը կը գծէ, այնպէս ալ Երկիրս ինքն իրեն վրայ*

թաւալելով՝ Արեւուն քովտիիը կոր գծի մը կը հետեւի 365 *օրուան և* 6 *ժամուան մէջ, այսինքն մեկ տարի : Ասիկա կը կոչուի Տարեկան շարժում:*

6. ԽԱԻԱՐՄԱՆ ԾԻՐ. — *Այն կոր գիծն որուն կը հետեւի Երկիրն Արեւուն բոլորտիքը դառնալու առեն՝ կը կոչուի Խաւարման ծիր :*

7. ԵՂԱՆԱԿՆԵՐ.– *Երկիրս Արեւուն բոլորտիքը դառնալուն հետեւանքը սա՛ է որ տարին Ձորս եղանակի կը բաժնուի, իւրաքանչիւրը 3 ամիս տեւողութեամբ: Ձորս եղանակներն ասոնք են. Գարուն, Ամառ, Աշուն, Ձմեռ որոնք իրարու կը յաջորդեն: Գարունը կ'սկսի Մարտ 9ին, Ամառը Յունիս 9ին, Աշունը Սեպտեմբեր 10ին ու Ձմեռը Դեկտեմբեր 9ին :*

Յունիս 9ին՝ Ամառնային արեւադարձին Հիւսիսային կիսագունդը կը հակի դէպ ի Արեւը, Հետեւաբար անկէ կ'ընդունի շատ լոյս ու ջերմութիւն. այդ միջոցին Յորեկն աւելի երկար կ'ըլլայ, Գիշերը՝ կարճ:

Դեկտեմբեր 9ին՝ Ձմեռնային արեւադարձին ասոր հակառակ տեղի կ'ունենայ. Հարաւային կիսագունդն է որ Արեւէն շատ լոյս ու ջերմութիւն կ'առանայ: Այս միջոցին հիւսիսային կողմը կը տիրէ սաստիկ ցուրտ. Յորեկը կարճ, Գիշերն ալ երկար կ'ըլլայ:

Միջանկեալ երկու դիրքերուն մէջ, այսինքն Մարտ 9ին Գարնան գիշերահաւասարին ու Սեպտեմբեր 10ին՝ Աշնան գիշերահաւասարին՝ երկու կիսագունդներն ալ հաւասար լոյս ու ջերմութիւն կ'առանան:

Ուրիմն Արեւակայքերն ու Գիշերահաւասարները նաև տարին կը բաժնեն չորս եղանակի:

Գ. ՏԻԵԶԵՐՔ

1. ՏԻԵԶԵՐՔ.—*Երկիրն որ մեզի չատ ընդարձակ կ'երեւայ՝ փոքրիկ կէտ մըն է անհուն տիեզերքին մէջ: Տիեզերք կը կոչուի աստղերու, մոլորակներու, արբանեակներու, գիսաւորներու ամբողջութիւնը :*

2. ԱՍՏՂԵՐ.—*Գիշերն Երկնքի երեսը կը տեսնուին փայլուն կէտեր որոնք կը կոչուին աստղեր : Ասոնք ալ Արեւուն չափ լուսաւոր են, բայց նուազ փայլուն ու փոքր կ'երեւան՝ մեզմէ չատ հեռու ըլլալնուն համար :*

Աստղերն անհուն գունդեր են և իրենք իրենց վրայ կը թաւալին անջրպետին մէջ: Աստղերէն ոմանք կարծես իրարու չատ մօտ են և զանազան կերպարանքով կ'երեւան: Աստղերու այս խումբը կը կոչուի Համաստեղութիւն :

3. ԱՐԵԻ. — *Աստղ մըն է Արեւն որ Երկրէն մեկ միլիոն երեք հարիւր հազար պատիկ տարածութիւն ունի :*

4. ԲԵՒԵՌԱՅԻՆ ԱՍՏՂ. — *Երբ ճիշդ հիւսիսային կէտը նայինք, կը տեսնենք եօթ աստղ որոնց չորսը կարծես կառքի մը անիւին կը նմանին և միւս երեքը ձիերուն՝ որ կառքին լծուած են: Այս համաստեղութիւնը կը կոչուի Մեծ Սայլ կամ Մեծ Արջ :*

Կառքին հետեւի երկու անիւը միացնող կէտէն կիմէ գիծ մը բարձրացնենք, կը գտնուի ուրիշ փայլուն աստղ մը որ կարծես միշտ անշարժ ու գամուած է Երկրիս երեսը: Այս աստղը կը կոչուի Բեւեռային աստղ որով կ'որոշուի Երկրիս ճիշդ Հիւսիսային կէտը :

Մէյ մը որ Բեւեռային Աստղը ճանչնանք, դիշեր առեն, եթէ պայծառ է երկինքը, առանց կողմնացոյցի կրնանք որոշել Երկրիս կողմերը :

5. ՄՈԼՈՐԱԿ. — *Այն երկնային մարմիններն որ Արեւուն չուրջը կը դառնան և իրենց լոյսն անկէ կ'ընդունին՝ Մոլորակ կը կոչուին :*



ՄՈԼՈՐԱԿՆԵՐՈՒ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ ԲԱՂԴԱՏՈՒԱՆ

Երկիրը մոլորակ մըն է և Արեւէն 150 *միլիոն քիլոմեթր հեռու :*

Արեւուն չուրջը կը դառնան սա՛ գլխաւոր ոմր մոլորակները — Փայլածու, Արուսեակ, Երկիր : Հրատ, Լուսնթագ, Երեւակ, Ուրանոս, Նեպտոն :

6. ԱՐԲԱՆԵԱԿ. — *Այն երկնային մարմիններն որ մոլորակի մը բոլորտիքը կը դառնան՝ կը կոչուին Արբանեակ : Երկիրն ունի արբանեակ մը որ է Լուսինը :*

7. ԼՈՒՍԻՆ. — *Հետպէս որ Երկիրն Արեւուն բոլորտիքը կը դառնայ մէկ տարուան մէջ, այնպէս ալ Լուսինն Երկրին բոլորտիքը կը դառնայ մէկ ամսուան մէջ : Լուսինը մեզի ամենէն մօտ տեսնուած երկնային մարմինն է և Երկրէն* 49 *անգամ փոքր է :*

Լուսինն ինք իրմէ լոյս չունի, այլ իր լոյսը կ'առանայ Արեւէն : Եթէ գիշեր առեն մեզ կը լուսաւորէ, պատճառն այն է որ Արեւէն ընդունած լոյսը կը ցոլացնէ ու մեզի կը ղրկէ :

8. ԳԻՍԱՒՈՐ. — *Այն բոլոր մարմիններն որ չատ չուսաւոր պոչով կ'երեւան՝ կը կոչուին Գիսաւոր :*



ԱՍՏՂԱՁԱՐԴ ԵՐԿՆՔԻՆ ՄԷՋ ԳԻՍԱՒՈՐ

9. ԱՐԵՒԱՅԻՆ ԴՐՈՒԹԻՒՆ. — *Մոլորակներն ու Արբանեակներն Արեւուն հետ կը կազմեն Արեւային դրուքիւնը :*



ԱՐԵՒԱՅԻՆ ԴՐՈՒԹԻՒՆ

Դ. ԵՐԿՐԱԳՆԴԻՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԳԻՏԵՐՔ

1. ԵՐԿՐԱԳՈՒՆԴՆ ԵՒ ԻՐ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԳԻՏԵՐՔ. — *Երկիրս ճշդիւ ներկայացնելու միակ միջոցն է գունդ մը չինել և անոր վրայ գծել Երկրիս գտնազան մասերն իրենց համեմատական քանն ու ծածկութեամբ : Այսպէս կ'ունենանք պզտիկցած երկիր մը որ կը կոչուի Երկրագունդ :*

2. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԳԻՏԵՐ.—*Երկրագունդին վրայ տեղ տեղ մը գիրքը որոշելու համար՝ երեւակայած են կեղծ գիծեր որ Երկրի մակերեւոյթը կը չրջապատեն ցանցի մը պէս : Ասոնք կը կոչուին Աշխարհագրական գիծեր : Գլխաւորներն են Հասարակած, Զուգահեռականներ, Արեւադարձներ ու Բեւեռային չրջանակներ:*

3. ՀԱՍԱՐԱԿԱԾ. — *Եթէ Երկրագունդին բեւեռներէն հաւասար հեռաւորութեամբ գիծ մը քաշենք, կ'ունենանք չրջանակ մը որ Երկրագունդն երկու հաւասար մասի կամ կիսագունդի կը բաժնէ : Այս չրջանակը կը կոչուի Հասարակած : Հիւսիսային կիսագունդ կը կոչուի Հասարակածէ հիւսիսային կէս մասը և Հարաւային կիսագունդ՝ Հասարակածի միւս՝ հարաւային կէս մասը :*

4. ԶՈՒԳԱՀԵՌԱԿԱՆՆԵՐ.—*Եթէ Երկրագունդին վրայ Հասարակածին ուղղութեամբ չրջանակներ գծենք, կը կոչուին Զուգահեռական : Ասոնք կը պզտիկնան, կը նեղնան, որչափ հեռանան Հասարակածէն :*

5. ՄԻՋՕՐԷԱԿԱՆ.—*Այն չրջանակներն որ բեւեռէ բեւեռ կը քաշուին Երկրին սեւէ կէտին վրայ, կը կոչուին Միջօրէական: Այն միջօրէականն ուրկէ կը հաշուին մէուտները՝ կը կոչուի Գլխաւոր միջօրէական :*

6. ԱՍՏԻՃԱՆՆԵՐ ՈՒ ԶՈՒԳԱՀԵՌԱԿԱՆՆԵՐ. — *Միջօրէականները* 360 *հաւասար մասի կը բաժնուին և կը կոչուին Աստիճան :*

7. ԵՐԿԱՅՆՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆ.— *Միջօրէականներու իրարմէ ունեցած հեռաւորութիւնը կը կոչուի Երկայնութեան աստիճան : Երկայնութեան աստիճաններն Հիւսիսէն Հարաւ կը ձգուին ու Հասարակածը* 360 *հաւասար մասի կը բաժնեն : Ասոնցմէ մէկը կը կոչուի Գլխաւոր միջօրէական և 0°*

կը նշանակուի։ Ընդունուած Գլխաւոր միջօրէականը Բարիզինն է։ Գլխաւոր միջօրէականէն դէպ ի Արեւելք գտնուածները կը կոչուին Արեւելեան

ԵՐԿԱՅՆՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ

երկայնութեան աստիճաններ, և դէպ ի արեւմուտք եղածներն ալ՝ Արեւմտեան երկայնութեան աստիճաններ։

8. ԼԱՅՆՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆ.—Ցուգահեռականներու իրարմէ ունեցած հեռաւորութիւնը կը կոչուի Լայնութեան աստիճան։ Լայնութեան աստիճաններն Արեւելքէն Արեւմուտք կը ձգուին Հասարակածին հետաւոր հեռաւորութեամբ։ Աշխարհագրին վրայ Հասարակածը կը նշանակուի



ԼԱՅՆՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ

0°, և երկու կիսագունդերու վրայ դէպ ի հիւսիս և դէպ ի հարաւ ձգուած ցուգահեռականներն ալ 10, 20, 40, 60 և այլն մինչև 90։ Դէպ ի հիւսիս ձգուածները կը կոչուին Հիւսիսային լայնութեան աստիճաններ, և դէպ ի հարաւ ձգուածներն ալ՝ Հարաւային լայնութեան աստիճաններ։

9. ԱՐԵՒԱԴԱՐՁԵՐ. — Հասարակածէն $23^1/_2$ աստիճան երկու զուգահեռականները կը կոչուին Արեւադարձ։ Մէկը Հասարակածի հիւսիսային կողմն է և կը կոչուի Խեցգետնի Արեւադարձ, միւսն ալ հարաւային կողմը՝ Այծեղջեր Արեւադարձ։

10. ԲԵՒԵՌԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ. — Հասարակածէն $66^1/_2$ աստիճան զուգահեռականները կը կոչուին Բեւեռային շրջանակներ։ Մէկը Հիւսիսային բեւեռի կողմը՝ Արջային շրջանակ, միւսը՝ Հարաւային բեւեռի կողմերը՝ Հակարջային շրջանակ։

11. ԵՐԿՐԱԳՆԴԻՍ ՀԻՆԳ ԳՕՏԻՆԵՐԸ. — Աշխարհի վրայ ամէն կողմ բաբեխառնութիւնը միևնոյն աստիճանը չունի։ Հասարակածին չրջակայ երկիրներուն մէջ միշտ Արեւուն ճառագայթներն ուղղահայեաց են, ատոր համար, մինչ բեւեռներուն մօտերը միշտ ճառագայթները խոտորնակի, նոյն իսկ ամառը՝ ցուրտ։ Միայն ատոնց միջանկեալ տեղերը բաբեխառն են։ Ուրեմն Ջերմութեան աստիճանը կը նուազի երկրի վրայ, որչափ Հասարակածէն դէպ ի Բեւեռային երկիրները հեռանանք։ Այսպէս Արեւադարձներն ու Բեւեռային շրջանակներն երկիրը կը բաժնեն Հինգ Գօտիի։



ՀԻՆԳ ԳՕՏԻՆԵՐ

Այրեցեալ գօտի կը կոչուի այն չատ ատաք երկրամասին որ Հասարակածին երկու կողմերը կը գտնուի։ Այս երկրամասին սահմանն է հիւսիսէն Խեցգետնի Արեւադարձ ու հարաւէն Այծեղջեր Արեւադարձ։ Այրեցեալ գօտին ունի երկու եղանակ. Անձրեւային ու Երաշտ։

Սառուցեալ գօտի կը կոչուին այն չատ ցուրտ երկրամասերն որոնք մօտ են երկու բեւեռներուն։ Երկու Սառուցեալ գօտի կայ. Հիւսիսային սառուցեալ գօտի և Հարաւային Սառուցեալ գօտի։ Հիւսիսային Սառուցեալ գօտիին սահմանն է հիւսիսէն Արջային բեւեռ, հարաւէն՝ Արջային շրջանակ։ Հարաւային Սառուցեալ գօտիի սահմանն ալ է հիւսիսէն Հակարջային բեւեռ և հարաւէն՝ Հակարջային շրջանակ։

Այն երկու գօտիներն ուր սաստիկ տաք չէ Այրեցեալ գօտւոյն պէս, և սաստիկ ցուրտ չէ Սառուցեալ գօտիներուն պէս, կը կոչուի Բարեխառն գօտի։ Մէկն է Հիւսիսային բարեխառն գօտի, միւսը՝ Հարաւային բարեխառն գօտի։

Ե. ԵՐԿՐԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԻՐ ՄԵԾ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

1. ԵՐԿՐԻ ՏԱՐՐԵՐԸ. — Երկիրը կը բաղկանայ երեք տարրէ — հողէ, ջրէ ու օդէ։

2. ԵՐԿՐԻ ԿԵՂԵՒԸ. — Երկրի ներսը հրեղէն վիճակի մէջ է. մակերեսը կազմուած է հողէ ու ժայռոտ զանգուածէ մը որ կը կոչուի Երկրի կեղեւ։ Այս կեղեւը զանազան անսահման ժամանակներու մէջ գոյացած է։

3. ՄԹՆՈԼՈՐՏ. — Երկիրը պատած է օդային խառնուրդ որ Մթնոլորտ կը կոչուի։ Որչափ բարձրանանք, այնչափ կը նօսրանայ օդին խտութիւնը։



ՀԱՄԱՏԱՐԱԾ

4. ՀԱՄԱՏԱՐԱԾ. — *Երկրագունդին տեղ չատ անգամ աշխարհացոյց տախտակներ կը գործածուին։ Այն Աշխարհացոյցն որ ամբողջ երկիրս կը ներկայացնէ՝ կը կոչուի Համատարած։*

5. ՅԱՄԱՌ ԵՐԿԻՐՆԵՐ ՈՒ ԾՈՎԵՐ. — *Երկրագունդի մակերեսը կը բաղկանայ Յամառ երկիր կոչուած հատուածէն մասերէ և Ծով անուանուած մեծատարած աղի ջուրէ։*

Ինչպէս կը տեսնուի Համատարածին վրայ, ծովերն երեք պատիկ տեղ բռնած են քան ցամաք երկիրն որ Հարաւային կիսագունդէն աւելի Հիւսիսային կիսագունդին վրայ տարածուած է։

6. ԱՇԽԱՐՀԻ ՀԻՆԳ ՄԱՍԵՐԸ. — *Ծովը չորս կտորէն չրջապատած է Աշխարհը և զայն երեք մեծ զանգուածի բաժնած է որ ցամաք երկիր կը կոչուին։*

Սոնք են.



ԱՇԽԱՐՀԻ ՀԻՆԳ ՄԱՍԵՐԸ ԲԱԶԴԱՏՈՒԱԾ

Ա. Հին Ցամաք *որ երեք մասի կը բաժնուի — Եւրոպա, Ասիա, Ափրիկէ։*

Բ. Նոր Ցամաք=Ամերիկա *որ երեք մասի կը բաժնուի — Հիւսիսային Ամերիկա, Հարաւային Ամերիկա, Կեդրոնական Ամերիկա։*

Գ. Աւստրալեան Ցամաքն ալ իր մօտակայ կղզիներով կը կազմէ Ովկիանիան։

Եւրոպա, Ասիա, Ափրիկէ, Ամերիկա ու Ովկիանիա կը կոչուին Աշխարհի հինգ մասերը։

7. ՈՎԿԻԱՆՈՍՆԵՐԸ. — *Ծովերն ալ հինգ մասի կը բաժնուին Ովկիանոս անուամբ։*

Ա. Հիւսիսային=Արջային Սառուցեալ Ովկիանոս՝ *Հիւսիսային բեւեռին չուրջը։*

Բ. Հարաւային=Հակարջային Սառուցեալ Ովկիանոս՝ *Հարաւային բեւեռին չուրջը։*

Գ. Ատլանտեան Ովկիանոս՝ *Հին Ցամաքին ու Նոր Ցամաքին միջև։*

Դ. Խաղաղական Ովկիանոս՝ *ամենէն ընդարձակը՝ Ասիոյ, Ովկիանիոյ ու Ամերիկայի միջև։*

Ե. Հնդկաց Ովկիանոս՝*Ասիոյ հարաւային կողմը։*

Զ. ԵՐԿՐԱԳՆԴԻ ԱԶԳԱԳՐՈՒԹԻՒՆԸ

1. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՅԵՂԵՐ. — *Մարդկէ երեք դասակարգ ցեղերու կը բաժնուին* — Սպիտակ ցեղ, Դեղին ցեղ, Խաժին ցեղ։ *Մին երկու ցեղերը՝* Մալեզեան *ու Ամերիկայի բնեղինեն առնոց խառնուրդ են։*

ԿՈՎԿԱՍԻՈՑ ԼԵԶԻՒ (ՍՊԻՏԱԿ)

2. ԿՐՕՆԴՆԵՐ. — *Ամէն մարդ կը հաւատայ մեծ բաժանում ունին։* Միասուածեան *ու* Բազմասուածեան։

ՉԻՆԱՑԻ (ՄՈՆԿՈԼԵԱՆ)

Աստուծոյ, բայց զայն նոյն կերպով չի պաշտեր։ Սակէ՝ կրօնքներու բաժանումը։ Կրօնքներն երկու

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԲՆԻԿ

ՍՈՒՏԱՆԻՑԻ ՆԵԿՐ (ԽԱՓՇԻԿ)

3. ՄԻԱՍՏՈՒԱԾԵԱՆՔ. — *Միասուածեան են այն կրօնքներն որ մէկ Աստուծոյ կը հաւատան, ինչպէս Քրիստոնէութիւնը, Իսլամութիւնն ու Հրէութիւնը։*

ԱՒՍՏՐԱԼԻԱՑԻ

4. ԲԱԶՄԱՍՏՈՒԱԾԵԱՆՔ. — *Բազմասուածեան են այն կրօնքներն որ կը հաւատան թէ չատ*

աստուածներ գոյութիւն ունէին: Բազմաստուածեան են Պրահմաները, Պուտտայականներն ու Փեղիշապաշտները:

ԲԱԼԵՆԵԶԻԱՑԻ (ՄԱԼԵԶԻԱ)

5. ՏԷՐՈՒԹԻՒՆ. — *Մարդ միշտ ընկերասէր ապրած է: Մարդկային ընկերութեան առաջին սիպառն է Ընտանիքը: Շատ մը համաներուն ընտանիքներ կազմած են ցեղ մը: Բազմաթիւ ցեղեր ծագումով, կրօնքով, լեզուով, բարքով ու պատմական անցեալով իրարու կապուած՝ կը կազմեն Ազգ մը կամ Ժողովուրդ մը: Վերջապէս ժողովուրդն երբ կը հպատակի նոյն օրէնքին ու ու նոյն իշխանութեան՝ կը կոչուի* Տէրութիւն:

6. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ. — *Տէրութեան գործադիր իշխանութիւնը կը կոչուի* Կառավարութիւն: *Կառավարութիւնն երկու ձեւ ունի. Սահմանադրական ու Հաստատակեցական: Սահմանադրական միապետութիւն է այն կառավարութիւնն ուր նոյն ընտանիքի սերունդը Վերադասական իշխանութիւնը կը ժառանգէ յաջորդաբար: Հաստատակեցական միապետութիւն է այն կառավարութիւնն ուր ժողովուրդը Վերադասական իշխանութիւնը կը վարէ իր Ներկայացուցիչներու ձեռքով:*

ԱՄՓՈՓՈՒՄ

Աշխարհագոյն է թերթ մը թուղթ... — Արեւելքն է... — Արեւմուտքը... — Հիւսիսը... — Հարաւը... — Աշխարհագոյնին վրայ Հիւսիսը կը նշանակուի... — Արեւելքը...— Հարաւը... — Արեւմուտքը... — Երկրի միջանկեալ կողմերն են... — Կողմնացոյցն է... — Կողմնացոյցով կ'որոշուին... — Հորիզոնն է... — Երկրիս ձեւն է... նման ու բարձր լեռները... ինչպէս որ նարնջի մը... — Երկրին տրամագիծն է... — Շրջապատը... — Չենիթն է... — Հակոտնեայ է... — Երկիրն ունի... շարժում, մէկը... միւսը... — Երկիրը կը թաւալի... — Օրական շարժում կը կոչուի... Օրական շարժման հետեւանք են... — Ցորեկ է... — Գիշեր է... — Առանցք կը կոչուի... — Բեւեռ կը կոչուին... — Հիւսիսային բեւեռն է... —Հարաւայինը... — Երկիրն Արեւուն բոլորտիքը... կը հետեւի... օրուան... ժամուան մէջ. — Թաւարման գիծ կը կոչուի... — Զորս եղանակները հետեւանք են... — Զորս եղանակներն են... եւ կ'սկսին...— Տիեզերք կը կոչուի... — Երկիրը Տիեզերքին մէջ... — Արեւը... — Աստղ կը կոչուին... — Համաստեղութիւն կը կոչուի... — Բեւեռային աստղն է... — Հիւսիսային կիսագունդը Յունիս 9 ին... — Հարաւային կիսագունդը Դեկտ. 9 ին... — Դիշերահաւասարներուն... — Մոլորակ կը կոչուի... — Երկիրը... — Արեւուն շուրջը կը դառնան... — Արբանեակ կը կոչուի... — Լուսինը... երկրին բոլորտիքը կը դառնայ... եւ երկրէն... փոքր է. — Լուսինը կը լուսաւորէ մեզ, որովհետեւ... — Աշխարհագրական գիծերն են... — Գլխաւորներն են .. — Արեւադարձ կը կոչուին... — Խեցգետնի Արեւադարձը կը գտնուի... — Այծեղջեր Արեւադարձը... — Բեւեռային շրջանակ կը կոչուի... — Արջային շրջանակը կը գտնուի... — Հակարջային շրջանակը... — Հասարակածը... — Հիւսիսային կիսագունդ կը կոչուի... — Հարաւային կիսագունդ... — Զուգահեռական կը կոչուին... — Միջօրէական... — Աստիճան կը կոչուին... — Երկայնութեան աստիճան կը կոչուի... — Երկայնութեան աստիճանները կը ծգուին... — Գլխաւոր միջօրէական կը կոչուի եւ կը նշանակուի... — Արեւելեան երկայնութեան աստիճաններն են... — Արեւմտեան երկայնութեան աստիճաններն են... — Լայնութեան աստիճան կը կոչուին... եւ կը ծգուին... — Հիւսիսային լայնութեան աստիճաններն են... — Հարաւային լայնութեան աստիճաններն են... — Երկրին վրայ... բարեխառնութիւնը... — Հասարակածին շրջակայ երկիրներուն մէջ... բեւեռներու մօտերը. — Ուրեմն... — Միայն... — ... երկիրը կը բաժնեն հինգ գօտիի. — Այրեցեալ գօտի կը կոչուի... — Սահմանն է... — Սառուցեալ գօտի... — Սահմանն է... — Բարեխառն գօտի... — Երկու Սառուցեալ գօտի կայ... մէկը...միւսը...— Երկու Բարեխառն գօտի կայ... մէկը... միւսը... — Երկիրը կը բաղկանայ... — Երկրի կեդրո կը կոչուի... եւ գոյացած է... — Մթնոլորտ կը կոչուի... — Համատարած կը կոչուի ... — Երկրին մակերեսը կը բաղկանայ... — Ծովերը... եւ տարածուած են... — Ցամաքը... եւ տարածուած է... — Ցամաք կը կոչուի... — Հին ցամաքը կը պարունակէ... — Նոր ցամաքը... — Աւստրալեան ցամաքը... — Ովկիանոս կը կոչուին... — Հիւսիսային Սառուցեալ ովկիանոսը կը գտնուի... — Հարաւային Սառուցեալ ովկիանոսը... —Ատլանտեան ովկիանոսը... — Խաղաղական ովկիանոսը... — Հնդկաց ովկիանոսը... — Մարդիկ կը բաժնուին... ցեղե-

դասագրքով

ԲՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

րու... — Կրօնքները կը բաժնուին... — Միաստուածեան են... — Բազմաստուածեան են... — Ընտանիք կը կոչուի ... — Ցեղ... — Ազգ... — Տէրութիւն... — Կառավարութիւն... — Սահմանադրական կը կոչուի... — Հասարակապետական...։

ՎԵՐԱՏԵՍՈՒԹԵԱՆ ԽՏԱՑԵԱԼ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Ի՞նչ է թաղի մը կամ գիւղի մը Աշխարհացոյցը։

Ի՞նչ բանի օգտակար է Աշխարհացոյցը։ Աշխարհացոյցով ինչե՞ր կրնանք գծել։

Ի՞նչպէս կրնանք որոշել երկրիս կողմերը։ Ո՞րն է Արեւելքը, Հարաւը, Արեւմուտքը, Հիւսիսը։ Ի՞նչ է Արեւելումը։ Որո՞նք են կողմնական=միջանկեալ կողմերը։ Անոնք ի՞նչպէս կը նշանակուին Աշխարհացոյցին վրայ։ Զեր բնակած տեղին հիւսիսային կողմն ո՞ր քաղաքը կայ։ Հիւսիսային արեւե՞լքը. Արեւելքը՞. Հարաւային արեւելեա՞ն. Հարաւա՞յը. Հարաւային արեւմո՞տքը. Արեւմո՞տքը. Հիւսիսային արեւմո՞տքը։ Ի՞նչ է կողմնացոյցը։

Ի՞նչ է Հորիզոնը։ Ի՞նչ ձեւ ունի երկիրը։ Ի՞նչ օրինակներ կան։ Երկիրս ու աստղերն ի՞նչ բանի վրայ կախնած են։

Ի՞նչ ձեւ ունի Արեւը։ Մեզ ի՞նչ կ՚երեւի Արեւն երկրէս ո՞րչափ մեծ է։ Երկիրս ի՞նչպէս կը թաւալի ինք իր վրայ։ Մեզի ի՞նչպէս կ՚երեւայ։ Ո՞րչափ կը տեւէ թաւալումը։ Ի՞նչպիսի օրինակով կրնանք բացատրել Յորեկն ու Գիշերը։ Որո՞նք են երկրին առանցքն ու Բեւեռը։ Երկիրն Արեւուն չորսրդին ո՞րչափ ատենուան մէջ կը դառնայ։ Ի՞նչ է տարի հետեւանքը։ Քանի՞ եղանակ կայ։

Ո՞ր երկնային մարմիններն Աստղ կը կոչուին։ Ի՞նչ է Համաստեղութիւնը։ Ո՞րն է Բեւեռային աստղը։ Ինչե՞ր կրնանք որոշել Բեւեռային աստղով։ Ո՞ր երկնային մարմինը կը կոչուի Լուսին։ Ո՞ր երկնային մարմինները կը կազմեն Արեւային գրութիւնը։ Ո՞րն է Արեւուն ամէնէն մօտ ու ամէնէն հեռու։ Ո՞րն է ամէնէն մեծն ու ամէնէն փոքրը։ Որո՞նք Արբանեակ=Լուսին ունին։ Ո՞ր մարմինը Մոլորակ կը կոչուի. Արբանեա՞կ, Գիսաւո՞ր։

Ի՞նչպէս կրնանք ներկայացնել Երկրագունդը։ Ի՞նչ է Հասարակածը, ի՞նչ կ՚ընէ։ Որո՞նք կը կոչուին Զուգահեռական, Միջօրէական։ Ո՞րն է Գլխաւոր Միջօրէականը. քանի՞ ու ի՞նչպէս կը բաժնուին։ Որո՞նք կը կոչուին Երկայնական։



ԱՇԽԱՐՀԻ ԾՈՎԵՐՈՒ ԽՈՐՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԼԵՌՆԵՐՈՒ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆԸ ԲԱԶԴԱՏՈՒԱԾ

նութեան ասոիճաններ։ Որո՞նք են Արեւելեանները, Արեւմտեաններըւ Որո՞նք կը կոչուին Լայնութեան Ասոիճաններըւ Հասարակածն ինչ կը նշանակուի

Առաջնով մը կախուած քարի մը զննիմ ո՞ր կողմն է։ Ո՞ւր է ձեր զննիքը։ Ձեր բնակած կուսակալութիւնը Հիւսիսային լայնութեան ո՞ր ասոիճաններուն մէջտեղն է։ Արեւելեան երկայնութեա՞ն։ Ձեր շրջակայ կուսակալութիւնը՝ նե՞րը։ Ասիական Թուրքիա ո՞ր գաւառն մէջ կը գտնուի։ Եւրոպան ո՞ր գաւիներուն մէջ է։ Ասիա՞ն։ Ափրիկէ՞ն։ Հիւսիսային Ամերիկա՞։ Հարաւային Ամերիկա՞։ Աւստրալիա՞։ Հասարակածն ո՞ր կողմն է։ Ձեր Աշխարհացոյցին գլխաւոր Միջօրէականն ո՞ր քաղքէն կ՚սկսի։ Բարիզի միջօրէականն Արեւելեա՞ն թէ Արեւմտեան երկայնութեան ասոիճանն տակն է։ Երկայնութեան մէկ ասոիճանը քանի՞ քիլոմեթր է։ Ի՞նչպէս կրնաս ապացուցանել։ Ուրիեմն եթէ քաղաք մը ուրիշ քաղքէ մը ՅՕ ասոիճան հեռու ըլլայ, քանի՞ քիլոմեթր հեռու եղած կ՚ըլլայ աշխարհագրապետ

Աւէն կողմ հաւասար բարեխառնութիւն կա՞յ Երկրիս վրայ։ Ւրանի՞ գոտի կայ։ Իւրաքանչիւրն ինչպէս կը բաժնուին։ Ո՞րն է Աւրեցեալը, Բարեխառնը, Առաւելեալը։

Ձեր բնակած տեղն բարեխառնութիւնը քանի՞ ասոիճան է ամառը, ձմե՞ռը։ Ձեր բնակած տեղն ո՞ր հովերը կը փչեն։ Ո՞ր եղանակին փոթորիկ կը հանդիպիք։

Ի՞նչ է Համառարած աշխարհացոյց մը, ո՞ր չափը ցամաք, ո՞ր չափը ծով է։ Ցամաքն ո՞ր կիսագնդին վրայ տարածուած է։ Ծո՞վը։ Որո՞նք են Աշխարհի մասերը։ Ծովերը քանի՞ մասի կը բաժնուին։ Ո՞ր կը գտնուին Խաղաղական ովկիանոսը, Ատլանտեանը, Հնդկացը, Հիւսիսային Սառուցեալը, Հարաւային Սառուցեալը։

Երկրիս մակերեսին ո՞ր չափն Եւրոպա է։ Ասիա՞ն, Ափրիկէ՞ն, Ովկիանիա՞ն։ Խաղաղական ովկիանոսին տարածութիւնն ո՞ր չափ է, Ատլանտեա՞նը, Հնդկա՞ցը, Սառուցեա՞լը։

Ի՞նչ է լեռը, գաշտագետինը, զառիթափը, լեռնագաւիթ, ըլուրը, լեռնագաշտը, հովիտը, կղզին, ալբիպելագոսը, թերակղզին, պարանոցը, գլուխը։

Ի՞նչ է նեղուցը, ջրանցքը, ծոցը, ծովածոցը, խորշը, գետը, գետաբերանը, գետակը, գետախառնուկը, լիճը։

Ո՞ր կը գտնուին Ծովերը. Անդիլեանց, Ճաւանի, Միջերկական, Զինաց։ Ծոցեր. Կուինեայ, Պենկալիոյ, Օմանի, Նեղուցներ. Ճիպրալթարի, Պէհրինկայի, Վոսփորի, Կղզիներ. Անդիլեանք, Իալանտա, Կրէնլանտա, Ճաւանի, Պոռնէոյ, Սումատրա, Փիլիպպեանք։ Թերակղզիներ. Արաբիա, Հնդկաստան, Սպանիա։ Պարանոց. Բանամա։ Դղուխներ. Բարեյուսոյ, Հոռն։ Լեռներ. Ալպեայ, Անտեան, Ապալաչ, Կովկաս, Հիմալայա, Ուրալ։ Անապատ. Սահարա։ Գետեր. Ամազոն, Գանգէս, Գանկէյ, Եփրատ, Մխսիսիպի, Նիլիկէ, Նեղոս, Տիգրիս։

Հասարակածն ո՞ր երկիրներէն, կղզիներէն, գետերէն, լեռներէն, ովկիանոսներէն կ՚անցնի։ Եւրոպա Հասարակածին ո՞ր կողմը կ՚ըլլայ. ո՞ր կիսագունդին մէջ է։ Աւստրալիա՞, Հարաւային Ամերիկա՞, Ասիա՞։ Խեցգետնի Արեւադարձն ո՞ր լեռներէ, կղզիներէ, գետերէ, ծովերէ կ՚անցնի։ Այծեղջերը Արեւադարձը՝ ո՞րն է աշխարհիս ամենէն բարձր լեռը։ ո՞րչափ մեգր բարձր է. ցո՞ծը. ո՞րչափ մեգր բարձր է. Մո՞նբլան ո՞րչափ բարձր է, Գիչչինճինկա, Ս. Եղիա, Քիլիմանճարոյ, Ելպրուզ։ Թուրքիոյ ամենէն բարձր լեռն ո՞րն է։ Ամենէն խոր ովկիանոսն ո՞րն է։ Ո՞րչափ է խորութիւնը՝ ո՞րչափ խոր է Միջերկրականը, ո՞ւր. Ատլանտեանո՞ր, ո՞ւր. Հիւսիսային Սառուցեալ ովկիանո՞սը, ո՞ւր։ Ծովուն խորութիւնը լեռներուն բարձրութեան հաւասա՞ր է։

Որո՞նք կը պատկանին Ափրիկեան ցեղին. Դեղինները. Խաչկիներն, Պատկերին վրայ նայելով՝ կրնաք նկարագրել Սպիտակ ցեղը. Դեղինը. Խաչկիը. Պղնձագոյնը. Մալեզեանները՝ Ասանցմէ իւրաքանչիւրն ինչ գիմագիծեր ունին։ Ասոնք իրարմէ ինչ գիմագիծերով կը տարբերին։ Որո՞նք են Քրիստոնեայ եկեղեցիները։ Ձեր բնակած տեղն ո՞ր Քրիստոնեայ եկեղեցիները կան։ Ինչ կը կոչուի մեր ազգը։ Հայերն ինչո՞ւ մէկ ազգ են։ Հայերն ո՞ւր տրուած են։ Հայերն ո՞ր տերութեանց մասը կը կազմեն։ Որո՞նք են Ձեր բնակած տեղն Ազգային իշխանութեան վարիչները։ Կառավարութեան պաշտօնեայնե՞րը։ Օսմանեան կառավարութիւնը միապետակա՞ն է թէ Սահմանադրակա՞ն։ Ինչո՞ւ։ Ինչ տարբերութիւն կայ Միապետականին ու Սահմանադրականին միջև։ Հայոց կրած տանջանքն ինչ տեսակ վարչութեան հետեւանքն է։ Ինչո՞ւ։

համեմներ։
ութիւն։ 5. Փի-
ուէ ու ծխախոտ։
ա։
աւոր կղզին է
ն խոնաւ ու տաք է։
արեղէգ, բամպակ ու

քաղաք Նոմեա։
րոպայէն քիչ մը փոքր է
ն Ափրիկէի ու Հարաւային
ամածուա ծովեզերքով։

1. ԸՆԴՀԱՆՐԱՎԱՃԱՌԱԿԱՆ։

կու ընդարձակ լեռնադաշտ
ին ցած ու ճահճախոտ
Ասիոյ ու Ամերիկային լեռնադաշտին մէջ, Խաղոսին մէջ ցրուած , կայ Աւստրալիոյ Ապիան կը կազմէ նաև Աւստ
Հնդկաց Ովկիանոսի
Կղզիներէն ամենը
են, ուրիշներ ալ կազ
և կամ բուսաբեր։

ՈՒՄԱՆ ՄԻՋ ԱՆՏԱՌ (ԲԱՐԵԽԱՌՆ ԳՕՏԻ)

ասիոյ միակ գետն է Մոռէյ որ կը հոսի
արաւային արեւելք։

Կլիման՝ հիւսիսային կողմը տաք, հարաւը՝ բարեխառն։ Երկրին մեծ մասն անբեր է, արեւմտեան կողմն ալ՝ անապատ։ Հիւսիսային ու արեւելեան մասերը բարեբեր են։

Աւստրալիա կը պարունակէ երկաթի, հանքածուխի, անագի և ոսկւոյ հանքեր։ Կ՚արտադրէ գետնախնձոր, չաքարեղէգ, բամպակ, արմաւիք ու որթատունկ։ Նշանաւոր են նաև իր բազմաթիւ ոչխարներն որով կը պարտաւորի Եւրոպայի բրդեղէնարտադրութեան մեծ մասը։

Աւստրալիա կը պատկանի Անգլիոյ, բայց կը վայելէ գրեթէ անկախ վարչութիւն մը և կը կոչուի Աւստրալիոյ Նահանգներու Դաշնակցութիւն (1 Յունուար 1901)։ Գլխաւոր քաղաքներ են Սիտնէյ ու Մելպուռն մեծ նաւահանգիստները։

ԱՒՍՏՐԱԼԻՈՅ ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ

ԲՈԼԻՆԵԶԻԱ. — Աւոր գլխաւոր կղզիներն են 1. Նոր-Զելանտա որ ոքանչելի կլիմայ ունի. կան գեղեցիկ անտառներ. հողագործութիւնը ծաղկած է և հարուստ հանքեր ունի՝ ոսկի, արծաթ ու հանքածուխ։

2. Սանտուիչ=Հաւայի կղզիները. գլխաւոր քաղաք՝ Հոնոլուլու ուր կը հանդիպին Սան-Ֆրանսիսքոյ, Ասիա ու Աւստրալիա երթևեկող չոգենաւերը։

3. Ընկերութիւն կղզիներ. ասոնց գլխաւորներն են Դաւիդի ու Մարքիզաս։

ԴԱՀԻՔՆԵՏԻ ՊՏՂԱՎԱՃԱՌՆԵՐ

Միխրոնեզիա կը պարունակէ միւս փոքր կղզիները։

2. *ԵՒՐՈՊԱԿԱՆ ՈՒ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՍՏԱՑՈՒԱԾՔՆԵՐ ՕՎԿԻԱՆԻՈՅ ՄԷՋ*

1. ԱՆԳԼԻԱԿԱՆ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ. — *Աւստրալիա, Դաամանիա, Նոր-Զելանտա, Հիւսիսային Պոռնէա, Ֆիճի ու Նոր-Կուինէոյ մէկ մասը:*

2. ՖՐԱՆՍԱԿԱՆ ՍՏԱՑՈՒԱԾՔՆԵՐ. — *Նոր-Գալետոնիա ու Ընկերութեան կղզիներ:*

3. ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՍՏԱՑՈՒԱԾՔՆԵՐ. — *Նոր-Կուինէոյ միւս մասը և գրեթէ բոլոր Միխրոնեզիա:*

4. ՀՈԼԱՆՏԱԿԱՆ ՍՏԱՑՈՒԱԾՔՆԵՐ. — *Հոլանտական Նոր Կուինէա, Սոնտի կղզիներ, Զելեպեսեան ու Մոլուքեան:*

5. ՄԻԱՑԵԱԼ-ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՍՏԱՑՈՒԱԾՔՆԵՐ. — *Փիլիպպեան ու Սանտուիչ:*

6. ԴԱՆԻԱԿԱՆ ՍՏԱՑՈՒԱԾՔ. — *Դիւնոր:*

ԱՄՓՈՓՈՒՄ

Ովկիանիա կը պարունակէ... — կը բաժնուի... — Մալեզիա կը պարունակէ... կղզիները. — Սոնտի կղզիներն են... — Ճաւա կղզին..., գլխաւոր քաղաքն է...— Պոռնէոյ ունի... — Փիլիպպեան կղզիները... — Դաամանիա... — Մելանեզիա կը պարունակէ... — Նոր-Կուինէա կ'արտադրէ ... — կը պատկանի... — Գլխաւոր քաղաքներն են... — Աւստրալիա Եւրոպայէն... Բոլինեզիոյ կղզիներէն... — Նոր-Զելանտա նշանաւոր է... — Սանտուիչ կը պատկանի ...—Ընկերութեան կղզիներն են... — Միքրոնիզիա կը պարունակէ... — Ովկիանիոյ մէջ Անգլիական ստացուածքներն են... — Ֆրանսական են... — Գերմանական են... — Հոլանտական են... — Միացեալ-Նահանգներու կը պատկանին... — Դանիականին...:

ՎԵՐԱՏԵՍՈՒԹԵԱՆ ԽՏԱՑԵԱԼ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Աւստրալիա ո՞ր կէսագնդին մէջ տարածուած է: Աւստրալիոյ ո՞ր մասն Ափրեցէլ գօտւոյն կը պատկանի: Ո՞ր մասը Բաբեխառն գօտւոյն: Աւստրալիա ո՞ր նեղուցով կը բաժնուի Նոր-Կուինէայէն: Նոր-Զելանտայէն: Աւստրալիա ջրի ընթացք շատ ունի՞: Ովկիանիա քանի՞ մասերու կը բաժնուի: Դաամանիոյ ու Աւստրալիոյ միջև ո՞ր նեղուցը կայ: Ո՞ր կղզին կայ Աւստրալիոյ հարաւային կողմը: Որո՞նք են Մալեզեան գլխաւոր կղզիները, Մելանե՞զիոյ, Բոլինե՞զիոյ: Աւստրալիոյ մէջ ո՞ր գետը կայ: Անգլիացի՞ք ո՞ր կողմերն ունին, Ֆրանսացի՞ք, Գերմանացի՞ք, Հոլանտացի՞ք, Միացեալ-Նահանգնե՞րը, Դանիացի՞ք: Ասոնք ի՞նչ բերքեր ունին: Շանկհայէն Ովկիանիա ի՞նչպէս կ'երթայ: Սիանէյէն ու Մելպուռնէն Ամերիկա՞: Ովկիանիան եւրոպա՞: կ. Պոլսէն Սիանէ՞յ, Մանիլա՞:

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

Ա մ ե ր ի կ ա

Ա. ԲՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Ծովափունքը

ԴԻՐՔ, ՍԱՀՄԱՆ, ՏԱՐԱԾՈՒԹԻՒՆ. — *Ամերիկա=Նոր-Ցամաք Ամերիգէն կը բաժնուի Պեհրինկայի նեղուցով: Սահմանն է. հիւսիսէն՝ Սառուցեալ ովկիանոս, արեւելքէն՝ Ատլանտեան ովկիանոս, արեւմուտքէն՝ Խաղաղական ովկիանոս:*

Ամերիկա չորս անգամ մեծ է քան Եւրոպա:

Ամերիկա կը բաղկանայ երկու եռանկիւնաձեւ մեծ երկրէ — Հիւսիսային Ամերիկա ու Հարաւային Ամերիկա որոնք իրարու կցուած են չարք մը պարանոցներով. ասոնց գլխաւորն է Բանամայի պարանոցը: Այդ քանի մը պարանոցները կը կոչուին Կեդրոնական Ամերիկա:

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՈՒ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԾՈՎԱՓՈՒՆԵՔԸ. — *Արջային Սառուցեալ ովկիանոսին ձեւացած են Պաֆինի ծովը ու Հրտսընի ծոցը: Առնք Ատլանտեանի հետ կը հաղորդակցին Տեւիսի նեղուցով ու Խաղաղականի հետ՝ Պեհրինկի նեղուցով:*

Արջային ովկիանոսի մէջ որուն եզերքը չատ ծանծաղուտ է՝ ցրուած են բազմաթիւ սառնապատ կղզիներ որ Բեւեռային երկիր կը կոչուին: Ասոնց մէջ նշանաւոր է Կրոէնլանտիա:

Խաղաղական ովկիանոսին մէջ ուրկէ ձեւացած է Պեհրինկայի ծովը՝ կ'երկարին Ալասկա թերակղզին ու Գալիֆոռնիա թերակղզին ուր միտուած է համանուն ծոցը: Այս ովկիանոսին մէջ, ցամաք երկրին մօտերը, ցրուած են Ալիւտեան կղզիները, Թագոնի-Զարդոի կղզիներն ու Վանկուվր կղզին:

Ատլանտեանի մէջ որուն ծովափունքը չատ ծանծաղուտ են՝ կ'երկարին Լապրատոր, Ֆլորիտա ու Եուգատան թերակղզիները: Այս վերջին երկու թերակղզիներուն մէջէն Ատլանտեանէն կը ձեւաւորուի Մեխիկայի=Մեխիկայի ծոցը: Լապրատորի հարաւային արեւելեան կողմը, Ատլանտեանի մէջ կայ Նոր-Երկիր կղզին:

ԱՆԴԻԼԵԱՆՑ ԾՈՎՈՒՆ ՄԷՋ ՈՒՐԱՆԱՆ

Երկու Ամերիկաներուն մէջտեղ կը գտնուին Անդիլեան կղզիները որ երկու խմբի կը բաժնուին Մեծ Անդիլեանք ու Փոքր Անդիլեանք: Անդիլեաններուն ու Կեդրոնական Ամերիկայի մէջև Ատլանտեանէն կազմուած է Անդիլեանց ծովը:

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԾՈՎԱՓՈՒՆԵՔԸ. — *Շատ քիչ ծանծաղուտ են Հարաւային Ամերիկայի ծովափունքը: Ատլանտեանէն ձեւացած է Ռիոյ-Եանէյրոյի խորշն ու Խաղաղական ովկիանոսէն՝ Բանամայի ծոցը:*

Գլխաւոր հրատապարերն են Սանդա-Բոռ արեւելեան ծայրը, Հոռն գրիխ՝ Հրոյ-Երկրի հարաւային ծայրը:

Գլխաւոր կղզիներն են Ֆերդինանս կղզիները՝ հարաւային արեւելեան կողմը, Հրոյ-Երկիր՝ հար-


ԱՍԻԱ
ԱՊԱՌԱԺՈՒՏ
ԳԻՍՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ
ԼԵՐԻՆՔ
ՄԻԱՑԵԱԿ
ՄԵՔԻԿԱ
ՄԻՋԻՆ ԱՄԵՐԻԿԱ
ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ
ԱՄԱԶՈՆ գ.
ԱՆԴԵԱՆ
ՊԵՐՈՒ
ԼԵՐԻՆՔ
ԱՐԺԵՆԴԻՆ
ԱՄԵՐԻԿԱ
ԲՆԱԿԱՆ
Մասիաններ 1 85.000.000
0 500 1000 2000 քիլ.
ՀՈՒՆ գ.
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ
ՄԵԾ ԱՆԴԻԼԵԱՆՔ
ՄԵՔՍԻԿԱՅԻ ԾՈՎ
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

4. *Ռիոյ տէ Նորդէ կը թափի Մեքսիկայի ծոցը։*

5. *Գողորատոյ՝ Գալիֆոռնիոյ ծոցը։*



ՆԻԱԳԱՐԱՑԻ ՋՐՎԷԺ

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԳԵՏԵՐԸ. — *Ա-*
ան կը թափին.
որ կ'անցնի Լանսանեըէն։
գետ որ կը թրջէ Սկռատանները՝
ալիմաջոր գետն է. գետակից-
ա ու Ռիոյ Նեկրոյ։
ին որ Ամազոնի գետաբե-
ոմով Բարա-
ն։

խառն ու Այրեցեալ գօտիներուն տակ գտնուելով զանազան կլիմաներ ունի։ Այրեցեալ գօտիի մէջ տաքութիւնը կը չափաւորուի ծովերուն կամ լեռնագաշտերուն բարձրութեանց ազդեցութեամբ։

ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — *Երկու Ամերիկաներուն մէջ ալ կը գտնուին պղինձ, ոսկի, արծաթ։ Հիւսիսային Ամերիկայի մէջ՝ հանքածուխ, երկաթ ու քարիւղ. Հարաւային Ամերիկայի մէջ ադամանդ։*



ՀԻՒՍԻՍԱՅԻՆ

Արջային չրջանակի բոլորտիքը կան ճահիճներ=դաշտաթա ու անտառներ։

ԱՄԱՌՈՒ ԱՏԵՆ ՏԵՍԱՐԱ

լծուի. Հարաւային Ամերիկայի մէջ կան ցանց ու վիկոնն որ իրը գրաստ կը ծառայեն: Կան գազանները՝ սիզոն, արջ, կուղբ, յովազ, կապիկ, բոժոժաւոր օձեր, պօա, պապկայ և այլն:

Բարեխառն գօտւոյ մէջ յառաջ կուգան արմաւիք: Սոյն գօտւոյն դաշտագետիններուն մեծ մասը գրաւած են արօտավայրերն ուր կը բուծանեն ձիուձ, արջառի ու ոչխարի անթիւ հօտեր:

Գ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ. — Ամերիկայի գիւտէն առաջ այս երկրին մէջ կը բնակէր Պղնձամորթ ցեղը: Եւրոպացիները ափրնցին այս երկրին և հոն հաստատուեցան: Կան նաև Սեւամորթներ որոնք Ափրիկէէն բերուած են: Հիւսիսային Ամերիկայի արեւմտեան կողմը կը բնակին բազմաթիւ Չինացիները:

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՏԷՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ. — Հիւսիսային Ամերիկա կը պարունակէ. 1. Գանատա, 2. Միացեալ-Նահանգներ, 3. Մեխսիկա, 4. Կեդրոնական Ամերիկա, 5. Անդիլեան կղզիները, 6. Կրոնլանտիա:

ԳԱՆԱՏԱՑԻ ՏԷՐՈՒԹԻՒՆԸ

Գանատա որ երբեմն Ֆրանսական գաղթակատնութիւն էր՝ այսօր կը պատկանի Անգլիոյ: Մայրաքաղաքն է Օդդաւա: Գլխաւոր քաղաքներն են Մոնրեալ ու Քուէպեք որոնք Ս. Լորանսի եզերքը նշանաւոր նաւահանգիստներ են ու հաշիմխա:

Նոր-Երկիր կղզին կը պատկանի Անգլիոյ: Ֆրանսացիները կընան ձուկ որսալ այս կղզւոյն ծովեզերքն որուն մօտ կը գտնուին Ֆրանսական Ս. Բիեր ու Միկելոն կղզիները: Բնակիչները կը կազմեն էսքիմացիներ, ընկիներ ու Եւրոպացիներ:

Գանատայի կլիման ցուրտ է: Հիւսիսէն հարաւ երեք երկրամաս կը յաջորդեն իրարու. 1. Սառնապատ և ցուրտ երկրամաս, 2. Անտառուտ երկրամաս, 3. Մարգագետին ու մշակելի երկրամաս: Նշանաւոր են Գանատայի ատաղձներն ու հանքերը:

ԷՍՔԻՄԱՑԻ

ՄԻԱՑԵԱԼ-ՆԱՀԱՆԳՆԵՐ

ԳԼԽԱՒՈՐ ԵՐԿԻՐՆԵՐ ՈՒ ՏԵՂԵՐ.—**Միացեալ-Նահանգներու** կեդրոնական մասն անոնց գաշտագետին մըն է. արեւմտեան կողմը կը բարձրանան սարաւանդ երկիրներ. ատոնց լեռներուն մէջ նշանաւոր են Ապատաճ լեռնագօտին: Արեւելեան կողմը կը տարածուին Ալեհաւիլ լեռներն ու Ատլանտեանի գաշտագետինը:

Միացեալ-Նահանգներու գլխաւոր երկրամասերն են.

1. Հիւսիսային արեւելեան երկրամասն ամենէն բազմամարդն ու արգասաւորն է, հարուստ՝ իր հանքածոխով, երկաթով, քարիւղով և զարգացած է ճարտարարուեստի մէջ:

Հիւսիսային արեւելեան երկրամասին մէջ են սա՛ նշանաւոր նաւահանգիստները. 1. Նիւ-Եորք Նոր Աչխարհի ամենէն վաճառաչահ ու բազմամարդ քաղաքը: 2. Պոսթոն: 3. Ֆիլատելֆիա: 4. Պալթիմոր: Հոս կը գտնուի նաև Միացեալ-Նահանգներու մայրաքաղաքը՝ Ուաշինկթըն:

2. *Օհիո—Միսիսիպի երկրաւար՝ ժլակուած*



ՆԻՒ-ԵՈՐՔԻ ՄԷՋ 25 ՅԱՐԿԵԱՆ ՏՈՒՆ

եզիպտացորենով ու ցորենով. նշանաւոր է նաև իր ընտանի անասուններով: Այս երկրամասի

ՇԻԿԱԳՈՅԻ ՄԷՋ ՓՈՂՈՑ

գլխաւոր քաղաքներն են Շիքակոյ, Մինսիսիպի, Ս. Լուի:

3. *Հարաւային արեւելեան ու Հարաւային երկրամասին մէջ կը մշակուին բամբակ ու շաքարեղէգ: Գլխաւոր նաւահանգիստն է Նոր-Օռլեան:*

4. *Մարգագետինները կը տարածուին Միսիսիպի գետին արեւմտեան կողմը. հոս երբեմն ընկերները կ'որսային վայրի եզ=պիզոն, բայց հիմայ կը բուծանեն զանազան կենդանիներ: Գլխաւոր քաղաքն է Օմահա:*

5. *Արեւմտեան երկրամասն ունի ոսկւոյ և արծաթի հանքեր: Սակէ զատ Գալիֆոռնիա հարուստ է հողագործութեամբ: Հոս կան չատ հոզագործ Հայեր: Գլխաւոր քաղաքն է Սան-Ֆրանսիսքոյ:*

6. *Ալասկա՝ Սառուցեալ գօտւոյն մէջ՝ ունի ոսկւոյ հանքեր:*

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿ. — *Միացեալ-Նահանգները ունին առողջ կլիմայ և բնական զանազան առաւելութիւններ: Հողագործական արտադրութիւնները բազմազան ու առատ են. սքանչելի նաւահանգիստները, նաւարկելի գետերը, ջրանցքները ու երկաթգիծ երկաթուղիները կը միացնեն Ատլանտեան: Ճարտարարուեստը չատ ծաղկած է, մանաւորապէս Հանքագործութիւնը, Հողագործական գործիքներն ու Հիւսուածեղէնները:*

ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԻՒՆ. — *Միացեալ-Նահանգները ունին 85 միլիոնէն աւելի բնակիչ որոնք Անգլիերէն կը խօսին և մեծ մասամբ Բողոքական են: Սպիտակամորթները գլխաւորաբար կը սերին Անգլիացի, Իրլանտացի, Գերմանացի, Շուէտցի, Իտալացի գաղթականներէ: Սեւամորթները Աֆրիկէները 9 միլիոն են: Կան նաև Պղնձագոյն բնիկներ ու գաղթական Հայեր:*

Միացեալ-Նահանգներու Հասարակապետութիւնն որ կը պարունակէ 45 տէրութիւն ու 5 երկիր՝ կը կառավարուի Նախագահէ մը ու Վճռաժողովէ:

Միացեալ-Նահանգներն իրենց իշխանութեան ենթարկած են Բորդոյ-Բիխոյ, Հաւայի ու Փիլիպպեան կղզիները:

ՄԵՔՍԻԿԱ.

Մեխիկա=Մեխիկա կը գտնուի *Միացեալ-Նահանգաց հարաւային կողմը: Կը բաղկա-*

նայ հարաւային կողմէ 1. Բարձր լեռնագաշտէ մը բարձրաբերձ հրաբուխներով, 2. Եուգատանէ, 3. Ստորին Գալիֆոռնիայէ: Մայրաքաղաքն է Մեխիկոյ=Մեխիկոյ: Գլխաւոր քաղաքն է Վերա-Գրուզ՝ Մեքսիկայի ծոցին եզերքը նաւահանգիստ: Ծովեզերքը վտառողջ է: Կ'արտադրէ խահուէ, շաքարեղէգ, գազաղ, համեմուկ=վանիլա: Լեռնագաշտը հարուստ է արծաթի հանքերով:

Բնակչութիւնը 14 միլիոն Հռովմէական: Կառավարութիւնը՝ Հասարակապետութիւն:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱ.

Կեդրոնական Ամերիկա *լեռնոտ ու հրաբխային երկիր մըն է և կը բաժնուի վեց փոքր հասարակապետութեանց:*

Կուատեմալա, մայրաքաղաքն է Կուատեմալա:
Հոնտուրաս, մայրաքաղաքն է Դեվրափիպրա:
Սալվատոր, մայրաքաղաքն է Սան-Սալվատոր:
Նիքարակուա, մայրաքաղաքն է Լէոն:
Գոստարիքա, մայրաքաղաքն է Սան-Եոզէ:
Բանամա, մայրաքաղաքն է Բանամա:

ԱՆԳԻԼԵԱՆԴ

1. *Մեծ Անգիլեացիք են. Հայիդի որ երկու տէրութեանց միջև բաժնուած է՝ Հայիդի ու Սան-Տոմինիկացիս, 2. Գուպա՝ մայրաքաղաքն է Հաւանա, 3. Բոռդոյ Բիխոյ՝ որ Միացեալ-Նահանգներու կը պատկանի, 4. Ձամայկա՝ Անգլիոյ հանձնարու կը պատկանի.* 4 *Անգիլեացիք կղզիներն են 1. Ս. Թովմաս՝ Տանիմարքացի, 2. Կուատալուբ ու Մարդինիք կը պատկանին Ֆրանսայի:*

Այս կղզիները կ'արտադրեն չաքարեղէգ, խահուէ, ծխախոտ, գազաղ ու բամբակ:

Բնակիչներուն 1/4 մասը միայն Սպիտակ ցեղէն է:

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՏԷՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ա. ԽԱՂԱՂԱԿԱՆԻ ԵԶԵՐՔԻ ՏԷՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ. — 1. Գոլոմպիա՝ *մայրաքաղաք Սանդա-փէ-տէ-Պոկոտա:*

2. Էքուադոր՝ *մայրաքաղաք Քուիտոյ. գլխաւոր քաղաք Կուայաքիլ՝ Խաղաղականի եզերքը Նաւահանգիստ:*

ԲԵՐՈՒՅԻ ԽԱՌՆԱՑԻՆ

3. Բերու՝ *մայրաքաղաք Լիմա որուն Նաւահանգիստն է Գալաոյ: Արծաթի հանքն ու Կուանոյ կոչուած ազբը կը կազմեն Բերուի գլխաւոր հարստութիւնը:*

4. Չիլի՝ *երկար ու նեղ երկիր մըն է Ովկիանոսի ու Անտեսնց միջև: Նշանաւոր է իր պղնձի հանքով, ազոտակով ու հողագործութեամբ: Մայրաքաղաքն է Սանդիակոյ, գլխաւոր նաւահանգիստ՝ Վալփարայզոյ: Չիլի Բերուի արտադրութիւնն ունի:*

Բ. ԱՆԴԻԼԵԱՆՑ ՈՒ ԱՏԼԱՆՏԵԱՆԻ ԵԶԵՐՔԻ ՏԷՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ. — 1. Վենեցուելա՝ *Անգիլեանց եզերքը, մայրաքաղաք Գարագաս: Կ'արտադրէ խահուէ, գազաղ և չատ ոսկի:*

2. Պրեզիլ գրաւած է գրեթէ Հարաւային Ամերիկայի կէսը։ Կը պարունակէ 1. Ամազոնի

ԲԵՐՈՒՑԻ ՍՊԱՆԻԱՑԻՆ

առագաստը, 2. Լեռնագաշտը՝ Սաւաննները։ Կ'արտադրէ խոռոչ, զազայ, չաքարեղէգ, ձգախէժ, ադամանդ։ Մայրաքաղաք՝ Ռիոյ-տէ-Եանէյրոյ, նաւահանգիստ։ Մեծ գլխաւոր քաղաքներն են Պահիա ու Բեռնամպուք նաւահանգիստները։

3. Կուանա, տաք ու վտառաղջ, բաժնուած է երեք մասի. Անգլիական, գլխաւոր քաղաք Ճորճթաուն։ Հոլանտական, գլխաւոր քաղաք Բառամարիպոյ։ Ֆրանսական, գլխաւոր քաղաք Գայէն։

4. Ուրուկուա, մայրաքաղաք՝ Մոնդեվիտէոյ, նաւահանգիստ, որ ոչխարի ընդարձակ առեւտրի կեդրոն է։ Կը պարունակէ Բաւրաան ու Բադակոնիոյ լեռնագաշտերը։

5. Արգենտինա, մայրաքաղաք՝ Պուենոս-Այրէս՝ Ռիոյ տէ լա Բլատայի եզերքը։ Կ'արտադրէ բուրդ, արմաւիք, մոլթ, ասպաղէ, միս, ևայլն։

Գ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԿԻՐՆԵՐԸ. — 1. Պոլիվիա՝ մայրաքաղաք Լա Բազ։ Պոլիվիա նշանաւոր է արծաթի հանքերով։

2. Բարակուա՝ մայրաքաղաք Ասունչիոն։ Կ'արտադրէ վաթէ կոչուած թէյը։

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ ՈՒ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

Ամերիկա կը բաղկանայ... որ իրարու կցուած են... — կեդրոնական Ամերիկա կը կոչուի... — Ամերիկայի ծովերն են... — Արջային Սառուցեալ Ովկիանոսէն ծեւացած են... — Նեղուցներն են... — Արջային ովկիանոսին մէջ կը գտնուին... կղզիները. — Խաղաղականին մէջ... Ատլանտեանի մէջ .. Անդիլեանց ծովուն մէջ... — Ամերիկայի հրրուանդաններն են... եւ կը գտնուին... — Հիւսիսային Ամերիկայի լեռնագօտիներն են... — Լեռնադաշտերն են... — Հարաւային Ամերիկայի լեռնագօտիներն են... — Լեռնադաշտերն են... — Հարաւային Ամերիկայի անծայր դաշտագետինը կը բաժնուի... եւ են... — Հիւսիսային Ամերիկայի գետերն են... — Սառուցեալ ովկիանոսը կը թափին... Խաղաղական ովկիանոսը... Ատլանտեան ովկիանոսը... — Հարաւային Ամերիկայի գետերն են... եւ կը թափին... — Հիւսիսային Ամերիկայի մէջ կը գտնուին... հանքերը . — Հարաւային Ամերիկայի մէջ... — Ամերիկայի լիճերն են... եւ կը գտնուին... — Դունտրաներն ու անտառները կը գտնուին... — Այրեցեալ գօտւոյն մէջ յառաջ կուգան... — Բարեխառն գօտւոյն մէջ... — Լլանոսը կը գտնուի... Սելուասը... Բամբասը... — Հիւսիսային Ամերիկա կը պարունակէ... երկիրները . — Դանատայի քաղաքներն են... — Միացեալ-Նահանգներու գլխաւոր երկրամասերն են... — Հիւսիսային արեւելեան երկրամասը... եւ իր քաղաքներն են... — Օհիոյ-Միսիսիպի երկրամասը... եւ քաղաքներն են ... — Բամբակ ու շաքարեղէգ կը մշակուին... — Մարգագետինները կը տարածուին... — Արեւմտեան երկրամասն ունի... — Գալիֆոռնիա հարուստ է... — Հողագործ Հայեր կը գտնուին... — Ալասքա ունի... — Միացեալ-Նահանգներու առաւելութիւնն են... — Ծաղկած են... — Միացեալ-Նահանգներու բնակիչները կը սերին... — Կը պարունակէ... տէրութիւն եւ... երկիր — Միացեալ-Նահանգներուն ստացուածքներն են... — Մեքսիկայի քաղաքներն են... — Կեդրոնական Ամերիկա կը պարունակէ... — Իւրաքանչիւրին մայրաքաղաքն է... — Մեծ Անդիլեան կղզիներն են... — Փոքր Անդիլեաններն են... — Կ'արտադրեն... — Հարաւային Ամերիկայի տէրութիւններն են... — Իւրաքանչիւրին մայրաքաղաքն է... — Ամերիկայի տէրութիւնները... — Կառավարութիւններն են... — Կրօնքով Բողոքական են... — Հռովմէական ... — Ատլանտեանի եզերքը կը գտնուի ... Նաւահանգիստները . — Խաղաղականի եզերքը... — Ծովեզերք են ... տէրութիւնները... — Յամառային երկիրներ են... տէրութիւնները. —Արմտիք կ'արտադրեն... — Ադամանդ... — Արծաթ... — Բուրդ... — Խահուէ... — Ծխախոտ... — Շագարեղէգ... — Գազայ... — Ոսկի... — Անտառ... — երկաթ... — Հանքածուխ... — Քարիւղ... — Եգիպտացորեն... — Բամբակ... — Պղինձ ... — Աղբորակ... — Ձարտարարուեստը զարգացած է... — Ամերիկայի մէջ Անգլիական ստացուածքներ են... — Ֆրանսական...

ՎԵՐԱՏԵՍՈՒԹԵԱՆ ԽՏԱՑԵԱԼ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Հիւսիսային Ամերիկայի հիւսիսային կողմն ո՞ր ովկիանոսը կայ. արեւելեան կո՞ղմը. արեւմտեան կո՞ղմը։ Հարաւային արեւելեան կողմն ո՞ր ծովը կայ։ Ասիայ ու Հիւսիսային Ամերիկայի միջև ո՞ր ծովն ու նեղուցը կան։ Արջային=Հիւսիսային երկրամասին միջև ո՞ր նեղուցը կայ։ Արեւմտեան կողմն ո՞ր թերակղզին կայ։ Հիւսիսային արեւմտեան կողմն ո՞ր թերակղզին։ Մեքսիկայի ծոցին արեւելեան կո՞ղմը։ Ո՞ր պարունոցն երկու Ամերիկաներն իրարու կը միացնէ։ Որո՞նք են Ամերիկայի գլուխները և ո՞ւր կը գտնուին։ Արեւմտեան ծովեզերքին մօտ ո՞ր լեռնագօտին կայ։ Որո՞նք են նշանաւոր գագաթները։ Ո՞ր գետերը կը թափին Մեխիկայի ծոցը, Արջային ովկիանո՞սը, Խաղաղականը։ Հիւսիսային Ամերիկայի մէջ ո՞ր լիճերը կան և ո՞ւր կը գտնուին. Կեդրոնական Ամերիկայի մէջ։ Հիւսիսային կողմն ո՞ր կղզիները կան. Արեւելեան կո՞ղմը. Արեւմտեան կո՞ղմը։ Հիւսիսային Ամերիկա ո՞ր երեք երկկիներու կը բաժնուի. Որո՞նք են ասոնց իւրաքանչիւրին քաղաքները։ Նաւով կ. Պոլիսէն Նիւ-Եորք ո՞նչպէս կ'երթան. Ս. Ֆրանչիսկոյէն Լոնտո՞ն. Նոր-Օրլէանէ Կալկադա՞. Լիվըրպուլէն Պուէնոս-Այրէ՞ս. Ռիոյ-տէ-Եանէյրոյէն Ափրիկէ ու Ասիա՞։

Հարաւային Ամերիկայի հիւսիսային կողմն ո՞ր ծովը կայ։ Արեւելեան կողմն ո՞ր ովկիանոսը. Արեւմտեան կո՞ղմը։ Հարաւային կողմն ո՞ր նեղուցը կայ։ Արեւմտեան եզերքին մօտ ո՞ր լեռները կան։ Որո՞նք են նշանաւոր գագաթները։ Ո՞ր գետերը կը թափին հիւսիսային կողմը. Արեւելեան կո՞ղմը։ Ո՞ր լիճը կայ Անտեանց վրայ. Ո՞ր լիճն Անդիլեանց ծովուն հետ կը հաղորդակցի։ Անդիլեան ծովուն արեւելեան կողմն ո՞ր կղզիները կան։ Ամազոնի բերանը։ Զիլիի արեւմտեան կո՞ղմը։ Բագակոնիոյ հարաւային կո՞ղմը։ Հարաւային Ամերիկայի մեծագոյն երկիրն ո՞րն է։ Ո՞ր երկու երկիրները ծովեզերք չունին։ Ո՞ւր կը գտնուին Բամբաս, Սելուաս, Լլանոս։ Որո՞նք են Հարաւային Ամերիկայի երկիրները՝ իրենց մայրաքաղաքով։

Ո՞ր երկիրները կը գտնուին Արեւադարձներու մէջ։ Հարաւային բարեխառն գօտւոյ մէ՞ջ։ Հիւսիսային բարեխառն գօտւոյ մէ՞ջ։ Եթէ Բանամայի պարանոցը ջրանցքի վերածուի, ի՞նչ առաւելութիւններ յառաջ պիտի գան։

Որոշեցէ՛ք հետեւեալներուն մէջ ծովը, գետը, լեռը, քաղաքն եւայլն, և ըսէ՛ք թէ ո՞ւր կը գտնուին։ Հիւսիսային Ամերիկայի մէջ՝ Ադամսվագա, Ալասկա, Անդիլեան, Ապալաչ, Ատլանտեան։ Բանամա, Բորդոյ Բիգլ, Գանատա, Գոլոմպիա, Գոլորատոյ, Գոսգարիգա, Գուատալ Դեկոսթա-կալլաս։ Եուգագան, Եուգոն։ Թագուհի Զարլոտ։ Լապրատոր։ Խաղաղական, Կուադեմալա, Կրոէնլանտիա։ Հայիդի, Հաւանա, Հոնտուրաս, Հուտսըն, Հուբոն։ Ճամայիգա։ Մաքենզի, Մեծ Արջ, Մեխիկա, Միչիկան, Միսիսիբի, Միսուրի, Միքելըն, Մոնրէալ։ Նեւատա, Նիւ-Ֆաունլէնտ, Նիգարակուա, Նիւ-Եորք, Նոր-Որլէան, Նոր-Սկովշիա։ Օգասա, Ուաշինկդըն, Ունիբեկ։ Զիգակոյ։ Պալդիմոր, Պաֆէն, Պէհրինկ, Պոսթըն։ Սալվատոր, Սան-Եուան, Սան-Տոմինգանա, Սան-Ֆրանչիսկոյ, Սինսինատի։ Վանգուվը, Վերագրուզ։ Տեւիս, Տոմինիգանա։ Օհիոյ։ Ֆիլատելֆիա, Ֆլորիտա։

Հարաւային Ամերիկայի մէջ Ամազոն, Անտեան, Ասունչիոն, Արգենտինա։ Բարանա, Բարակուա, Բադակոնիա, Բեռնամպուք։ Գալապոյ, Գարագաս, Գոլոմպիա։ Դեզիգուադա, Դոգանդին։ Եգուադոր։ Լապազ, Լաբլատա, Լիմա։ Կուանա։ Հոռն։ Մակելան, Մանդեւիտէոյ։ Ուրուկուա։ Զիլի, Զելոյէ։ Պահիա, Պոլիվիա, Պոկոգա, Պուէնոս-Այրէս, Պրեզիլ։ Սանդիակոյ, Ս. Բաւլ։ Վալպարեզոյ, Վենեցուելա։ Րիոյ տէ Եանէյրոյ, Րիոյ տէ Կրանաէ։ Քուիդոյ։ Օրինոքոյ։ Ֆելքլենտ։



ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍ

Ափրիկէ

Ա. ԲՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

1. Ծովափունք

ԴԻՐՔ, ՏԱՐԱԾՈՒԹԻՒՆ, ՍԱՀՄԱՆ. — *Ափրիկէ որ կը գտնուի Արեւելեան կիսագունդին հարաւային արեւմտեան կողմը՝ երեք անգամ մեծ է քան Եւրոպա:*

Սահմանն է. հիւսիսէն Միջերկրական ծով, արեւելքէն՝ Կարմիր ծով ու Հնդկաց ովկիանոս, արեւմուտքէն՝ Ատլանտեան ովկիանոս:

Միջերկրական ծովն Սաղանտեան ովկիանոսի հետ կը հաղորդակցի Ճիպրալթարի նեղուցով:

Երբեմն Ափրիկէ ցամաքակղզի էր ու Ասիոյ կցուած՝ Սուէզի պարանոցով, բայց հիմայ կղզի եղած է և պարանոցն ալ՝ Ջրանցք:

ԱՓՐԻԿԷԻ ԾՈՎԱՓՈՒՆՔ. — *Ափրիկէի ծովափունքը չատ քիչ ծանածուռ է:*

Գլխաւոր ծոցերն են Գապէսի ու Սիդրի ծոցերը՝ Միջերկրականէն, Կուինեոյ ծոցն ալ՝ Սաղանտեանէն:

Գլխաւոր հրուանդաններն են Կարտաճոյի գլուխ՝ արեւելեան ծայրը, Բարեյուսոյ գլուխ՝ հարաւային ծայրը, Դաղարի գլուխ՝ արեւմտեան ծայրն և Պոն՝ հիւսիսային ծայրը:

Ափրիկէ բազմաթիւ ցիրուցան կղզիներ ունի. ասոնք կը գտնուին ցամաքէն բաւական հեռու. 1. Սաղանտեանի մէջ՝ Ասորեան, Մատեռա, Գանարեան, Դաղարի գլխոյ կղզիներն ու Ս. Հեղինէ փոքր կղզին: 2. Հնդկաց ովկիանոսին մէջ՝ Մասկարեան մեծ կղզին, Ռեւիոն, Մօրիս, Սեշէլեան ու Զանզիպար: Այս վերջինը ցամաքէն կը բաժնուի Մոզամպիքի Նանդքով:

2. Հողագրութիւն

ԼԵՌՆԱԳՕՏԻՆԵՐ, ԼԵՌՆԱԴԱՇՏԵՐ, ԴԱՇՏԱԳԵՏԻՆՆԵՐ. — *Ափրիկէի կեդրոնական մասը գեռ լաւ ճանչցուած չէ որով չենք գիտեր թէ ինչպէս է երկիրը: Ծանօթ են միայն ծովափունքի մօտաւոր բարձր լեռներն ու երկու ընդարձակ լեռնադաշտերն որոնք Ափրիկէի ամենէն մեծ մասը կազմեն:*

Ափրիկէի երկու մեծ լեռնադաշտերը կ'իջնան իրարմէ բաժնել՝ Պապ-էլ-Մանտէպի նեղուցը դէպ ի Կաբինէոյ ծոցը գիծ մը քաշելով:



ՍԱՀԱՐԱՅԻ Մ

Հիւսիսային լեռնադա... Ադլաս լեռնագօտին, ա... լեռները, արեւմտեան... լեռները: Սահարա մեծ ... ւոյն հիւսիսային մասին ... դաշտագետինները ալ՝ հար...

Հարաւային արեւելեան... սահմանը կը բարձրանայ... գլխաւոր գագաթներն են ...

րոյ (6000 մ.): Այս լեռնագաշտին հարաւակողմը կը գտնուի Գալահարի անապատը:



ՀԱՄԱՏԱ-ԷԼ-ՀԱՄՐԱ (ՍԱՀԱՐԱ)

3. Ջրագրութիւն

ԼԻՃԵՐ, ԳԵՏԵՐ. — Ափրիկէի կեդրոնը կը զբաղեցնէ Երկրաւարար մեծ լիճերու որոնց պլխաւորներն են Վիքթորիա, Ալպերդ, Դանկանիկա, Պանկուէոլոյ Նիասա: Սուանկի մէջտեղը կայ Չաս լիճը:

Այս երկրամասէն կը բղխին Ափրիկէի ամէնէն գետերը՝ Նեղոս որ կը թափի Միջերկրական , Գոնկոյ՝ Ատլանտեան, և Զաեսկէ՝ Հնդկեան նոս:

ւիկէի միւս նշանաւոր գետերն են Նիկէր ափի Կոնկոյ ծոցն ու Սենեկալ՝ Ատլանտ. Այս երկու գետերը կը բղխին Ափրիկէի ափունքի բարձրաւանդակներէն:

ն կողմը կը գտնուի Օրենճ գետն որ տեան ովկիանոսը:

ՈՒԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ւիկէի մեծ մասը կը գտնուի : Կեդրոնը Հասարակածին ք է և յաճախ կ'անձրեւէ: անապատներուն մէջ ատարձներու տակ՝ կի- է:

է Հիւսիսային ու Հա- նք կը գտնուին Բարե-

Ր. — Կեդրոնական Ափրի- նաւորներ, և հոն յաւէտ ղ ծառեր. անապատներու ապիներ, փիղեր, ռնգեղ-

ջիւր և ձիագետի: Անապատներուն բոլորտիքը կան խոտաւէտ դաշտեր ուր կը գտնուին ջայլամներ, Թռնալից օձեր և այլն:

Անապատներն անբեր են:

Սուանկէն մինչև Զանզեզ տարածուած ու լաւ ոռոգուած երկրամասը յատուկ կուգան արմաւ, բամբակ, խահուէ, չաքարեղէգ, բրինձ, ծխախոտ, հնդկընկուզենի:

Ափրիկէի Հիւսիսային ու Հարաւային մասերու արտադրութիւնները գրեթէ նման են Միջերկրական Հարաւային մասին արտադրութիւններուն: Հոն յատուկ կուգան արմաւիք, գինի, ձիթենի, նարնջենի և այլն:

Արեւելեան Ափրիկէի մէջ կան ափիւն, բոլոնի, ընձառիւծ, ջիւռ, ջայլամ, «ձեռէ» կոչուած ճանճը, փիղ, ռնգեղջիւր և այլն:

Ափրիկէի ընտանի անասուններն են ուղտ, ձի, ոչխար, այծ, էշ որ կը գտնուին Հիւսիսային ու Հարաւային մասերուն մէջ:

ՆԻԿԷՐԻ ԳԵՏԵԶԵՐԲ

Ափրիկէի գլխաւոր հանքերն են երկաթ, պղինձ, կապար որ կը գտնուին Հիւսիսային կողմը, և ոսկի ու ադամանդ՝ Հարաւային արեւելեան մասին մէջ:

ԱՓՐԻԿԷ
ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԱՍԻԱ
ՄԵԾԻ ԱՂԱՆԴԱՎԱՉՆԵՐ
ՄԱՐՏԻՆ ՎԱՆ
ՄԱՐՏԻՆ ՎԱՆ
ՄԱՐՏԻՆ ՎԱՆ

Գ. ԲԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Ափրիկէի բնակչութիւնն ու երկիրները

ԱՓՐԻԿԷԻ ԲՆԱԿՉՈՒԹԻՒՆԸ. — *Ափրիկէի Հիւսիսային ու Հիւսիսային արեւկ՛ան երկիրներու բնակիչները՝ Արաբները, Պերպէրները, Հապէշները, Նուպիացիներն ու Եգիպտացիները կը պատկանին Սպիտակ ցեղին: Երկրին միւս մասերուն մէջ կը բնակին Սեւամորթներն որ դեռ նախնական վիճակի մէջ են:*

ԱՓՐԻԿԷԻ ԱՆԿԱԽ ՏԷՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — *Ափրիկէի մէջ երեք անկախ պետութիւն կայ.*

1. *Հիւսիսային արեւմտեան կողմը՝ Մարոկի կայսրութիւնը, մայրաքաղաքը՝ Ֆէս: Երկիրը թէև արգասաւոր, բայց քիչ մշակուած է:*

2. *Արեւմտեան կողմը՝ Լիպերիա, մայրաքաղաքը՝ Մոնրովիա:*

ՄԱՐՈՔՑԻ ՊԵՐՊԻՐ

3. *Արեւելեան կողմը Հապէշստանի կայսրութիւնն որ թէև լեռնային ու բարեբեր երկիր մըն է, բայց քիչ մշակուած է: Մայրաքաղաքն է Աֆիս-Աբապա:*

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՏԱՏԱՍՈՒԱԾՔՆԵՐ. — *Ափրիկէի մեծ մասը կը պատկանի Եւրոպիոյ զանազան ազգութիւններու: Թէև 1890ին Եւրոպական ազգութիւնները դաշնագիր մը կնքեցին որով որոշուեցաւ իւրաքանչիւր ազգութեան կարտածներուն սահմանը, բայց չյարգուեցաւ այդ դաշնագիրը:*

Օսմանեան երկիրներ

Օսմանեան կայսրութեան կը պատկանին.

1. *Եգիպտոս որ Օսմանեան գերիշխանութեան տակ Փոխարքայութիւն=Խեդիվութիւն մը ու հողագործական արգասաւոր երկիր մըն է: Մայրաքաղաքն է Գահիրէ: Գլխաւոր քաղաքներ՝ Աղեքսանդրիա ու Սուէզ:*

2. *Եգիպտական Սուդան, գլխաւոր քաղաք՝ Խարդում:*

3. *Նուպիա, գլխաւոր քաղաք՝ Պերպեր:*

4. *Ղարա-Դաղապուս կառավարութիւն:*

Անգլիական տպագրուածքներ

Անգլիական տպագրուածքներն են.

1. *Հապէշսուսնի հարաւային կողմը՝ Անգլիական արեւելեան Ափրիկէ ու Պապ-իլ-Մանդէպի հեղուկին երկրները՝ Պերպերա:*



ԲԱՐԵՅՈՅՍ

2. *Արեւելեան Անգլիական Ափրիկէ ու Զանզիպար:*

3. *Ափրիկէի հարաւային կողմը՝ Բարեյուսոյ գաղթականութիւն, գլխաւոր քաղաք՝ Բարեյոյս=Գեթդաուն: — Նաթալ, Սուզվեն ու Ռոտեսիա: — Դրանսվալ, գլխաւոր քաղաք՝ Բրեթորիա, և Օրանժ, գլխաւոր քաղաք՝ Պլեմֆոնթեյն, որոնք երբեմն անկախ էին: Դրանսվալ հոգագործական ու անասնաբուծական երկիր մըն է և կը պարունակէ ոսկւոյ, ադամանդի, հանքածուխի, երկաթի ու պղնձի հանքեր: Օրանժ ալ հոգագործական ու անասնաբուծական երկիր մըն է:*

4. *Աբեւմտեան կողմը Նիկէր գետին ու Կոբեճեոյ ծովին եզերքի երկիրներն են Նիկէր ու Լակոս:*

ԳԱՖԻՐ

5. *Կղզիներ՝ Ս. Հեղինէ, Մօրիս, Սեչելեան, ու Զանզիբար:*

ՊՈՅԼՐ ԳԵՂԱՑԻ (ԹՐԱՆՍՎԱԼ)

Ֆրանսական տացուածքներ

1. *Միջերկրականի եզերքը՝ Ձեզայիր ու Թունուզ՝ հոգատրծական ու անասնաբուծական երկիրներին: Գլխաւոր քաղաքներ՝ Ալճիր, Թունուզ, Օրան, Թուատանդին:*

2. *Ատլանտեանի եզերքը Ֆրանսական արեւմտեան Ափրիկէ որ կը պարունակէ Սենեկալ, գլխաւոր քաղաք՝ Ս. Լուի Նաւթրանսական Սուտան ու Ֆրանսական Գոնկոյ, Սուտանի հիւսիսային կողմն ալ՝ Սահարայի արեւմտեան մասը:*

ԳԱՊԻԼ ՀՈՂԱԳՈՐԾ

3. *Պաղ-ել-Մանէպի եզերքը՝ Ոսոխ նաւահանգիստը:*

4. *Կղզիներ. Մատակասգար, գլխաւոր քաղաք՝ Դանանարիւա ու Ռեւինիոն կղզին:*

Գերմանական տացուածք

1. *Անգլիական արեւելեան Ափրիկէի հարաւային կողմը կայ Գերմանական արեւելեան Ափրիկէ:*

2. *Ատլանտեանի եզերքը՝ Հարաւային արեւմտեան Ափրիկէ ու Գամերուն:*

Պորտուկալի տացուածք

1. *Հնդկաց ովկիանոսի եզերքը՝ Արեւելեան Ափրիկէի տերութիւն. մայրաքաղաք՝ Մոզամպիք:*

2. *Ատլանտեանի եզերքը՝ Անկոլա ու Պենկուելա, և Սենեկալի հարաւային կողմը՝ քանի մը կալուածներ:*

3. *Դալարի գլխոյ, Մաւերա ու Ազորեան կղզիները:*

Պելճիական

Ֆրանսական Գոնկոյի արեւելեան կողմը կը պարունակէ Գոնկոյի անկախ տերութիւնը՝ Պելճիքայի թագաւորին վերահսկողութեան տակ: Մայրաքաղաքը՝ Պոմա:

Սպանիական տացուածք

Սպանիացիները Ափրիկէի մէջ ունին Գանարեան կղզիները, Ատլանտեանի եզերքին ալ՝ Սենեկալի ու Մարոքի միջև մեծ երկիր մը:

Իտալական տացուածք

Իտալացիները Ափրիկէի մէջ կարմիր ծովու և Հնդկաց ովկիանոսի եզերքին ունին երկիրներ: Գլխաւոր քաղաքը՝ Մասուա:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ա Փ Ր Ի Կ Է

Ափրիկէի ծովերն են... նեղուցներն են... եւ հաղորդակցութեան մէջ կը դնեն... — Ծոցերն են եւ կազմուած են... — Հրուանդաններն են եւ կը գտնուին... — Ափրիկէի կղզիներն են Ատլանտեանի մէջ... — Հնդկաց ովկիանոսի մէջ... — Ափրիկէի լեռնագօտիներն են եւ կը գտնուին... — Լեռնադաշտերն են եւ կը գտնուին... — Անապատներն են եւ կը գտնուին... — Ափրիկէի լիճերն են .. — Գետերն են եւ կը գտնուին... — Ափրիկէի կը գտնուի .. գօտւոյն են... եւ կը թափին... — Ափրիկէ կը գտնուի .. գօտւոյն տակ. — Շատ տաք է ու յաճախ կ'անձրեւէ... — Զոր ու երաշտ կ'իյայ ունին... — Զգախէժը կը գտնուի... — Սուտանէն մինչեւ Զամպէզ տարածուած է... եւ յառաջ կուգան... — Ֆրանսայի արտադրութիւնն ունին... — Արեւելեան Ափրիկէի մէջ կան... կենդանիները. — Ափրիկէի հանքերն են... — Ափրիկէի անկախ տերութիւններն են... — Մարոքի թագաւորն են... — Հասպէշստանի... — Մոնարքիական երկիրներ... — Օսմանեան երկիրներն են... — Անգլիական երկիրներ... — Ֆրանսական... — Գերմանական... — Բորտուկալի... — Իտալական... — Սպանիական... — Ազատ Գոնկոյ... վերահսկողութեան տակ է. — Ափրիկէի նաւահանգիստներն են Միջերկրականի եզերքը .. Ափրիկէի նաւահանգիստներն են Միջերկրականի եզերքը... — Հնդկաց եւ կը պատկանին... — Ատլանտեանի եզերքը... — Հնդկաց ովկիանոսի եզերքը... — Ափրիկէ կ'արտածէ... — Ափրիկէի երբեմն անկախ կէի մէջ երկաթուղի կայ... — Ափրիկէի երբեմն անկախ երկիրներն են... — Ափրիկէի Հիւսիսային երկիրներն են... Արեւմտեան... Հարաւային... Արեւելեան... — Հողագործական երկիրներ են... — Անասնաբուծական... — Ազատ երկիրներ են... — Անասնաբուծական... — Ազատ ծական երկիրներ են... — Անասնաբուծական... — Ազատ ծական երկիրներ են... — Անասնաբուծական... — Ազատ ծական



ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍ

Ասիա

Ա. ԲՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

1. Ասիոյ ծովափուները

ԴԻՐՔ, ՏԱՐԱԾՈՒԹԻՒՆ, ՍԱՀՄԱՆ. — Ասիա *որ կը պարունակէ Հիւսիսային կիսագունդին մեծ մասը՝ Աչխարհի հինգ մասերէն ամենէն ընդարձակն ու բազմամարդն է գրեթէ։ Հինգ անգամ մեծ է Եւրոպայէն։*

Ասիոյ սահմաններն են. Հիւսիսէն՝ Սառուցեալ ովկիանոս, Արեւելքէն՝ խաղաղական Սառուցեալ ովկիանոս, Հարաւէն՝ Հնդկաց ովկիանոս ու Սուէզի ծոցը, Արեւմուտքէն՝ կարմիր ծով, Միջերկրական ծով, Սեւ ծով, Կասպից ծով և Ուրալ լեռներ։

— ԱՍԻՈՅ ԾՈՎԵԶԵՐԲԸ. — 1. *Հիւսիսային կողմը՝ Սառուցեալ ովկիանոսի եզերքն որ գրեթէ միշտ սառնապատ է՝ կը գտնուի Չելուսքինի հրուանդանը։*

2. *Խաղաղական ովկիանոսն որ կը թրջէ Ասիոյ արեւելեան գլուխը՝ Պեհրեզովի նեղուցին եզերքը՝ մինչև Ռուսական Պուխը՝ Մալագա նեղուցին եզերքը։*

*Խաղաղականի եզերքը ցրուած են բազմաթիւ կրկաթափ արքիպելագոսներ։

ափիկայ է աշխարհիս ամենեն բարձր տեղը: Այս լեռնագօտին մշտնջենական ձիւնով պատած է և իր սառնակոյտներէն ոմանք 50 քիլոմեթր երկայնութեամբ են:

2. Թիան-Շան=Երկնային լեռներ որոնք կ'ուղղուին դէպ ի հիւսիսային արեւելք և կը կցուին Ալթայ լեռներուն. սա ալ կը կցուի Սպանովոյ երկար լեռնագօտւոյն:

3. Քունէ-Լուն լեռնագօտին որ գրեթէ Հիմալայայի բարձրութիւն ունի՝ կը գտնուի առաջին երկու լեռնագօտիներուն միջև:

Հիմալայայի ու Քունէ-Լունի միջև կը տարածուի Դիպեդ անհուն լեռնադաշտն որ աշխարհիս լեռնադաշտերուն մէջ ամենեն բարձրն է: Այս լեռնադաշտին մէջ ալ կան բարձր լեռներ:

Քունէ-Լունի ու Թիան-Շանի միջև կը տարածուի Մոնկոլոյոյ լեռնադաշտն ուր կայ Կոպի անապատը. ամբողջ Ասիոյ ամենեն ընդարձակ անապատն է:

4. Հինուզուշ հատամնաոը դէպի արեւմուտք Պամիրը կը կցէ Երաւեան ընդարձակ լեռնադաշտին. այս վերջինն ալ Արեւելեան Տորոս լեռներով կը կցուի Հայաստանի ու Փոքր Ասիոյ լեռնադաշտերուն:

Հայաստանի հիւսիսային կողմը կը բարձրանայ Կովկաս լեռնագօտին:

Ասիոյ հարաւային երեք մեծ ցամաքակղզինեռուն մէջ կը բարձրանան Արաբիոյ լեռնադաշտը, Տեխանի լեռնադաշտը (Հնդկաստան) ու Հնդկաչինու լեռները:

3. Ասիոյ ջրագրութիւնը

ԱՍԻՈՅ ԵՐԵՔ ՄԵԾ ԶԱՒԻԹԱՓԵՐԸ. — Ասիոյ գլխաւոր գետերը կը բղխին երկու շատ տարբեր երկրամասէ. 1. Հիմալայայէն ու Դիպեդէն գետերը կը հոսին դէպ ի հարաւ ու հարաւային արեւելք. 2. Ագրայէն գետերը կը հոսին դէպ ի հիւսիս ու հիւսիսային արեւելք.

Ասիա կը բաժնուի երեք զանխիտի՝ Սառուցեալ ովկիանոս, խաղաղական ովկիանոս ու Հնդկաց ովկիանոս:

1. ՍԱՌՈՒՑԵԱԼԻ ԶԱՒԻԹԱՓԻՆ ԳԵՏԵՐԸ. — Ոպի, Ենիսէ ու Լենա Սիպերիոյ դաշտագետնէն կը հոսին: Այս գետերը տարեշրջան մեծ մասը սառնապատ են: Լենա կը բղխի Պայքալ մեծ լիճէն:

2. ԽԱՂԱՂԱԿԱՆԻՆ ԶԱՒԻԹԱՓԻ ԳԵՏԵՐԸ.— Ամուր որ Որոցխի ծովը կը թափի, Հոանկ-Հոյ=Դեղին գետ՝ Դեղին ծովը, Եանկ-Ձէ-Քեանկ=Կապոյտ գետ ու Մեհոնկ՝ Ձիւնաց ծովը:

3. ՀՆԴԿԱՅ ՈՎԿԻԱՆՈՍԻ ԶԱՒԻԹԱՓԻՆ ԳԵՏԵՐԸ. — Պրահմապուդրա ու Մեծն Գանգես Պնդկալայի ծոցը կը թափին և իրենց գետաբերանին մօտ լայն կը խառնուին: Ինդոս կ'իջնէ Դիպէդէն և կը թափի Օմանի ծովը՝ լայն ակղա մը կազմելով: Եփրատ ու Տիգրիս Հայաստանի լեռներէն կը բղխին և իրար կը խառնուին՝ կազմելով Շաթ-իւլ-Արապն որ կը թափի Պարսից ծոցը:

ՆԵՐՔԻՆ ԱԻԱԶԱՆՆԵՐ. — 1. Կասպից ծովը կը թափին Ուրալ, Կուր ու Երասխ: 2. Արալ լիճը կը թափին Սիր-Տարիա ու Ամու-Տարիա: Նշանաւոր են Պայգալ, Պալգաշ, Վանայ, Սեւանայ ու Ուրմիոյ լիճերը:

Բ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

1. Կլիմայ

Սիպերիոյ դաշտագետնին որ Հիւսիսային բեւեռին մօտ կը գտնուի՝ ենթարկուած է հիւսիսային սառնաշունչ հովերուն: Ձմեռն երկար է ու սաստիկ ցուրտ կը տիրէ հոն, ամառն ալ՝ կարճ:

Կեդրոնական լեռնային երկիրներու մէջ ամառը սաստիկ տաք և ձմեռը սաստիկ ցուրտ՝ ծովու մակերեսէն շատ բարձր ըլլալուն համար:

Հնդկաստանի, Հնդկաչինու և Ջինաստանի մէկ մասին կլիման վաստաղջ է: Ձմեռը գրեթէ անընդհատ՝ սաստիկ կ'անձրեւէ, ամառն ալ՝ երաշտ ու տաք: Արաբիոյ մէջ թէև ամառը սաստիկ տաք, բայց նուազ խոնաւ է և համեմատաբար հարաւային միւս երկիրներուն՝ քաղաղջ է կլիման:

Միջին Ճաւանի կղզիները, Ջինաստանի արեւելեան եզերքն ու Ասիական Թուրքիոյ մէջ բարեխառն կլիմայ մը կը տիրէ:

2. Արտադրութիւնները

Սիպերիոյ հիւսիսային կողմն որ դաւնտրաներով ծածկուած է՝ գրեթէ անբեր է: Այս գաշտագետ-



նեն կեդրոն ու արեւմուտքը կան անտառներ ու տափաստաններ: Հարաւային կողմը թէեւ բարեբեր է ու արմաւք կ'արտադրէ, բայց քիչ մշակուած է:

Զինաստանի, Ճարոնի ու Հարաւային Ասիոյ գլխաւոր արտադրութիւնն է որիզ. Զինաստանի, Ճարոնի ու Գանգէսի հովտին մէջ կը մշակեն ցորեան, պտղատու ծառեր, թէյ ու բրեզին: Հնդկաստանի մէջ կ'աճեն ղեղակեւի, ափիոն, պղպեղենի, բարեբակեւի ու սպանան:

Սիպերիոյ մէջ կան կարմիր աղուէս, բորենի, արջ որոնք չատ յարգի են իրենց մուշտակին համար: Ասիոյ արեւմտեան կողմն ոդոը կը գործածեմ

Պարսկաստան. *ասոր վրայ պիտի խօսինք առանձին:*

Աֆղանստան՝ *մայրաքաղաք Գապուլ: Գլխաւոր քաղաք՝ Հերաթ:*

Պելուճստան *կը պատկանի Անգլիոյ և վարչապէս կախում ունի Հնդկաստանէն: Գլխաւոր քաղաք՝ Քելաթ:*

ԱՐԱԲԻԱ

Արաբական ցամաքակղզին լեռնագագաթ մըն է որուն մեծ մասը կը գրաւեն անապատներն ու տափաստանները:

Արաբիա նշանաւոր է իր արմաւներով, կաէզով, խնկեղէնով, Մոգայի խահուէով, ուղտով և ձիով:

Արաբիոյ ներսի կողմն անկոխ է:

Արաբիա կը պարունակէ

1. *Օման, մայրաքաղաք՝ Մաշկատ:*
2. *Օսմանեան երկիրներ՝ Հիճազ ու Եեմեն:*
3. *Սինա թերակղզին:*
4. *Աւեն՝ Անգլիական ապագուած:*

ՀՆԴԿԱՍՏԱՆ

Հնդկաստան գրեթէ ամբողջապէս կը պատկանի Անգլիոյ և չատ բարեբեր երկիր մըն է:

Հնդկաստան կ'արտադրէ բրինձ, ցորեն, գարի, ղեղակ, բամբակ, խահուէ, թէյ, ափիոն: Ճարտարարուեստը ծաղկած է, մանաւանդ նշանաւոր է մետաքսեղէնով, ցփոխով, բամբակեղէնով: Կրօնքով մեծ մասամբ Պրահմանական:



ՊՈՄՊԱՅԻ ՄԷՋ ՓՈՂՈՑ

Անգլիական Հնդկաստանի մայրաքաղաքն է Կալկադա: Գլխաւոր քաղաքներն են Պոմպայ, Մատրաս, Տելհի, Պենարես: Սէյլան կղզին կը գտնուի Հնդկաստանի հարաւակողմն և նմանապէս կը պատկանի Անգլիոյ:

Ֆրանսացիները Հնդկաստանի մէջ ունին հինգ քաղաք որուն մէջ նշանաւոր են Բոնտիշէրի ու Շանտեռնակոր:

ՊԵՆԱՐԷՍ

Բորտուգալիներն ունին Կօա՝ Օմանի ծովուն եզերքը:

ՀՆԴԿԱՉԻՆ

Հնդկաչին լեռնային թերակղզի մըն է և բաժնուած է՝

1. *Ֆրանսական Հնդկաչին որ կը պարունակէ 1. Գոչինչին, գլխաւոր քաղաք՝ Սայկոն: 2. Տոնկին, գլխաւոր քաղաք՝ Հանոյի: 3. Աննամ, մայրաքաղաք՝ Հուե: 4. Գամպոճ՝ Ֆրանսական պաշտպանութեան տակ, մայրաքաղաք՝ Բնոմ-Բենկ:*

ՀՆԴԿԱՉԻՆՈՒ ՄԷՋ ԳԵՂ

2. *Անգլիական Հնդկաչին որ կը պարունակէ 1. Պիրմանիա, մայրաքաղաք՝ Մանտալէ, 2. Սինկափուր նաւահանգիստ՝ Մալագա թերակղզւոյն հարաւակողմը:*

3. *Ֆրանսական ու Անգլիական կալուածներուն միջև կը գտնուի Սիամի Թագաւորութիւնը, մայրաքաղաք՝ Պանիոք:*

Հնդկաչինու բնակիչները մեծ մասամբ Մոնկոլ են և կը գրաղին բրինձի մշակութեամբ:

ՉԻՆԱՍՏԱՆ

Չինաստան ընդարձակ կայսրութիւն մըն է, մայրաքաղաքն է Բեյճին: Գլխաւոր քաղաքներ՝ Գանդոն, Շանկհայ, Դիեն-Ձին ու Ցու-Ձեու. ասոնք նշանաւոր նաւահանգիստներ են:

Անգլիացիները Չինաստանի մէջ ունին Նանհին, Հոնկ-Կոնկ կղզին:



ՉԻՆՈՒ ՄԷՋ ԲՐՆՁԻ ԱՐՏ

Բորտուգալիներն ունին Մազաոյ քաղաքը: Գերմանացիներն ունին Քիաու-Ձեու: Ճարտարիներն ունին Բորդ-Արթուր, Լայն: Չինաստանի հիւսիսային կողմը կը մշակուի ցորեն, հարաւային կողմն ալ՝ բրինձ. Գլխաւոր արտադրութիւններն են մետաքս ու թէյ:

ԳՈՐԷԱ

Գորէա Ճարտի ծովուն և Դեղին ծովուն միջև տարածուած թերակղզի և Չինաստանի արեւելեան կողմը Թագաւորութիւն մըն է Ճարտին պաշտպանութեան տակ: Մայրաքաղաքն է Սէուլ:

Ռուսիա ու Ճարտն քանի մը երկար ատեն մրցեցան այս թերակղզւոյն տիրապետութեան համար: Վերջապէս Ճարտն իր թեւարկութեան տակ առաւ:

ՃԱՊՈՆ

Ճափոնի կայսրութիւնը կը բաղկանայ լեռնային ու հրաբղխային կղզիներու երկարաձիգ շղթայէ մը՝ Գուբէլեան արքիպելագոսէն մինչև Ցորմոզա: Գլխաւոր կղզիներն են Եզոյ, Նիբոն, Սիհոֆ ու Քիու-Սիու:

ՃԱՓՈՆՑԻ ԱՂՋԻԿ

Մայրաքաղաքն է Թոքիոյ որ առաջ կը կոչուէր Եոյ: Գլխաւոր նաւահանգիստներն են Եոգոհամա ու Նակազաքի:

Հողը կ'արտադրէ մանաւանդ բրինձ, ցորեն, գարի, թէյ: Գլխաւոր արտադրութիւնն է մետաքս:

Ճարոն Սախոյ գերազանցապէս խաղաղարեալ երկիրն է:

ՁԱՐՈՆՑԻ ԴԵՐԱՍԱՆ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

1. ԲՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Պարսկաստան *որ նաև Իրան կը կոչուի՝ կը տա-*
րածուի Ասիական Թուրքիոյ արևելեան կողմը,
Կովկասիոյ, Կասպից ծովու, Թուրքաստանի, Աֆ-
ղանստանի ու Պարսից ծոցին միջև:

Պարսկաստանի հիւսիսային ու արևմտեան
կողմերը լեռնոտ են, բայց կ'ընծայեն բարեբեր ու
վեղեցիկ հովիտներ: Արևելեան մասն աւազուտ
անապատ է, հարաւային մասերը թէև չատ ամաք,
բայց բարեբեր են և կը պարունակեն Շերազի ու
Սպահանի արգաւանդ երկիրները:

Հիւսիսային կողմը, Կասպից ծովու եզերքը կը
տարածուի Տեհրանեան լեռները, հիւսիսային արևե-
մտեան կողմը՝ Ատրպատականի լեռները, Սաւալան
ու Սխահենս գագաթներով, արևմտեան կողմը՝
Էվիհենս գօտին, հարաւային արևելեան կողմը՝ Լո-
րեստանի ու Ֆարսիստանի լեռներն և արևելեան
կողմը՝ Խորասանի լեռները:

Պարսկաստանի գլխաւոր գետերն են Զայենտիղ
որ կը թրջէ Սպահանը և կ'անհետանայ անա-
պատին մէջ: Գըզըլ Ուզեն կը թափի Պարսից ծո-
վը: Գարուն կը թրջէ Քիւրմանշահն և կը թափի
Պարսից ծոցը:

Ատրպատականի բարձրաւանդակին վրայ կը
գտնուի Ուրմիոյ=Կապուտան լիճն որուն ջուրը
չատ աղի է, արևելեան լեռնագաշտին վրայ ալ՝
Համատուն:

Կլիման հիւսիսային կողմը բարեխառն ու
ձմեռը ցուրտ է, հարաւային կողմը՝ չատ տաք ու
ամառը՝ վառառուղչ:

Պարսկաստան կ'արտադրէ ցորեն, գարի, բըր-
րինձ, բամբակ, մեռաքս, թմակէքի ու գանազան
պտուղներ: Ունի հանքեր որ չեն չահագործուիր:

2. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Պարսկաստան կը պարունակէ հին Մարաստան,
Վասպուրական, Պարսիանայք, Պարթևաստանի մէկ
մասը, Շօշաստան ու Պարսիկ:

Պարսկաստան կը բաժնուի 12 մեծ կուսակա-
լութիւններու:

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐ. — Թեհրան՝ *մայրա-*
քաղաք. տեսարժան չէնքեր: Համատան=
Եկբատան՝ Էվիհենս լեռան ստորոտը, ջրերի
երկրի մէջ: Սպահան՝ պղպեղի երկրի մէջ.
մօտն է Նոր-Ջուղայ Հայոց թաղը: Գազվին՝
ճարտարարուեստ քաղաք, ունի կապերտ: Եզդ՝
հոս կան կրակապաշտ Պարսիկներ: Բէյջ՝ Կասպից
ծովու մօտ, օդը վառառուղչ: Պաղֆրուշ՝ Թեհրանի
ճամբուն վրայ: Դաւրեժ՝ պղպեղի դաշտի մէջ:
Մարանդ, Խոյ, Մակու, Սալմաստ Հայկական հին
քաղաքներ են: Ուրմիա՝ Կապուտան լճին մօտ:
Բիրմանիշան՝ արգաւանդ հովիտի մէջ. մօտն է Պե-
հիստուն ուր կը գտնուի Դարեհի համբաւաւոր
արձանագրութիւնը: Շուշտեր՝ հին Շօշի մօտերը:

Շիրազ նշանաւոր է գինիով, վարդի իւղով ու թեմ-
պէքիով. մօտերը կը գտնուին Սդահիր=Պերսե-
պէքիով. մօտերը կը գտնուին Սդահիր=Պերսե-
պոլիս քաղաքին աւերակները: Մէշէդ՝ Խորասա-
նի գլխաւոր քաղաքն որ ուխտատեղի է Պարսից:
Նի գլխաւոր քաղաքն որ ուխտատեղի է Պարսից:
Պենտեր-Պուշիր ու Պենտեր-Աբպասա՝ Կասպից ծո-
վուն եզերքը նաւահանգիստներ:

Պարսկաստան հետզհետէ Սահմանադրական կա-
ռավարութիւն կը դառնայ, վեհապետը կը կոչուի
Շահ:

Պարթիևները կը պատկանին Արիական ցեղին.
Աշիական=Շիա Իսլամ են:

Պարթիևներէն զատ կան նաև Հայ, Քուրդ,
Թուրք, Թուրմեն, Բաղդիացի, Նեստորական ու
Հրեայ:

Ա. ՆԳԴՐ—ԿՈՎԿԱՍԻԱ

Ա. ԲՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

1. Հողագործութիւն

ԴԻՐՔ, ՍԱՀՄԱՆ. — *Կովկասիա կը տարածուի*
Կովկաս լեռներուն հարաւային կողմը՝ Սև ու Կաս-
պից ծովերուն միջև և կը կցուի հարաւային կող-
մէն Հայաստանի ու Պարսկաստանի հետ:

ԼԵՌՆԵՐԸ. — *Կովկասիա լեռնային երկիր մըն*
է, բայց ունի բարեբեր ու զուարճալի հովիտներ:

Հիւսիսային մասին մէջ կը բարձրանայ Կովկաս
գօտին որ կ'երկարի Սեւ ծովէն մինչև Կասպից
ծով: Կովկասի արևելեան բարձունքները կը ձե-

ացնեն Տաղտանի ու Շիրուանի ղեռները (Աղուանք)։ Այս լեռները կ'ընծայեն հիանալի տեսարաններ, ահաւոր անդունդներ ու ձիւնապատ գագաթներ որոնց մէջ նշանաւոր են Էլպրուս ու Գազպիհ։

Կովկասի հասարակաց հատկութիւնը հազիւ ունի քանի մը անցքեր որոնց նշանաւորներն են Տարիալի կիրճը

ՏԱՐԻԱԼԻ ԿԻՐՃԸ

=«Դուռն Կովկասու»՝ մէջտեղն և Դարբանդ=Ճորայ Կապան=Հունաց՝ արեւելեան կողմը, Կասպից ծովուն եզերքը։

Կովկասոյ հարաւային արեւմտեան կողմը, կուր գետին մէկ կողմը, կը տարածուին Քայֆուրի (հին Կանգառք), Ջղջղր լերինք=Տայոց լեռներ։

Ռուսական Հայաստանի մէջ կը բարձրանան 1. Արագած՝ վաղեմի հրաբուղխ մը (4200 մ.)։ 2. Սիւնեաց լեռներ ժայռուտ գագաթներով՝ Երեւանի դաշտին արեւելեան կողմը։ 3. Գարապաղու լեռները = Հայոց Կովկաս՝ Երասխ ու կուր գետերուն միջև։ 4. Երեւանի դաշտին հարաւային կողմը՝ Ախալեան Թուրքիոյ ու Պարսից սահմանագլուխը կը բարձրանայ Արարատ= Մասիս (5100 մ.) երկու ձիւնապատ գագաթներով։ Մասիս վաղեմի հրաբուղխ մըն էր որուն ահեղ զօրութիւնը յայտնուեցաւ 1840ին։

Գարապաղի ու Տաղտանի միջև դէպի Կասպից ծովը կը տարածուի Մուղան անապատը։

2. Ջրագրութիւն

Կովկասիա կը բաժնուի երկու գաւթերի, Արեւելեան=Կասպից ծովու, Արեւմտեան=Սեւ ծովու։

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՋԱՒԹԱՓ. — *Կասպից ծովու գաւթին գլխաւոր գետն է Կուր որ կը բղխի Գուգարաց լեռներէն, կը թրջէ Արաահան, Ախալցխա, Տփղիս։ Կուր ալ կողմէն կ'ընդունի Պորչայու=Ջորագետ և ուրիշ գետակներ որ կը բղխին Սիւնեաց բարձրաւանդակէն, ձախ կողմն ալ կ'ընդունի Կովկասի գետակները։*

Երասխ կը բղխի Էրզրումի Բիւրակնեան լեռներէն և անցնելով Բասենէն՝ կը մտնէ Ռուսական Հայաստան, կը սահի Երասխաձոր խոր կիրճէն, կը թրջէ Աբարանի գաշտը, կը սողսկի Գարապաղի լեռներուն մէջ. հոն կը ձեւացնէ գեղեցիկ ջրվէժներ և կը միանայ Կուր գետին հետ Մուղան անապատին մէջ։ Երասխ Հայաստանէն կ'ընդունի բազմաթիւ գետակներ, մանաւանդ ձախ կողմէն, ինչպէս 1. Ախուրեան=Արբաչայ որ կ'անցնի Անիէն։ 2. Քասաղ=Ազարան որ կ'անցնի Վաղարշապատէն։ 3. Հրազդան=Զանգի չայ որ կ'անցնի Երեւանէն։ 4. Բերկուշաս=Որոտան որ կը բղխի Գարապաղէն։

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՋԱՒԹԱՓ. — *Սև ծովը կը թափին 1. Ճորոխ որ կը բղխի Էրզրումի լեռներէն, կը մտնէ Ռուսական Հայաստան և կը ժողվէ Տայոց լեռներու գետակները։ 2. Ռիոն=Փասիս որ կ'իջնէ Իմերէթի լեռներէն և կը թրջէ Քութայիսը։*

ԼԻՃԵՐ. — *Կովկասի հարաւային կողմի լեռնադաշտերուն վրայ կը գտնուին բազմաթիւ լիճեր որոնք վաղեմի հրաբուղխներու խառնարաններն են, ինչպէս 1. Սեւանայ լիճ՝ Սիւնեաց բարձրաւանդակին վրայ։ Աւոր ջուրն անուշ է և ունի համանուն փսքրիկ կղզին։ 2. Ջղջղր=Ծովակ Հիւսիսոյ որ կը հաղորդակցի Ախուրեան գետին հետ։*

3. Տնտեսական Տեղեկութիւն

ԿԼԻՄԱՅ. — *Անդր-Կովկասոյ կլիման թէև բարեխառն, սակայն տարապայման է, ձմեռները՝ ցուրտ ու ամառները՝ տաք։ Ռիոնի ստորին հովիտը՝ Սեւ ծովու կողմը ճահճախառն և վատառողջ է։*

ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — *Անդր-Կովկասոյ հողը բարեբեր է ու լաւ մշակուած։ Բերքերն են արմրտիֆ, բրինձ, բամբակ, մեսրոպ ու ամէն տեսակ պտուղներ։*

Կովկասի արեւմտեան բազուկներուն մէջ կան



մեծամեծ անտառներ։ Ընտանի անասուններն են եզ, ոչխար, ձի, ուղտ, ջորի, հէշ։

Անդր-Կովկասոյ մէջ կան հարուստ հանքեր, ինչպէս երկաթ, պղինձ, արծաթախառն կապար և պաքուի մէջ՝ աւսպատ. քարիւղ։

Բ. ԲԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

1. Պատմական Տեղեկութիւն

Անդր-Կովկասիա կը պարունակէ հին Կողխիք, Վրաստանի, Աղուանից ու Ռուսական Հայաստանի — Արարատ, Սիւնիք, Տայք, Գուգարք, Փայտակարան նահանգները։

Կողխիս=Եգեր Պոնտոսի մասը կը կազմէր որ յաջորդաբար ենթարկուեցաւ Հռոմայեցւոց, Բիւզանդացւոց, Օսմանցւոց և Ռուսաց սիրապետութեան։

Վրաստան հին թագաւորութիւն մըն էր որ պահ մը կործանեցաւ Սասանեանց ու Արաբացւոց առեն. նորէն փայլեցաւ ԺԱ. դարուն։ Յետոյ Պարսիկները տիրեցին Արեւելեան մասին ու Արեւմտեան ալ անցաւ Օսմանցւոց։ Վրաստան ԺԹ. դարու սկիզբն անցաւ Ռուսիոյ ձեռքը։

Աղուանիք Միջին դարուն մէջ ունէին փոքր թագաւորութիւն մը որ կործանեցաւ Արաբացւոց ու Թաթարներու արշաւանքի առեն։ Այնուհետեւ Աղուանից երկիրը յաջորդաբար անցաւ Պարսից և Ռուսիոյ։

Ռուսական Հայաստանը կը պատկանէր մասամբ Պարսից ու մասամբ Օսմանցւոց. յետոյ Ռուսերը ԺԹ. դարուն մէջ գրաւեցին զայն։

2. Ազգագրական Տեղեկութիւն

Կովկասոյ Փոխարքայութեան բնակիչները կը բաղկանան այլազեղ ու այլակրօն ժողովուրդներէ. — Հայք, Վիրք, Միներէլ, Իմերէթներ, Թաթար, Պարսիկ, Լեզկի, Ասպազ, Թուրք, Ռուս, Զերքէզ, Լազ, Հրեայ, Գերմանացի։

Վրք, Միներէլներ, Իմերէթներ հասցեղ ու կրօնքով Յունածէս են և ցրուած են Ռիոնի և Կուրի վերին աւազանը։

Լազերն ալ կը բնակին Սև ծովուն մօտերը, Վրաց ցեղէն են, բայց մեծ մասամբ Իսլամ։

Թաթարներն ու Թուրքերն արեւելեան ու հարաւային կողմերը ցրուած են։

Պարսիկները ցրուած են Երեւան ու Պագու։

Լէզկիները կը բնակին Տաղստանի լեռները. կրօնքով Իսլամ են։

Կովկասիոյ արեւմտեան մասին մէջ ալ Սպասգանները ու Չէրքէզները՝ որոնք հետզհետէ կը գաղթեն Ասիական Թուրքիա։

Հայերը ցրուած են գրեթէ ամէն կողմ, մանաւանդ հարաւային մասերուն մէջ. կ'զբաղին առեւտուրով, արուեստով և կը կազմեն Կովկասիոյ յառաջադէմ ժողովուրդը։



ԿԱԹՈՂԻԿԷ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Ց. Անդր-Կովկասիոյ Նահանգները

Անդր-Կովկասիա կը բաժնուի ութը նահանգներու. Թիֆլիս, Խութայիս, Եղիսաբեթուպոլ, Պագու, Տաղստան, Երեւան, Կարս, Պաթում։

1. Թիֆլիսի գլխաւոր քաղաքներ. — Թիֆլիս=Տիփիս *Կուր գետին եզերքը, Փոխարքայութեան մայրաքաղաքն ու Ասիական Ռուսաստանի ամէնէն ծաղկած քաղաքը։ Հայերը հոս մեծ դերք կը կազմեն։ Նշանաւոր է Ներսիսեան վարժարանը։ — Մցխեթա, Առտանուշ, Առտանաւ, Լոռի հին բերդաքաղաքներ։ Լոռիի մօտերն են Հաղպատ ու Սանահինի վանքերը։ — Ախալցխա՝ վաճառաշահ քաղաք։ — Ախալքալաք, Շուլավեր, Դեղար, Միկևան։*

2. Խութայիսի գլխաւոր քաղաքներ. — *Խութայիս Ռիոնի եզերքը, անառողջ երկրի մէջ։ — Բորի՝ Նահանգիս Ռիոնի գետաբերանը։*

3. Եղիսաբեթուպոլի գլխաւոր քաղաքներ. — *Եղիսաբեթուպոլ (Գանձակ) բարեկեր ու մշակուած դաշտի մէջ։ — Նուխի՝ Տաղստանի լեռներուն դիմաց։ Շուշի՝ բարձր ու լեռնային երկրի մէջ։ Շուշիի հետախոյզ կողմը կը գտնուի Զանկազուր Հայաշատ վիճակին ու Տարեւու վանքը։*

4. Պագուի գլխաւոր քաղաքներ. — Պագու՝ *Կասպից ծովու եզերքը, վաճառաշահ նաւահանգիստ։ — Շահախի՝ անուանի գորգերով։*

5. Տաղստանի գլխաւոր քաղաքներ. — *Դարբանս=Տէրպենտ՝ Կասպից ծովուն եզերքը, Կովկասի սարերուն, ունի նշանաւոր դերք որ կը համապատասխանէ հին Ճորայ պահակին։*

6. Երեւանի գլխաւոր քաղաքներ. — *Երեւան Հրազդանի եզերքը, ունի հնութիւններ ու ամուր բերդ։ — Վաղարշապատ ուր կը գտնուի Էջմիածին Հայոց Հայրապետութեան աթոռը, անուանի իր Մայր-Տաճարով, Մատենադարանով, Ճեմարանով։ Նոր Պայազիտ՝ Սեւանայ լիճին մօտ՝ Երեւանի ամառանոց։ — Կաղզուան՝ գեղեցիկ դերքով։ — Կողբ՝ ունի ազուամակ։ — Իկիր՝ Մասիսի սարերուն։ — Նախիջեւան, Ջուղա, Օրտուպատ, Ագուլիս՝ Հայաբնակ տեղեր։*

7. Կարսի գլխաւոր քաղաքներ. — *Կարս՝ նշանաւոր բերդաքաղաք՝ զոր Ռուսերը գրաւեցին 1878ին։ — Կիւմրի=Ալեքսանդրապոլ՝ Ախուրեանի եզերքը։ Ասոր հարաւակողմը՝ Ախուրեանի ալ եզերքը կան Անի հռչակաւոր քաղաքին աւերակները։*

8. Պաթումի գլխաւոր քաղաքներ. — *Պաթում՝ Սև ծովու եզերքը նաւահանգիստ, չափաւոր կովկասիոյ արեւպրութեանց ու կայսրան երկաթուղոյ։ — Արդուին՝ Ճորոխի եզերքը, լեռնային երկրի մէջ։*

ԱՄՓՈՓՈՒՄ

Ա. ԱՍԻԱ

Ասիա կը պարունակէ... — Ծովերն են... եւ կազմուած են... — Ծոցերն են... եւ կազմուած են... — Նեղուցներն են եւ հաղորդակցութեան մէջ կը դնեն... — Թաղաղակեան են եւ հաղորդակցութեան մէջ կը դնեն... — Թաղաղակեան մէջ... մէջ ցրուած են... կղզիները. — Հնդկաց ովկիանոսի մէջ... — Միջերկրականի մէջ... — Ասիոյ թերակղզիներն են եւ — Միջերկրականի մէջ... — Ասիոյ կեդրոնական մասը կան... — Պակ'երկարին... — Ասիոյ հարաւային մասը միր կը գտնուի... — Սիպերիա... — Ասիոյ հարաւային մասը տաժէ... — ձարոն... — Ասիոյ մէջ Անգլիացիներն ունին... — Ֆրանսացիները... — Բորդուկալցիները... — Ասիոյ նաւահանգիստներն են եւ կը գտնուին... եզերքը եւ կը կազմեն... — Արաբիա նշանաւոր է... — Արաբիոյ երկիրներն են... — Պարսկաստան կը գտնուի... — Արաբիոյ լեռներն են... — Դետերն են եւ կը թափին... — Լիճեր եւ կը գտնուին... — Պարսկաստանի կլիմայն... — Կ'արտադրէ... — Պարսկաստան կը պարունակէ... հին երկիրները. — Քաղաքներն են... — Նաւահանգիստներն են եւ կը գտնուին... եզերքը. — Հայաստանի մասը կը կազմեն... քաղաքները... — Հայեր կը գտնուին... քաղաքներու մէջ. — Պարսկաստանի մէջ կը բնակին... ժողովուրդները. — Անդր-Կովկասիա կը գտնուի... — Լեռներն են... — Ցրուած են... — Ռուսական Հայաստանի մէջ կան... լեռները. — Անդր-Կովկասիոյ գետերն են... — Երասխի գետակիցներն են... — Սեւ ծովը կը թափին... — Ռուսական Հայաստանի լիճերն են... — Անդր-Կովկասիա կ'արտադրէ... — Հանքերն են... — Անդր-Կովկասիա կը պարունակէ սա... հին երկիրները. — Ռուսական Հայաստանի նահանգներն են... — Կովկասիոյ բնակիչներն են... — Հայերը ցրուած են... — Ցառաջադէմ ժողովուրդն են... — Անդր-Կովկասիա կը բաժնուի սա 8 նահանգներու... — Թիֆլիսի գլխաւոր քաղաքներն են... — Խութայիսի ... — Եղիսաբեթուպոլսոյ... — Պագուի... — Տաղստանի... — Երեւանի... — Կարսի... — Պաթումի... — Ռուսական Հայաստանի քաղաքներն են... — Հայերը կը գտնուին նաեւ... քաղաքներուն մէջ. — Անդր-Կովկասիոյ մէջ երկաթուղի կայ... — Հայոց Մայր-Աթոռը կը գտնուի... — Ռուսական Հայաստանի նշանաւոր հին վանքերն են... — Հայոց պատմութենէն ծանօթ են Ռուսական Հայաստանի սա տեղերը...։

ՎԵՐԱՏԵՍՈՒԹԵԱՆ ԽՏԱՑԵԱԼ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Խեցգետնի Աբեւագաթձն ո՞ր երկիրներէն կ'անցնի։ Արջային շրջանո՞կը։

Ո՞ր քաղաքները կը գտնուին Ս. Բեգերսպուրկի, Բարլովի, Հռոմի, Դահլիճէ լայնութեան աստիճանին տակ։ Գծեցէք Ս. Բեգերսպուրկէն վլատիվոստոք երկաթուղին։ Որո՞նք են եռաշտամբեր, Շանկհայի, Պագաւոյ, Պամպայի արտադուռները։ Սինկաբուրի դերքին առաւելութիւնները որո՞նք են։

Ո՞ր կը գտնուին սա՛ ծովերը՝ Արալ, Դեղին, Կարմիր, Ճաբոնի, Օխոցքի, Օմանի։ Ծոցերը՝ Գանգէսի, Պարսից, Պենկալայի։ Նեղուցները՝ Մալագդայի, Պոպ-Լը-Մանաէպի ու Պէհրինկայի։ Կղզիները՝ Ճաբոնի, Սէյլան։ Թերակղզիները՝ Արաբիա, Անատոլու, Գամչադգա, Գոբէա, Հնդկաստան, Հնդկաչին, Հոռանգաձիները՝ Արեւելեան, Գոմորին, Զելուանքին, Ոմանեան։ Լեռները՝ Ալդայ, Գարագորում, Թիան-Շան, Հիմալայա, Հինտուքուշ, Սգանովոյ, Փուէնլան։ Դետերը՝ Ամու-Տարիա, Գանգէս, Ենիսէ, Եփրատ, Ինդոս, Լենա, Կապոյա, Հոանկ-Հոյ. Մեքքան, Պրահմապուտրա, Սիր-Տարիա, ուրկէ՞ կը բղխին. ո՞ր կը թափին։ Լիճերը՝ Պայգալ, Վանայ, Երկիրները՝ Ասիական Թուրքիա, Աֆղանստան, Գոբէա, Թուրքեստան, Կովկաս, Հնդկաստան, Հնդկաչին, Ճաբան, Չինաստան, Պարսկաստան, Սիպերիա, Սիամ։ Որո՞նք են ասոնց մայրաքաղաքները, գրեցէ՛ք այբուբենի կարգաւ։

Հետեւեալներուն մէջ որոշեցէք թէ ո՞րը գետ, ծովածոց, երկիր, լեռնագօտի, կղզի, ծոց, քաղաք, նեղուց, թերակղզի, լեռնագաշտ, պարանոց, ջրանցք, հրաբխագոյն եւլն. են և ո՞ր կը գտնուին։ Ալդայ, Ամու-Տարիա, Անդամ, Աստէն, Արաբիա, Արալ, Արեւելեան, Աֆղանստան, Բեքրին, Բնամ-Բենկ, Բանգիշերի, Բորգ-Արմաւիր, Գամպոճ, Գանգէս, Գանգան, Գարագորում, Գոմորին, Գոչինչին, Գոբէա, Գուրիլեան, Դաւրէժ=Թեպրիզ, Դեհրան, Դեհրի, Եփրատ, Լնդկ-Չէ-Գեանկ, Եռգոհամա, Եմէն, Ենիսէ, Եփրատ, Ինդոս, Խաղալական, Կալկադա, Կասպից, Կարմիր, Կոպի, Կովկաս, Հանդի, Հինտուքուշ, Հիմալայա, Հինտուքուշ, Հանկ-Բանկ, Հաւէ, Ճաբան, Մագադա, Մալագգա, Մանատալէ, Մեսոպոտ, Մեքքէ, Նափրին, Ուրալ, Ուրմիա, Շանտաեռնագոր, Զին, Զինաց, Պալդաշ, Պամիր, Պայգալ, Պաթէլ-Մանաէպ, Պարսից, Պարսկաստան, Պելու-Ճաան, Պեհրինկայի, Պենկալա, Պոմպայ, Պուխարա։ Ռանկուն, Սալկան, Սաքսալին, Սգանովոյ, Սէյլան, Սիամ, Սիր-Տարիա, Սինկաբուր, Սիպերիա, Տիգրիս, Տիգրիս։ Փիլիպպեան, Քիւռ-Սիւռ։ Օխոցքի, Օմանի, Օպի, Ֆորմոզա։



Կ. ՊՈԼԻՍ — ՁԱՓԱԼ ԷԼ

ՎԵՑԵՐՈՐԴ ՄԱՍ

Տեղագրութիւն

Կ. ՊՈԼԻՍ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Ա. ԲՆԱԿԱՆ

1. Ջրագրութիւն

ԴԻՐՔ. — Կ. Պոլիս կուսակալութիւնը կը բաղկանայ երեք Սանճագէ — Սդարկոզ, Պէյօղլու, Սկիւտար — որոնք իրարմէ կը բաժնուին Վոսփորի նեղուցով ու Ոսկեղջիւր ծոցով և չարակից գաղաւներէն:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Երեք քաղաքն ալ՝ Կ. Պոլիս, Բերա ու Սկիւտար բլուրներու վրայ կը բարձրանան: Առնցմէ մէկը՝ Սկիւտար Ասիական եզերքն է, միւս երկուքն ալ Եւրոպական եզերքն են:

Սդամպոլի միայն արեւմտեան կողմը ցամաք է, միւս կողմերը չրջապատուած են հիւսիսային արեւելք Ոսկեղջիւրով, արեւելքը՝ Վոսփորով, հարաւը՝ Մարմարա ծովով:

Քաղաքը թեթեւակի կը բարձրանայ եօթնա-բլրեան խորշ խորշ լեռնագագաթի մը կողին վրայ որ արեւմուտքէն դէպ ի արեւելք կ'երկարի Էմիրնէ Գաքուէն մինչև Սերայ Պուռնու:

ՍԱՀՄԱՆ. — Կ. Պոլիս կուսակալութեան սահմանն է. հիւսիսէն՝ Սև ծով, արեւելքէն՝ Գօճա-Էլի, հարաւէն՝ Մարմարա և արեւմուտքէն՝ Զաղաղճա:

ԾՈՑ. — Կ. Պոլիս կուսակալութեան մէջ ծովը սմանչելապէս բաշխուած է, այնպէս որ իր մէն մի մասը ծով կը տեսնէ:

Վոսփորի մէկ բազուկն է Ոսկեղջիւր ծոցն որ իր անունն առած է ձղճղկէն ձև ունենալուն:

Ոսկեղջիւր Սդամպոլի նաւահանգիստն է որ կ'սկսի Սերայ Պուռնուէն և կը վերջանայ Էյոպի առջև:

ՆԵՂՈՒՑ. — Կ. Պոլսոյ նեղուցն է Վոսփոր որ Եւրոպան Ասիայէն կը բաժնէ:

Վոսփոր կ'սկսի Ղալաթիոյ մաքսատան առջևէն և կը վերջանայ Գավագ: Իր եօթն պտոյտներով կը ձևացնէ եօթը յաջորդական բազուկ որ իրարմէ կը բաժնուին եօթը սարով:

ԳԵՏԵՐ. — Ոսկեղջիւրի մէջ կը թափին Ազիպէհիոյ սու որ կը բղխի Պուրգոսի հարաւային կողմէն և Քեաղըտհանէի սու որ կը բղխի Պելկրատճըգէն քանի մը քիլոմեդր հեռու:

Վոսփորի գետակներուն մէջ նշանաւորն է Մեծ Կեօղ սու որ կը բղխի Ալէմտաղի հիւսիսային արեւելեան կողերէն և կը թափի Անատոլու Հիսարի հարաւային կողմը:

ՊԵՆԵՐ. — Պելկրատճըգի անտառն որ Պէօյիւք-Տէրէէն 10 քիլոմեդր դէպ ի հիւսիս կը գտնուի՝ նշանաւոր է իր ջրհեղեղներով=սելևեռներով: Առնց ջրերը ջրաղնեերով բերուած են Պոլիս և



Պէյօղլու սանճաքները։ Պոլսոյ ու Պէյօղլուի աղբիւրները պէնտերան չուրերն են։

Տերոսի լճին չուրերն ալ ագուագանիերով բերուած են Պէյօղլու, նաև Քեազըտանէի չուրն ալ։

ՉՐԱՄԲԱՐՆԵՐ. — *Բիւզանդացիներէ մնացած են բազմաթիւ չրամբարներ որոնց մէջ նշանաւոր են Երէ Պադան Սերայ ու Պին Պիր Տիրէք։*

Ջ. Հողագործութիւն

ԲԼՈՒՐՆԵՐ. — *Սդամպոլի ու Պէյօղլուի բլուրները Սդրանճայի բազուկներն են, Սկիւտարինն ալ՝ Բիւթանեական լեռներուն։*

ԿՂԶԻՆԵՐ. — *Մարմարա ծովուն մէջ, Սախալեան ծովեզերքին մօտիկ, Կ. Պոլսոյ հարաւային արեւելեան կողմը համախմբուած են Իշխանաց կղզիները։*

Կղզիներն լինն են Թուով, 4ը մեծ, 5ը փոքր։

Մեծ կղզիներն են Բրոդի=Գրնապը, Անդիլիոնի, Հալքի=Հէյպէլի ու Բրիւճիբոյ=Պէօյիւք ատա։

ԼԵԶՈՒԱԿՆԵՐ. — *Վոսփոր ունի բազմաթիւ լեզուակներ որ կ'երկարին դէպ ի խորչերը, ինչպէս կը տեսնուի Աչխաբնոցոյին վրայ։*

ԱՄՓՈՓՈՒՄ

Սկիւտար կը գտնուի Կ. Պոլսոյ... կողմն եւ... եզերքը. — Պէյօղլու... — Սդամպոլի միայն... ցամաք է. — Պոլսոյ բլուրները կ'երկարին.... — Կ. Պոլսոյ բլուրներն են... — Ոսկեղջիւր... բազուկն է եւ Պոլսոյ... — Վոսփորի եզերքը կան... սանճաքները. — ... գեղեցիկ զբօսավայրեր են. — Պոլսոյ խած ջուրը... կուգայ. — Պոլսոյ տուներուն մէջ կան եւ կը ծառայեն... — Պոլսոյ բլուրները... բազուկն են. —Ես տեսած եմ ... կղզին.—Վոսփորի լեզուակներն են...,

Բ. ՏՆՏԵՄԱԿԱՆ

ԲԵՐԲԵՐ. — *Կ. Պոլիս կուսակալութիւնը հողի նեղ երիզ մըն է որ հարաւ կը բաւէ բանջարեղէնի ու մրգեղէնի մշակութեան։ Նշանաւոր են իր բանջարեղէններն ու պտուղները։*

ԱՐՈՒԵՍՏ. — *Հետզհետէ կը ծաղկին իր արուեստները։*

ԱՐՀԵՍՏ. — *Կ. Պոլսոյ մէջ ծաղկած են դպրոցութիւնը, առաղձագործութիւնն ու ասեղնագործութիւնը։*

ԵՐԿԱԹՈՒՂԻ. — *Կ. Պոլիս կուսակալութեան երկաթուղւոյ գիծերն են.*

1. *Կ. Պոլիս—Քիւչիւք Զեքմէճէ. ասոր կայարաններն են Սիրքէճի, Գում-Գափու, Եէնի-Գափու, Սամաթիա, Եէսի-Գուղէ, Մագրի-Քէոյ, Սան-Սդեֆանոյ, Քիւչիւք Զեքմէճէ։*
2. *Հայատար-Բաչա—Հէրեքէ. ասոր կայարաններն են Էրեղլի-Քէոյ, Պոստանճըգ, Մաղ-Թեբէ, Գարթալ, Բեւնիֆ, Թուզլա, Կէպզէ, Տիլ-Իսկելէսի, Թաշճանճըգ, Հէրեքէ։*

Մայրաքաղաքը Կ. Պոլիս—Քիւչիւք-Զեքմէճէ գծով կը հաղորդակցի մինչեւ Բարիզ։

Հայատար-Բաչա—Հէրեքէ գծով ալ՝ մէկ կողմէ մինչեւ Էնկիւրիւս, միւս կողմէ՝ մինչեւ Գոնիայէն անդին։

ՓԱՊՈՒՂԻ. — *Կադաթա—Բեռա գառիվերը Գաբաքէօյէն մինչեւ Գուլէ-Գաբու կայ սաորերկրեայ փապուղին=թիւնէլը։*

ԹՐԱՄՈՒԷՅ. — *Սդամպոլի թրամուէյի ուղեգծերն են.*

1. *Պալըգ-Բազար—Այա Սոֆիա։*
2. *Այա Սոֆիա—Սուլթան Պայազիտ։*
3. *Սուլթան Պայազիտ—Ա.գսքէրայ։*
4. *Ա.գսքէրայ—Եսի-Գուղէ։*
5. *Ա.գսքէրայ—Թոփ-Գաբու։*

Կադըգիւղի ու Բերայի թրամուէյի ուղեգիծերն են.

1. *Ա.զապ-Գաբու—Գարաֆէօյ։*
2. *Գարաֆէօյ—Օրթաֆէօյ։*
3. *Գարաֆէօյ—Շիշլի։*

ՇՈՒԵՆԱԻԱՅԻՆ ԳԻԾ. — *Վոսփորի ու Մարմարայի մէջ Շիրքէճի Խայրիէ եւ Ոսկեղջիւրի մէջ համանուն չոգենաւերը կ'երթեւեկեն։*

ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ. — *Կ. Պոլիս Օսմանեան կայսրութեան ներածման ու արտածման պիտաւոր չահատոնն է։ Իզմիր եւ Սեզանիկ։*

ԱՄՓՈՓՈՒՄ

Մեր Թաղին մէջ յառաջ կուգան... բերքերը. — Հայրս արուեստագէտ է. — Հայրս կամ... ազգականս... արհեստաւոր. — Մեր Թաղէն կ'անցնի... երկաթուղին. — Ես երկաթուղիով ճամբորդած եմ... — Մենք կրնանք երթալ Գոնիա... սակայն քաղաքներէն անցնելով. — ... անոր Բարիզ

ՇԻՆ
ԲԻԻԶԱՆԴԻՈՆ
ԵՒ ԱՐԴԻ
Կ.ՊՈԼԻՍ
Ասպիճան. 1:50,000
Գահարիճ
Այնալը Գաւազ
Բամիզ Ջիթղլիք
Սիւլիճե
Էյուպ
Հալըճ Օղլու
Բիւիւք Չեքմէճէ
Օթագճըլար
Թերսհանե
Գալաթա
Տիվանհանե
Սարմաշըգ
Գալաթա Սարայ
Թաքճի
Բոր Գարու
Եենի Գամիճ
Շեհիր Էմինի
Մելանահանե Գարու
Աղաճ Սերայ
Սիլիվրի Գար.
Մարմարա Ծով
Ս. Անդրեաս
Սամարիա
Եեդի Գուլէ
Նալըր Գար.
Ագգ Հաճեդաճց
Ս. Ստեփանոս
Ս. Ամիդեաս
Ս. Ալեքսանդր

Վերջերս այս բաժանումն ունեցաւ իր տարաբաժանումներն որոնք հետզհետէ պիտի զործադրուին։

Տասը տայիրներն էին. 1. Սուլթան Պայազիտ, 2. Սուլթան Մեհմետ, 3. Ճերահ Բաշա, 4. Պիշիրթաշ, 5. Եվի Իհյ, 6. Պէյողու, 7. Պէյոլիւ-Տէրէ, 8. Գանդըձա, 9. Սկիւտար, 10. Դատրէյոյ։

Կ. Պոլսոյ չրջակայքերը կան սա գաղանները. 1. Պէյզոզ, 2. Գարդալ, 3. Կէսկէ, 4. Իշխանաց Կղզիներ, 5. Քիւչիւք-Զեմէճէ։

ԱՄՓՈՓՈՒՄ

Մեր թաղը կը գտնուի... տայիրէն. — Մեր գեղը կը պատկանի... տայիրէյին. — Ա. տայիրէն կը տեսնէ... ծովը. Բ.ը..., Գ.ը..., Դ.ը..., Ե.ը..., Զ.ը..., Է.ը..., Ը.ը..., Թ.ը ..., Ժ.ը... — Ծով չեն տեսներ... — Ոսկեղջիւրի պարպին երկայնքն են սա... տայիրէնները. — Մարմարային...— Յաժաքի կողմին...։

Ե. ՆՇԱՆԱՒՈՐ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա. Երջանակ

Ա. Թաղապետական չրջանակի կեդրոնն էր Պայազիտի կողմը։

Պալըզ-Բազարեն Սերասքիրէ ուղեդծին չրջակայքերը ցրուած է քաղքին հնութեանց մեծ մասը։

1. *Վաիտէ Սուլթանը=Եվլի-Ճամի որ երեք հոյակապ դուռ ունի, մէկը՝ ճակատէն, միւս երկուքը՝ կողմնակի։ Դուռները կը բացուին մարմարէ վերնագաւիթներու վրայ։ Երկու մինարէ ունի, իւրաքանչիւրն երեք շերիֆեով։*

2. *Նշանաւոր են նոր չէնքերուն մէջ Բ. Դուրը, Աստիճն ու Եւրոպական Թուրիոյ երկաթուղոյ կայարանը։*

3. *Այա-Սոֆիա նախապէս Յունաց Ս. Սոֆիա եկեղեցին էր։ Մեծն Յուստինիանոս այս եկեղեցին ուղղով ընդարձակել՝ հաւաքել առաւել նշանաւոր տաճարներու թանկագին սիւները, այնպէս որ եղաւ աշխարհի չորրորդ նշանաւոր եկեղեցին։ Տրդատ Հայ ճարտարապետը 987ին նորոգեց այս եկեղեցին։*

Այա-Սոֆիա Յունաց Պատրիարքական եկեղեցին էր մինչև 1453։

Կ. Պոլսոյ առումէն ետք Մահմէտ սուլթան Մեհէմմէտա այս եկեղեցին մզկիթի փոխեց։ Ունի 4 մինարե։ Գմբէթին գագաթը կայ արոյրէ մեծարժէք մահիլ մը։

4. *Երէ Պադան սերայ=Վասիլիայի ջրաւերքը կը գտնուի Այա-Սոֆիայի հիւսիսային արեւմտեան կողմը։ Մեծն Կոստանդիանոս չինած է այս ջրամբարն որ առօրեկրեայ, կամարակապ չէնք մըն է։ Ունի 336 մարմարիոնէ սիւն 12 մեղր բարձրութեամբ։ Սիւները՝ երկայնքը 28 կարգ են ու լայնքը՝ 12 կարգ։ Մէջը ճոկ ալ կայ։*

5. *Սերայը Սգամպոլի առաջին բլրին վրայ կը բարձրանայ։ Սերայը կը գրաւէ հին Բիւզանդիոն ու իր Ակրոպոլիսը։*

Սրպի Սերայը=Էնիշէրուներ Հիւանդանոց չինուած է 1478ին Ֆաթիհ սուլթան Մեհէմմէտէն որ նախապէս կը բնակէր Էսքի սերայ՝ արդի Սերասքիրիին։

Սրպի Սերայը 3 մասէ կը բաղկանայ. — Բուն սերայը, Ենիչէրիներու դանիմէն ու երեք պարտէզներ։

Սրպի Սերայն եօթը դուռ ունի։

Սերայի բլրին ծայրն երեք գարաւտան կայ։ Մէջտեղի գարաւտանի վրայ կը գտնուի Հնութեանց թանգարանը, նաև Կիւլհանէի խոշոր Սուլթան Ապտուլ-Մէճիտ սարպպրեց 1839 Հոկտեմբեր 10ին խտպղը Հիւանդանոցը։

Կիւլհանէի քէօշկին եաևը կը գտնուի Զարպհանէ=Փողերանոցը։

6. *Ծովեզեն մօտիկ, Ախոռը Գարու կը գտնուին Բուկոլեոն պալատին ու Լիմանի=«Նաւահաւոյց»ին՝ Զաղլաղը Գարուին բնակարանները։*

7. *Ա.թ-Մէյտան=Զիւարձախանան կրկէսը յատկացած էր ձիընթացքի հանդէսի։ Մեծն Կոստանդիանոս չինեց զայն՝ գանազան տեղերէ սիւներ ու արձաններ բերել տալով։ Հիմայ անչքաբ հրապարակ մըն է։*

8. *Հրապարակին մէջտեղ կը կանգնի Տիխիի թաշ= Եգիպտական կոթողն որ ունի մարմարիոնէ 4 պատուանդան։*

9. *Այս հրապարակը կը գտնուի նաև Օձաստոյն սիւնն որ կը ներկայացնէ իրար փաթթուած 3 օձ։ Մէկ օձին գլուխը ջախջախուած է։*

10. *Ա.թ-Մէյտանի հրապարակը կը գտնուի նաև Որևափակ բուրգը՝ ոսկեզօծ արոյրէ։*

11. *Ա.թ-Մէյտանի հրապարակէն քիչ մը հեռու կը գտնուի Քիւչիւք-Այա-Սոֆիա՝ Բիւզանդական Մ. Սարգիս ու Ս. Բագոս եկեղեցին։*

12. *Զաղլաղը-Գարուին ձախ կողմը կայ Սուլթան Ահմետի մզկիթը 6 մինարեով, չորսը 3ական շերիֆեով, երկուքը 2ական շերիֆեով։ Այա-Սոֆիայէն եաք կ. Պոլսոյ գլխաւոր մզկիթն էր։*

13. *Ա.թ-Մէյտանի դիմացը Տիվան եօլուի մօտերը կայ Պին-պիր-տիրեք=Փիլոխեի կամարակապ ու սիւնազարդ ջրամբարը։ Սանդուխով վար կ'իջնուն։ 212 սիւն ունի։ Սիւները 14 կարգ են։ Հիմայ ոտաչտանէներու յատկացուած է։*

14. *Սրպի Տիվան եօլուի տեղը կը բարձրանար Զեմսիպէհի մարմարիոնէ հոյակապ բաղնիքը։*

15. *Տիվան եօլուի աջ կողմը կը բարձրանայ Զեմսիդէի թաշ=Մեծն Կոստանդիանոսի պորփիւրէ կոթողը 90 ոտնաչափ բարձր որ սեւցած է հրդեհէն։ Գագաթը կար 15 մեղր բարձրութեամբ արձան մը, զոր զարկաւ տապալեց կայծակ մը։ Զեմսիդէրլի թաշին մօտ է Սուլթան Մահմուտի հոյակապ դամբանարանը։*

16. *Մեծ Շուկան չինուած է 1461ին և նորոգուած 1894ին։ Մեծ Շուկան կը բաղկանայ 33 չուկայէ որոնց մէջ նշանաւոր է Պեհեստհիը։*

17. *Մեծ Շուկային քով Բ. բլրին վրայ կը բարձրանայ Նուրը-Օսմանիյէ մզկիթն որ ունի 2 մինարէ՝ երկերկու շերիֆեով։*

18. *Բ. բլրին վրայ, Սերասքէր-Գարուսիի աջ կողմը կայ Սուլթան Պայազիտի մզկիթը՝ համանուն հրապարակով։ Մզկիթը 2 բաղմանկիւն մինարէ ունի՝ մէյմէկ չերիֆեով։ Մզկիթին գաւիթը կան բաղմաթիւ աղաւնիներ։*

19. *Մզկիթին մօտ կը գտնուէին Թէոդոսի պալատն ու համանուն հրապարակը։*

ԱՄՓՈՓՈՒՄ

... մզկիթները նախապէս եկեղեցի էին — Այա Սոֆիան... եկեղեցին է. — Քիւչիւք-Այա-Սոֆիան... — Պին-պիր-տիրէքն ունի... — Երէ պաթանը... — Ա. Երջանակի Բիւզանդական հնութիւններն են... — Օսմանեան հնութիւններն են...։

(Շարունակութիւն)

Սերասքէր գաբուսի ու իր չրջակայները կան.

1. *Սերասքիր-Գարուսի՝ Էսքի սերայի տեղը որ նորոգուեցաւ 1870ին։ Սերասքէրի արուսքին Մայր-պրան երկու կողմը կան մէյմէկ քէօշք։*

Երկու կողմնակի դուռ ալ ունի, մէկը՝ արեւմտեան կողմը, միւսը՝ արեւելեան կողմը։ Արեւելեան կողմինը կը կոչուի Տիվան գարու որուն առջև հարթավայրի մը վրայ, Սգամպոլի ամէնէն բարձր բլրին գագաթը, կը բարձրանայ Սգամպոլի աչտարակը՝ չինուած 1835-1839։

2. *Սգամպոլի մզկիթներուն մէջ ամէնէն մեծաչուքն է Սիւլէյմանիյէն որ Սերասքէրլէ պաշտօնատան հետ կը գրաւէ Սգամպոլի Գ. բլուրը։ Մզկիթը չինուած է 1550-1566 Դոճա-Միմար Սինանի ձեռքով, որ ամէնէն նշանաւոր թուրք ճարտարապետն է։ Մզկիթին ամէնէն մօտիկ մինարէները բազմանկիւն են՝ իւրաքանչիւրն երեք երեք չերիֆեով։*

3. *Սուլթան Պայազիտի ու Սուլթան Մեհէմմէտի միջև կը գտնուի Շահզատէ ճամի որուն ճարտարապետութիւնը հետաքրքիր է։*

4. *Ապալ Վէֆայի հրապարակին հարաւային արեւմտեան կողմը կը գտնուին Զէյրէք ճամի՝ հին Պանդոկրատոր վանքն ուր թաղուած են Բիւզանդական քանի մը կայսերազուններ, նաև Պանդոկրատորի ջրամբարը 32 սիւնէ կամարով։*

5. *Լալէլի թաղին մէջ է հանանուն ճամին որ երկու մինարէ ունի՝ մէյմէկ չերիֆեով։*

6. *Լալէլի մզկիթին քով կը գտնուի Պոտրում ճամիի՝ հին Թէոդոսեան=Փոկաի ջրաւերքը։*

ԱՄՓՈՓՈՒՄ

Ես տեսած եմ Ա. Երջանակի սա հնութիւնները... եւ կը գտնուին... — Սա... հնութիւնը կը գտնուի բլրի վրայ. — ... ծովեզերք. — ... բլրին գագաթը. — ... Բիւզանդական եկեղեցի էին եւ վերածուեցան... մզկիթներու. — Օսմանեան հնութիւններն են...։

Բ. Երջանակ

Բ. Երջանակին կեդրոնն էր Ֆաթիհիհ մեծ մզկիթին կողմը։

Սուլթան Պայազիտ—Սուլթան Մեհմետ ուղեգծին կողմը կան.

1. *Զուգուր-Չամամ՝ Մեծն Կոստանդիանոսի Ջրմուղներն սեղը զոր չինեց Ֆաթիհ սուլթան Մեհէմմէտ։ Կը կոչուի նաև Զիվիի՝ քէ՛ կիներուն*

և թէ երիկ մարդոց յատուկ սրահներ պարունակելու համար:

2. Սուլթան Մեհեմետ՝ Մեծն Կոստանդիանոսի կառուցած Առաքելոց Եկեղեցին. զոր նորոգեց ու ընդարձակեց Մեծն Յուստինիանոսի Թէոդորա կայսրուհին: Հոս թաղուած են Ս. Հեղինէ, Մեծն Կոստանդիանոս, ուրիշ կայսերք ու Ս. Ոսկեբերան: 1453-1463 եղաւ Յոյն Պատրիարքարան: Ֆաթիհ սուլթան Մեհեմետ 1463-1469 մզկիթի փոխեց: Երկու մինարէ ունի՝ երկերկու չերիֆէով:

3. Գրզ թաշ=Մարկիանոսի կոթող զոր չինեց Մարկիանոս կայսրը: Մարմարիոնէ է և բարձրութիւնն է 10 մեդր: Գեհանաչարժէն վերաւած ըլլալով՝ երկաթով կապած են:

4. Ե. բլրին վրայ՝ Ֆենէրի զառիվարը կը զբաղնուի Հին Պանիագարիպոս «Աւետարհնաց» վանք: Հոս էր 1462—1591 Յոյն Պատրիարքարանը: 1591ին մզկիթի փոխուեցաւ:

Սուլթան Մեհեմետ—Էյիւրիւք Գաբու ուղեգծին ձախ կողմը.

1. Միհրիահ ճամիւի՝ Բիւզանդական Ս. Գեորգ եկեղեցին: Շէնուածքը հիանալի է ու քառակուսի:

2. Ուղեգծին աջ կողմը Գ. բլրին վրայ կը բարձրանայ Գահրիէ ճամիւի՝ Բիւզանդական Քորա վանքը կամ Քառասնից եկեղեցին: Մզկիթին ներսը չատ հիանալի է: Նշանաւոր է նաիւրական պատկերներով:

3. Էյլի Գաբուի ու Էմիրնէ Գաբուի մէջտեղ կը գտնուի Թեփհուր-Սերայ՝ Բիւզանդական Եւտեմոնի պալատը: Երկյարկ է. Բ. յարկը կայ մեծ սրահ մը:

4. Թէքֆուր Սերայի մօտ, Մարմարոսքարքի մէջ է Քեֆիլի Մեհմետ՝ Բիւզանդական Մանուէլի վանքը որ 1575ին Հայոց յանձնուեցաւ և կոչուեցաւ Ս. Նիկողոս: Ժէ. դարուն մզկիթի փոխուեցաւ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ինչի ծանօթ են... հնութիւնները եւ կը գտնուին... — Ծով չեն տեսներ... հնութիւնները. — Բիւզանդական հնութիւններն են... Օսմանեան... — Նախապէս յոյն եկեղեցի ու յետոյ մզկիթ եղան... — Հայոց եկեղեցին էր... եւ եղաւ...:

(Շարունակութիւն)

Էյիւրիւք գաբու—Էյրի գաբու.

1. Այս ուղեգծին վրայ երկու պարիսպ կայ — Արտաքին ու Ներքին: Արտաքինը փլուած է և Ներքինը՝ կիսակործան:

2. Պարսպին մէկ անկիւնը կայ Եւտեմոնի դարանին աչտարակը. ասկէ անդին անկիւնաձև կ'աւարտէր Եոհաննէսի պարիսպն որ կ'սկսի Մարմարայէն մինչև Էյրի գաբու՝ 94 աչտարակով, 71 աչտարակիկով ու 5 գուռով:

3. Աչտարակէն կ'սկսի Նոր պարիսպն որ կը վերջանայ Ս.յովան Սերայի դրան քով և կը կցուի Ոսկեղջիւրի պարսպին: Քանի խոշոր աչտարակ ունէր:

4. Ս.յովան Սերայի կը յաջորդեն Տեփդերտար ու Էյուպ որոնք պարսպէն դուրս են:

Էյուպի մէջ նշանաւոր է համանուն մզկիթը զոր չինեց Ֆաթիհ սուլթան Մեհեմետ: Հոս պահուած է Իսլամայ մարգարէին սուրը զոր Սուլթանները մէջքերնին կ'ածեն երթից գահակալութեան օրը:

Էյուպի ծովեզերքը կը գտնուին երեւելի Իսլամներու փառաւոր դամբարանները:

Տեփդերտարի մէջ է Կայսերական Ջեհանանէն:

Այիւան Սերայէն Ոսկի գաբան.

1. Պալաթու ծովեզերքը կառուցուած է Պուլկար երկրաքաշեն եկեղեցին:

2. Ե. բլրին սորտով՝ Ֆենէր կը գտնուի Յուլնաց Պատրիարքարանն ու Ս.թոռանիս Ս. Գեորգ եկեղեցին:

3. Ս.յա գաբուի վերեւ՝ Ե. բլրին վրայ կը գտնուի Սուլթան Սելիմ որ երկու բազմանկիւն մինարէ ունի:

4. Բլրին սորտով՝ Ս.յա գաբուի դրան մօտիկ Քիւչիւք Մուսաֆա Բաշա թաղին մէջ կը գտնուի Կիւղ ճամի՝ հին Ս. Թեոդոսիա եկեղեցին: Մզկիթի փոխուեցաւ 1619ին:

ԱՄՓՈՓՈՒՄ

... նախապէս եկեղեցի էր եւ եղաւ... — Սուլթաններն էյուպի մէջ... — Պուլկար եկեղեցին... եւ կը գտնուի ... — Ս. եւ Բ. Շրջանակի Բիւզանդական... եկեղեցիները փոխուած են... մզկիթի. — Ս. եւ Բ. Շրջանակի Օսմանեան

հնութիւններն են. — Ա. եւ Բ. Շրջանակի պաշտօնատեղիներն են. — Ա. եւ Բ. Շրջանակի մէջ կը գտնուին սա թուրք վարժարանները եւ սա Հայ...:

Գ. Շրջանակ

Գ. Շրջանակի կեդրոնն է ձերահ Բաչայի կողմը:

Սուլթան Մեհեմետ—Սուլթան Պայազիտ ուղեգծին եղերքը կան.

1. Էր-Մէյտան՝ Բիւզանդական Աւետարեւանոռում՝ Ենիչէրիներու թաղը:

2. Ֆեներպահչէ-Եսա-Մեհմետ՝ հին Պանակրատեոս վանքը:

3. Ձերահ Բաչայի մզկիթին դիմացը կը զբաղնուի Աւրէդ թաշ=Արհաղիոսի կոթող՝ 14 մանաչափ բարձր: Մէջն պատառանդանը մնացած է:

4. Պոզտողան ֆեներ=Վաղէսի Ջրուղի, 625 մեդր երկայնութեամբ ու 23 մեդր բարձրութեամբ:

Տատուս Բաչա—Եսի գուղէ.

1. Նաղլը գաբուի մէջ է Միրահոր ճամիի՝ Բիւզանդական Ս. Յովհաննէս Մկրտիչ Սոդոմոս եկեղեցին:

2. Եսի-Գուլէի մէջ են համանուն գանաձև աչտարակներն որ կ. Պոլսոյ բանուն էին և կառուցուած՝ քաղքին չինութեան առեն: Յաղթական ճամբայն=Տիւան եօղուն ասկէ կ'սկսէր, կ'անցնէր Սրկուզիոսի հրապարակէն, Զեմպէրլի Թաշէն և կը վերջանար Ս.յա-Սոֆիա: Կ. Պոլսոյ արուի մեծ փողոցներն այս ճամբուն ուղղութեամբ չինուած են:

Պարսպին երկայնքը.

1. Սիվիվրի գաբուի պարսպէն դուրս կայ յոյն Ս. Տիմիդրի աչագնան=Պալըզլըի վանքը: Հոս ջրեղ մէջ կարմիր ձուկեր կը լողան: Ասկէկայ Կ. Պոլսոյ այգեմանութեան մէջ ամէնէն նշանաւորն է:

Գ. Շրջանակի հիւսիսային արեւմտեան կողմը.

1. Տատուս Բաչայի մզկիթն որ Սգամէզլի մէջ չինուած առաջին մզկիթն է Երլըերլըմ սուլթան Պայազիտի օրով:

2. Աւար Եահն կը գտնուի Գոնա-Մուսաֆա Բաչայի մզկիթը=Բիւզանդական Ս. Անդրեասի վանքը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Բիւզանդական հնութիւններն են... — Օսմանեան հնութիւններն են... — Գ. Շրջանակի Հայ Ազգային հաստատութիւններն են... — Յաղթական ճամբայն կ'սկսէր... եւ... — Մեզի ծանօթ փողոցներն ու թաղերը կը գտնուին այս ճամբուն... կողմը. — Այս ճամբէն հիմայ կ'անցնինն... դրամուէյի գիծերը:

Գ. Շրջանակ

1. Պէշիրաչ՝ նշանաւոր Ջուղաղի պալատով, որ այրեցաւ 1910 Յունուար 6ի մեծ հրդեհէն: Պէշիրթաչի բարձունքն են չարաչուք Եղլըզի կայսերական պալատն ու Համիտիյէ մզկիթը:

2. Օրթաքէօյ՝ Վոսփորի Եւրոպական եղերքի Ա. պորտուքը: Օրթաքէօյէն կ'սկսին եաղլները:

3. Գուրուչէշմէ՝ դիմացը կայ արուեստակերտ կղզեակ մը:

4. Առնաւուտ քէօյ. ասոր առջեւ կը գտնուի Ազգնէր սրուտու յորձանքը:

5. Պէպէյ՝ Վոսփորի Բ. պորտուքը. նշանաւոր է Եգիպտոսի Իսմայիլ բաչային պալատը:

6. Մեծազանգուած պարիսպ մը կայ Վոսփորի Գ. պորտուքը Գայաթար սրուտու հրաւանգաներն վրայ որ Վոսփորի ամէնէն նեղ տեղն է:

Ե. Շրջանակ

Կեդրոնն Եմի քէօյ էր.

1. Բուլեվի Հիսար. ասոր համանուն գիւղակը չինուած է 1432ին Ֆաթիհ սուլթան Մեհեմետէն: Բուլեվի Հիսարի մէջ էր Բիւզանդական բանու-աչտարակը:

2. Պաղդա-Լիման:

3. Էմէրկեան—Պոյաճրէքօյ՝ նշանաւոր եգիպտական պալատով:

4. Դ. պորտուքը կայ Սդեֆիա:

5. Ե. պորտուքը կան Քէօյ պաղը ու Ենի քէօյ. հոս է Յունաց Երուսաղեմատունը:

6. Թարապիա. նշանաւոր ամարանոց ունի:

ԱՄՓՈՓՈՒՄ

Զրաղան պալատը կը գտնուէր...—Դ. Շրջանակի լեզուակներն են... — Վոսփորի ամէնէն նշանաւոր յորձանքն է... — Դ. Շրջանակի Բիւզանդական հնութիւններն են... — Օսմանեանը... — Դ-ի պորտուքներն են... — Ե-ի պորտուքներն են... — Հայաբնակ տեղերն են Դ-ի ու Ե-ի...:

Զ. Շրջանակ

Կեդրոնը Գուլէ գաբուի է:

Ոսկեղջիւրի եկեղեցը կը գտնուի.

1. *Հալըճօղու. Նշանաւոր՝ իր Զինւորական Երիտասարդական վարժարանով:*

2. *Բիւրի Բաշա. Շիրքէդի չոգենաւնկերութեան գործարանը հոս է:*

3. *Սկնաղը զառագ:*

4. *Գասըմ Բաշա. հոս է Կայսերական Նաւահանգիստը:*

5. *Ղալաթիա. հին աւանն կը կոչուէր Սիգի=«Թգնէի»: Ղալաթիա, կ. Պոլսոյ մաս էր և կը կազմէր ԺԴ. թաղը: Հին չէնքերուն մէջ նշանաւորն է Քրիստոսի աճտարակը=Կալաթա-Գուլհան որ չինուած է 1348ին: Ունի 141 ոտք աստիճան մինչև հրգնէի պահակներու սրահը՝ 14 պատուհանով:*

Ղալաթիա նշանաւոր է իր վաճառատուններով, դրամատուններով ու խաներով: Կամուրջէն մինչև Թոքհանէ կայ քարափը:

6. *Պէյօղլու=Բերա կը գտնուի Ղալաթիոյ հսկայ բլրին վրայ: Պէյօղլու կոչուեցաւ կ. Պոլսոյ առաջին մեծ եւ յոյն կայսերազուն մը հոն բնակելուն համար: ԺԶ. ու ԺԷ. դարուն սկսաւ չէնուիլ օտարականներու ձեռքով: Յոյները մինչև 1804 հոս եկեղեցի չունէին:*

Պէյօղլուի մէջ են դեսպանատուններն ու հիւպատոսարանները, մեծ վաճառատուները, պանդոկները, հիւանդանոցները, յոյն ու լատին փառաւոր եկեղեցիներն ու բարձրագոյն վարժարանները:

Թափիմի ու Թէրէ պաշիի թաղապետական գեղեցիկ պարտէզն՝ը նշանաւոր են: Թաքսիմի մօտերը կը գտնուի յունաց Այի-Տրիատա փառաւոր եկեղեցին, Զաքհոն աղջկանց վարժարանը, Ծրուանական հիւանդանոցը:

Բանկալտի՝ Զինւորական բարձրագոյն վարժարան, Ռուսական հիւանդանոց:

Նշան դաշ կան գեղեցիկ չէնքեր:

Շիշլի՝ Հանգգագային անկեղանոց ու Ծրուանական գերեզմանատուն:

7. *Թոքհանէ. հին աւանն Ղալաթիոյ արուարձանն էր: Թոքհանէի մէջ է Թնդանօթարանը:*

8. *Գալատայի մէջ են Վալիտէ մզկիթն ու Տղրնա Պահչէ պալատը:*

Ե. Շրջանակ

Կեդրոնն Պէօյիւք-Տէրէ է:

1. *Զ. պրպտուքի բացերը կը գտնուի Պէօյիւք տէրէ որուն շրջակայները կան գեղեցիկ մարգագետիններ: Հոս են Եւրոպական դեսպանատուներու ամառները:*

2. *Մեծար պուռնու:*

3. *Սարը ևար:*

4. *Եմի Մահալէ. Թէզի դպիտ ամրոցով նշանաւոր:*

5. *Բուլեղի-Դարագ՝ Վոսփորի չոգենաւներուն երթեւեկութեան ծայրը:*

6. *Բուլեղի Ֆեներ. հոս կը վերջանայ Վոսփորի Եւրոպական եղերքը:*

Զ. Շրջանակ

Կեդրոնն Անատոլու-Հիսար է:

1. *Զ. պրպտուքը կ'սկսի Մահալ պուռնուէն որուն ծովեղերքին մօտ կը բարձրանայ Եուշա=Հսկայի ղեղը: Հոս կան մարտկոցներ:*

2. *Ե. պրպտուքը՝ Սեղմի պուռնուի վրայ կը բարձրանայ Հիւնքեար-Իսկեհսի:*

3. *Բաշա պահչէ:*

4. *Մեծ-Զարուզլը:*

5. *Գանղրձա կան Բիւզանդական հնութիւններ:*

6. *Դ. պրպտուքը՝ Անատոլու-Հիսար որ ունի բերդ մը:*

7. *Գանտիլլի:*

8. *Բ. պրպտուքը կայ Վանիխոյ:*

9. *Զհնիկէ Իսկ. ասոր բարձունքը կը գտնուի Գուզելլի:*

ԱՄՓՈՓՈՒՄ

Է. Շրջանակի... գետեզերքն ամրոց են եւ հոս կան... զբօսավայրերը.— Ը.ի հնութիւններն են...— Վոսփորի Ասիական սոճ գեղերը.. կը գտնուին Եւրոպական... դիմացը.— Դ. Ե. Զ. Շրջանակի գեղերը կը գտնուին... — Ղալաթիոյ հնութիւններն են...— Բերայի նշանաւոր հաստատութիւններն են...— Դ. Ե. Զ. Է. Ը. Շրջանակի պալատներն են... —Այս շրջանակներէն ...ներուն մէջ կան զրամուէյի գիծեր

Թ. Շրջանակ

Կեդրոնը Սկիւտար է:

1. *Սկիւտար հին աւանն կը կոչուէր Խրիսոպոլիս: Դիրքն ամիիթեատրանաձև է և տեսքն ալ ս.քանչելի: Հովահարաձև կը սիրէ Պուլկուրլու լերան բազուկներուն:*

Սկիւտարի բարձունքն է Զամլըճա զբօսավայրը:

Նշանաւոր մզկիթներն են Իսմիհէ Պէօյիւք ճամի, Խիւսեմ Վալիտէ ճամի, Էսմի Վալիտէ ճամի:

Սկիւտարի առջև ծովուն մէջ կը բարձրանայ Գըզ-Գուլէ=Լեանտրի աշտարակը:

2. *Դուզլունճուզ՝ հրէաբնակ թաղ. հոս է Հրէից Մահամատրանը:*

3. *Ա. պրպտուքը կը գտնուի Պէյլերպէյ՝ Պուլկուրլու լերան ստորոտը. նշանաւոր է իր կայսերական պալատը:*

Ժ. Շրջանակ

Կեդրոնը Գատըքէօյ է:

1. *Հայտար Բաշայի ու Սկիւտարի միջև կը գտնուին Սելիմիյէ մզկիթն ու զօրանոցը, Զինւորական Բժշկական վարժարանը: Հայտար Բաշայի մէջ է Անատոլուի Երկաթուղւոյ Ընկերութեան փառաւոր կայարանը:*

2. *Գատըքէօյ=Քաղկեդոն զոր չինեցին Մեգարացիք Բիւզանդիոնէն 17 տարի առաջ: Նշանաւոր է 451ի Քաղկեդոնի եկեղեցական ժողովով:*

3. *Ֆեներ-Պահչէ՝ Գալամըչ խորչին արեւելեան կողմը նեղ թերակղզւոյ մը վրայ:*

ԱՄՓՈՓՈՒՄ

Թ. ու Ժ. Շրջանակի զբօսավայրերն են...— Թ. Շրջանակի հնութիւններն են... — Թ. Շրջանակի Հայ հաստատութիւններն են...— Ժ.ի... — Վոսփորի Եւրոպական գեղերն են ..— Վոսփորի Ասիական գեղերն են...— Վոսփորի Հայաբնակ տեղերն են..— Վոսփորի եզերքի պալատներն են.. եւ կը գտնուին...— Վոսփորի Եւրոպական ոլորտուքներն են... — Ասիականին... — Ասիականին ամէնէն մօտ գեղն է...— Ամէնէն հեռուն...— Եւրոպականին...

ԳԱՂԱՆԵՐ

Ա. ՊԷՅՈՂՈՒ

1. *Վոսփորի Ասիական եղերքը Դ. պրպտուքը՝ Պէյօղլի խորչին եղերքը կը գտնուի Պէյօղլ. ասոր հիւսիսային արեւելքը կը գտնուէր Ս. Պանդպահոնի եկեղեցին:*

2. *Վոսփորի Ասիական եղերքի է. պրպտուքի հիւսիսային ծայրն է Անատոլու-Ֆեներ:*

3. *Վոսփորի չոգենաւները կ'երթեւեկեն Անատոլու գաւազէն որ հիանալի դիրքով կը սիրէ նեղուցին:*

4. *Ասոր արեւելեան կողմը, հրուանդանի մը վրայ կը բարձրանայ Երուս գաւի:*

5. *Տերեսի իսկ. ամէն քիչ մը հեռու կը լսենի Գարագուզագի ջուրը:*

6. *Ինճիր իսկ՝ Պէյօղլի խորչին ամէնէն լայն տեղը:*

Բ. ԳԱՐԴԱԼ

1. *Գարդալ՝ մեծ մասամբ հայաբնակ:*
2. *Եագամըգ:*
3. *Բեհիսիֆ:*
4. *Թուզլա:*
5. *Էրհի իսկ՝ նշանաւոր զբօսավայր:*

Գ. ԿԷՊՁԷ

1. *Կէպզէ. հոս մեռաւ Կարքեդոնացի Անհիքալ զօրապետը:*
2. *Տարղա:*
3. *Տիլ-Իսմիհէսի՝ Հերէքլէի հնաւանդիսատը:*
4. *Դաշահմըգ:*

Դ. ԻՇԽԱՆԱՑ ԿՂԶԻՆԵՐ

1. *Հաղիի=Հիյպէի. նշանաւոր են իր Կայսերական Նաւային վարժարանն ու Ծովի Կղերանոցը:*
2. *Պէօյիւք ատա՝ ամարանոց:*
3. *Գրնապը մեծ՝ մասամբ Հայաբնակ:*
4. *Անդիկոնի. կան հին չէնքերու հետքեր:*

Ե. ՔԻԶԻՔ-ՁԵՔՄԷՋԷ

1. *Քիւչիւք-Զեքմէջէի մօտերը կան Այ Եորկի կոչուած քարայրները: Հիւսիսային կողմը կայ Հաղգաղ գիւղը, նշանաւոր՝ Կայսերական Հողագործական վարժարանով:*
2. *Սան-Սթեֆանոյ:*
3. *Մարմիհէյ՝ Բիւչիւք-Զեքմէջէի կեդրոնը: Հոս է Կայսերական Վաճօդարանը:*

ԱՄՓՈՓՈՒՄ

Այս չորս գազաներուն մէջ Հայաբնակ տեղերն են...— Հնութիւններն են...— Ասիոյ կողմը կը գտնուին...— Եւրոպայի կողմը...—Աննիւթալ մեռաւ...— ... խաղողները նշանաւոր են.— ... ելակը շատ յարգի է.— ... ջուրը ... թուզը ...— Այս չորս գազաներուն նշանաւոր հաստատութիւններն են...— Հողագործական վարժարանը կը գտնուի...— Նաւային վարժարանը...— Դպրեվանքը...։

Կ. ՊՈԼՍՈՅ ՀԱՅԵՐԸ

Հայերն Էյուպի մէջ ունին Ս. Աստուածածին ու Ս. Եղիա եկեղեցիներն ու Պեզճեան վարժարանը։

Պալաթիոյ մէջ՝ Ս. Հրեշտակապետ եկեղեցին ու Խորհենան վարժարանը։

Հալըճօղլուի մէջ՝ Ս. Ստեփանոս սբանչելի եկեղեցին, Ս. Ներսէսեան վարժարանն ու Դաղֆայեան Աղջկանց Որբանոցը։

Գասըմ Բաչայի՝ մէջ Ս. Յակոբ Մծբնայ եկեղեցին։

Ղալաթիոյ մէջ՝ Ս. Լուսաւորիչ եկեղեցին, Ազգային Կեդրոնական վարժարանը, Ազգային Մատենադարանն ու Ազգային Խորհրդարանը։

Բերայի մէջ՝ Ս. Երրորդութիւն, Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցիները, Էսաեան վարժարանը, Նարեկեան մանկապարտէզը, Աղթամարնաւոր Դարմանատունը, Տոլապ - Տէրէի Աշակերտեան վարժարանը, Ֆէրի գիւղի Ս. Վարդանանց եկեղեցին, Ս. Մեսրոպեան վարժարանը, Շիշլիի մէջ՝ Հայոց գերեզմանատունը։

Բերայի մէջ կան նաև Հայ-Հռոմէականներու Պատրիարքարանը, Ս. Աստուածածին, Ողկերեաց ու Ս. Երրորդութիւն եկեղեցիները, Ս. Յակոբայ Հիւանդանոցը, Բանկալտիի Վիեննայի Մխիթարեանց վարժարանը։

Պէշիքթաշի մէջ՝ Ս. Աստուածածին եկեղեցին, Մարմոնեան վարժարանը։

Օրթաքէօյի մէջ՝ Ս. Աստուածածին եկեղեցին, Ս. Թարգմանչաց ու Մ. Հոսիփեանց վարժարանները։

Թուզկուճուքի մէջ՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին։

Սկիւտար—Եէնի մահալլէ մէջ՝ Ս. Կարապետ եկեղեցին ու վարժարանը, Սկիւտրի՝ Ս. Խաչ եկեղեցին ու վարժարանը, Իճտատիէ՝ Ներսէսեան-Երմոնեան վարժարանը։

Գատըքէօյի մէջ՝ Ս. Թագաւոր եկեղեցին, Ս. Գրամեան ու Վիննեվիկի Մխիթարեան վարժարանները։

Գարդալի մէջ՝ Ս. Նշան եկեղեցին ու Պեզճեան վարժարանը։

Գում գափուի մէջ՝ Ազգային Պատրիարքարանը, Երուսաղէմատունը, Մայր եկեղեցին, Պեզճեան և Լուսաւորչեան վարժարանները։

Գում գափուի դրան Ս. Յարութիւն եկեղեցին ու վարժարանը։

Ենի գափուի մէջ՝ Ս. Թադէոս ու Ս. Բարթողիմէոս եկեղեցին ու վարժարանը։

Նարլը գափուի մէջ՝ Ս. Յովհաննէս եկեղեցին ու վարժարանը։

Սամաթիոյ մէջ՝ Ս. Գէորգ եկեղեցին, Նունեան-Վարդունեան ու Ս. Սահակեան վարժարանները։

Սլիմր-Մկրտչի մէջ՝ Ս. Յակոբ եկեղեցին։

Եան-Գուլէի մէջ՝ Ս. Փրկչեան Ազգային Հիւանդանոցը, Ս. Յակոբայ Որբանոցն ու Առիւեսեանոցը։

Կէտիկ-Բաչայի մէջ՝ Ս. Յովհաննէս Առաքարիչ եկեղեցին ու Ս. Մեսրոպեան վարժարանը։

Թոփ-Գափուի մէջ՝ Ս. Նիկողայոս եկեղեցին ու վարժարանը։

Պալըքլըի մէջ՝ Հայոց գերեզմանատունը։

ԱՄՓՈՓՈՒՄ

Կ. Պոլսոյ Հայկական մեծ եկեղեցիներն են...— Փոքր եկեղեցիները...— Բարձրագոյն վարժարանները...— Նախակրթարանները...— Պատրիարքարանը կը գտնուի...— Հիւանդանոցը...— Գալֆայեան Որբանոցը...— Ամէնէն հին եկեղեցին է...— Ամէնէն նորը...— Պոլսոյ Հայաբնակ տեղերն են...։

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՄԱՍ

Հայրենագիտութիւն

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

«Հայաստանի օդն է բաղդ ու բարակ,
Հովերն անուշ, պայծառ են վտակ,
Ջուրն ու պտուղն համ տան անմահութեան,
Խոտն ոսկեզօծէ գառներուն բերան։»

Ա. ԲՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

1. Հողագործութիւն

ՍԱՀՄԱՆ. — Հին ատեն Հայաստանի սահմանները էին. հիւսիսէն՝ Սև ծով, Խաղիք, Կաղքիս, Վրաց ու Ազուանից աշխարհները, արեւելքէն՝ Կասպից ծով ու Ատրպատական, հարաւէն՝ Պարսկաստան, Ասորեստան, Ասորոց Մեսոպոտամ և արեւմուտքէն՝ Միջերկրական ծով ու Փոքր Ասիա։

ՏԱՐԱԾՈՒԹԻՒՆ. — Հայաստան կը տարածուէր Արեւելեան երկայնութեան 30—45 ու Հիւսիսային լայնութեան 36-42 աստիճաններուն մէջ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱԿԵՐԵՒՈՅԹԸ. — Հայաստան լեռնոտ երկիր է, բարձր դիրքով, խորախոր ձորերով, դեղեցիկ ու ծաղկաւէտ հովիտներով, այնպէս որ չատ գաւառներու անուններ հովիտ, ձոր, փոս բառերով բարդուած են։

Իր բազմաթիւ բլուրներու և բարձրաւանդակներու վրայ տեղ տեղ ցրուած են խիտ խիտ մացառներ ու անտառներ։ Լեռներու ստորոտն ամէն տեղ տարածուած են բարեբեր դաշտեր, ընդարձակ արօտավայրեր ու մարգագետիններ որոնց մէջ ջէն կը հոսին բազմաթիւ վտակներ, գետակներ ու գետեր։

Լեռնագօտիները Հայաստանի այս փառաւոր դիրքին աւելի մեծ ու գեղեցիկ տեսարան մը կ'ընծայեն։ Անոնց ձիւնապատ գագաթները, բարձր ու կանաչ ստորը մեծ մասամբ հրաբղխային են ու բարդ բարդ դիզուած հսկայ մասներ կը կազմեն Հայաստանի կեդրոնական մասին մէջ։

Ջուրերու բոլորտիքը տեղ տեղ տարածուած են ճահճային ու եղէգնուտ տեղեր, ինչպէս Կարևոյ Շարքն ու Մեդրագետի Շարքը։

ԼԵՌՆԵՐ. — Հայաստանի լեռները մեծ մասամբ լեռնագօտիներ են ու առաւելապէս տարածուած են սահմանագլուխներն ու կեդրոնը։ Մէն մի նահանգ ունի ցած ու բարձր կատարներով լեռներ որ կը կոչուին մերձակայ տեղին կամ նահանգին անունով։

Հայաստանի լեռներուն գլխաւորներն են.

Ա. Արարատեան լեռներ. ատոնց մէջ նշանաւորն է Մասիս՝ Հայաստանի ամէնէն բարձր լեռը (5100 մ.), Արագած (4200 մ.), Նպատ, Սուրբ-Լեռ=Քհouk։

Բ. Սիւնեաց լեռներ. ատոնք կ'ընծայեն ժայռուտ գագաթներ 3500 մեդր բարձրութեամբ, որոնց մէջ նշանաւոր են Գեղամի ու Գեղարոնեաց լեռները։ Սիւնեաց լեռները դէպ ի հարաւային արեւելք երթալով ու Կուր գետին մէջէն կը ձգտին Հայոց Կովկաս=Գարապաղի լեռները։

Գ. Վասպուրականի լեռներ. ատոնց մէջ նշանաւոր են Սեպուհ=Սիբան (4000 մ.), Վարագ, Կապուտկող ու Արտօս որ կը շրջապատեն Վանայ ծովը։

Դ. Կորդուաց լեռներ:

Ե. Տուրուբերանի լեռներ. *ասոնց գլխաւորներն են Խոյր, Նեբրովդ, Գրգուռ:*

Զ. Բարձր Հայոց լեռներ. *ասոնց նշանաւորներն են Սրմանց=Բիւրակնեաց, Այծպտիւնի, Միրաւոի ու Սեպուհ լեռ:*

Է. Պարխար, Տայոց=Ջղջղր լեռներ՝ *Հայաստանի հիւսիսային արեւմտեան կողմը:*

ՀՐԱԲՈՒԼԽՆԵՐ. — *Հայաստանի լեռներէն շատերը հրաբղխային եղած են և բորբոքած՝ զանազան ատեն: Ասոնց գլխաւորն է Մասիս որ 1840ին նորէն բորբոքելով՝ մեծ աւերներ պատճառեց:*

ԴԱՇՏԵՐ. — *Բարձր լեռներով, բլուրներով ու խոր ձորերով չրջապատուած մեծ ու բարեբեր դաշտեր ու հովիտներ ամէն տեղ տարածուած են Հայաստանի մէջ: Մէն մի նահանգ ու գաւառ ունի մեծ ու փոքր դաշտեր: Մեծ դաշտերն են Աւնապատ Հայոց՝ Կուբի եզերքը, Դարան=Մուղան Փայտակարանի մէջ, Բագրեւանդի ու Բասենի, Շիրակի, Կարնոյ, Մշոյ, Խարբերդի, Ամիդի ու Մաւաթիոյ դաշտերը:*

ԿՂԶԻՆԵՐ. — *Վանայ ծովուն մէջ կան չորս կղզի— Աղթամար, Առտեր, Կտուց ու Լիմ, Գեղամայ ծովուն մէջ՝ Սեւանայ կղզին և Ուրմիոյ ծովուն մէջ կան ուխտ կղզի. ասոնց նշանաւորն է Թիլ կղզին:*

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայաստանի սահմաններն էին հիւսիսէն... — Արեւելքէն... — Հարաւէն... — Արեւմուտքէն... — Հայաստան կը տարածուի Արեւելեան երկայնութեան... եւ Հիւսիսային լայնութեան... աստիճաններուն միջեւ. — Հայաստան լեռնոտ երկիր է... — Մացառներ ու անտառներ ցրուած են... — Լեռներու ստորոտը ... — Լեռնագօտիները Հայաստանի կ'ընծայեն... — Հրաբղխային են... — Հաստաւեստները կը գտնուին... — Արարատեան լեռներն են... — Սիւնեաց... — Վասպուրականի... — Տուրուբերանի... — Բարձր Հայոց... — Հիւսիսային արեւմտեան կողմի... դաշտերը տարածուած են... — Հայաստանի մեծ դաշտերն են... — Հայաստանի կղզիներն են... եւ կը գտնուին...:

2. Ջրագրութիւն

ԼԻՃԵՐ. — *Հայաստանի մէջ մեծ ու փոքր բազմաթիւ լիճեր ու լճակներ կան. ասոնց գլխաւորներն են.*

Ա. Վանայ ծով=Բզնունեաց ծով:

Բ. Սեւանայ ծով=Գեղամայ ծով:

Գ. Ուրմիոյ ծով=Կապուտան ծով:

Փոքր լիճերն են.

1. Գայլատոյ=Պալզղը՝ Մասիսի արեւմտեան կողմը:

2. Ծովիվ լիճ=Կեօղնիւխ:

3. Նագիկ:

4. Արջակու:

5. Ծովակ Հիւսիսոյ=Ջղջղր:

ԳԵՏԵՐ. — *Հայաստանի մէջէն կը բղխին ու կը հոսին մեծ ու փոքր գետեր: Գլխաւորներն են.*

1. Եփրատ. *ունի երկու ճիւղ ունի—Սեւ Ջուր=Գարասու որ կը բղխի Կարնոյ լեռներէն, և Արածանի որ կը բղխի Նպատ=Աշատաղ լեռներէն: Արածանիի գետակիցներն են Գայլ գետ=Կեղուայ գետ, Բերիի գետ, Մեղրագետ, Մանազկերտի գետ:*

2. Տիգրիս. *ունի երեք ճիւղ. մէկը կը բղխի Հայկական Տօրոսէն, երկրորդը՝ Սասնոյ լեռներէն, երրորդը՝ Անձեւացեայց լեռներէն: Տիգրիսի գետակիցներն են Բաղիրդ, Ջերմի ու Մեծ Զապ:*

3. Երասխ կը բղխի Բարձր Հայոց լեռներէն, և տեղ տեղ ջրվէժներ կը կազմէ իր ընթացքին մէջ: Երասխի գետակիցներն են Մուրց, Ազատ, Ախուրեան, Կարմիր, Հրազդան, Աղաւնոյ, Որոտան, Քասաղ:

4. Ձորոխ. *կը բղխի Բարձր Հայոց լեռներէն: Ձորոխի գետակիցներն են Օղոիի, Արտահանի, Ամառա, Պարխարի ջուրերը:*

5. Գայլ գետ. *կը բղխի Սոխէ ու Դերջան գաւառէն և դէպ ի արեւմուտք հոսելով՝ կը թափի Իրիս գետը:*

6. Մարմեռ, Թուխ ու Սևզղ գետակները *կը թափին Վանայ ծովը:*

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայաստանի մեծ լիճերն են... — Փոքր լիճերն են... — Ծովը կը գտնուի... — Նագիկ կը գտնուի... — Արջակու լիճը... — Զրլտըր... — Հայաստանի գլխաւոր գետերն են... — Արածանի գետակիցներն են... — Տիգրիսի գետակիցներն են...— Երասխի գետակիցներն են... — Գայլ գետը գետակից է... — Վանայ ծովը կը թափին...:

Բ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա. ՄԵԾ ՀԱՅՔ

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ. — *Պատմական Հայաստան գլխաւորապէս չորս մասի կը բաժնուէր. 1. Մեծ Հայք, 2. Փոքր Հայք, 3. Ուրհայաստան, 4. Կիլիկիա:*

Մեծ Հայք ու Փոքր Հայք իրենց ընդարձակութեան պատճառաւ աւանդին աշխարհներու կամ նահանգներու բաժնուած էին, նահանգներն ալ՝ գաւառներու:

ՄԵԾ ՀԱՅՔԻ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ. — *Մեծ Հայք կը տարածուէր Կասպից ծովու, Աղուանիքի, Ատրպատականի, Ասորեստանի, Ուրհայաստանի, Փոքր Հայքի, Կողբիսի, Վրաց ու Ազուանից միջև:*

Մեծ Հայք կը պարունակէր 15 նահանգ ու 190 գաւառ:

1. Բարձր Հայք, 2. Ջորոդ Հայք, 3. Աղձնիք, 4. Տուրուբերան, 5. Մոկք, 6. Կորճայք, 7. Պարսխաձոյք, 8. Վասպուրական, 9. Միւնիք, 10. Արցախ, 11. Փայտակարան, 12. Ուտի, 13. Դուզարք, 14. Տայք, 15. Աղուանք:

1. Բարձր Հայք

ԳԱՒԱՌՆԵՐ. — *Բարձր Հայք իր անունն իր բարձր դիրքէն առած է: Բարձր Հայք կը բաժնուէր հետեւեալ գաւառներուն.*

1. Դարանաղիք (Կամախ), 2. Առիծ (Ռեճտան, Եէնկան), 3. Մնձուր (Օվաճըք), 4. Եկեղիք (Երզնկա), 5. Մանանաղի (Թուզը Տէրէ, Մամախաթուն), 6. Դերջան, 7. Սպեր (Սպեր), 8. Շատգոմք (Թորթում), 9. Կարին:

ՆՇԱՆԱՒՈՐ ՏԵՂԵՐ. — *Դարանաղեաց գաւառին մէջ կը գտնուին Սեպուհ լեռն ու Մանուեայ այրը: Եկեղեաց գաւառին մէջ նշանաւոր են Երիզա ու Թիլ աւան:*

Սպերի մէջ են Սպեր ու Բաբերդ:

Կարնոյ մէջ են Կարին ու Արծն (Գաբաղ) քաղաքները:

2. Ջորոդ Հայք

ԳԱՒԱՌՆԵՐ. — *Ջորոդ Հայք կը կոչուի նաև Ծոփաց Աբխարհ և բաժնուած էր 8 գաւառի.*

1. Խորձեան (Բզի), 2. Դերիկ (Ակը), 3. Ծոփիք Շահունեաց (Խոզաթ, Զմկածագ), 4. Հաշտեանք (Ճապաղջուր), 5. Բաղահովիտ (Բալու), 6. Պաղնատուն (Արզանա), 7. Հանձիթ (Խարբերդ), 8. Գորհք (Զնքուշ, Զերմիկ):

ՆՇԱՆԱՒՈՐ ՏԵՂԵՐ. — *Հանձիթի մէջ Խարբերդ, Բալահովիտի մէջ՝ Բալու ու Խորձեանի մէջ՝ Կեղի, Ծոփքի մէջ Խոզաթ ու Զմկածագ, Պաղնատունի մէջ՝ Արղի, Սևզղ:*

3. Աղձնիք

ԳԱՒԱՌՆԵՐ. — *Աղձնեաց նահանգի գաւառներն են.*

1. Մեծ Ծոփք (Ճարպէն, Հազրոյ, Լէճ), 2. Արզն (Խարբան), 3. Ագնուաց ձոր (Կիւզել Տէրէ), 4. Քեղ (Ոնուսան), 5. Սասուն (Սասուն-Մոսկան), 6. Սաղնոյ Ջոր (Բաղէշ), 7. Կեթիկ (Խիզան), 8. Խերիեթ (Սղերդ):

ՆՇԱՆԱՒՈՐ ՏԵՂԵՐ. — *Մեծ Ծոփքի մէջ՝ Տիգրանակերտ (Ճարպէն), Արզնի մէջ՝ Արզն (Զոն), Սաղոյ Ջորի մէջ՝ Բաղէշ:*

4. Տուրուբերան

ԳԱՒԱՌՆԵՐ. — *Տուրուբերանի գաւառներն են.*

1. Խոյթ (Խութ, Բռնաչէն) 2. Ապահունիք (Մշոյ Շահախ), 3. Տարօն (Մուշ), 4. Աշնունիք (Վարդոյ, Կիւնէկ), 5. Մարդպաղի (Խունս), 6. Դասնաւորի (Թէքման, Շուշար), 7. Տուրարծատեաց (Կէօք սու, Խափաղ), 8. Դարոյ (Անթաք, Թութակ), 9. Հարք (Վերին Պուլանըղ), 10. Վարաժունիք (Լիզ), 11. Բզնունիք (Խութ, Արծկէ), 12. Երեւարք (Կաթկան), 13. Աղիովիտ (Բաղնոց), 14. Ապահունիք (Մանազկերտ), 15. Խորխոռունիք (Ալճաւազ):

5. Մոկք

ԳԱՒԱՌՆԵՐ. — *Մոկքի գաւառներն են.*

1. Առուանից ձոր (Պերտաբերդ), 2. Մոկս 3. Զերևանձոր (Շահախ), 4. Իշայր (Սպարկերտ), 5. Իշոց (Խիզան):

6. Կորճայք

ԳԱՒԱՌՆԵՐ. — *Կորճայքի գաւառներն էին.*

1. Կորդուք (Նորաւուզ), 2. Կորդիք (Գոհտան),

3. Որսիրանիվ (Պէյթ-էլ-Շեպապ), 4. Աղբակ (Տիզա)։

7. Վասպուրական

ԳԱՒԱՌՆԵՐ. — Վասպուրական *կը պարունակէ 14 գաւառ.*

1. Ռշտունիվ (Գաւաչ), 2. Տոսք (Վան), 3. Առբերանի (Բերկրի), 4. Բաղբերունի (Արճէշ), 5. Արտազ (Մակու), 6. Դողթն (Ագուլիս), 7. Անձեւացիվ (Նորաւուզ), 8. Նախիջեւան, 9. Մարանդ, 10. Անձախի ձոր (Կոտոր), 11. Ճուաշոռս (Գաբաղոյնդը). 12. Մարդաստան (Համզավիմէն), 13. Հայոց ձոր ու Երուանդունիվ (Նէրքէն Խոչապ), 14. Աղբակ (Պաշգալէ)։

ՆՇԱՆԱՒՈՐ ՏԵՂԵՐ. — *Ռշտունեաց մէջ՝ Ոստան, Նարեկ, Տոսքի մէջ՝ Վան, Արտամետ, Վարագայ Ս. Նշան, Աբեղաց մէջ՝ Աւարայր գեղը, Գողթնի մէջ՝ Հին Ջուղա, Նախիջեւանի մէջ՝ Նախիջեւան, Աղբակի մէջ՝ Աղաւակերտ (Պաշգալէ)՝ Աբծրունեաց մայրաքաղաքը, Անձեւացեաց մէջ՝ Հոգեաց վանք։*

8. Պարսկահայք

ԳԱՒԱՌՆԵՐ. — Պարսկահայքի *վերաբեր գաւառներն են.*

1. Տարբերս (Էնզէլ), 2. Զարեհաւան (Սալմաստ), 3. Զարաւանդ (Տիլիման), 4. Չեր (Խոյ)։

9. Սիւնիք

ԳԱՒԱՌՆԵՐ. — Սիւնիք *կը պարունակէ 11 գաւառ.*

1. Զորք=Կապան (Ղափան), 2. Բաղք (Ղափան). 3. Գեղարքունիք (Կէօգ Չայ), 4. Վայոց ձոր (Տարափաղըզ), 5. Հաբանդ (Զանկազոր), 6. Ծղուկ (Տաթեւ), 7. Ճահուկ (Ջահուկ), 8. Երնջակ (Սիւնճա), 9. Կուսական (Որդուպատ), 10. Արեւիք (Մեղրի), 11. Սոսք (Ծար)։

ՆՇԱՆԱՒՈՐ ՏԵՂԵՐ. — *Սեւան կղզին՝ նշանաւոր մենաստանով, Գառնի աւան, Գեղարդայ վանք=Ս. Գրի վանք, Ջուղա՝ Գողթնի մէջ, Տաթեւ՝ Բաղքի մէջ։*

10. Արցախ

ԳԱՒԱՌՆԵՐ. — Արցախի *գաւառներն են.*

1. Միւս Հաբանդ (Շուշի), 2. Կողբ (Շամշաւատիկ), 3. Փառնեհ (Շամքոր), 4. Մոխրանիվ (Տիգա), 5. Մեծխրանիվ (Կիւրասան), 6. Հարճլանիվ (Վարանդ), 7. Պհանիվ (Տիգա), 8. Մեծ Կուանիվ (Խաչէնք)։

11. Փայտակարան

ԳԱՒԱՌՆԵՐ. — Փայտակարան՝ *կը պարունակէ 3 գաւառ.*

1. Վարդանակերտ (Սալման), 2. Բագրատան (Պագրէ), 3. Դարան դաշտ (Մուշան)։

ՆՇԱՆԱՒՈՐ ՏԵՂԵՐ. — Վարդանակերտ, Բագրատան։

12. Ուտի

ԳԱՒԱՌՆԵՐ. — Ուտի *կը պարունակէ 7 գաւառ.*

1. Ուտի Առանձակ (Ճուանչիր), 2. Աղուէ (Քեպկրլէն), 3. Ռոգոպատեան (Քեպկրլէն), 4. Գարդմանի (Գրդմանիք), 5. Արանոռս (Քեպկրլէն), 6. Տոի (Քեպկրլէն), 7. Շախաչեն (Գանձակ)։

Ուտի նահանգին գլխաւոր քաղաքներն են. Պարտաւ ու Գանձակ։

13. Գուգարք

ԳԱՒԱՌՆԵՐ. — Գուգարք *կը պարունակէ 7 գաւառ։*

1. Զաւախք (Ախալքալաք), 2. Ջորափոր (Մասէն), 3. Տաշիրք (Լոռի, Բամպակի), 4. Արտահան, 5. Կողբոփոր (Խազախ), 6. Ծորոփոր (Պորչալու), 7. Կղարջք (Արտահուէ)։

ՆՇԱՆԱՒՈՐ ՏԵՂԵՐ. — *Կողբոփորի մէջ՝ Հաղբատ ու Սանահին վանքերը, Կղարջքի մէջ՝ Կղարջք, Երախտիք, արտահանի մէջ՝ Արտահան բերդաքաղաք, Զաւախքի մէջ՝ Ախալքալաք։*

14. Տայք

ԳԱՒԱՌՆԵՐ. — Տայքի *գաւառներն էին.*

1. Կող (Կէօլէ), 2. Բերդաց փոր (Օլթի), 3. Պարսիզաց փոր (Նօրթման, Պարթէզ), 4. Ազորդաց փոր (Կաղկիմ, Խոտորջուր)։

ՆՇԱՆԱՒՈՐ ՏԵՂԵՐ. — Ոխտեաց քաղաք (Օլթի), Մաւրուան (Նօրթման)։

15. Աղուանք

ԳԱՒԱՌՆԵՐ. — Աղուանք *կը պարունակէ 16 գաւառ.*

1. Բասեան (Հասան գալէ), 2. Ծաղկոտն (Տիւտէն), 3. Արշարունիք (Զարտան, Սարսարապատ), 4. Բագրեւանդ (Ալաչկերտ), 5. Արշարունիք (Կաղզուան), 6. Մասեացոտն (Սուրմարի), 7. Կոգովիտ (Պայազիտ), 8. Աղարաս (Երեւան), 9. Ոստան (Գառնի պազար), 10. Կոտայք (Երեւան), 11. Նիգ (Ազարան), 12. Աղազածոտն (Սարսարապատ), 13. Գաբեղեանք (Կաղզուան), 14. Շիրակ (Շօրական), 15. Ճակատք (Իկտիր, Կողբ), 16. Վանանդ (Կարս)։

ՆՇԱՆԱՒՈՐ ՏԵՂԵՐ. — *Բասենի մէջ՝ Վաղարշատան (Ալաչկերտ), Բագրեւանդի մէջ՝ Նպատ լեռ, Ջիրաւ դաշտ, Բագաւան, Վաղարշակերտ (Թոփրագ գալէ), Արշարունեաց մէջ՝ Բագարան, Արտագերձ, Երուանդաշատ ու Երուանդակերտ, Կոգովիտի մէջ՝ Դարոյնի բերդ (Պայազիտ), Կոտայքի մէջ՝ Երեւան, Ազազածոտնի մէջ՝ Արմաւիր, Օշական, Աշտարակ, Եղիվարդ, Թալին, Շիրակի մէջ՝ Անի, Մարմաշէն, Երազգաւորէ, Վանանդի մէջ՝ Կարս, Գաբեղենից մէջ՝ Կաղզուան, Ճակատքի մէջ՝ Կողբ, Մասեացոտնի մէջ՝ Ախորի, Նիգի մէջ՝ Բջնի, Ոստանի մէջ՝ Դուին, Արտաշատ, Արտաշատի մէջ՝ Վաղարշապատ։*

Ե. ՓՈՔՐ ՀԱՅՔ

(ԱՐԵՒԵԼԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ԲԱԺԻՆ)

ՓՈՔՐ ՀԱՅՔԻ ՄԱՍԵՐԸ. — *Փոքր Հայք կը տարածուէր Սեւ ծովու, Մեծ Հայքի, Կիլիկիոյ ու Փոքր Ասիոյ միջև։*

Փոքր Հայք լեռնապատ մըն է, բարձրեր ու ջրաբեր։

Փոքր Հայքի մասերն են Առաջին Հայք, Երկրորդ Հայք, Երրորդ Հայք։

ԱՌԱՋԻՆ ՀԱՅՔ. — *Փոքր Հայոց արեւմտեան կողմն էր Առաջին Հայք. ասոր նշանաւոր քաղաքն էր Մաժակ (Կեսարիա)։*

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՅՔ. — *Բարձր Հայոց ու Ծովային արեւմտեան կողմն էր երկրորդ Հայք. ասոր նշանաւոր քաղաքներն էին Սեբաստիա, Նիկոպոլիս (Շ. Գարահիսար), Տարանտա, Ամկ, Առաբկեր։*

ԵՐՐՈՐԴ ՀԱՅՔ. — *Առաջին Հայքի, Կիլիկիոյ ու Եփրատ գետի մէջև կը գտնուէր երրորդ Հայք. ասոր նշանաւոր քաղաքներն էին Մելիտինէ (Մալաթիա), Սամոսատ, Բեռնի, Վահիկ, Կոկիսոն, Զէյթուն (Ուզնիա), Արկա (Ազճեռազ)։*

Գ. ՈՒՐՀԱՅԱՍՏԱՆ

ՈՒՐՀԱՅԱՍՏԱՆ. — *Հայոց Միջագետք ալ կը կոչուի Ուրհայաստանն որ կը տարածուէր Աղձնեաց հարաւակողմը, Եփրատ ու Տիգրիս գետերուն մէջև։*

Ուրհայաստանի քաղաքներն էին. Սմիղ=Տիարպեքիր, Մծբին, Եղեսիա (Ուրֆա), Բերդս (Պիրեճիկ), Սեւաւերակ, Խառան, Հռոմկլայ, Գերմանիկի (Մարաչ)։

Դ. ԿԻԼԻԿԻԱ

ԿԻԼԻԿԻՈՑ ԲԱԺԱՆՈՒՄԸ.— *Կիլիկիա կը տարածուէր Եփրատ գետի, Միջերկրական ծովու, Տօրոսի ու Փոքր Հայքի միջև։*

Կիլիկիա կը բաժնուէր երկու մասի. Լեռնային ու Դաշտային։

ԼԵՌՆԱՅԻՆ ԿԻԼԻԿԻԱ. — *Լեռնային Կիլիկիոյ քաղաքներն էին. Սիս, Կոռիկոս, Սեղեւկիա, Գերմանիկոպոլիս (Էրմէնէք)։*

ԴԱՇՏԱՅԻՆ ԿԻԼԻԿԻԱ. — *Դաշտային Կիլիկիոյ քաղաքներն էին. Ադանա, Տարսոն, Մամեստիա, Իսոս (Այաս), Սեղեւկիա, Բայաս, Լայաշ։*

ԿԻԼԻԿԻՈՑ ՆՇԱՆԱՒՈՐ ԱՄՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.— *Կիլիկիոյ մէջ նշանաւոր էին սա՛ բերդերը.*

Վահկայ բերդ (Ֆեքէ), Լամբրոն, Կապան, Բարձր բերդ։

ՆՇԱՆԱՒՈՐ ՎԱՆՔԵՐ. — *Կիլիկիոյ նշանաւոր վանքերն էին Սեւ Լեռ, Դրազարկ, Սկեւռայ ու Ծոմ (Անթարսի մօտ)։*


ԱՍԻԱ
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՍԱՌՈՒՑԵԱԼ ՕՎԿԻԱՆՈՍ
ՍԱՀԱՐԱ
ԱՖՐԻԿԱ
ԱՍԻԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱ
ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ ԾՈՎ
ԱՐԱԲԱԿԱՆ ԿԱՂԶԻՆ
ՀԻՆԴՈՍՏԱՆ
ՊԱՐՍԻԿ ԾՈՎԱԿՈՂՄ
ՍԱՄՈՒՐԱՅԻ ԼԵՌՆԱՇԽԱՐՀ
ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ
ՀԱՐԱՎԱՅԻՆ ՍԱՌՈՒՑԵԱԼ ՕՎԿԻԱՆՈՍ
ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ
ՄԵՔՍԻԿԱԿԱՆ ԾՈՎԱԿՈՂՄ

մտեան ծայրը, Փիլիպպէէ՝ Իբերական ցամաքակղզւոյն հիւսիսային արեւմտեան ծայրը, և Ս. Վիչենտիոս՝ սոյն ցամաքակղզւոյն հարաւային արեւմտեան ծայրը:

ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆԻ ԾՈՎԱՓՈՒՆԵՐԸ. — Միջերկրական ծովը որ, Ատլանտեան ովկիանոսի հետ կը հաղորդակցի Ճիպրալդարի նեղուցով (14 քմ. լայնութեամբ) կը ձեւացնէ երկու մեծ ծոց, Լիոնի ծոցը Ֆրանսայի եզերքին ու Ճենովայի ծոցն Իտալիոյ եզերքը:

Միջերկրականը կը ձեւացնէ նաև բազմաթիւ երկրորդական ծովեր — Տիւրեւնական ծով, Յոնիական ծով, Ադրիական ծով, Արխիպելագոս=Եգէական ծով, Մարմարա ծով, Սեւ ծով ու Ազախու ծով:

Մարմարա ծովը Արքիպելագոսի հետ կը հաղորդակցի Զանագ գաղէի=Տարսանէլի նեղուցով ու Սեւ ծովու հետ՝ Վոսփորով:

Միջերկրականի մէջ ցրուած են բազմաթիւ կղզիներ. արեւմուտքէն դէպ ի արեւելք կը տեսնուին Պալէարեան, Գորսիգա, Սարտենիա, Սիկիլիա, Կրետէ: Միջերկրականի մէջ կ'երկարին երեք ցամաքակղզի. Իբերական, Իտալական ու Պալգանեան: Պալգանեանը կը վերջանայ Մորա թերակղզիով: Սեւ ծովուն և Ազախու ծովուն միջեւ կը գտնուի Խրիմ թերակղզին:

ԿԱՍՊԻՑ ԾՈՎ. — Ասի անտուն լիճ մըն է Կասպից ծովը որ և ոչ մէկ ներքին ծովու հետ կը հաղորդակցի: Սեւ ծովու մակերեսէն 26 մեղր ցած է իրենը:

2. Եւրոպայի հողագրութիւնը



ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ԴԱՇՏԱԳԵՏԻՆ

ԵՒՐՈՊԱՅԻ ԵՐԿՈՒ ՄԵԾ ԵՐԿԱՄԱՍԵՐԸ. — Եւրոպան ունի երկու մեծ երկամասեր, որոնք իրարմէ կը զատուին Ուրալ լեռներով, Ուրալ գետով, Կասպից ծովով, Կովկաս լեռներով, Սեւ ծովով և Պոսփորի նեղուցով: Ասոնցմէ հիւսիսային մասը կը կոչուի Եւրոպական Ռուսիա, իսկ հարաւային մասը կը կոչուի Եւրոպա:

ԱԼՊԵԱՆ ԼԵՌՆԱՇԻՒՂ ԿԻՐՃ

Եւրոպայի ամէնէն երկար ծովու եզերքի Օսեապէն մինչև Սոֆիոմ՝ Պալգիկի եզերքը՝ ուղիղ գիծ մը քաշենք, Եւրոպա երկու տարբեր երկրամասի կը բաժնուի:

Այն երկրամասն որ այս գծէն ձախ կողմը կը գտնուի՝ կը պարունակէ գրեթէ բոլոր լեռները. ասիկա Արեւմտեան Եւրոպան է ուր կան նաև բարձրեր դաշտագետիններ: Հոս կը բնակին հարաւաբարուհատ ժողովուրդներ: Այս մասն Եւրոպայի ամէնէն խիտ բնակչութիւնը կը պարունակէ: Ամէնէն կարեւոր դաշտագետինները կը գտնուին Ատլանտեանի ու անկէ ձեւացած ծովերուն եզերքը: Ալպեանց ու Կարպատեանց լեռնաբուն միջեւ կայ Հունգարիոյ դաշտագետինը:

Իսկ այն երկրամասն որ կը գտնուի այն գծէն աջ կողմը՝ բոլորովին դաշտագետին է, քիչ բնակչութեամբ. ասիկա է Արեւելեան Եւրոպան: Այս երկրամասին գրեթէ բարձրութիւնն է վայրայ լեռնադաշտը:

ԱԼՊԵԱՆԵՐ. — Եւրոպայի ամէնէն բարձր լեռնագօտին են Ալպեանք որոնց հասատեանն է Ս. Կոթար՝ Զուիցերիոյ մէջ:

Ալպեանք 1200 քմ. երկայնութեամբ կոր գիծ մը կը ձեւացնեն Միջերկրականի եզերքէն մինչև Դանուբի հովիտը: Ասոնց ամէնէն բարձր գագաթն է Մոն Պլան=«Սպիտակ լեռ»:

ԱԼՊԵԱՆՑ ԲՈԼՈՐՏԻՒԻ ԼԵՌՆԱԴՕՏԻՆԵՐԸ. — 1. Ալպեանց արեւմտեան կողմը կը գտնուին կեդրոնական հատատեանն ու Պիւրենեեանի: Այս վերջինները կ'երկարին Իբերական ցամաքակղզւոյն մէջ մինչև Ճիպրալդարէ հրուանդանը: Այս ցամաքակղզւոյն հարաւակողմը կ'երկարի Սիերա Նեւասա լեռնագօտին:

2. Ալպեանց հիւսիսային արեւմտեան ու հիւսիսային կողմը կան ժուրա, Վոժ ու Հարծ լեռնագօտիները որոնց բարձրութիւնը հիւսիսէն դէպ ի հարաւ երկարի, այնչափ կը նուազի:

3. Ալպեանց արեւելեան կողմը կայ Կարպատեան լեռնագօտին, հարաւային արեւելեան կողմին ալ՝ Պալգանեան լեռները որ կ'երկարին արեւմուտքէն դէպ ի արեւելք:

ԱԼՊԵԱՆՑ ՄԷՋ ԱՊԱՍՏԱՆԱՐԱՆ

4. Վերջապէս Ալպեանց հարաւակողմը կայ Ապենինեան լեռնագօտին որ Իտալական ցամաքակղզւոյն ամէն կողմը ճիւղեր կ'արձակէ: Ապենինեանը կցուած է Ալպեանց:

ԱՆՋԱՏ ՀԱՏԱՏԱՄԵՏՆԵՐ. — Եւրոպայի ծայրերը կան չորս անջատ հատատեաններ.

1. Հիւսիսային կողմը, Սկանտինաւեան ցամաքակղզւոյն մէջ՝ Սկանտինաւեան լեռներն որոնք Սառուցեալ գօտւոյն մօտ ըլլալով՝ ծանծղեական ձիւնով ու սառոյցով պատած են:

2. Արեւմտեան կողմը՝ Անգլիոյ ու Սկովտիոյ լեռները:

3. Արեւելեան կողմը՝ Ուրալ լեռներ. ասոնք այնչափ բարձր չեն և կոդերնին դիւրաանցք դիւրին է:

4. Վերջապէս հարաւակողմը՝ Կովկաս լեռնագօտին որ կ'երկարի Սեւ ծովու և Կասպից ծովու միջև. ասոր բարձրագոյն գագաթն է Էլպրուզ:

3. Եւրոպայի ջրագրութիւնը

ԵՒՐՈՊԱՅԻ ԵՐԿՈՒ ՄԵԾ ԶԱՒԹԱՓՆԵՐԸ. — Եւրոպայի գետերը դէպ ի ծով կը հոսին երկու գլխաւոր ուղղութեամբ. 1. Հիւսիսային արեւմտեան զառիթափ որ կը հակի դէպ ի Սառուցեալ ովկիանոս ու Ատլանտեան ովկիանոս: 2. Հարաւային արեւելեան զառիթափ որ կը հակի դէպ ի Միջերկրական ծով ու Կասպից ծով:

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԶԱՒԹԱՓԻ ԳԵՏԵՐԸ. — 1. Սպիտակ ծովը որ ձեւացած է Սառուցեալ ովկիանոսէն՝ կը թափի Տուինա գետը. ասիկա զրեթէ սառած է:

2. Պալթիկ ծովը կը թափին Նեւա, Վիսդուլա ու Օսկր:

3. Հիւսիսային ծովը՝ Էլպա, Հռենոս, Մեօզ, Եմոյ ու Դայզ:

ՀՌԵՆՈՍԻ ՋՐվԷԺԸ

4. Մանչի ծովը՝ Սեն:

5. Սարմանեան ովկիանոսը՝ Լուար, Կարոն, Միւնոյ, Տուրոյ, Դանոյ, Կուատալանա ու Կուատալիւիր:

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԶԱՒԹԱՓԻ ԳԵՏԵՐԸ. — 1. Միջերկրական ծովը՝ Էպրոյ, Ռոն ու Տիբերիս:

2. Ադրիական ծովը՝ Բոյ:

3. Սեւ ծովը՝ Դանուբ, Եւրոպայի ամէնէն

նչանաւոր գետն որ Կարպատեանց Երկաթի Դրան կիրճէն կ'անցնի, Տնիեստր ու Տնիեպեր:



ՌՈՆԻ ՍԱՌՆԱԲԱՆԸ

4. *Ազատու ծովը՝ Տոն:*

5. *Կասպից ծովը՝ Վոլկա որ Եւրոպայի ամէնէն երկար գետն է և Ուրալ:*

ԵՒՐՈՊԱՅԻ ԼԻՃԵՐԸ. — *Եւրոպայի գլխաւոր լիճերն են Ձևևեւրայի լիճ՝ Ալպեանց մէջ, Լատոգա ու Օնեգա Վալտայ լեռնագաշտին հիւսիսային կողմը:*

Բ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

1. Եւրոպայի կլիմայ

Բայց ի բեւեռային երկրամասէն որ կը գտնուի Հիւսիսային Սառուցեալ ովկիանոսի մէջ՝ Եւրոպա տարածուած է Հիւսիսային Բարեխառն գօտւոյ մէջ: Երկը կազմէն ծովով շրջապատուած ըլլալուն՝ թէեւ կլիման մեղմ է ընդհանրապէս, բայց միօրինակ չէ բովանդակ Եւրոպայի մէջ, այլ երեք գլխաւոր կլիմայ ունի:

1. *Աւտլանտեանի կլիման որ մեղմ է՝ հաւասար բարեխառնութեամբ կը տիրէ Եւրոպայի դէպ ի հիւսիսային արեւմուտք հակած մասերուն մէջ: Ովկիանոսի մակերեսէն չգոլացած մթնոլորտը կը բարեխառնէ սաստիկ տաքն ու առաջ անձրեւն ալ՝ երկիրներու վրայ խոտացած սաստիկ ցուրտը:*

2. *Միջերկրականի կլիման կը տիրէ Միջերկրականի եղերքի երկիրներու մէջ: Թէեւ բարեխառն է ծովուն մօտակայ տեղերը, սակայն չատ տարբեր է Միջերկրականի կլիմայն. տեղ մը սաստիկ ցուրտ, տեղ մը սաստիկ տաք և բարեխառնութիւնը՝ չատ անկանոն:*

3. *Ցամաքային կլիման կը տիրէ Եւրոպայի կեդրոնն ու արեւելքը: Ծովուն ազդեցութիւնը զգալի չէ այս երկիրներուն մէջ. սառնք ենթարկուած են սաստիկ տաքութեան ու սաստիկ ցրտութեան:*

2. Արտադրութիւններ

ՀԱՆՔԱՅԻՆ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — *Եւրոպայի հողը չատ ճոխ է թանկագին մետաղներով, բայց ամէնէն աւելի կը պարունակէ մեծաքանակ հանքածուխ ու երկաթ:*

ԲՈՒՍԱՅԻՆ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — *Եւրոպայի կլիման կը նպաստէ օգտակար բոյսերու աճման: Մեծ դաշտագետինները, մանաւանդ Ֆրանսայի ու Ռուսիոյ՝ կ'արտադրեն ար ուեստիմ: Հարաւային մասերը կ'աճեն որթատունկ, ձիթենի, թզենի, նարնջենի: Արեւմտեան խոնաւ երկիրն առատ է մարգագետիններով ուր կը բուծանին ընտանի անասուններ: Վերջապէս լեռներն ու հիւսիսային արեւելեան երկրամասը ծածկուած են անտառներով:*

ԱՆԱՍՈՒՆՆԵՐ. — *Եւրոպա այն երկիրն է ուր կան ընտանի անասուններու գեղեցիկ ցեղերը: առանց մէջ նչանաւոր են փրանսական, հունգարական ու անգլիական ձիերը, անգլիական, հոլանտական, փլանտական ու գուիցերական արջառները, սպանիական, փրանսական, անգլիական ու Բուլղարիի ոչխարները:*

Միջերկրականի մարգին մէջ տարածուած է Շերտաբուծութիւնը, մանաւանդ Ֆրանսայի ու Իտալիոյ հարաւակողմերը:

Եւրոպայի մէջ գազանները գրեթէ սպառած են: Սակայն Ռուսիոյ ու Սկանտինաւիոյ հիւսիսային երկրամասերուն մէջ կայ սպիտակ արջ, լեռնային երկիրներու մէջ՝ գոյշագոյն արջ, Ռուսիոյ անտառներուն մէջ՝ գայլ, և քանի մը բարձր լեռներու մէջ ալ՝ ար ծիւ ու բազէ:

Գ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Եւրոպայի բնակիչներն ու Տէրութիւնները

ԵՒՐՈՊԱՅԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ. — *Թէև Եւրոպայի բնակիչները 380 միլիոն են, սակայն աչխարհ*

ՄԱՍՍԱՆԻԱ
ՍԱՄԱՐԱ
ՍԱՐԱՏՈՎ

բնակչութեան հազիւ մէկ քառորդը կը կազմեն։ Եւրոպա իր տարածութեան նայելով՝ աշխարհիս ամէնէն բազմամարդ երկիրն է։

ԼԱՐՈՆՑԻ (ՖԻՆՆԵԱՆ)

Եւրոպայի բնակիչները կը պատկանին Սպիտակ ցեղին և կը բաժնուին երեք մեծ խմբի.

1. Յոյն և Լատին ցեղը կը բնակի Ֆրանսա, Իբեռական ցամաքակղզի ու Պալկանեան ցամաքակղզւոյն հարաւային կողմը։ 2. Գերմանական ցեղը կը բնակի Եւրոպայի կեդրոնը, հիւսիսն ու հիւսիսարեւմուտքը։ 3. Սլաւական ցեղը՝ Եւրոպայի արեւելքն ու Պալկանեան ցամաքակղզւոյն քանի մը մասերը։

ԵԻՐՈՊԱՅԻ ՏԷՐՈՒԹԻՒՆՆԵՐՔ. — *Եւրոպա բաժնուած է քանի մը տէրութեանց.*

1. Հիւսիսային Եւրոպայի մէջ՝ Անգլիա, Տանիմարգա, Շուէտ ու Նորվեկիա։

2. Արեւելեան Եւրոպայի մէջ՝ Յունաստան, Պելճիգա, Հոլանտա, Լիխտենշտայնի մեծ Դքսութիւն, Գերմանական Կայսրութիւն, Աւստրահունգարական Կայսրութիւն-Թագաւորութիւն ու Զուիցերիա։

4. Հարաւային Եւրոպայի մէջ՝ Բուդուկալ, Սպանիա, Իտալիա, Եւրոպական Թուրքիա, Ռումանիա, Սերվիա, Գարատաղ, Պուղարիա ու Յունաստան։

Թուրքիա, Ռուսիա, Գերմանիա, Աւստրիա-Հունգարիա, Յունաստան, Անգլիա ու Իտալիա Եւրոպայի ամէնէն կարեւոր պետութիւններն են և կը կոչուին Մեծ Տէրութիւններ։

ԵԻՐՈՊԱԿԱՆ ՏԷՐՈՒԹԵԱՆՑ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ. — *Բացի Ֆրանսայէն ու Զուիցերիայէն որ Հանրապետութիւն են՝ Եւրոպայի տէրութիւնները կը կառավարուին Սահմանադրական միապետով (իշխան, թագաւոր, կայսր)։*

ԱՄՓՈՓՈՒՄ

ԲՆԱԿԱՆ ԵՒՐՈՊԱ

Եւրոպայի սահմանն է... — Սառուցեալ ովկիանոսէն կազմուած է... ծովը. — Նոր Զեմլա...—Ատլանտեանէն... ծովերն ու... ծոցը .. — Միջերկրականէն կազմուած են... ծովերն ու... ծոցերը. — Հիւսիսային ծովէն կազմուած է... ծոցը. — Պալթիկէն կազմուած են... ծոցերը. — Եւրոպայի նեղուցներն են...—Սառուցեալ ովկիանոսին մէջ կը գտնուի ... կղզին. — Պալթիկի մէջ կը գտնուին... կղզիները. — Միջերկրականի մէջ... կղզիները. — Արքիպելագոսի մէջ... կղզիները. — Եւրոպայի հրուանդաններն են... — Յամաքակղզիներն են... — Թերակղզիներն են... — Եւրոպա հողագրապէս երկու երկրամասի կը բաժնուի, եթէ... — Գծին ձախ կողմը կը գտնուի... — Բարեբեր դաշտագետինները կը գտնուին... — Հունգարիոյ դաշտագետինը... — Գծին աջ կողմը կը գտնուի... — Վալտայ լեռնադաշտը... — Ալպեանք են... — Ալպեանց հաստատեստն է... — Ալպեանք... երկայնութեամբ կոր գիծ մը կը ձեւացնեն... — Մոն-Պլան... — Ալպեանց բոլորտիքի լեռնագօտիները են... — Պիւրենեանք կը գտնուին... եւ կ'երկարին. — Սիերա Նեւատա կը գտնուի... — Ժուրա, Վոժ. Հարծ լեռնագօտիները... — Կարպատեան լեռնագօտին... — Պալգանեան ... — Ապենինեան... — Եւրոպայի անջատ հաստատեստներն են... — Սկանտինաւեան լեռները կը գտնուին... — Անգլիոյ ու Սկովտիոյ լեռները... — Ուրալ... — Կովկաս... — ելպրուզ... գագաթն է. — Եւրոպա կը բաժնուի... զառիթափի. — Հիւսիսային արեւմտեան զառիթափը կը հակի ... — Հարաւային արեւելեան զառիթափը .. — Հիւսիսային արեւմտեան զառիթափի գետերն են... — Հարաւային արեւելեան զառիթափի գետերն են... — Դունա կը թափի ... — Պալթիկ ծով կը թափին... — Հիւսիսային ծովը...— Սէն... — Ատլանտեան ովկիանոսը... — Միջերկրական ծովը... —Բոյ...—Սեւ ծովը... — Տոն...—Կասպից ծովը... — Եւրոպայի գլխաւոր լիճերն են...։

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Եւրոպա կը գտնուի... գօտւոյ մէջ. — ... կլիմայ ունի. — Ատլանտեանի կլիմայն.. — Միջերկրականի կլիմայն... — Յամաքային կլիմայն... — Եւրոպայի հանքային արտա-

դրութիւններն են... — Ռուսային արտադրութիւններն են... — ... կ'արտադրեն արմտիք. — Հարաւային մասերուն մէջ կ'աճին... — Մարգագետինները կը գտնուին... — Անտառ... — Ընտանի անասուններն են... — Շերամաբուծութիւնը տարածուած է... — Եւրոպայի գազաններն են... եւ կը գտնուին...։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Եւրոպայի ճարտարարուեստ ժողովուրդը կը բնակի... — Խիտ բնակչութիւնը կը գտնուի... — Բնակիչներուն թիւն է... — ... բազմամարդ երկիրն է՝ բաղդատմամբ... — Բնակիչները կը պատկանին... — Լատին ցեղին... — Գերմանականին... — Սլաւականին... — Եւրոպա կը բաժնուի ... տէրութեանց... — Հիւսիսային Եւրոպայի մէջ կը գտնուի... — Ռուսաստան... — Հարաւային Եւրոպայի մէջ ... — Կեդրոնական Եւրոպայի մէջ... — Եւրոպայի մեծ տէրութիւններն են...— Հանրապետութիւն են...—Սահմանադրական տէրութիւններ են... Սահմանադրական կայսրութիւն են... — Սահմանադրական թագաւորութիւն են...։

ՄԵԾՆ ԲՐԻՏԱՆԻԱ



ԲՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ. — *Բրիտանական կղզիները կը կազմեն Միացեալ Թագաւորութիւն Մեծն Բրիտանիոյ ու Իրլանտայի որ սովորաբար կը կոչուի Անգլիա: Ասիկա չորս կրկիր կը պարունակէ — Սկովտիա՝ հիւսիսային կողմը, Բուն Անգլիա՝ հարաւային կողմը, Կաղհս՝ Անգլիոյ արեւմտեան կողմը ու Իրլանտա՝ Իրլանտայի ծովուն արեւմտեան կողմը:*

Անգլիա մեծ մասամբ ալեծեւ դաշտագետին մըն է՝ ոռոգուած Դայմզ, Սեւեռն գետերէ ու աւտոց գետակիցներէն: Անգլիոյ ու Սկովտիոյ սահմանին վրայ՝ հիւսիսային կողմը կը բարձրանայ Չեւիոդ լեռնագօտին ու Սկովտիոյ մէջ ալ կան Կրամբեան լեռները: Իրլանտա մեծ մասամբ դաշտագետին է:

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐ. — *Անգլիոյ մէջ. Լոնտոն՝ Դայմզ գետին եզերքը թագաւորութեան մայրաքաղաքն և աշխարհիս ամէնէն բազմամարդ ու ամէնէն վաճառաշահ նաւահանգիստը:*

ՈՒԵՍԹՄԻՆՍԹԸՐ

Միւս մեծ քաղաքներն են. Լիվրբուլ՝ բամպակեղէններու, բրդեղէնի ամէնէն մեծ չհասանքը: — Մանչեսթր՝ աշխարհի ամէնէն կարեւոր բամպակեղէնն ու հիւսուածքները կ'արտադրէ: — Պրոմինկհեմ ու Շեֆիլտ՝ մեծ կեդրոններ երկաթեղէն ու պողպատէ ճարտարարուեստին: — Լիտս՝ աշխարհի ամէնէն կարեւոր բրդեղէն կերպասներու հիւսուածատեղին: — Բորդամութ՝ զինուորական նաւահանգիստ: — Նիւքհէլ հանքածուխ կ'արտադրէ: — Կրինիչ Աստղաբաշխական դիտարան ունի: — Հըլ, Տուվր, Բիւմութ, Պրիսթլ, Սաութհեմբթըն՝ նաւահանգիստներ: — Օմաճոռս ու Քեմպրիճ համալսարան ունին:

Կաղհսի մէջ. Գարտիֆ՝ ճարտարարուեստական կեդրոն:

Տըպլին՝ Իրլանտայի մայրաքաղաքը: — Պելֆաստ՝ ճարտարարուեստի կեդրոն:

Էդինպուրկ՝ Սկովտիոյ մայրաքաղաքը: — Կլասկով՝ Սկովտիոյ ճարտարարուեստական քաղաքը: — Տրնտի՝ ճարտարարուեստի կեդրոն:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿ. — *Բրիտանական կղզիները ծովային խոնաւ կլիմայ ունին, բայց բաղդատմամբ մեղմ է որ կը նպաստէ մարգագետիններու աճման ու անասնաբուծութեան:*

Մեծն Բրիտանիա առաջին տեղը կը գրաւէ աշխարհի մէջ իր ճարտարարուեստով, վաճառականութեամբ ու ծովային զօրութեամբ: Իր հանքածուխի ու երկաթի հանքերը, իր գործարանները, իր բրդեղէն ու բամպակեղէն գործուածքները, իր բրդեղէն ու բամպակեղէն գործուածքները ու իր անհուն գաղթականութիւնները իրեն համար նշանաւոր չահաբերութիւններ են:

ԲՆԱԿԻՉ. — *Մեծն Բրիտանիոյ բնակչութիւնը 43 միլիոն է, մեծ մասամբ Գերմանական ցեղէ: Անգլիացիք ու Սկովտիացիք մեծ մասամբ Բողոքական են, Իրլանտացիք ալ՝ Հռոմէական:*

ՍԱՆՏԻՆԱՒԵԱՆ ՅԱՄԱՌԱԿՂԶԻ

ԲՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ. — *Սկանտինաւեան յամառակղզին կը բաժնուի երկու մէրութեանց —Նորվեկիա՝ որ կը գրաւէ հիւսիսային մասն ու Սկանտինաւեան լեռներու արեւմտեան զառիթափն և Շուէտ՝ որ կը գրաւէ արեւելեան զառիթափը:*

ԳԻՈՐՏ (ՆՈՐՎԵԿԻԱ)

Արեւմտեան կողմը կը բարձրանան Քէօղեն լեռները. աւտոց ծովեզերքը կը ձեւացնեն փիորտ-ները. Լոֆոտեն կղզիները կը պատկանին Նորվեկիոյ, Կոթլանտ ու Էոլանտ ալ՝ Շուէտի: Սկանտինաւիոյ մէջ կան սա՛ կարճ ընթացքով գետերն և ընդարձակ լիճերը՝ Վեներ, Վեթեր, Մելար:



ՇՈՒԷՏ. — *Քաղաքներ. Ստոհոլմ՝ մայրաքաղաք, Պալտիկի եզերքը նաւահանգիստ: — Կոթեպուրկ՝ Շուէտի երկրորդ քաղաքը: — Ուբսալա, Մալմոհ:*

Գլխաւոր հարստութիւններն են հողագործական բերքերը՝ արմտիք, ճակնդեղ, հմուլ=գայլուկ, կանեփ, ծխախոտ, անասնաբուծութիւն, ատաղձի ու հանքերու արտածում: Բնակիչները 5 միլիոն 200,000 են և մեծ մասամբ Գերմանական ցեղէ ու Բողոքական կրօնքով:

ՆՈՐՎԵԿԻԱ. — *Քաղաքներ. Քրիսդիանիա՝ մայրաքաղաք, Սկաւերաքի եզերքը նշանաւոր նաւահանգիստ: — Պերկեն՝ նաւահան ունի: — Դրոնհիայմ, Համերֆեսդ:*

Նորվեկիացիք կ'զբաղին մանաւանդ ծովային առեւտրով ու ձկնորսութեամբ: Բնակիչները 2 միլիոն 500,000 են և Շուէտացիներուն պէս Բողբոքական ու Գերմանական ցեղէ:

ՏԱՆԻՄԱՐՔԱ

ՏԱՆԻՄԱՐՔԱՑԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ.—*Եուդանէթ ու Դանիական արիստոկրատ կը բաղկանայ Տանիմարքայի թագաւորութիւնը։*

Տանիմարքա առաւելապէս հողագործական ու անասնաբուծական երկիր մըն է։ Մայրաքաղաքն է Գոբենհակ, Նաւահանգիստ Զելանտ կղզւոյն մէջ։ — Աարուս, Օտենսէ, Հերսիլեոր։

ԻՍԼԱՆԴԱՑԻ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ՏԱՆԻՄԱՐՔԱՑԻ ՍՏԱՑՈՒԱԾՔՆԵՐԸ. — *Իսլանտա մեծ կղզին՝ ուր մոտու ձուկ կ'որսան, Ֆերոուեր ու Փոր Անդրեասից կրնք կղզիները։*

ՊԵԼՃԻՔԱ

ԲՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — *Ֆրանսայի հիւսիսային կողմը կը գտնուի Պելճիքայի թագաւորութիւնն որ Եւրոպայի ամէնէն բազմամարդ երկիրն է իր տարածութեան նայելով։*

Հիւսիսային մասն ալաղուտ ու ճահճախառն է. արեւմտեան ծովափունքը պաշտպանուած ու կառուցուած են թումբեր. արեւմտեան մասը բլրոտ է ու ծածկուած՝ Արտենի անտառներով։

ԲՆԱԿՉՈՒԹԻՒՆ. — *Պելճիքա հողագործական առաջիկայով կ'արտադրէ արմտիք, ճակնդեղ, վուշ, եղերդ, ծխախոտ, հմուկ։ Նշանաւոր են բրդեղէն, բամբակեղէն ու երկաթեղէն գործուածքները։ Երկաթուղւոյ ցանցեր ամէն կողմ տարածուած են։ Բնակիչք 7 միլիոն։ Հիւսիսային կողմը կը բնակին Ֆլամանները՝ Գերմանական ցեղէ, հարաւային կողմն ալ Վալոնները՝ Լատին ցեղէ։*

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐ. — *Պրիւսել՝ մայրաքաղաք։ — Անվերսա՝ Էսքոյ գետին եղերքը նշանաւոր նաւահանգիստ։ — Գանտ՝ Լիժ՝ նշանաւոր գինագործարանով ու երկաթեղէններով։ — Վերվիէ՝ առուղէն։*



ԱՆՎԵՐՍԱ

ՀՈԼԱՆԴԱ
ՊԵԼՃԻՔԱ
Մասշտաբ 1 : 1.350.000
Ամստերդամ
Հաարլեմ
Ռոտերդամ
Հակ
Տրենթ
Ամերսֆորտ
Զվոլ
Լեուվարդեն
Տեվենթեր
Ուտրեխտ
Ամերսֆորտ
Ամսթերդամ
Ալքմար
Հարլեմ
Լեյդեն
Հակ
Ռոտերդամ
Միդլպուրգ
Ֆլիսինգեն
Գրոնինգեն
Լեուվարդեն
Ասսեն
Ենսխետե
Զվոլ
Տրենթ
Ամերսֆորտ
Ապելտորն
Արնհեմ
Նիմեգ
Ուտրեխտ
Ամերսֆորտ
Ամսթերդամ

ցերիա աշխարհի դարուիոս ու ամենէն նկարագեղ երկիրն է:



Ջուլիսկերիոյ մէջ կան բազմաթիւ լիճեր. սոնց գլխաւորներն են հարաւային արեւմտեան կողմը ձեւնեւոս լիճը՝ Ռոնէն ձեւացած, և հիւսիսային արեւելեան կողմը Գոնստանձա լիճը՝ Հռենոսէն ձեւացած:

ԺԸՆԵՒ

ՔԱՂԱՔՆԵՐ.— Պեռլի՝ Գաշնակցութեան մայրաքաղաք: — Ջուրիխ՝ համանուն լճին եզերքը, գրական ու ճարտարարուեստ կեդրոն: — Ժընեւ՝ համանուն լճին եզերքը, գրական ու ճարտարարուեստ կեդրոն: — Պազ՝ գրական ու ճարտարարուեստ կեդրոն:



ՋՈՒՐԻԽԻ ՋՈՒԻՑԵՐԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ԲՆԱԿԻՉՆԵՐ. — Երեք միլիոն Ջուլիսկերիացի կը բաղկանան Գերմանացիներէ, Ֆրանսացիներէ ու Իտալացիներէ: Կրօնքով ոմանք Բողոքական և ուրիշներ Հռոմէական են:

Ջուլիսկերիոյ ամենէն ծաղկած ճարտարարուեստներն են ժամագործութիւնն ու մետաքսեղէն հիւսուածները:

ԳԵՐՄԱՆԻԱ

ԲՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — Գերմանիա կը հակի հարաւային արեւելքէն դէպ ի հիւսիսային արեւմուտք, ինչպէս կը տեսնուի գետերու ընթացքէն: Հիւսիսային արեւմուտքէն կը հոսին Հռենոս, Մեն, Մոզել, Վեզեր, Էլպա, Օսեր, Վիսդուլա ու Նիեմեն: Հարաւային արեւելքէն կը հոսի Դանուբ. սոր գետակիցն է Իլն:

Գերմանիա հողագրական երեք մաս կը ներկայացնէ. Վերին Գերմանիա, Միջին Գերմանիա, Ստորին Գերմանիա: Վերին Գերմանիա կը բովանդակէ Ալպեան բազուկները, Վոժ, Պաւերիոյ լեռնադաշտը, Սեւ անտառ ու Սուապի Ժուրա: Միջին Գերմանիոյ գլխաւոր բարձրութիւնները են Թուրինկ, Հարծ, Երց-Կեպիրկ: Ստորին Գերմանիա կազմուած է հիւսիսային Գերմանիոյ անհուն դաշտագետիններէն:

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆ. — Հոլանտայի, Պելճիքայի, Ֆրանսայի, Ջուլիսկերիոյ, Աւստրիոյ, Ռուսաստանի, Պալթիկ ծովու, Տանիմարքայի ու Հիւսիսային ծովու միջև կը տարածուի Գերմանական Կայսրութիւնը:



1871ին Ֆրանսաւգերմանական պատերազմէն ետք կազմակերպուած է Գերմանական Դաշնակցային կայսրութիւնն որ կը բաղկանայ 26 գաւառներէ: Բուսիոյ թագաւորը միանգամայն Գերմանիոյ կայսր է:



ՊԵՐԼԻՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ԳԼԽԱՒՈՐ ՏԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՈՒ ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ. — 1. Բուսիոյ թագաւորութիւն. մայրաքաղաք՝ Պեռլին որ միանգամայն կայսրութեան մայրաքաղաքն է: — Պրեսլաւ՝ Բրուսիոյ երկրորդ քաղաքը:

2. Պաւերիոյ թագաւորութիւն. մայրաքաղաք՝ Միւնխեն:

3. Սաքսոնիոյ թագաւորութիւն. մայրաքաղաք՝ Տրեզտեն:

4. Վիւրթեմպերկի թագաւորութիւն. մայրաքաղաք՝ Շդուդկարդ:

5. Պատի մեծ դքսութիւն. մայրաքաղաք՝ Գարլսրուհէ:



ԷՍԷՆԻ (ԳԵՐՄԱՆԻԱ) ԳՐՈՒԲԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Գերմանիոյ մեծ գլխաւոր քաղաքներն են. Լայբցիկ՝ Բարիզէն ետք Եւրոպայի գլխաւոր կեդրոն Գրքի առեւտուրին: — Պեռլա՝ Օտերի եզերքը ճարտարարուեստ քաղաք: — Համպուրկ՝ Էլպայի եզերքը մեծ նաւահանգիստ: — Մակդեպուրկ՝ Էլպայի եզերքը ճարտարարուեստ կեդրոն: — Գոլոնիա՝ Հռենոսի եզերքը առեւտրական ու ճարտարարուեստ կեդրոն: — Սդրազպուրկ՝ Ալզասի մէջ բերդաքաղաք:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿ. — Գերմանիա Անգլիայէն ետք Եւրոպայի այն երկիրն է որ ամենէն աւելի հաւհամածուխ և երկաթ կ'արտադրէ: Շատ տեղ երկիրն անմշակ է՝ ճախճախուտ և աւազուտ ըլլալուն համար: Գլխաւոր բուսային արտադրութիւններն են ճակնդեղ, վարսակ, հաճար, ցորեն, գայլուկ=հմուլ, գետնախնձոր, ծխախոտ, կանեփ, վուշ ու գինի: Գերմանիոյ ճարտարարուեստը ծաղկած է մանաւանդ Մետաղործութեան մէջ: Իր մեքենայներով, հիւսուածեղէններով, չաքարով ու քիմիական արտադրութիւններով աշխարհի մէջ առաջին երկիրներէն է և իր վաճառականութիւնն երկրորդ կարգը կը գրաւէ Անգլիայէն ու Ֆրանսայէ ետքը:

ԲՆԱԿՉՈՒԹԻՒՆ. — Գերմանիա 62 միլիոն բնակիչ ունի, մեծ մասամբ Գերմանական ցեղէ: Բնակչութեան $^3/_5$ը Բողոքական է:

ԱԻՍՏՐԻԱ-ՀՈՒՆԳԱՐԻԱ

ԲՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — *Աւստրիա-Հունգարիա կը գտնուի Գերմանիոյ, Ռուսիոյ, Պալգանեան թաղամասին, Ադրիականի, Իտալիոյ ու Զուիցերիոյ միջև։*



Աւստրիա-Հունգարիա կը բաղկանայ 1. Հունգարական դաշտագետինէն՝ չրջապատուած Սպիանեներէ, Կարպատեաններէ, Տրանսիլվանիոյ ու Պոնտոսի լեռներէն, 2. Կալիցիոյ, ու 3. Պոհեմիոյ լեռնագաւառներէն։

Դանուբի միջին ընթացքն Աւստրիոյ-Հունգարիոյ մէջ է։ Դանուբի գետակիցներն են Թիսա, Իլն, Տրաւա, Սաւա։ Աւստրիա-Հունգարիան առատ միւս գետերն են Ասիճ, Էլպա, Օտեր, Վիսդուլա, Տնիեստր ու Տնիեպեր։

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐ. — *Աւստրիա-Հունգարիա կը բաղկանայ երեք առանձին երկիրներէ. 1. Աւստրիոյ Կայսրութիւն, 2. Հունգարիոյ Թագաւորութիւն, 3. Հերսէֆ-Պոսնա։ Այս երեքն ալ կը կառավարուին միեւնոյն թագաւոր-կայսրէն։ Աւստրիոյ մայրաքաղաքն է Վիեննա՝ Դանուբի եզերքն որ Եւրոպայի գեղեցիկ քաղաքներէն մէկն է։*

Հունգարիոյ մայրաքաղաքն է Պուտա-Բեշդ՝ Դանուբի եզերքը։ Պուտա ու Բեշդ իրարու կը միանան հիանալի կամուրջով մը։

Միւս գլխաւոր քաղաքներն են. Բրահա՝ ճարտարարուեստ քաղաք ու Պոհեմիոյ հին մայրաքաղաքը. ունի ապակեղէնի գործարաններ։ — Դրեզդէն՝ Ադրիականի եզերքը նշանաւոր նաւահանգիստ։ — Պրիւն՝ բրդեղէնի ճարտարարուեստ։ — Լեմպերկ՝ առեւտրական ու ճարտարարուեստ կեդրոն. հոս Հայեր կան։ — Թրագովիա՝ առեւտրական կեդրոն։ — Սեռայեւոյ՝ Հերսէֆ-Պոսնայի գլխաւոր քաղաքը։

ՏՆՏԵՍԱՒԱՆ ՎԻՃԱԿ. — *Հունգարիոյ դաշտագետինը հարուստ է ցորենով ու վարգագետիններով ուր կը բուծանեն բազմաթիւ ձիեր։ Կայսրութեան լեռնային մասերը կը պարունակեն հանքածուխի ու երկաթի հանքեր։*

Ճարտարարուեստն որուն գլխաւոր կեդրոններն են Վիեննա, Պոհեմիա, Մորաւիա, Սղրիա՝ նուազ կարեւոր է քան հողագործութիւնը։

Աւստրիա-Հունգարիա նշանաւոր է անասուով, արմտիքով, գինիով, ճակնդեղով, ծխախոտով, վուչով, կանեփով ու կանճրակով։

ԲՆԱԿՉՈՒԹԻՒՆ. — *Աւստրիոյ-Հունգարիոյ բնակիչներուն թիւն է 50 միլիոն։ Ազգաբնակչութիւնը չատ այլազան է։ Սղաւները կը բնակին Կալիցիա, Իռուսաթիա, Տալմացիա ու Պոսնա, Գերմանները՝ արեւմտեան մասին մէջ, Իտալացիները՝ հարաւային կողմը, Ռումանները՝ հարաւային արեւելեան կողմը, Ֆիննեան ցեղէ Մադառները՝ կեդրոնական մասը։ Կան նաեւ Հրեաներ ու Հայեր։ Բնակիչներուն $^4/_5$ը Հռոմէական են։*

Աւստրիոյ կայսրութիւնն ու Հունգարիոյ թագաւորութիւնն ունին ուրոյն կառավարութիւն։

ՌՈՒՍԻԱ

ԲՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — *Ընդարձակաժաւալ կայսրութիւն մըն է Ռուսիա որ կը տարածուի Եւրոպայի գրեթէ կէս մասին և հիւսիսային Ասիոյ ու կեդրոնական Ասիոյ մէջ։*

Եւրոպական Ռուսաստանն ընդարձակ դաշտագետին մըն է։ Հիւսիսային կողմը ծածկուած է սառնապատ ճախճախուտով որ Դուինտրա կը կոչ-

ուի։ Աւոր հարաւակողմը՝ Պոթնեան ծոցէն մինչև Ուրալ լեռները կան անհուն անտառներ։ Մոսկուայէն սկսեալ՝ Գերմանիոյ ու Աւստրիոյ, Սեւ ծովու և Տան գետին միջև կը տարածուի զարմանալի բարեբերութեամբ մշակուած երկրագործական մը։ Իսկ հարաւային արեւելեան կողմն ալ գրաւած են տափաստանները=ստէպներն ուր կ'արածին բազմաթիւ հօտեր։

Գլխաւոր գետերն են Բեչորա, Տուինա, Նեւա, Տուևա, Նիեմեն, Վիսդուլա, Տնիեստր, Տնիեպեր, Տոն, Ուռալ, Վոլկա։ Ամէնէն մեծ լիճերն են Լադոգա ու Օնեգա։

ՔԱՂԱՔՆԵՐ. — *Եւրոպական Ռուսիոյ մայրաքաղաքն է Ս. Բեդերսպուրկ՝ Նեւայի գետաբերանը, վաճառաշահ մեծ նաւահանգիստ՝ որ կը բանը, վաճառաշահ մեծ նաւահանգիստ՝ որ կը պաշտպանուի Գրոնշդաս պետրոսական նաւահանգիստով։*

Մոսկուա՝ Ռուսիոյ երբեմնի մայրաքաղաքը. սուր Քրեմլին կոչուած պալատին մէջ թագ կը

ՌՈՒՍ ԲՈՐ

դնեն Զարերը։ — Վարշաւիա՝ Լեհաստանի հին մայրաքաղաքը հարուստ երկրի մէջ։ — Ռիվա՝



ՄՈՍԿՈՒԱՅԻ ՔՐԵՄԼԻՆ ՊԱԼԱՏԸ

Պալթիկի եզերքը նաւահանգիստ։ — Օտեսա՝ Սեւ ծովու եզերքը վաճառաշահ նաւահանգիստ։ — Նիժնի-Նովկորոտ՝ Վոլկայի եզերքը, նշանաւոր իր ամենավաճառով որ տեղի կ'ունենայ տարին անգամ մը. հոս կը վաճառուին արեւելեան ապ-

բանքները: — Մարդով առևտրական ու ճարտարարուեստ կեդրոն: — Քիեվ, Լոմ, Գազան, Սարադով, Բիշնեւ, Վիլնա:



ՆԻԺՆԻ ՆՈՎԿՈՐՈՏ ՈՒ ՎՈԼԿԱ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿ. — *Անտառուտ երկիրներու մէջ յառաջ կուգան գարի, վարսակ, հաճար, վուշ, կանեփ: Մշակուած երկրամասին մէջ՝ ցորեն ու ճակնդեղ: Հարաւային Ռուսաստան նշանաւոր է անասնաբուծութեամբ:*

Ռուսիա ունի հանքային մեծ հարստութիւն— քարիւղ, հանքածուխ, երկաթ, պղինձ, ոսկի ու լոռակի: Իր ճարտարարուեստը հետզհետէ կը զարգանայ, մանաւանդ կեդրոնական երկրին մէջ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Զուիցերիա կը բաղկանայ... — ... բարձր լեռնադաշտ մըն է եւ... — Զուիցերիա աշխարհի... — Զուիցերիոյ լիճերն են... — Քաղաքներն են... — Դաշնակցութեան կեդրոնն է... — Բնակիչները կը բաղկանան... — Կրօնքով են... — Գերմանիա կը հակի... — Հիւսիսային արեւմուտքէն կը հոսին... — Հարաւային արեւելքէն... — Գերմանիա դրացրապէս կը ներկայացնէ. . — Վերին Գերմանիա կը բաղկանայ... տէրութիւններէ. — Գլխաւորներն են... — Գլխաւոր քաղաքներն են... — Նաւահանգիստներն են... — Ճարտարարուեստ քաղաքներն են... — Գերմանիոյ քաղաքներն են... — Պերլին մայրաքաղաք է... — Միւնխէն... — Շոռւդկարդ... — Գարլսրուհէ... — Գերմանիա Անգլիային ետք... — Ռուսային արտադրութիւններն են... — ... Ծաղկած է. — ... երրորդ կարգը կը գտնուի... — Բնակչութիւնը... եւ... ցեղէ. — կրօնքով... — Աւստրիա-Հունգարիա կը գտնուի... — Կը բաղկանայ... — Կը կառավարուին... — Հունգարիոյ դաշտագետինը կը գտնուի ... — Կալիցիոյ լեռնադաշտը... — Պոհեմիոյ լեռնադաշտը... — Դանուբի միջին ընթացքը... — Վերինը... — Ստորինը... — Դանուբի գետակիցներն են... — ... ուղղող միւս գետերն են... — Աւստրիոյ-Հունգարիոյ քաղաքներն են... — Աւստրիոյ մայրաքաղաքն է... — Հունգարիոյ... — Նաւահանգիստն է... — Հունգարիոյ դաշտագետինը հարուստ է ... — Լեռնային մասերը... — Ճարտարարուեստի կեդրոններ են... — Աւստրիա-Հունգարիա նշանաւոր է... — Բնակչութիւնը... — Սլաւները կը բնակին... — Իտալացիները... — Ռումանները...—Մաճառները... —կան նաեւ... — Հռոմէական են... — ... ունին ուրոյն կառավարութիւն. — Ռուսիա կը տարածուի... — ... ընդարձակ դաշտագետին մըն է. — Դունտրա կը կոչուի... — Անտառները կը գտնուին... — Մշակուած երկրամասը... — Տափաստանները... — Գլխաւոր գետերն են... — Մեծ լիճերն են... — Քաղաքներն են... — Մայրաքաղաքն է... — Նաւահանգիստներն են... — Ճարտարարուեստ քաղաքներն են... — Գերմանիոյ քաղաքներն են... — Պերլին մայրաքաղաք է... — Միւնխէն... — Շոռւդկարդ... — Գարլսրուհէ... — Գերմանիա Անգլիային ետք... — Ռուսային արտադրութիւններն են... — ... Ծաղկած է. — ... երրորդ կարգը կը գտնուի... — Բնակչութիւնը... եւ... ցեղէ. — կրօնքով... — Աւստրիա-Հունգարիա կը գտնուի... — Կը բաղկանայ... — Կը կառավարուին... — Հունգարիոյ դաշտագետինը կը գտնուի ... — Կալիցիոյ լեռնադաշտը... — Պոհեմիոյ լեռնադաշտը... — Դանուբի միջին ընթացքը... — Վերինը... — Ստորինը... — Դանուբի գետակիցներն են... — ... ուղղող միւս գետերն են... — Աւստրիոյ-Հունգարիոյ քաղաքներն են... — Աւստրիոյ մայրաքաղաքն է... — Հունգարիոյ... — Նաւահանգիստն է... — Հունգարիոյ դաշտագետինը հարուստ է ... — Լեռնային մասերը... — Ճարտարարուեստի կեդրոններ են... — Աւստրիա-Հունգարիա նշանաւոր է... — Բնակչութիւնը... — Սլաւները կը բնակին... — Իտալացիները... — Ռումանները...—Մաճառները... —կան նաեւ... — Հռոմէական են... — ... ունին ուրոյն կառավարութիւն. — Ռուսիա կը տարածուի... — ... ընդարձակ դաշտագետին մըն է. — Դունտրա կը կոչուի... — Անտառները կը գտնուին... — Մշակուած երկրամասը... — Տափաստանները... — Գլխաւոր գետերն են... — Մեծ լիճերն են... — Քաղաքներն են... — Մայրաքաղաքն է... — Նաւահանգիստներն են... — Ճարտարարուեստ քաղաքներն են... — Գերմանիոյ քաղաքներն են... — Պերլին մայրաքաղաք է... — Միւնխէն... — Շոռւդկարդ... — Գարլսրուհէ... — Գերմանիա Անգլիային ետք... — Ռուսային արտադրութիւններն են... — ... Ծաղկած է. — ... երրորդ կարգը կը գտնուի... — Բնակչութիւնը... եւ... ցեղէ. — կրօնքով... — Աւստրիա-Հունգարիա կը գտնուի... — Կը բաղկանայ... — Կը կառավարուին... — Հունգարիոյ դաշտագետինը կը գտնուի ... — Կալիցիոյ լեռնադաշտը... — Պոհեմիոյ լեռնադաշտը... — Դանուբի միջին ընթացքը... — Վերինը... — Ստորինը... — Դանուբի գետակիցներն են... — ... ուղղող միւս գետերն են... — Աւստրիոյ-Հունգարիոյ քաղաքներն են... —

ՊԱԼԳԱՆԵԱՆ ՅԱՄԱՌԱԿՂԶԻ

Պալգանեան ցամաքակղզին կը պարունակէ Եւրոպական Թուրքիային գառ՝ Ռումանիա, Սերվիա, Գարաւտաղ, Յունաստան ու Պուլկարիա:

ՌՈՒՄԱՆԻԱ. — Թագաւորութիւն. 6 *միլիոն* 500,000 *Յունադաւանի ու Լատին ցեղէ բնակիչով:*

Բարեբեր դաշտագետինով հողագործական երկիր մըն է: Ասիկայ Աւստրիոյ-Հունգարիոյ ու Ռուսիոյ դաշտագետինին մասը կը կազմէ: Մայրաքաղաքն է Պուխրէշ: — Կալաց ու Պրայլա՝ Դանուբի եզերքը նաւահանգիստ, ունին ցորենի առեւտուր: — Եաչ՝ առեւտրական կեդրոն: — Ճուրճեւոյ՝ Պուքրէշի նաւահանգիստը: — Փլոեշտի, Ֆոշան ու Ռոման:

ՍԵՐՎԻԱ. — Թագաւորութիւն. *Լեռնադաշտ մըն է Եւրոպական Թուրքիոյ ու Աւստրիոյ-Հունգարիոյ միջեւ: Մայրաքաղաքն է Պելկրատ՝ Դանուբի եզերքը: — Գրադուեւաց ու Նիշ:*

ԳԱՐԱՏԱՂ. — Իշխանապետութիւն. *Լեռնային փոքր ու աղքատ երկիր մըն է: Մայրաքաղաքն է Չեթինեւ աւանը: — Անդիւարի ու Տուլչինոյ:*

ՅՈՒՆԱՍՏԱՆ. — Թագաւորութիւն. *Կը գրաւէ Պալգանեան ցամաքակղզւոյն հարաւային մասը, Յոնիական կղզիները, Եւբեա կղզին ու կիկլոպեան արքիպելագոսը: Հողը լեռնոտ է. կը մշակուին որթատունկ ու ձիթենի: Մայրաքաղաքն է*

ԱԹԷՆՔ

Աթէնք, նշանաւոր քաղաք հին աշխարհի: Աթէնքի նաւահանգիստն է Պիրէոն=Բիրէ: — Կորնթոս՝ նշանաւոր է չամիչը: — Բադրաս՝ նաւահանգիստ: — Լարիսա ու Դրինապա: — Հերմոպոլիս՝ Շերա կղզւոյն մէջ:

ՊՈՒԼԿԱՐԻԱ. — Թագաւորութիւն. *Կը պարունակէ Աբեւելեան Բումելի ու Պուլկարիա:*

1. Աբեւելեան Բումելի

ԲՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — *Երկիրը լեռնային (Պալգան, Տոպոր ու Սրտանձա լեռները) է եւ կը ծրջուի Մերիձէն ու ասոր գետակիցներէն:*

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — *Աբեւելեան Բումելի բարեբեր ու մշակուած երկիր է. կ'արտադրէ ցորեն, գարի, լոլօտ, ծխախոտ, բամբակ, բուրդ, որիզ, արջառ ու ոչխար: Բրդեղէն գործուածքներն ու վարդի իւղը նշանաւոր են:*

ՆԱԻԱՀԱՆԳԻՍՏ. — *Պուրկազ՝ Սեւ ծովու եզերքը, արմտիքի առեւտուր ունի:*

ՆԵՐՅԱՄԱՌԱՅԻՆ ՔԱՂԱՔՆԵՐ. — *Փիլիպե=Ֆիլիպպուպոլիս(*), Մերիձի եզերքը, կ'արտադրէ բրդեղէն, մետաքսեղէն ու բամբակեղէն: — Խզիլիճէ=Սիվլինոյ կ'արտադրէ գինի, սաւելղէն: — Թարար-Բազարճըգ՝ վաճառաշահ կեդրոն. չրջակայքները կան ջերմուկներ: — Գրզանլըգ՝ վարդի իւղ: — Էսկի-Զաղրա կ'արտադրէ կաշի. ունի անասնի ջերմուկներ:*

2. Պուլկարիա

ԲՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — *Երկրին հարաւային կողմը կը բարձրանան Պալգան լեռները, իսկ հիւսիսային մասը դաշտագետին է եւ կը ծրջուի Դանուբէն եւ ասոր գետակիցներէն:*

Պուլկարիոյ մէջ ձմեռը չատ ցուրտ կ'ըլլայ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — *Երկիրը մշակուած է, ունի պարարտ արօտատեղիներ, ուր կ'արածին ոչխարներու հօտեր: Կ'արտադրէ արմտիք, ծխախոտ, խոզակ, բամբակ, վուշ, եւն: Մեղրաբուծութիւնը ծաղկած է:*

ՆԱԻԱՀԱՆԳԻՍՏ. — *Վառնա՝ Սեւ ծովու եզերքը, վաճառաշահ կեդրոն բրգի ու արմտիքի:*

ԴԱՆՈՒԲԻ ԵԶԵՐԲՔ. — *Ռուսճուգ, Վիտին, Նիկոպոլիս, Սիլիստրէ ու Սիսթովա:*

ՆԵՐՅԱՄԱՌԱՅԻՆ ՔԱՂԱՔՆԵՐ. — *Սոֆիա՝ մայրաքաղաք, առեւտրական ու ձեռարուեստական կեդրոն: — Դրնովա՝ ունի բրդեղէն: — Շումլա=Շումլու՝ ունի մետաքսեղէն ու բրդեղէն:*

(*) ԾԱՆՕԹ. — *Աբեւելեան Բումելիի ու Պուլկարիոյ քաղաքները տես Բազմական Եւրոպական Թուրքիա աշխարհացոյցը:*

ԻՏԱԼԻԱ

ԲՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — *Իտալական թաղակղզին ու Միջերկրականի երկու մեծ կղզիները՝ Սարտենիա ու Սիկիլիա կը կազմեն Իտալական թագաւորութիւնը։*

Իտալիոյ հիւսիսային կողմը կը բարձրանայ Ալպեանիէ ու ցամաքակղզւոյն մէջ՝ Ապենինեանիէ։ Վեսուվ ու Ետնա բորբոքած հրաբուխներ են։

ՎԵՍՈՒՎԻ ԲՈՐԲՈՔՈՒՄԸ

Գետերն են Բոյ, Ատիճէ և Տիբերիս։ Բոլոր գետակիցներն են Թեսեին ու Ադդա։

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐ. — *Իտալիոյ մայրաքաղաքն է Հռոմ, որ նաև Պապին ալ աթոռն է։ Հռոմ ունի հոյակապ յիշատակարաններ՝ Հռոմէական Կոլոսէում, Պանթէոն, Սուրբ Պետրոսի ու Վատիկան պալատները, Սուրբ Պօղոսի եկեղեցին։*

Ս. ՊԵՏՐՈՍ ՈՒ ՎԱՏԻԿԱՆ

Թէնէդ և կամ Վեսուվ լերան ստորոտը, հիանալի ծոցի մը խորը, մեծ նաւահանգիստ։ — Ֆիորենցա՝ նշանաւոր իր հարուստ թանգարաններով ու ճարտարարուեստով։ — Վենետիկ՝ ճարտարարուեստ քաղաք, չինուած բազմաթիւ կղզեակներու վրայ։ Հայերն հոս ունին Վենետկոյ Մխիթարեանց նշանաւոր վանքը։ — Լիվոռնոյ՝ նաւահանգիստ։ — Ճենովա՝ ճարտարարուեստ ու նաւահանգիստ։ — Պոլոնիա՝ ճարտարարուեստ կեդրոն։



ՀՌՈՄԻ ԴԱՇՏԱԳԵՏԻՆ

Ցամաքակղզւոյն հիւսիսային կողմը Բոյի մեծ դաշտագետնին երկրագոյն ցորենաշատ բարերը երկիրներէն մէկն է։ Իտալիոյ հասոյթի մեծ մասը բերքերն են։ Գրականութիւնն ու արուեստները շատ մեծ նշանակութիւն ունին։ Մեծ քանակութեամբ կ'արտադրէ նաև գինի, որիզ, բանակ, եգիպտացորեն ու ձէթ։ Առևտրաշրջանառութիւնն ու ձկնորսութիւնն ալ հասոյթի աղբիւրներ են։ Ճարտարարուեստը հետզհետէ կը ծաղկի։

Ֆրանսայի գետերն են Հռոն, Մոզել, Մեօզ, Էզոյ, Սեն, Լուար, Կարոն։

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐ. — *Ֆրանսայի մայրաքաղաքն է Բարիզ՝ Սէն գետին եզերքը, եւրոպայի ամէնէն աւելի ծաղկած քաղաքը։ Նշանաւոր է իր կեդրոն գիտութեան, արուեստներու և ուսման։ — Լիոն՝ Ռոն գետին եզերքը, մեծ բերդաքաղաք։ — Մարսիլիա՝ Միջերկրականի եզերքը մեծ նաւահանգիստ։ — Լիլ՝ ճարտարարուեստ քաղաք ձերմակեղէնի ու լրզեղէնի։ — Պորտոյ՝ Կարոն գետին բերանը, հանրաւաճառ է գինեգործութեամբ։ — Լը Հաւր՝ Մանչի ծովուն եզերքը, Բարիզի նաւահանգիստը։ — Ս. Էթիէն՝ ճարտարարուեստի ու հանքածուխի կեդրոն։ — Տուլոն՝ զինուորական նաւահանգիստ։ — Տուլուզ՝ ճարտարարուեստ քաղաք։ — Լիոն՝ Ռոն գետին եզերքը, մեծ*

ՖՐԱՆՍԱ

ԲՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — *Ֆրանսական Հանրապետութիւնը կը գտնուի Պելճիքայի, Գերմանիոյ, Ալպեանց լեռներու, Միջերկրականի, Պիւրենեան լեռներու, Ատլանտեան ովկիանոսի ու Մանչի ծովուն միջև։ Միջերկրականի մէջ ունի Գորսիգա կղզին։*

Ֆրանսա Ատլանտեանի ու Միջերկրականի միջև շատ կարեւոր դիրք մը գրաւած է։

Հիւսիսային ու արեւմտեան Ֆրանսա կը բաղկանայ խորատարած գաշտագետիններէ. արեւելքէն Ալպեան կողմը կը բարձրանան Վոժ, Ժուրա ու Մոնեան կողմը կը բարձրանան Պիրենեան։ Գրականութիւնն ու արուեստները լեռնագաշտ մըն է։



ԲԱՐԻԶ



ՊՐԵՍՊ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — *Ֆրանսայի*

ԱՅԳԵԿՈՒԹ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ

հարաւային մասին մէջ ծաղկած են շերամարու-



ՇԱՓԱՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ (ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՖՐԱՆՍԱ)

ծութիւնն ու գինեգործութիւնը, միւս մասերուն



ԳՐԷՈԶՈՑ

մէջ՝ մեխենական ճարտարարուեստը: Ամէն կողմ ծաղկած են հողագործարիւնն ու անասնարուծու-

թիւնը: Ֆրանսա նշանաւոր է իր ճեռագործներով, արդուզարդի առարկաներով, մետաքսեղէններով, բամբակեղէններով ու բրդեղէն գործուածքներով: Անգլիայէն ետք ամէնէն ընդարձակ գաղթականութիւն ունի:

ԻԹԵՐԱԿԱՆ ՅԱՄԱՔԱԿՂԶԻ



ԲՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — *Իթերական ցամաքակղզին կը բաժնուի երկու թագաւորութեան. Սպանիա ու Բորդուկալ: Յամաքակղզւոյն գլխաւոր լեռնագագաթներն են Պիւրենեան, Գանդարեան, Սիերա Մորենա ու Նեւատա: Կեդրոնական հատուածները կազմուած է Գաստիլիոյ լեռնագագաթէն, հարաւային կողմը կը տարածուի Անտարսիոյ գաշտագետինը: Գետերն են Տուրոյ, Դակոյ, Կուատիանա, Կուատալքիւիր, Եպրոյ: Պալեարեան կղզիները կը պատկանին Սպանիոյ:*

Սպանիա բարձր լեռնագագաթներով երկիր մըն է՝ քիչ մշակուած ու յետնեալ: Բոլոր հովիտները շատ բարեբեր են, մանաւանդ Կուատալքիւիրի գաշտը: Կ'արտադրէ գինի, նարինջ, չաքարեղէգ, բրինձ, ցորեն, գարի, եգիպտացորեն, արմաւ-

ենի, ձիթենի, բամբակ, ծխախոտ, կարմիր ներկ, ծիրան, դեղձ, խնձոր, տանձ, կեռաս, ընկոյզ, նուռ, ձիթապտուղ, ելակ, սալոր, թուզ, ձմերուկ, սեխ, վարսակ: կը պարունակէ հանքածուխ, երկաթ ու պղինձ որ քիչ չահագործուած են:

ՍՊԱՆԻԱ. — *Սպանիոյ մայրաքաղաքն է Մատրիս՝ ցամաքակղզւոյն կեդրոնը: — Պարչելոնա՝ ճարտարարուեստ քաղաք ու նշանաւոր նաւահանգիստ Միջերկրականի եզերքը: — Վալենսիա՝*



ՄԱՏՐԻՏԻ ՄԷՋ ՀՐԱՊԱՐԱԿ

Նաւահանգիստ: — Մալակա՝ նշանաւոր իր գինիով: — Սեւիլա՝ Սպանիոյ ամէնէն գեղեցիկ քաղաքը: — Գաստիլա=Մասիտ՝ նաւահանգիստ:



ՍԵՒԻԼԱՅԻ ՄԷՋ ՅԱՄԱՐՏԻ ԿՐԿԷՍ

Սպանիա ունի 19 միլիոն բնակիչ: Հռոմէական ու Լատին ցեղէ:

ԲՈՐԴՈՒԿԱԼ. — *Իթերական ցամաքակղզւոյն արեւմտեան կողմը կը գտնուի Բորդուկալի թագաւորութիւնը:*

Մայրաքաղաքն է Լիզպոնա՝ Դակոյի գետաբերանը, հիանալի գիրքով մեծ նաւահանգիստ:— Բորդոյ՝ նշանաւոր նաւահանգիստ. անուանի է գինին: — Գոյիմպրա՝ առեւտրական քաղաք: — Պրականցա՝ հայրենիք տիրող գերդաստանին:

Բորդուվալ ունի 5 միլիոն 500,000 բնակիչ, Հռոմէական ու Լատին ցեղէ: Բորդուվալցիք հռոմագործ ու անասնաբոյծ են: Երկիրը Սպանիայէն աւելի ծաղկած է: Ափրիկէի մէջ ունի ստացուածքներ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Պալգանեան ցամաքակղզին կը պարունակէ... — Ռումանիա... դաշտագետին մըն է եւ կը կազմէ... — Մայրաքաղաքն է... — Քաղաքներն են... — Նաւահանգիստներն են... — Սերվիա... եւ կը գտնուի .. — Մայրաքաղաքն է... — Քաղաքներն են. . — Գարատաղ... — Մայրաքաղաքն է... — Քաղաքներն են... — Ցունաստանի թագաւորութիւնը կը գրաւէ... — Բերբերն են... — Մայրաքաղաքն է ... — Քաղաքներն են... — Պուլկարիոյ թագաւորութիւնը կը պարունակէ... եւ կը տարածուի... — Աւեւելեան Ռումելիի լեռներն են... — Կը թրջուի... — Կ'արտադրէ... — Քաղաքներն են... — Նաւահանգիստ է... — Պուլկարիոյ հարաւային կողմը կը բարձրանայ... — Կը թրջուի... — Կ'արտադրէ... — Պուլկարիոյ մայրաքաղաքն է... — Քաղաքներն են... — Նաւահանգիստներն են... — Իտալական թագաւորութիւնը կը բաղկանայ... — Ալպեանք կը գտնուին .., — Ապենինեանք... — Գետերն են... — Հրաբուղխներն են... — Իտալիոյ մայրաքաղաքն է... — Քաղաքներն են... — Նաւահանգիստներն են.. — Ճարտարարուեստ քաղաքներն են... — Բոլի մեծ դաշտագետինը... — Շերամարուծութիւնն Իտալիոյ... — Միւս արտադրութիւններն են... — ... հետզհետէ կը ծաղկի. — Ֆրանսա կը գտնուի... — Գետերն են... — Լեռներն են... — Մայրաքաղաքն է... Քաղաքներն են... Նաւահանգիստներն են...— Ճարտարարուեստ կեդրոններն են... — Հարաւային մասին մէջ ծաղկած են .. — Հողագործութիւնը... — Մեքենական ճարտարարուեստը... — Ֆրանսա նշանաւոր է իր... — Անգլիայէն ետք...— Իբերական ցամաքակղզին կը բաժնուի ... — Լեռնագագաթներն են... — Լեռնաղաշտերն են... — Դաշտագետինն է... — Գետերն են... — Սպանիա... երկիր մըն է. — Բարեբեր են... — Կ'արտադրէ... — Սպանիոյ մայրաքաղաքն է... — Քաղաքներն են... — Նաւահանգիստներն են... — Բնակիչներն են... եւ... ցեղէ. — Կրօնքով... — Բորդուկալի թագաւորութիւնը կը գտնուի... — Մայրաքաղաքն է. . — Քաղաքներն են... — Բորդուվալցիք... ցեղէ... — Կրօնքով... — Ծաղկած են... — Բորդուկալ Սպանիայէն աւելի... — Ափրիկէի մէջ ունի... ստացուածքները:

ՎԵՐԱՏԵՍՈՒԹԵԱՆ ԽՏԱՑԵԱԼ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Եւրոպա ո՞ր կիսագնդին եւ ո՞ր գօտւոյն մէջ կը գտնուի: Եւրոպայի ո՞ր կողմերէն կ'անցնի Հիւսիսային Բեւեռային շրջանակը: Եւրոպա Ասիայէն քանի՞ անգամ փոքր է: Ասիկայէ՞ն, Ափրիկէէ՞ն, Որո՞նք են Եւրոպայի գաշտերը, լեռ-

նադաշտերը, լեռները։ Գետերու ուազանին գծին հետեւելով՝ ըսէք թէ որո՞ք են Հարաւային արեւելեան զառիթափի ու Հիւսիսային արեւմտեան զառիթափին գետերը։ Եւրոպա ա՞ր ծովերով շրջապատուած է։ Արեւելեան կողմին ա՞ր ցամաքը կայ։ Եւրոպա Ափրիկէէն ինչպէս բաժնուած է։ Ըսէ՛ք Աալանտեանէն կազմուած ծովերն ու ծոցերը։ Այս ովկիանոսին մէջ ա՞ր կղզիները կան։ Նկարագրեցէք Միջերկրականէն ու անկէ ձեւացած ծովերը, ծոցերը, նեղուցները ու կղզիները։ Ո՞րն է Եւրոպայի ամէնէն հիւսիսային ծայրը։ Ո՞ր աստիճանին վրայ է Հարաւային ծայրն ա՞ր գլուխը կայ և ա՞ր աստիճանին տակը։ Արեւելեան կողմին ինչ կայ ու երկայնութեան ա՞ր աստիճանին վրայ։ Արեւմտեան ծայրն և ա՞ր աստիճանին տակ։ Եւրոպայի ցամաքակղզիներն ինչ գիրք գրաւած են։ Որո՞նք են Ականտինաւիդ, Իբերական, Իտալական ու Պալգանեան ցամաքակղզւոյն լեռները։ Ո՞րն է Եւրոպայի կեդրոնական Հատատեատը։ Ալպեանց Հարաւային արեւմտեան կողմին ա՞ր լեռնագոտին կ'երկարի։ Հարաւային արեւե՞լք։ Հարաւ՞ը։ Արեւե՞լքը։ Ալպեանց բարձր գագաթն ո՞րն է։ Քանի՞ մեդր է։ Կովկասինը քանի՞ մեդր։ Ո՞ր լեռնագաշտերը կը թնդած են Ալպեանց։ Պիւրենեա՞նց։ Պալգանի՞ն։ Որո՞նք են Եւրոպայի մեծ գետերը։

Եւրոպայի հիւսիսային կողմին ա՞ր ովկիանոսը կայ։ Հարաւային կողմերն ա՞ր ծովերը կան։ Եւրոպայի արեւմտեան կողմին ա՞ր մեծ ծոցը կայ։ Միջերկրականի մէջ ա՞ր թերակղզիները կ'երկարին։ Ո՞ր մեծ ցամաքակղզին կայ Ասլանտեանի ու Միջերկրականի միջև։ Եւրոպայի մէջ ամէնէն մեծ երկիրն ա՞րն է։ Ամէնէն փո՞քրը։ Ո՞ր նեղուցը կայ Սեւ ծովուն և Մարմարայի միջև։ Ազբիպեղագո՞ս։ Սպանիոյ ու Ափրիկէի՞։ Անգլիոյ ու Ֆրանսայի՞։ Պիւրենեան ցամաքակղզւոյն հիւսիսային կողմին ա՞ր երկիրը կայ։ Իտալիոյ հիւսիսային կո՞ղմը։ Ֆրանսայի հիւսիսային կո՞ղմը։ Ո՞րն է Եւրոպայի հիւսիսային ամէնէն ծայրը։ Բորդուկալի Հարաւային արեւմտեան ծայրն ա՞ր գլուխը կայ։ Իտալիոյ մէջ ա՞ր լեռները կան։

Գծեցէք Եւրոպայի Ջրագրական աշխարհացոյցը։ Գծեցէք Եւրոպայի Լեռնագրական աշխարհացոյցը։

Հիւսիսային լայնութեան ա՞ր աստիճանին և երկայնութեան ա՞ր աստիճանին վրայ կը գտնուին և ա՞ր են սա ծովերը՝ Ադրիական, Ազովու, Ազբիպեղագոս, Իրլանտայի, Կասպից, Հիւսիսային, Մարմարա, Պալթիկ, Սեւ ու Սպիտակ։ Ծոցերը՝ Լիոնի, Ձենովայի, Պոթնական, Պոդնեան, Ֆինլանտայի։ Նեղուցները՝ Գադեկադ, Ձիպրալթար, Սկակեռաք, Տարտանել, Վոսփոր։ Կղզիները՝ Ազբիպեղագոս, Գոթսիգա, Ջելանա, Իսլանտա, Իրլանտա, Կրետէ, Դանիական, Նոր Զեմլա, Սարտենիա, Սիկիլիա, Պալէարեան։ Թերակղզիները՝ Իտալական=Ապենինեան, Իբերական, Թրիմ, Պալգանեան, Սկանտինաւեան։ Հոտանիգանները՝ Լենոսկան, Հիւսիսային, Ս. Վիչենցիա, Ֆինիսգերե։ Լեռները՝ Ալպեան, Ապենինեան, Կարպատեան, Կովկաս, Մոնտ Պլան, Ուրալ, Հեկլա, Ռոն, Սէն, Վիսգուլա, Վոլգա, Տնիեպեր, Տնիեսթեր, Տօն, Տուինա, Օսէր։ Լիճերը՝ Լատոգա, Օնեգա, Ձենեւրա։ Երկիրները՝ Աւստրիա-Հունգարիա, Բորդուկալ, Գերմանիա, Զուիցերիա, Իտալիա, Լիւքսեմպուրգ, Հոլանտա, Մեծն Բրիտանիա, Յունաստան, Նորվեկիա, Շուէտ, Պելճիգա, Պուլկարիա, Ռումանիա, Ռուսիա, Սերվիա, Սպանիա, Տանիմարքա։ Մայրաքաղաքները՝ Ամէնք, Բարիզ, Գոբենհակ, Լիզպոնա, Լոնտոն, Լիւքսեմպուրգ, Լահէյ, Հռոմ, Մատրիտ, Զեթինէ, Պելկրատ, Պեռն, Պերլին, Պուքրեշ, Պրիւսել, Սգոքհոլմ, Ս. Բեդերպուրգ, Սոֆիա, Վիեննա։

Կ. Պոլսէն Բիրէա երթալու համար ա՞ր ծովերէն, նեղուցներէն անցնելու է։ Մարսիլիա՞, Լիզպոնա՞, Լոնտո՞ն, Ս. Բեդերպո՞ւրգ։ Գոբենհա՞գ։ Ա՞յս ծովային ճամբորդութեան ատեն ա՞ր կղզիները, ծոցերը, գետերը, լեռները, հրուանդաններն ու երկիրները պիտի տեսնէք։ Բարիզէն Կ. Պոլիս երկաթուղիով ճամբորդելու համար ա՞ր քաղաքներուն ու երկիրներուն կը հանդիպիք։ Հռոմէն Վիեննա։ Ս. Բեդերպուրգէն Վիեննա։ Բա՞րիզ։ Պե՞րլին։ Լիզպոնայէն Ս. Բեդե՞րպուրգ։ Համպուրգէն Պրինզի՞պ։ Համպուրգէն Սեզո՞նիկ։ Օաեսայէն Ս. Բեդե՞րպուրգ։ Ոիկայէն Օրե՞նպուրգ։

Եւրոպայի ա՞ր երկիրներն և ա՞ր կողմերը կ'արտադրեն ցորեն, գարի, պտուղ, արմտիք, մուշտակ, անասուն, գրաստ, երկաթ, կանեփ, վուշ, վարսակ, հաճար, հանքածուխ, գինի, մեռաքս, թաւոփ, գետնախնձոր, ճակնդեղ, Հմուլ=գայլուկ։ Ա՞ոտնցմէ ձեր բնակած տեղը կը գտնուի՞ն։ Ա՞յս բերքերէն ինչե՞ր կը պատրաստուին։

Ո՞րո՞ք են Եւրոպայի ճարտարարուեստ երկիրները։ Հողագործակա՞ն։ Շերամաբուծակա՞ն։ Ո՞ր քաղաքները բամբակեղէն կ'արատածեն։ Բրդեղէ՞ն։ Երկաթեղէ՞ն։ Ասուեղէ՞ն։ Զարդեղէ՞ն։

Հետեւեալներուն մէջ որոշեցէք թէ ա՞րը ծով, երկիր, գետ, լեռ, կղզի, լեռնագոտի, ծոց, քաղաք, նեղուց, թերակղզի, լեռնագաշտ, պարանոց, հրուանդան, ջրանցք ևն. և ա՞ր կը գտնուին. Ադրիական, Ամէնք, Ամոս, Ալլանտ, Ամազերատ, Անվերսա, Ապենինեան, Ազբիպեղագոս, Բարիզ, Ս. Բեդերպուրգ, Բրակա, Գադեկադ, Գոլըրուհե, Ս. Գէորգ, Գոբենհակ, Գոբսիգա, Դակոյ, Դայմլ, Դանիա, Դանուբ, Եուդլանտ, Ելպա, Էպրոյ, Էմինգուրգ, Զելանտ, Զուիտերզէ, Թրիեսդէ, Ժուբա, Իսլանտա, Իրլանտա, Լահէյ, Լատոկա, Լենոսենա, Լիզպոնա, Լիվըրուլ, Լոնտոն, Լիւքսեմպուրգ, Խրիմ, Կարոն, Կարպադեան, Կլատկոյ, Կ. Պոլիս, Կովկաս, Կուատալքիվիր, Կուատիանա, Կրետէ, Համպուրգ, Հաւբ=Լը Հաւբ, Հեպրիտեան, Հեքլա, Հունգարիա, Հռոմ, Մադրաս, Մալակա, Մանտգը, Մանչեսդր, Մաարիա, Մարմարա, Մարսիլիա, Մելսը, Մեսինա, Մէօզ, Միլան, Մինհոյ, Միւնխէն, Մոն-Պլան, Մոսկուա, Նաբոլի, Նանդ, Նեւա, Նիեմէն, Նիժնի-Նովկորոտ, Նորվեկիա, Շեֆիլտ, Շոտլանդկարդ, Շուէտ, Ուբսալ, Ուրալ, Զեմլա, Զեթինէ, Զեռնակորա, Պալ=Պազէլ, Պալգան, Պալթիկ, Պարչելոնա, Պեյկրատ, Պեռն, Պերլին, Պիւրենեան, Պորնհոլմ, Պոանա, Պոանա-Սերայ, Պորտոյ, Պուքրեշ, Պատաւիա, Բեշդ, Պուրկալ, Պրեագ, Ռէն=Հաւենա, Ռոն, Սարակոսա, Սարտենիա, Սեզանիկ, Սէն, Սկակեռաք, Սգոքհոլմ, Սիկիլիա, Սկանտինաւիա, Սոֆիա։

Գծեցէք Եւրոպայի տերութիւնները իրենց մայրաքաղաքով։ Որո՞նք են հիւսիսային տերութիւնները, Հռոսիայինները՞ը։ Արեւմտեանները՞ը։ Կեդրոնական մասին մէ՞ջ։ Արեւելեանը՞։ Բազդատեցէք Մեծն Բրիտանիա Ֆրանսայի ու Գերմանիոյ հետ։ Որո՞նք են Անգլիոյ ճարտարարուեստ քաղաքները։ Որո՞նք են Անգլիոյ հարաւային ագլեբերները։ Որո՞նք են Անգլիոյ գաղթականութիւններն Եւրոպայի մէջ։ Ափրիկէի՞ մէջ։ Ամերիկայի՞ մէջ։ Ովկիանիոյ մէջ։ Որո՞նք են Նորվեկիոյ քաղաքները։ Որո՞նք են Շուէտի քաղաքները։ Արտադրութիւնները։ Որո՞նք են Պելճիգիոյ ճարտարարուեստ քաղաքները։ Որո՞նք են Պելճիգիոյ արտադրութիւնները։ Հոլանտայի քաղաքներն ու իրենց արտադրութիւնները։ Գծել Որո՞նք են Հոլանտական գաղթականութիւնները։ Գծել Մեծն Բրիտանիոյ, Սկանտինաւեան ցամաքակղզւոյն, Պելճիգիոյ, Հոլանտայի աշխարհացոյցը։ Որո՞նք են Ֆրանսայի ճարտարարուեստ քաղաքները։ Արտադրութիւնները։ Գաղթականութիւնները։ Գերմանիոյ մեծ արդիւնաբերութիւնները։ Որո՞նք են Գերմանիոյ մեծ արդիւնաբերութիւնները։ Ճարտարարուեստ քաղաքները։ Արտադրութիւնները։ Ձարտարարուեստ քաղաքնե՞րը։ Աւստրիա-Հունգարիոյ արդիւնաբերութիւնները։ Գաղթականութիւնները։ Գերմանական ցամաքակղզւոյն, Աւստրիոյ-Հունգարիոյ և Զուիցերիոյ աշխարհացոյցը։ Որո՞նք են Բորդուկալի քաղաքները։ Արտադրութիւնները։ Գաղթականութիւնները։ Որո՞նք են Սպանիոյ քաղաքներն ու արդիւնաբերութիւնները։ Որո՞նք են Իտալիոյ քաղաքներն ու արտադրութիւնները։ Գաղթականութիւնները։ Որո՞նք են Եւրոպայի տերութիւնները։ Ո՞ր տերութիւնները կը կազմեն Պալգանեան ցամաքակղզին։ Որո՞նք են Յունաստանի քաղաքներն ու արտադրութիւնները։ Պալկա՞ն-Ռումանիոյ։ Սե՞րվիոյ։ Որո՞նք են Եւրոպայի ամէնէն փոքր երկու երկիրները։ Գծել Պալգանեան ու Իտալական ցամաքակղզիները։ Որո՞նք են Ռուսիոյ Ճարտարարուեստ քաղաքներն ու արտադրութիւնները։ Սառցաւածքնե՞րը։

Գծել Արեւելեան Եւրոպան։ Որո՞նք են Եւրոպայի նահանգիստները Գրանչդատէն սկսեալ՝ մինչև Օաե՞սա։ Անոնցմէ որո՞ք ո՞ր ծովուն, ծոցին, գետին, նեղուցին եզերքը կը գտնուին և ա՞ր տերութեան կը պատկանին։ Ո՞ր քաղաքները գետեզերք են։ Լճի եզե՞րք։ Լեռնաստա՞ր։ Որո՞նք ծով կը տեսնեն։ Եւրոպայի ա՞ր երկիրները ծով չեն տեսներ։ Որո՞նք ծով կը տեսնեն և ա՞ր ծովերը։ Որո՞նք են մարգկային գլխաւոր ցեղերը։ Սպիտակ ցեղը քանի՞ ցեղերու բաժնուած է։ Որո՞նք են Արիական ու Սեմական։ Ո՞ր ժողովուրդները Լատինական ցեղէ են։ Գերմանականո՞ն։ Սլա՞ւ։ Քանի՞ տեսակ կրօնք կայ։ Որո՞նք են միաստուածեանները։ Բազմաստուածեանները։ Քրիստոնէութիւնը քանի՞ եկեղեցիի կը բաժնուի։ Որո՞նք Եւրոպացի Բողոքական են։ Հռոմէական։ Յունադաւանո՞ւ։ Որո՞նք Սահմանադրական են։ Ո՞ր երկու երկիրները Հանրապետական են։ Ինչ կը նշանակէ ցամաքային կլիմայ։ Ո՞ր երկիրները ցամաքային կլիմայ ունին։ Ինչ կը նշանակէ ծովային կլիմայ։ Ո՞ր երկիրները ծովային կլիմայ ունին։

Միջին

Աչխարհագրութիւն Դ. Խալիմեան

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Օսմանեան Կայսրութիւն

ՕՍՄԱՆԵԱՆ ԵՐԿԻՐՆԵՐ

ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ սահմանները կը տարածուին Եւրոպայի հարաւային արեւելեան, Ասիոյ արեւմտեան ու Ափրիկէի հիւսիսային արեւելեան մասերուն մէջ։ Աշխարհագրական կարեւոր դիրք մը կը գրաւէ Ազրիական, Միջերկրական, Սրբիպեղագոսի, Մարմարա, Սեւ ու Կարմիր ծովերուն և Պարսից ծոցին միջև։

Օսմանեան կայսրութիւնն երեք մեծ բաժանում ունի, — Եւրոպական Թուրքիա, Ասիական Թուրքիա ու Ափրիկէի երկիրները։

Ա. ԲՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

1. ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱ

1. Դիրք

ՍԱՀՄԱՆ ՈՒ ԴԻՐՔ. — Եւրոպական Թուրքիա կը գրաւէ Պալղանեան ցամաքակղզւոյն հարաւային արեւելեան ու արեւմտեան մասերը։ Սահմանները. են հիւսիսէն՝ Աւստրիա-Հունգարիա, Սերվիա ու Պուլկարիա, արեւելքէն՝ Սեւ ծով ու Վոսփորի նեղուց, հարաւէն՝ Մարմարա, Զանագ-Գալէի նեղուց, Սրբիպեղագոս ու Յունաստան և արեւմուտքէն՝ Յոնիական ծով, Ազրիական ծով, Ջեւնակոբա=Գարատաղ ու Աւստրիա-Հունգարիա։

Եւրոպական Թուրքիա իր չուրջը ցրուած ծովերուն պատճառաւ հաղորդակցութեան կարեւոր ճամբայ մըն է Ասիոյ ու Եւրոպայի միջև։

2. Ծովափունք

ԾՈՎԱՓՈՒՆՔ. — Եւրոպական Թուրքիա կը տեսնէ Սեւ, Մարմարա, Արխիպեղագոսի, Յոնիական ու Ազրիական ծովերը։

Եւրոպական Թուրքիոյ երկու կարեւոր մասերը կը կազմեն Զանագ-Գալէի ու Վոսփորի նեղուցները՝ իրարու կապուած Մարմարա ծովով։

Եւրոպական Թուրքիոյ ծովերը ձեւացած են ծոցեր ու թերակղզիներ, մանաւանդ Արքիպեղագոսի ափերը, ինչպէս՝ Սարոսի խորշը, Ակրոսի ծոցն ու Սելանիկի=Թեսաղոնիկեի ծոցն որուն արեւելեան կողմը կ'երկնայ Քաղկիսեան թերակղզին։ Այս թերակղզւոյն երեք ճիւղերուն մէջ նշանաւորն է Ակրոս=Այնորոզ թերակղզին։ Սարոսի խորշին հարաւային արեւելեան կողմը կը գտնուի Կեհիպոլուի նեղ թերակղզին։

Եւրոպական Թուրքիոյ ծովեզերքին մօտ ցրուած են կղզիներ. ասոնց չատերը ցամաքի լեռնաբուն դէպ ի ծով չարունակութիւնն են։ Արքիպեղագոսի մէջ կան Թասոս, Սամոթրակէ, Իմպրոս ու Լիմնոս, Միջերկրականի մէջ ալ՝ Կրետէ կղզին։

3. Հողագրութիւն

ԼԵՌՆԵՐ. — Եւրոպական Թուրքիա ընդհանրապէս լեռնային երկիր մըն է և կը պարունակէ բազմաթիւ լեռնաշաւտներ, հատատներ ու անտառախիտ լեռնագօտիներ՝ մերթ անանցանելի ու խոր կիրճերով և մերթ գեղաժիժաղ հովիտներով։

Եւրոպական Թուրքիոյ լեռները կը բաժնուին չորս ճիւղի. 1. Արեւմտեան լեռնագօտիներ, 2. Պալկանեան լեռնագօտի, 3. Հարաւային հատատներ, 4. Կեդրոնական հատատներ։

1. *Արեւմտեան վեհապետին երկրին հիւսիսային արեւելեան կողմն է եւ ունի չատ բազմահին. ասոնց մէջ նշանաւորներն են Շգոտրայի ու Եանինայի լճերը:*

2. *Հարաւային Արեւելեան Պալգան. ասոր գլխաւոր լճերն են Սբրանձա որ մինչեւ կ. Պոլիս բազմահիներ կ'արձակէ:*

3. *Հարաւային հասատաեսի երեք ճիւղերուն մէջ նշանաւոր են Ռոտոպի=Տեսբոդ սար, Նեւրեչխա Բլանիցա, Կրաւոս ու Աբոս:*

4. *Կեդրոնական հասատաեսին մէջ նշանաւոր է Զար տաղ որ Եւրոպական Թուրքիոյ ամէնէն բարձր լեռն է եւ կը համարուի Պալգանեան ցամաքակզզոյն լեռներուն կեդրոնը:*

ԴԱՇՏԱԳԵՏԻՆ. — *Եւրոպական Թուրքիոյ մէջ Շգոտրայի ու Եանինայի լճերուն կողերուն վրայի հովիտները նեղ ու բարեբեր են: Նշանաւոր են Գոտոմայի գաշտը՝ Զարտազի լեռներուն մէջ, Մարիձայի գաշտը՝ Պալգանի, Տեսբոդի ու Սթրանճայի մէջ:*

4. Չրագրութիւն

ԳԵՏԵՐ. — *Եւրոպական Թուրքիա իր լեռնագրական պէսպիսութեանց պատճառաւ երկու մեծ գետաթափի կը բաժնուի. Արիպեղագոսի գաւիթափի ու Յոնիական-Ադրիականի գաւիթափ:*

1. *Արիպեղագոսի գաւիթափին մեծ գետն է Մարիձա կամ Մերիճ=Հեբրոս (490 քմ.) որ հիւսիսային արեւմտեան դէպ ի հարաւային արեւելք կը հոսի: Մերիճի հետ Էխրինէի առջև կը միանան Դոնինա ու Արտա: — Սթրումա որ կը կազմէ Թաֆիւնոս լիճը: — Վարտար Զարտազէն կը բղխի և կը թրջէ Գոտոմա ու Սէլանիկ կաւահալատիւնները:*

2. *Յոնիական-Ադրիականի գաւիթափին գետերուն մէջ նշանաւոր են Տրին, Սեւեւնի ու Գալանա: Առաջինը՝ Տրին կը բղխի Օխրիտայի լիճէն:*

ԼԻՃԵՐ. — *Եւրոպական Թուրքիա ունի չատ լիճեր. նշանաւոր են Շգոտրայի լիճը Զեռնակորայի սահմանին վրայ, Եանինայի լիճը՝ Եանինա կաւահալատիւնեան մէջ, և Օխրիտայի, Բեզպայի ու Գաստորիայի լիճերը՝ Մանատղր կաւահալատիւնեան մէջ:*

2. ԱՍԻԱԿԱՆ ԵՒ ԱՓՐԻԿԵԱՆ ԹՈՒՐՔԻԱ

1. Դիրք

Ասիական Թուրքիա կը գրաւէ Ասիոյ արեւմտեան մասն ու կը տարածուի Սեւ ծովէն, Մարմարայի, Արքիպեղագոսի, Միջերկրականի ու Պարսից ծոցին միջև:

Սահմանն է. հիւսիսէն՝ Սեւ ծով ու Անգր-Կովկասիա, արեւելքէն՝ Պարսկաստան, հարաւէն՝ Պարսից ծոց ու Արաբիա, արեւմուտքէն՝ Կարմիր ծով, Սիւէս Թերակզզին, Միջերկրական ծով, Մարմարա ու Արքիպեղագոս:

ԾՈՎԵՐ. — *Ասիական Թուրքիոյ ծովերն են Կարմիր ծով, Միջերկրական ծով, Սեւ ծով, Մարմարա ու Պարսից ծոց:*

2. Ծովափունք

Սեւ ծովու եզերքը. — *Սեւ ծովու Ասիական եզերքը չատ խորատարած է. արեւմուտքէն արեւելք կը տեսնուին Զեմիր ու Զիմի հրաւանդանները, Տրապիզոնի ծոցը, Երոս ու Քհորէ, Վոնա, Եասոն հրաւանդանները, Իւնիէի ծոցը, Զաղրը հրաւանդանը, Սամսոնի ծոցը, Սինոպի Թերակզզին ու ծոցը, Իննէ, Քեռեմբէ, Տեփէի հրաւանդանները, Էրեղլիի խորշը, Պարսա Պուռն ու Անատոլու Զեմիր հրաւանդանները: Սեւ ծովու եզերքը կան երկու անձնան կզզիներ:*

Մարմարայի եզերքը. — *Մարմարայի եզերքը չատ օձապտոյտ է. հոս նշանաւոր են Բիւրանիա Թերակզզին որ կը վերջանայ Պոզ Պուռն հրաւանդանով, Իզմիտի ծոցը, Կեմլեճիկի ծոցն ու Կիզիկոսի Թերակզզին: Մարմարայի մէջ կան Թաւշանիլի ու Մարմարա կզզիները:*

Արիպեղագոսի եզերքը. — *Արքիպեղագոսի եզերքը չատ խորատարած է. նշանաւոր են Տոյա Թերակզզին՝ Գոմ Գալէ ու Պարսա Գալէսի հրաւանդաններով, Էյրեմիտի ծոցը, Այվալըգի ծոցը, Զանտարլը ծոցը, Իզմիրի ծոցը, Կլազոմենի Թերակզզին՝ Գարա Պուռն հրաւանդանով, Սկալանովոյի=Եփեսոսի ծոցը, Մանիսալիոյ ծոցը, Քոսի ծոցը, Դորական Թերակզզին՝ Քրիոյ հրաւանդանով ու Սիմնի ծոց, Ազիրոյ գլուխ:*

Արքիպելագոսի մէջ հիւսիսէն հարաւ գրուած են Սամոթրակէ, Իմպրոս, Լիմնոս, Թենեդոս, Միտիլլի, Քիոս, Սամոս, Նիքարիա, Պատմոս, Քոս, Սիմնի, Հռոդոս, Կասոս, Կարպաթոս ու Կիպրոս կղզիները:

Միջերկրականի եզերքը. — Միջերկրականի եզերքը նուազ ծամածուռ է Արքիպելագոսի բաղդատմամբ: Միջերկրականի եզերքը կը տեսնուին Կապնիա հրուանդանը, Մարիի ծոցը, Լիւկիոյ թերակղզին՝ Անկուիսոոյ ու Քելիտոնիա հրուանդաններով, Ատալիոյ ծոցն ու Կիլիկիոյ թերակղզին Անեմուր հրուանդանով, Մերսինի ծոցը, Գատադաշ հրուանդանը, Խմեննտերունի=Հայոց ծոցը:

Հայոց ծոցէն դէպ ի հարաւ կը տեսնուին Էղ Պագիս, Իսլի-Հան հրուանդանները, Լաղամիոյ ծոցը, Տրիպոլոյ ծոցը, Էլ-Համա հրուանդանը, Պէյրութի խորշը, Ամիայի խորշը, Կարմելոս պուրը, Գաւառն հրուանդանը:

Արաբիոյ, եգիպտոսի ու Ղարպ-Դարապլուսի եզերքը. — Այս ծովեզերքը մինչև Նեղոսի Տելտան նշանաւոր բան մը չունի. Տելտային մէջ կան եղեւրներ, լիճեր ու ջրի խազեր: Ցեսոյ կը տեսնուին Տամիեդի, Ռոզեդի, Ապուքիրի խորշը, Արաբական ծոցն ու Սիտրի ծոցը:

Կարմիր ծովու եւ Պարսից ծոցի եզերքը. — Կարմիր ծովը եգիպտոսը կը բաժնէ Արաբիայէն և Միջերկրականի հետ կը հաղորդակցի Սուեզի ջրանցքով ու Օմանի ծոցին հետ Պապ-իլ-Մանտեպ նեղուցով: Թուրքիոյ Արաբական ծովեզերքը կան խարակներ ու բազմաթիւ կղզեակներ: Հոն կը տեսնուին Սուեզի, Ագարպայի ծոցերն ու Սինա թերակղզին:

3. Հողագրութիւն

Ակնարկ մը Ասիական Թուրքիոյ հողին բարերութեան վրայ. — *Ասիական Թուրքիա երկրամաս ունի — Լեռնային ու Դաշտային: Հիւսիսային, արեւմտեան ու արեւելեան կողմերը լեռնային են, իսկ հարաւակողմը դաշտային է: Հոգագրագէտը կը բաժնուի հետեւեալ երկրամասերու. 1. Հայաստան, 2. Անատոլու երկրամաս, 3. Սուրիոյ երկրամաս, 4. Հարաւային երկրամաս: Առաջին երեքը լեռնագաշտ, իսկ վերջինը դաշտագետին է:*

Ա. Հայաստան *լեռնագաշտ մըն է (1500—1800 մ.) Կուրի ու Միջագետքի միջև: Այս լեռնագաշտը կ'ընծայէ լեռնոտ դաշտագետիններ, լեռնաշղթաներ՝ իրարմէ բաժնուած բազմաթիւ հովիտներով: Հայաստանի ամէնէն բարձր լեռն է Մասիս ուրկէ կը սկսին սա՛ լեռնագօտիները.*

1. *Բիւրականեան=Պին-Կիօլ. ասոր ճիւղերն են Ազատաղ ու Տերսիմ=Միրձան որուն բարձր գագաթն է Մնձուր:*

2. *Կորդուաց լեռնաշղթան:*

Բ. Տօրոսեան լեռներ. — *Տօրոսեան լեռները կը գտնուին Միջերկրականի երկայնքին Սատալիոյ ծոցէն մինչև Հայոց ծոցն և ունին երկը լեռնագօտի:*

1. *Բուն-Տօրոսեան լեռնագօտի. ասոր գլխաւոր ճիւղերն են Պուղիար տաղ, Պագըր տաղ որուն բարձր գագաթն է 3477 մ.: Բուն Տօրոսի մէջ նշանաւոր է Կիլիկիոյ կիրճը=Քիւլէք Պողազ:*

2. *Անտի-Տօրոս լեռնագօտին բուն Տօրոսի հիւսիսային արեւելեան կողմն է և ճիւղեր կ'արձակէ դէպ ի Սև ծով, ինչպէս՝ Ագ տաղ:*

3. *Արեւելեան-Տօրոս որ կ'երկննայ դէպ ի արեւելք ու կը վերջանայ Վանայ ծովուն հիւսիսային կողմը: Ասոր գլխաւոր բազուկներն են Սիբան տաղ, Սասուն=Խոյթ, Նեմրուտ ու Գոգուռ:*

Գ. Լիբանան լեռներ. — *Առանք երկու լեռնագօտի ունին, Բուն Լիբանան ու Անտի-Լիբանան:*

1. *Բուն Լիբանան լեռնագօտւոյն լեռներն են Ազմա տաղ, Քուրդ տաղ, Հայ լեռ ու Պէյրութի լեռները:*

2. *Անտի-Լիբանանու լեռներն են Հորանի, Շիւրա, և այլն:*

Դ. Մարմարայի ու Սեւ ծովու *եզերքը կ'երկարի անջատ հաստամնստով լեռնագօտի մը որ կը կոչուի Հայաստանի լեռներուն. ինչպէս՝ Ողիմպոս=Քեշիշ տաղ, Ալա տաղ, Իլմազտաղ, Գադրան տաղ, Կիւմիսխէ տաղ: Կեդրոնը կը գրաւեն բազմաթիւ անջատ հաստամնստներ, Եղըլդզ տաղ, Ագ տաղ, Սուլթան տաղ, Արգէոս=Էրճիաս (3481 մ.):*

Եգիպտոսի մէջ Նեղոսի եզերքը կան Լիբիական ու Արաբական լեռները:

4. Ջրագրութիւն

ԳԵՏԵՐ. — *Ասիական Թուրքիա հինգ զառիթափի կը բաժնուի. Սեւ ծով, Մարմարա, Միջերկրական ծով, Արխիպելագոս, Պարսից ծոց:*

Ա. Սեւ ծովու զառիթափ. — *1. Ճորոխ կը բղխի Էրզրումի լեռներէն, անցնելով Պայպուրդի առջեւէն՝ կը մտնէ Անդր-Կովկաս ու Պաթումի մօտ կը թափի: 2. Իրիս=Եշիլ ըրմագ (400 քմ.), որ երեք ճիւղ ունի — Դոզանլու, Գայլ գետ ու Զրգրղգ: 3. Ալիս=Գըզըլ ըրմագ (1000 քմ.) որ Գայսերիի հիւսիսային կողմն արմկաձեւ չրջան մը ընելով ու ճեղքելով Անատոլուի կեդրոնական լեռնահովիտները՝ կը թափի Պաֆրայի մօտ: Այնի գետակիցներն են Տեմիճէ չայ, Տեւերեկ չայ, Կիլիկ չայ: 4. Սագարիա (600 քմ.) կը բղխի Աֆիոն Գարահիսարի կողմերէն: Ճիւղերն են Բուրսուգ՝ Բիւթանիոյ լեռներէն, Էնիիւրիւ սու, Աչատաղ սու, Սեհտի սու:*

Բ. Մարմարա ծովու զառիթափ. — *1. Միխալըճ=Հոիլոպոս որ երկու ճիւղ ունի, Սուսուրլու=Մակեդոս և Ադրանոս չայ: 2. Գոնա չայ=Կրանիկոս:*

Գ. Արխիպելագոսի զառիթափ. — *1. Պագըր չայ=Կայիկոս: 2. Կեսիզ=Հերմոս: 3. Քիւչիւք Մենտերէզ=Կայիստրոս: 4. Պօյիւք Մենտերէզ=Մեանդր (270 քմ.):*

Դ. Միջերկրական ծովու զառիթափ. — *1. Կիւդնոս=Գարա սու որ կ'անցնի Թարսոսի առջեւէն: 2. Սիհոն=Ջահան=Սարոս (250 քմ.): 3. Ճիհոն=Պիւրամոս (200 քմ.): 4. Ասը=Որոնդես կը կազմէ Հնամի լիճն ու կ'ընդունի Ամոտ լճի ջրերը: 5. Նեղոս (6476 քմ.):*

Ե. Պարսից ծոցի զառիթափ. — 1. Եփրատ (1850 քմ.) *երկու մեծ ճիւղ ունի. մէկը՝ Գարա սու=Բուն Եփրատ որ կը ժողվէ Էրզրումի կուսակալութեան ջրերն ու Ակնէն անցնելով՝ կապան-Մատէնի առջև կը միանայ միւս ճիւղին՝ Արածանիի հետ: Արածանի կը բղխի Ծաղիկ ու Նպատ=Աչա տաղ լեռներէն ու կը ժողվէ Պիթլիս կուսակալութեան չատ մը ջուրերը: Եփրատ Տօրոսի կապաններէն անցնելով՝ օձապտոյտ կը մտնէ Միջագետք ուր կ'ընդունի Խապուր գետը: 2. Տիգրիս (1250 քմ.) երկու ճիւղ ունի — Արեւելեան ու Արեւմտեան: Արեւելեան ճիւղը կրնայ կոչուիլ Պոհդան սու, ու արեւմտեան ճիւղն ալ՝ Արղնա սու որ կը բղխի Խարբերդի հիւսիսային արեւելեան կողմը՝ Կէօղճիւք լիճէն: Այս երկու ճիւղերը կը միանան Ռուսանի հարաւային արեւելեան կողմը: Անկէ Տիգրիս կը մտնէ Միջագետք, կ'անցնի Մուսուլի առջեւէն ու ձախ կողմէն կ'ընդունի Մեծ ու Փոքր Զապ գետերն և Տիալա գետը, յետոյ կը մտնէ Պաղտատ ու դէպ ի հարաւ հոսելով՝ կը միանայ Եփրատի հետ: Եփրատ ու Տիգրիս միանալով՝ կը կազմեն Շադ-իւլ-Արապ (145 քմ.) որ ընդունելով Կերխա ու Գարուն գետերը՝ մեծ Տելտա մը կը ձեւացնէ թափած տեղը. ասոր սիկահողը տարին 50 մեդր կ'աւելնայ:*

ԼԻՃԵՐ ՈՒ ՆԵՐՅԱՄԱՌԱՅԻՆ ԳԵՏԵՐ. — *Ասիական Թուրքիոյ լիճերը կրնանք չորս խումբերու բաժնել.*

1. Վանայ ծովու խումբ. — *Հայաստանի բարձրավանդակին վրայ կան քանի մը լիճեր որոնց գլխաւորն է Վանայ ծով (6300 քմ.). հոս կը թափին 10է աւելի գետակներ: Վանայ ծովու ջուրը դառն է: Վանայ ծովուն մէջ են Աղբաման, Առսեր, Կտուց ու Լիմ կղզիները: — Նազուկ լիճ՝ Պուլանըզի մէջ: — Կէօղճիւք լիճ՝ Խարբերդի մէջ: — Արջակ ու Պալըզը:*

2. Գոնիայի խումբ. — *Իրը 25 լիճ որոնց մեծագոյնն է Թուզ կէօլ (1000 քմ.). ասոր ջուրը չատ դառն է և աղը ջուրին երեան իրը թանձր խաւ տարածուած կը մնայ: — Պուրտուր, Ագ-Շեհիր, Պէյ-Շեհիր և այլն:*

3. Սուրիոյ խումբ. — *Սուրիոյ խումբը կը կազմեն Ամուկ, Տիբերիոյ ծով, Գալիլիոյ ծով ու Մեռեալ ծով: Վերջինին ջուրն աղի ու կապարէն է:*

4. Մարմարա ծովու խումբ. — *Մարմարայի մօտ կը գտնուին Սապանճայի, Իզնիկի, Ասպրոնիոն ու Մանիասա լիճերը:*

Եգիպտոսի լիճերն են Մենզալէ, Պուրլոս, Մառիէ=Ապուքիր:

ԱՄՓՈՓՈՒՄ

Օսմանեան կայսրութեան երեք մեծ բաժանումներն են ... — Եւրոպական Թուրքիոյ սահմանն է... — Եւրոպական Թուրքիա կը տեսնէ... ծովերը. — Եւրոպական Թուրքիոյ թերակղզիներն են... — Ծոցերն են... — Կղզիներն են...

— Եւրոպական Թուրքիոյ լեռները կը բաժնուին... ճիւղի. — Արեւմտեան լեռնագօտւոյն լեռներն են .. — Հարաւային հաստատեստին մէջ նշանաւոր են... — Կեդրոնական հաստատեստին մէջ նշանաւոր է... — Եւրոպական Թուրքիոյ զառիթափերն են... — Արդիպեղագոսը կը թափին... — Յոնիականը... — Աղրիականը... — Եւրոպական Թուրքիոյ լիճերն են...:

Ասիական Թուրքիոյ ծովերն են... — Սեւ ծովու եզերքը կը տեսնուին... հրուանդանները. — ... ծոցերը. Մարմարայի եզերքը կ'երկարին... թերակղզիները. — Ծոցերն են... — Պոզ Պրուն կը գտնուի... — Արդիպեղագոսի եզերքը կ'երկննան... թերակղզիները. — ... կազմուած են... ծոցերը. — ... հրուանդանները կ'երկննան Արդիպեղագոսի մէջ. — Արդիպեղագոսի մէջ ցրուած են... կղզիները. — Միջերկրականի մէջ կ'երկննան... թերակղզիները. — Միջերկրականի եզերքը կազմուած են .. ծոցերը եւ կը տեսնուին... հրուանդանները. — Ասորիի ծովեզերքը կան... խորշերն եւ... հրուանդանները. — Եգիպտոսի ծովեզերքը կան... ծոցերը. — Արաբական ծովեզերքը կան... ծոցերը.

Աս. Թուրքիոյ երկրամասերն են... — Հայաստան լեռնային ... — Հայաստանի լեռներն են... — Բիւրակնեան լեռներու ճիւղերն են... — Տօրոս լեռները կը գտնուին .. — Բուն Տօրոսի ճիւղերն են... — Կիլիկիոյ կիրճը կը գտնուի... — Անտի-Տօրոսի ճիւղերն են... — Արեւելեան Տօրոսը կ'երկննայ... — Հայկական Տօրոսի ճիւղերն են... — Բուն Լիբանանու ճիւղերն են... — Անտի-Լիբանանու... — Մարմարա ու Սեւ ծովու եզերքը կ'երկարին... լեռները. — Ասիական Թուրքիոյ զառիթափերն են .. — Սեւ ծով կը թափին. . — Մարմարա... — Արդիպեղագոս... — Միջերկրական.. — Պոսթիր ծոց .. — Եփրատի գետակիցներն են... — Արածանիի... — Տիգրիսի... — Անատոլուի լիճերն են .. Հայաստանի մէջ. . — Մարմարայի եզերքը .. — Ասորիքի մէջ ..:

Բ. ՊԱՏՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

1. ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱ

Եւրոպական Թուրքիա կը պարունակէ երբեմնի Թրակիա, Մակեդոնիա, Աղպանիա, Թեսալիա ու Եպիրոս երկիրներն որ նախ Մեծն Աղեքսանդրի կայսրութեան մասը կը կազմէին և յետոյ անցան Հռոմայեցւոց:

1. Թրակիա *Յոյն քաղաքակրթութեան ու Պելոպոնէսոսի խանձարուրքն է: Հռոմայեցիք այս երկիրն ուրիցին Օգոստոս ու Կլոդիոս կայսերաւն օրով: Սլաւները հոս արշաւեցին, յետոյ Պուլկարները կազմեցին թագաւորութիւն մը: Սուլթան Մուրատ Ա. ուրից Թրակիոյ:*

Թրակիոյ հիւսիսային մասն Արեւելեան Բումելին է, հարաւայինն ալ՝ Խարիսէ կուսակալութիւնն ու Կ. Պոլիս:

2. Մակեդոնիա *իր անունն առած է Պելոպոնէսոսի մէկ ցեղէն: Մեծն Աղեքսանդր Մակեդոնիան բարգաւաճուց Թագաւորութեան: Հռոմայեցիք ուրիցին 148 (Ն. Ք.): Խաչակիրները Միջին դարուն հոն հիմնեցին «Թեսաղոնիկէի Թագաւորութիւն»ը զոր նուաճեց Սուլթան Մուրատ Ա.:*

Այսօր Մակեդոնիա կը կազմէ Սերանիկ կուսակալութիւնը, Մանաստրի մէկ մասն ու Գոստվայի հարաւային մասը:

3. Ալպանիա *ու Եպիրոս հին ատեն կը կազմէին Թագաւորութիւն մը: Օսմանցիք գրաւեցին 1453ին: Այսօր կը կազմեն Եանիա ու Շգոտրա կուսակալութիւնները:*

4. *Օսմանեան Կայսրութիւնը հին Թեսալիայէն գրաւած է մաս մը՝ Սերմիչէ սանճաղը:*

2. ԱՍԻԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱ

Ասիական Թուրքիա կը պարունակէ երբեմնի Փոքր Ասիա, Հայաստան, Ասորեստան, Ասորիք, Պաղեստին ու Արաբիոյ մէկ մասը:

1. Փոքր Ասիա *կը պարունակէ Միւսիա, Փռիւգիա, Բիւթանիա, Լիւդիա, Կարիա, Լիւկիա, Պիսիդիա, Պամֆիւլիա, Լիկաոնիա, Կիլիկիա, Գալատիա, Կապադովկիա, Պոնտոս ու Պափլագոնիա: Առնցմէ իւրաքանչիւրն ունի իր տեղական պատմութիւնը, և յաջորդաբար կազմեցին Պարսկական, Աղեքսանդրի ու Սելեւկեան կայսրութեան մասերը: Շատերն անկախութիւն գտան, բայց չկրցան դիմադրել Հռոմէական աչխարհակալութեան: Խալիֆաները սիրեցին Զ. դարուն և ԺԱ. դարուն ալ Սելճուկեան Թուրքերը և կազմեցին Ռումի Սուլթանութիւնը՝ Բիւզանդական կայսրութեան Թողով փոքր մաս մը: Վերջապէս 1381—1383 Սուլթան Մուրատ Ա. նուաճեց Փոքր Ասիան որ այսօր կը կազմէ սքիր կուսակալութիւն — Իսիւտավնիկեար, Այդըն, Գոնիա, Աստանա, Գաստեմունի, Էնկիւրի, Սվազ, Տրապիզոն:*

2. Հայաստան (189 Ն. Ք.) *երկու մասի բաժնուած էր, Մեծ Հայք Եփրատի արեւելեան կողմը ու Փոքր Հայք Եփրատի արեւմտեան կողմը: Օս-*



մանցիք զանազան ժամանակներու մէջ տիրեցին Հայաստանի։

Թրքական Հայաստանը կը պարունակէ Սիւաս, Ասանա, Էնկիւրիւ, Տրապիզոն ու Հալէպ կուսակալութեանց քանի մը մասերը, և Էրզրում, Մամուրէդ-իւլ-Ազիզ, Պիթլիս, Տիարպէքիր ու Վան կուսակալութիւնները։

3. Ասորեստան *ընդարձակ թագաւորութիւն մըն էր որ կործանեցաւ* (625ին Ն. Ք.)։ *Անոր աւերակներուն վրայ հիմնուեցաւ Բաբելոնի թագաւորութիւնը զոր գրաւեցին Պարսիկները* 538ին (Ն. Ք.)։ *Ապա ձաֆար Ալմանսուր խալիֆան հիմնեց Պաղտատը* 762ին *որ գարձաւ մայրաքաղաք Աբբասեանց Խալիֆայութեան։ Օսմանցիք տիրեցին այս երկրին* 1534ին ու 1638ին։

Ասորեստան այսօր կը կազմէ Մուսուլ ու Պաղտաս կուսակալութիւնները։

4. Ասորիմ *կը պարունակէր բուն Ասորիմ, Փիւնիկէ ու Պաղեստին։ Սելեւկոս հիմնեց Ասորւոց թագաւորութիւնն որուն մայրաքաղաքն էր Անտիոք։ Հռոմայեցիք տիրեցին* 64ին (Ն. Ք.), *Արաբացիք ալ* 634—638։ *Խաչակիրները հիմնեցին «Երուսաղէմի Լատին Թագաւորութիւն»ն որ չեղոյ ամբողջութեամբ նուաճուեցաւ Եգիպտոսի Մեմլուքներէն։ Սալթան Սելիմ Ա. տիրեց այս երկրին որ այսօր կը կազմէ Պէյրութ, Սուրիա, Հարիպ կուսակալութիւնները, Լիբանան, Գուստ Շերիֆ, Էլ Զօր ու Ասանայի մէկ մասը։*

5. *Իշմաէլներու մարգարէն հիմնեց Արաբական կայսրութիւնը։ Օսմանցիք Արաբիոյ մէկ մասին միայն տիրած են։*

3 ԱՓՐԻԿԷԻ ՄԷՋ

1. *Եգիպտոսի բնիկ թագաւորութիւնը կործանեցաւ Պարսիկներէն։ Պաղոմէոս՝ Մեծն Ալէքսանդրի զօրապետներէն մէկը հիմնեց Լակեանց թագաւորութիւնը։ Հռոմայեցիք տիրեցին* 30ին (Ն. Ք.)։ *Արաբացիք՝* 616ին *և յաջորդաբար կառավարեցին Ֆաթիմեանք, Էյուպեանք, Պահարի Մեմլուքներն ու Պուրճի Մեմլուքները։ Սալթան Սելիմ Ա.* 1517ին *տիրեց Եգիպտոսի։* 1841էն *ի վեր Եգիպտոս Խեդիվութիւն մըն է Օսմանեան գերիշխանութեան տակ։ Անգղիացիք գրաւեցին* 1880ին։

2. *Ղարպ-Դարապտուս Օսմանեան Կայսրութեան կցուեցաւ* 1551ին *ու* 1714ին։

Գ. ԱՋԳԱԳՐԱԿԱՆ

1. Ցեղեր

Օսմանեան կայսրութեան ազգաբնակութիւնը չատ խառն է և կը բաժնուի 9 *ցեղի — Թուրք խումբ, Հայեր, Յոյն եւ Լատին խումբ, Ալպանական խումբ, Կովկասեան խումբ, Երանեան խումբ, Սեմական խումբ, Գնչուներ, Եհուդիներ։*

1. Թուրք խումբը *կը պարունակէ* 1. *Օսմանցի Թուրքեր* (12 *միլիոն*), *ցրուած Թրակիա, Թեսալիա ու Փոքր Ասիա։* 2. *Թուրքմեններ՝ Անատոլուի զանազան կողմերը։*

2. Հայերը *ցրուած են Օսմանեան Կայսրութեան ամէն կողմը, բայց խտացած՝ Հայաստան ու Կիլիկիա։*

3. Յոյն եւ Լատին խումբ *կը պարունակէ* 1. *Յոյները՝ ցրուած Միջերկրականի եզերքը, Արքիպելագոսի ու Փոքր Ասիոյ մէկ մասին մէջ։* 2. *Ալպանիացի=Սկիպետար՝ Եւրոպական Թուրքիոյ արեւմտեան կողմերը։* 3. *Ռումոյ-Վալաքներ — Ռումէն ծագումի — Ալպանիոյ, Եպիրոսի ու Մակեդոնիոյ մէջ։*

4. Սլաւ խումբին *կը պատկանին.* 1. *Պուլկարները՝ Ֆիննեան ծագումի, բայց սլաւացած, ցրուած են Մակեդոնիա ու Թրակիա։* 2. *Սերվեր՝ Դոսովոյի մէջ։* 3. *Խազահներ՝ Տոնի եզերքէն գաղթած դէպ ի Պրուսա ու Սամսոն։*

5. Կովկասեան խումբը *կը բաղկանայ* 1. *Զերխզներ՝ գաղթած Կովկասէն դէպ ի Փոքր Ասիա։* 2. *Լազեր՝ Սեւ ծովուն եզերքը։*

6. Երանեան խումբէն են *Քուրտերը՝ մեծ մասամբ խաչնարած։*

7. Սեմական խումբին *կը պատկանին.* 1. *Արաբացիք* (2 *միլիոն*) *ցրուած Արաբիա, Ղարպ Դարապտուս, Եգիպտոս, Սուրիա, Պաղտատ, Պասրա։* 2. *Եգիպտացիք (Ֆելլահ ու Ղպտի) Եգիպտոսի մէջ։* 3. *Ասորիներ՝ ցրուած Հայոց ծայրէն մինչեւ Պաղեստան։* 4. *Բաղդացիներ՝ Միջագետքի հիւսիսային կողմը։* 5. *Մարոնիներ՝ — առաքեալական ծագումի — Լիբանանոս մէջ և չրջակայ կռկիները։* 6. *Տիւրզիներ՝ Հոլան, Շամի հարաւային կողմն ու Անտի-Լիբանան։* 8. *Անսարիէ՝ լեռնաբնակ ժողովուրդներ՝ Անտիոքէն մինչեւ Շամ-Դարապտուս։* 9. *Եզիտներ՝ Մարտին, Մուսուլ, Ձեպէլ-Սինճար։* 10. *Հրեայներ — Սպանիայէն ու Բորտուկալէն գաղթած — Սելանիկի մէջ։*

8. *Գնչուներ՝ հաւանաբար Հնդկաստանէն գաղթած ու ցրուած ամէն կողմ։*

9. *Խափճիկներ — Նուպիացի ու Սուտանցի ծագումի — իբրեւ գերի ցրուած ամէն կողմ։*

2. Կրօնքներ

Օսմանեան կայսրութեան մէջ երեք կրօնք կայ — Իսլամութիւն, Քրիստոնէութիւն ու Հրեութիւն։

Ա. Օսմանցի Թուրքերը, Քուրտերը, Զերքէզները, Արաբները, Ֆելլահները, Ալպանացիներու մէկ մասն Իսլամ են։ Մեծ մասամբ Սիւնիի, փոքր մաս մը Շիի։

Իսլամ հերձուածներն են Շապաֆներն ու Հանաւանդները՝ Մուսուլի կողմերը, Դրզրզպաշները, Եզիտները=Մանիքեցի Քուրդերը, Տիւրզիներ ու Մեռուաղիներ։

Բ. Օսմանեան կայսրութեան մէջ կայ եօթը Քրիստոնեայ եկեղեցի. Հայասացեայց եկեղեցի, Յոյն եկեղեցի, Հռոմէական եկեղեցի, Պուլկար եկեղեցի, Նեստորական=Քաղդէական եկեղեցի, Յակոբիկեան=Ասորի եկեղեցի, Ղպտի եկեղեցի ու Բողոքական եկեղեցի։

1. Հայասացեայց եկեղեցւոյ Հայրապետութեան *Մայր Աթոռն է Ս. Էջմիածին. կան երկու թեմ՝ Պատրիարքութիւններ՝ Կիլիկիոյ ու Աղթամարի, կաթուղիկոսութիւններ՝ Երուսաղէմի ու և երկու Պատրիարքութիւններ՝ Երուսաղէմի ու Կ. Պոլսոյ։*

2. Յոյն եկեղեցին *կը պարունակէ Յոյները, Մակեդոնիոյ Սերվերը, Քուռդ-Վալաքները, Դոսմ

Հաստատուած շինութեան, Առեւտրական, Կրթական, Հողագործական, Հանքաց ու Անտառաց: Ատենք կը կազմեն Նախարարաց խորհուրդը:

5. Դաղաքային Վարչութիւն

Օսմանեան կայսրութիւնը բաժնուած է 32 Կուսակալութեանց: Մէն մի կուսակալութիւն կը պարունակէ Սանճագներ=Նահանգներ. սանճագները բաժնուած են գաւազաններու=գաւառներու, գաւառները՝ Նահիյեներու=գաւառակներու և գաւառակներն ալ գեղերու=գարիւներու:

Կուսակալութիւնները կը կառավարուին կուսակալով որ կ'անուանուի Ներքին գործոց Նախարարէն: Կուսակալին տեսչութեան տակ են Տեփդերտարն «Ելեւմտից պաշտօնեայ»ն ու Մեհրուպանին «Թղթակցութեանց անօրէն»ը և նաև Կրթական, Ոստիկանական և այլն պաշտօնեութիւնները:

Սանճագը կը կառավարուի միդեւարդիով:
Գաւազն կը կառավարուի գայմագամով:
Նահիէն կը կառավարուի միւդիրով:
Գեղը կը կառավարուի մխթարով:

6. Դատական Վարչութիւն

Դատական Վարչութիւնը կազմակերպուած է Եւրոպայի դատարաններու հետեւողութեամբ: Մէն մի գաղայի ու սանճագի մէջ կայ Նախագահ Usteան=Պիտյիդ և կուսակալութեան մէջ Վերաքննիչ Usteան=Իսդինաֆ: Կ. Պոլսոյ մէջ է Վճռաբեկ Usteանն=Թեմիզը:

Առեւտրական կեդրոններու մէջ կան Առեւտրական դատարաններ:

Օտարահպատակները կը դատուին իրենց Հիւպատոսարանին մէջ:

7. Զինուորական Վարչութիւն

Օսմանեան բանակը կը բաղկանայ նիզամիէ, ռեսիվ, իհթիաթ ու մուսաֆըզ զօրքերէ: Զինուորական շրջանը 20 տարի է:

Կայսրութիւնը բաժնուած է 7 Զօրաբանակի=Orsու: 1. Կ. Պոլիս, 2. Էսթրնէ, 3. Մանաստր, 4. Երզնկա, 5. Պաղտատ, 6. Շամ, 7. Սանա: Մէն մի զօրաբանակ ունի միւշիր=մարաջախ մը:

Յաղագութեան տակն բանակը 182,000 է, պահեստազի տակն՝ 613,000:

8. Ծովային Զօրութիւն

Ծովային բանակը կը բաղկանայ 40,000 զօրքէրէ. Ծովային զօրութեան չրջանն է 12 տարի:

Նաւատորմիղը բաժնուած է Կ. Պոլիս, Հառդոս, Բրեւեզա, Պաղրա, Դ. Դարդանէլս, Ճիտէ ու Սկանդիկ:

9. Ելեւմուտ

Օսմանեան կայսրութեան տարեկան հասոյթն էր 400 միլիոն ֆրանք (1906), հանրային պարտքն է 4 երկիլիոն ու 179 միլիոն: Այս պարտքին վճարման յատկացուած են աղի, գրաշմանդիի, ալկոլի, մեաաքսի, ձկան հասոյթը:

10. Հասարակաց Կրթութիւն

Թուրք կրթութիւնը կ'առանդուի Իպթիտայիէ, Րիւշտիէ ու Իտատիէ կոչուած վարժարաններու մէջ: Մեր Հայ ազգային կրթութեան յատկացուած են Նախակրթարաններ ու Բարձրագոյն Նախակրթարաններ, իսկ կրօնական-վարչական կրթութեան ալ՝ Դպրեվանիք ու Ժառանգաւորաց վարժարան: Իսլամ կրօնական կրթութիւնն ալ կ'առանդուի Մեհրեմիէ մէջ: Կ. Պոլսոյ մէջ սա՛ մասնագիտական վարժարանները կան. Բաղաքային վարժարան, Բժշկական վարժարան (Քաղաքային ու Զինուորական), Նաւային վարժարան, Հողագործական վարժարան, Գեղարուեստից վարժարան, Զինուորական վարժարան, Կայսերական լիսէ:

Յոյներն ունին բազմաթիւ վարժարաններ, ինչպէս նաև մեծ Բրիտանեայ ազգերն ալ:

Կ. Պոլսոյ մէջ կայ Կայսերական Հնութեանց Թանգարանը: Իսլամ ճոխ մասնադարաններ կան Կ. Պոլսոյ մէջ: Յոյներն ալ ունին ճոխ մասնադարան Կ. Պոլիս, Իզմիր, Եւայլն:

11. Իսլամ Կրօնական Վարչութիւն

Իսլամներու հոգեւոր պետն է Սուլթանն որ այս պարագային կը կոչուի Խալիֆա: Խալիֆան հոգեւոր վարչութիւնը յանձնած է Շեխիւլ-Իսլամին որ պետն է իլեմաններու: Դատարանի մեհքեմներն ու վարչապետութիւնը յանձնուած են իլեմաններու: Աստիճանն կ'ընթանայ գաղիները՝ օրինքի մեհքեմներն ու իմամները՝ քարոզիչները: Կան նաև մոհգիլ՝ ազօթքի հրապարակները, թեքիեներու տերվիշները: Տերվիշները զանազան կարգեր ունին. ասոնց գլխաւորներն են մեւլեւիները, դարձողներն ու պեքդաշիները:

ՀԱՅ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա. Կ. ՊՈԼՍՈՅ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԵՆԹԱԿԱՅ

Օսմանեան կայսրութեան մէջ Հայերն ունին 31 Առաջնորդական վիճակ:

1. Եւրոպական Թուրքիա

Եւրոպական Թուրքիոյ մէջ են Էսթրնէի ու Թեքիրտաղի Առաջնորդութիւնները:

Էսթրնէի Առաջնորդութեան ենթակայ են Էսթրնէ, Տիմոդեխա, Կիւմիւշթինա ու Տեսէ Աղաճ:

Թեքիրտաղի՝ Ռոտոպոյ, Մալգարա, Զորլու, Կեղիպոլու, Միդիէի, Զանագ գալէ, Էգինէ, Պիդա:

2. Ասիական Թուրքիա

Ա. Իզմիթի Առաջնորդութիւն. Թեմեր՝ Նիկոմիդիա, Ատապազար, Կեդէ:

Բ. Պրուսայի Առաջնորդութիւն. Թեմեր՝ Պրուսա, Սհօդհօզ, Միհալըճ, Կեմլիգիկ, Իզնիկ:

Պանուրմա — Պալըքեսէրի Առաջնորդութիւն. Թեմեր՝ Պանուրմա, Պալըքեսէր, Էսքիշէհիր:

Դ. Պիլեճիկի Առաջնորդութիւն. Թեմեր՝ Պիլեճիկ, Ենիշէհիր:

Ե. Քհօբանիա—Ադիոն-Գարահիսարի Առաջնորդութիւն. Թեմեր՝ Քհօբանիա, Էսքիշէհիր, Ս.Փ. Գարահիսար, Ուշագ:

Զ. Իզմիրի Առաջնորդութիւն. Թեմեր՝ Իզմիր, Պերկամա, Մենեմէն, Պայընտըր, Էօսքիմիշ, Գուշատա, Մանիսա, Գասապա, Ագիհսար, Գըրգաղաճ, Այտըն, Նազիլլի, Սհօֆք, Տենիզլի:

Է. Գաղաթիոյ Առաջնորդութիւն. Թեմեր՝ Էնկիւրի, Նալը Խան, Սղանոզ, Տեհէֆ-Մահէմ, Գալէհիկ, Գըրշեհիր:

Ը. Կեսարիոյ Առաջնորդութիւն. Թեմեր՝ Կեսարիա, Թաշաս, Ինճէ սու, Էլվերիկ:

Թ. Գասդեմունիի Առաջնորդութիւն. Թեմեր՝ Գասդեմունի, Պոլու, Պոյաբաս, Դաշքհօբրի:

Ժ. Կոնիայի Առաջնորդութիւն. Թեմեր՝ Կոնիա, Նիյտ, Գարաման, Պոր, Էրեղլի, Ազտերայ, Նեւշէհիր, Պուրսուր, Էրմանը, Սպարդա, Ատափա:

ԺԱ. Սեբաստիոյ Առաջնորդութիւն. Թեմեր՝ Սեբաստիա (46 գեղերով):

ԺԲ. Եւդոկիոյ Առաջնորդութիւն. Թեմեր՝ Թոգաթ, Զիլէ, Նիխար, Չերքէզ:

ԺԳ. Ամասիա — Մարզուանի Առաջնորդութիւն. Թեմեր՝ Ամասիա, Մարզուան, Վեզիր-Քհօբրիւ, Լատիկ:

ԺԴ. Շ. Գարահիսարի Առաջնորդութիւն. Թեմեր՝ Շ. Գարահիսար, Էնսրհաս (32 գեղերով):

ԺԵ. Ճանիկի Առաջնորդութիւն. Թեմեր՝ Սամսոն, Պաֆրա, Զարշամպա, Իւնիէ, Ճապասա, Թերմէ:

ԺԶ. Տրապիզոնի Առաջնորդութիւն. Թեմեր՝ Տրապիզոն, Դրիսպոլի, Կիրասոն, Օրտու, Կիւմիշխանէ, Գելֆիս:

ԺԷ. Կարնոյ Առաջնորդութիւն. Թեմեր՝ Կարին (75 գեղերով), Դերջան (30 գեղերով), Բասէն (30 գեղերով), Քղի (47 գեղերով):

ԺԸ. Բաբերդի Առաջնորդութիւն. Թեմեր՝ Բաբերդ (30 գեղերով):

ԺԹ. Երզնկայի Առաջնորդութիւն. Թեմեր՝ Երզնկան, Գուզիչան, Կերմանիս, Քեմախ, Գուրունչայ:

Ի. Պայազիտի Առաջնորդութիւն. Թեմեր՝ Պայազիտ, Գարաքիլիսէ, Ալաշկերտ:

ԻԱ. Վանայ Առաջնորդութիւն. Թեմեր՝ Վան, Ստեփանաւագ, Բերկրի, Առճէշ (ընդամէնը 114 գեղ), Լիմ-Կտուց, Հէֆֆարի:

ԻԲ. Բաղեշի Առաջնորդութիւն. Թեմեր՝ Բաղեշ (100 գեղեղով):

ԻԳ. Սղերդի Առաջնորդութիւն. Թեմեր՝ Սղերդ, Պերուարի, Շիրուան, Խարզան:

ԻԴ. Մշոյ Առաջնորդութիւն. Թեմեր՝ Մուշ, Սասուն, Պուլանըղ, Մանազկերտ:

ԻԵ. Տիարպէքիրի Առաջնորդութիւն. Թեմեր՝ Տիարպէքիր, Հայնէ, Ֆարղին, Հազրոյ, Աղնի, Չնոյշ:

ԻԶ. Բալուի Առաջնորդութիւն. Թեմեր՝ Բալու (43 գեղերով):

ԻԷ. Խարբերդի Առաջնորդութիւն. Թեմեր՝ Մեզրէ ու Խարբերդ (72 գեղերով):

ԻԸ. Ուրքիոի Առաջնորդութիւն. Թեմեր՝ Ուրքիո ու Անկ (99 գեղերով):

ԻԹ. Զարասանգափ Առաջնորդութիւն. Թեմեր՝ Բերի, Խոզաթ, Մազկերտ, Զմնկաճագ (89 գեղերով):

Լ. Եդեսիոյ Առաջնորդութիւն. Թեմեր՝ Եդեսիա, Պիրեճիկ, Սեւերեկ, Մծբին:

Լ.Ա. Պաղտատի Առաջնորդութիւն. *Թեմեր՝ Պաղտատ, Պասրա, Մուսուլ:*

Լ.Բ. Եգիպտոսի Առաջնորդութիւն. *Թեմեր՝ Գահիրէ, Աղեքսանդրիա:*

Կ. Պոլսոյ Հայ Պատրիարքութեան ենթակայ ձեռնադ.

Ա. Պուլկարիոյ Առաջնորդութիւն. *Թեմեր՝ Սոֆիա, Ֆիլիպէ, Բաբար-Բազարճըգ, Վառնա, Սիլիստրէ, Պուրկազ, Շումլու, Բուսճուգ, Սլիվնոյ:*

Բ. Ռումանիոյ Առաջնորդութիւն. *Թեմեր՝ Ֆոշշան, Պուխրէշ, Պոթուշան, Եաշ, Կալաց, Պրայլա, Ռումնիկ, Բէօսթրիցէ, Սուչիւա, Թուլչա, Բրեյլ:*

Բ. ԵՐՈՒսԱղԷմԻ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿՆԵՐ

Երուսաղէմ, Շաւ, Եաֆա, Պէյրութ, Կիպրոս, Լաթաքիա:

Գ. ԱՂԹԱՄԱՐԻ ՎԻՃԱԿՆԵՐ

Աղթամար, Շատախ, Խիզան:

Դ. ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿՆԵՐ

Ա. Սիս, *Ֆեֆէ (Վահկա):*

Բ. Աստանա. *Թեմեր՝ Աստանա, Տարսոն, Մերսին, Միսիս, Ճեպկըզ-Պերեճիք:*

Գ. Հաճն (6 *գեղերով):*

Դ. Հալէպ. *Թեմեր՝ Հալէպ, Քիլիս, Պէյլան, Իսքենտերուն, Գըրդգիան, Ճ. Շղուր:*

Ե. Այնթապ *իր գեղերով:*

Զ. Անթաքիա. *Թեմեր՝ Անտիոք, Բեռապ:*

Է. Մարաշ:

Ը. Զէյթուն. *Թեմեր՝ Զէյթուն, Ֆոնուզ, Ազպիսան, Կապան:*

Թ. Մալաթիա. *Թեմեր՝ Մալաթիա, Հեքիմհան, Հիւսնի-Մանսուր, Պեհեսնի, Բեահդա:*

Ժ. Եոզկաս. *Թեմեր՝ Եոզկաս, Պողազլեան, Ազտաղ-Մահնի, Սոնկուրու, Չորում (43 գեղերով):*

ԺԱ. Կիւրին. *Թեմեր՝ Կիւրին, Մանճըլըգ:*

ԺԲ. Տիվրիկ (14 *գեղերով):*

ԺԳ. Տարենտ (6 *գեղերով):*

ԱՄՓՈՓՈՒՄ

Եւրոպական Թուրքիա կը պարունակէ... պատմական երկիրները. — Թրակիոյ հիւսիսային մասը... — Հարաւային մասը... — Մակեդոնիա կը կազմէ այս օրուան... կուսակալութիւնները. — Ալպանիա... կուսակալութիւնն է. — Եպիրոս... — Ասիական Թուրքիոյ պատմական երկիրներն են... — Փոքր Ասիա կը պարունակէ... երկիրները. — Օսմանցիք այս երկիրներուն տ՛րեցին... — Փոքր Ասիոյ 14 պատմական երկիրներն այսօր կը կազմեն սոյ ութ կուսակալութիւնները... — Հայաստան... երկու մասի կը բաժնուէր. — Մեծ Հայք էին... — Փոքր Հայք... — Օսմանեան Հայաստան կը պարունակէ... կուսակալութիւնն եւ... կուսակալութիւններէն մասեր. — Ասորեստան այսօր կը կազմէ... կուսակալութիւնները... — Ասորիք... կուսակալութիւններ եւ... սանճագները. — Եգիպտոսի տիրեցին յաջորդաբար... — Խտիվութիւն եղաւ... — Անգլիացիք գրաւեցին... — Օսմանեան կայսրութեան ցեղերն են... — Թուրքերը ցրուած են... — Թուրքմէնները... — Ցոյն եւ Լատին խումբը կը պարունակէ... — Ցոյները ցրուած են... — Ալպանիացիք... — Քուծոյ-Վալաքները... — Սլաւ խմբին կը պատկանին... — Պուլկարները ցրուած են... — Սերվերը... — Խազախները... — Կովկասեան խմբէն են... Հայերը ցրուած են... — Քուրդերը... — Սեմական խմբին կը պատկանին... — Քուրդերը... — Սեմական խմբին կը պատկանին... — Ասորիները ցրուած են... — Քաղդէացիները... — Մարոնիները... — Տիւրզիները... — Մետուալիները... — Անսարէները... — Հրեայները... — Դնչուները... ցեղէն են եւ ցրուած են... — Խափչիկները... — Օսմանեան կայսրութեան կրօնքներն են... — Իսլամ են... — Քրիստոնեայ են... եկեղեցիները. — Ցոյն եկեղեցւոյ կը պատկանին... — Հռոմէական են... — Պուլկարական են... — Նեստորական են... — Յակոբիկեան են... — Ղպտիական են... — Բողոքական են... — Հրեայները կը բաժնուին... — Օսմանեան կայսրութեան լեզուներն են... — Օսմանեան կայսրութեան նախարարութիւններն են... — Դաւառները կը կառավարուին... — Նախագահ Ատեան կը գտնուի... — Վերաքննիչ... — Վճռաբեկ... — Օսմանեան բանակը կը բաղկանայ... — Եօթը զօրաբանակներն են... — Նաւատորմիղը բաժնուած է... — Կրթութիւնը կ՛ուսանդուի... վարժարաններու մէջ. — Մասնագիտական վարժարաններն են... — Իսլամ նուիրապետութեան աստիճաններն են... — Օսմանեան կայսրութեան մէջ կ. Պոլսոյ Պատրիարքութեան առաջնորդական վիճակներն են... — Աղթամարի... — Կիլիկիոյ Կաթողիկոսութեան...

Դ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Ա. Հողագործութիւն

1. ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Հողագործութիւնն է Թուրքիոյ գլխաւոր հարստութիւնը: Օսմանեան Կայսրութեան հողն ընդհանրապէս չատ բարեբեր է, բայց ի Փոքր Ասիոյ, Ասորիքի ու Արաբիոյ անապատներէն և Մակեդոնիոյ ծովեզերեայ քանի մը մասերէն: Բայց Հողագործութիւնը չատ յետամնաց վիճակի մէջ է, միայն գլխաւոր քաղաքներու շրջակայքն ու ծովեզերեայ կուսակալութեանց (Խիւտավենտիկեար, Իզմիր և այլն) մէջ զարգացած է: Հողագործութեան յետամնաց վիճակին պատճառներն են Հողագործութեան միջոցներու չգոյութիւնը, բնակիչներուն սովորամոլութիւնն ու անտարբերութիւնը, հարկերու ծանրութիւնն և հողագործութիւնը, հարկերու ծանրութիւնն և հողագործական կառավարչագործնալ մեքենաներու պակասութիւնը:

1. Արմտիք. — *Ամէնէն առնչի տարածուած է արմտիքի մշակութիւնը* — ցորեն, եգիպտացորեն, գարի, բրինձ, վարսակ, հաճար, ձոռն (կարմիր ցորեն), սեւ ցորեն, կորեկ, կղկղ:

2. Որթատունկ. — *Որթատունկը կ՛ուռճանայ գրեթէ ամէն կողմ. թէև գինին ընտիր է (Սամոս, Իզմիրնէ, Պրուսա, Լիբանան, Մամուրէդ-իւլ-Ազիզ), բայց ընդհանրապէս լաւ պատրաստուած չէ: Խաղողն ընդհանրապէս կ՛ապաւէ՝ ուտելով կամ ոստոց չնկելով: Խաղողի ուրիշ ճարտարարուեստ չկայ:*

3. Պտղատու ծառեր. — *Պտղատու ծառերը հասոյթի կարեւոր աղբիւրներ են: Ամէն կողմ կ՛աճին կեռասենի, դեղձենի, սպորենի, տանձենի, խնձորենի, զկեռի, նշենի, ծիրանի: Տրապիզոնի և Ամասիոյ մէջ յատուկ կուգայ կաղին, Պրուսայի մէջ՝ շագանակենի, բոլոր ծովեզերքը տարածուած են թզենի, նռնենի, նարնջենի, ղեմոնի, կիտրոնենի, ուներկեղեն: Աւելի տաք երկրամասերու յատուկ են պիստակի, արմաւենի, ադամանթզենի, և Արաբիոյ ու Ասորիքի մէջ՝ խահուէ:*

4. Ընդեղէն. — *Օսմանեան կայսրութիւնը կ՛արտադրէ Բարեխառն գօտիներու բոլոր ընդեղէնները: Ամէն կողմ կը մշակեն ղուրիա, ոլոռն, սիսեռ, բակլայ, ոսպ, ուրդ, կաղամբ, գոնգեղ, ստեպղին, կանեփատ, սիսոռ, տոխ, վարունգ, պղպեղ, դդում, սեխ, ձմերուկ, պարիա ու գեներախնձոր:*

5. Հիւսելի տունկեր. — *վուշ=ֆեթհի ու կանեփ կը մշակուին ամէն կողմ, խոռատ ու տաք գաշտագետիններու մէջ ալ՝ բաւական:*

6. Իւղալից տունկեր. — *Իւղալից տունկերու գլխաւորն է շուշման որ ամէն տեղ կը գտնուի. կանեփատը հազուագիւտ է:*

7. Ներկագործական տունկեր. — *Լեղակը յատուկ է Ասորիքի ու Արաբիոյ: Տարոն ու Իրիոմ կը գտնուին գրեթէ ամէն կողմ:*

8. Խնկեղէն ու համեմներ. — *Վարդենին թէև ամէն կողմ կայ, բայց ընտիրը Մակեդոնիա ու Թրակիա է, խնկեղէն (Արաբիա), անիսոն, անասնուրհա, դպնդեղ=չաւանդա չիչեքի և այլն:*

9. Բուժիչ տունկեր. — *Բայ ի ափիոնէ, յիշենք ևասուտակը (ընտիրն Անտոլք), մանանա (Ասորիք), բաղատան ու հալուէ (Արաբիա), գազի խեժ ու սակաւնի (Հայաստան ու Փոքր Ասիա), տիզ, գիշախոտ, խաւարծիլ:*

10. Ծխախոտ. — *Օսմանեան կայսրութեան մէջ ամէն կողմ կը մշակուի ծխախոտն որուն յարգի տեսակը յառաջ կուգայ Մակեդոնիա ու Ասորիք:*

11. Մարգագետին. — *Բնական մարգագետիններ կան լեռնային տեղեր (Հայաստան, Փոքր Ասիա, Եպիրոս, Ալպանիա):*

12. Անտառներ. — *Թէև գեղեցիկ անտառներ կան, բայց Անտառաբուծութիւնը զարգացած չէ: Գլխաւոր ծառերն են. կաղնի, շոճի, եղեւին, լորճի, կաղամախի, ձիւնի=զըգըլ, չամեսնի=զըգըլ աղած, վայրի շագանակենի, կնձնի=գարս աղած: Անտառները բաց ի վառելափայտէ ու չինութեան փայտէ կը հայթայթեն կեղեւ, մոմոյ, գիսոռ ու ռետին:*

13. Ուրիշ ծառեր ու տունկեր. — *Թթենի, դժնիկ = ագ տիրեն որ կուսայ դեղնահաս, ամէրի որ կուսայ ջնարակ, գաժ, խիժենի որ կուսայ կոհզ (Պաղտատ), հերձի=սազըզ աղած (Աբդիլեղազաս), մրտենի=մերսին աղածը, հաւասրգի, եղերատնի=չիչեակ:*

14. Պատմական բուսաբանութիւն. — *Յորենը,*

գարին ու ճոնը Միջագետքի բնիկ բերքերն են, անկէ տարածուած են ամէն կողմ. ևռևենի, արմաւենի, սոխ, թզենի ու սիսեռակեռի՝ Ասորիքէ, ձիթենի ու վարսակ՝ Փոքր Ասիոյ, կեռասենի, թթենի, դեղձի, խնձորենի, տանձենի, նշենի, հաղարջենի ու սերկեւեզի՝ Հայաստանի:

2. ԸՆՏԱՆԻ ԱՆԱՍՈՒՆՆԵՐ

Ընտանի անասուններու բուծումը Հողագործական ճարտարութեան մէկ կարեւոր ճիւղն է, նորին ալ անթիւ արօտավայրերու որ կը ծածկեն լեռնադաշտերն ու լեռնային երկրամասերը:

1. Ձիազգիներ. — *Ամէն կողմ կը բուծանեն ձի, բայց ամէնէն յարգելին է «արաբական ձին» (Արաբիա, Ասորիք ու Միջագետք):*

2. Իշազգի. — *Ամէն կողմ կը գտնուի էշ, բայց ամէնէն նշանաւորներն են Արաբիոյ, Ասորիքի ու Միջագետքի էշերը: Ջորին յաւուկ է լեռնային երկիրներու:*

3. Ուղտ. — *Արջառը բազմաթիւ է, բայց միջակ տեսակէն, և կը ծառայէ հերկի: Գոմէշ կը գտնուի մանաւանդ Եփրատի ու Տիգրիսի ճախճախուտ երկրամասին մէջ:*

4. Ոչխար. — *Օսմանեան Կայսրութեան հաւտիի աղբիւրներէն մէկն է ոչխարը: Ամէնէն նշանաւոր ոչխարն է «լայնագմակ ոչխար»ը (Գարաման) զոր Թուրքերը ներմուծեցին Փոքր Ասիա:*

5. Ուղտ. — *Ասիոյ և Թրակիոյ մէջ ուղտը կը գործածուի իբրև դրաստ: Արաբիոյ, Միջագետքի ու Ասորիքի մէջ ուղտաբուծութիւնը ծաղկած է:*

6. Հաւազգիներ. — *Ուրիշ ընտանի անասուններու մէջ կրնանք նշանակել հաւազգիները — հաւ, սագ, բադ, հնդկահաւ: Ընտանի աքաղաղին կը բուծանեն միայն Պաղտատ կուսակալութեան մէջ: Շունը կիսավայրենի վիճակի մէջ է ամէն տեղ, սակայն լաւ գամխուններ կան:*

3. ՎԱՅՐԻ ԱՆԱՍՈՒՆՆԵՐ

Օսմանեան Կայսրութեան Վայրի Կենդանակազմութիւնը չատ այլազան է: Միայն նշանակենք արջ, գայլ, շուասան, կատու, աղուէս որ ամէն կողմ կը գտնուին, շնագայլ՝ Ասիական Թուրքիոյ ու Մակեդոնիոյ մէջ, առիւծ՝ Միջագետքի մէջ, յովազ, բորենի, վայրի կատու, ընձառյուզ՝ Փոքր Ասիա, վարազ, այծեաւ, հիպոյծեաւ, եղնիկ, յանոր, վիթ, այծ, այծմաղ, կիսէշ, կուղբ, ջրաղուս, կուզ, առւար=սամսար և ուրիշ մուշտակաւոր փոքր անասուններ ամէն կողմ, կապիկ (Արաբիա), ջրաձիս (Ասորիք) և այլն:

Բ. Ճարտարարուեստ

Օսմանեան Կայսրութեան մէջ չատ քիչ ծաղկած է ճարտարարուեստը գլխաւորապէս զբաղմունքի ու հաղորդակցութեան միջոցներու չգոյութենէն:

1. Արտաճանապարհ ճարտարարուեստ. — *Օսմանեան Կայսրութեան մէջ թէև նշանաւոր հանքային հարստութիւններ կան, բայց մեծ մասամբ չատ դէշ չահագործուած են: Հանճարեղն որ առաւօտեան կը գտնուի Փոքր Ասիա, Արեւմտեան Հայաստան ու Մակեդոնիա, միայն գլխաւորապէս կը չահագործուի Էրէյլիի մէջ (Սեւ ծով): Ծովախորխոր՝ էսկի Շէհիր ու ոսկեքորդար=պղտասիպ՝ Սուլթան Չայիր, աղ, մանիկեզ, frոմ, երկաթ, արծաթախառն կապար, պղինձ, արծաթ՝ Փոքր Ասիա ու Հայաստան, մարմարիոն, յուսակիմ=սու մէրմէրի, յասպիս=եչիմ, տպազիոն, և այլն՝ Մակեդոնիա, Միջագետք ու Փոքր Ասիա, ֆարիւղ, նաւթ, կուպր՝ Միջագետքի ու Մեռեալ ծովու եզերքը, հանքային ջուրեր ու ջերմուկներ՝ գրեթէ ամէն տեղ, մանաւանդ Խիւսաւելենտիկեաի մէջ:*

2. Սննդական ճարտարարուեստ. — *Օսմանեան Սննդական ճարտարարուեստի գլխաւորներն են. 1. Աղօրիք որ հետզհետէ կը զարգանայ և չոգեշարժ ջաղացքները ծանօթ են ծովեզերեայ քաղաքներու մէջ: 2. Ձիթհանութիւն, գլխաւորապէս ձէթի ու չուշմայի: 3. Հացագործութիւն, բանջակ ու ալիւր=պահածոյ ուտեստ, պտուղ, բանջարեղէն, ձկնեղէն: 4. Պանրագործութիւն, իղազործութիւն: 5. Ծաղարարութիւն: 6. Ջսագործարան, որ կը հայթայթէ օղի ու գարեջուր:*

3. Հիւսուածոյ ճարտարարուեստ. — *Հիւսուածոյ ճարտարարութեան ամէնէն նշանաւորն է: Մեսամսեղինեներ՝ զուտ կամ ոսկեձուլուկ ու արծաթաճամուկ, Բանբակեղէն, Բոդեղէն՝ ամէն*

կողմ, բայց մանաւանդ Պրուսա, Հալէպ, Շամ, Պաղտատ, Էսքիշէ, ասեղնագործութիւն Կ. Պոլիս ու Հայաստան, անձեռոց, ղենջակ՝ Սելանիկ և այլն, Գորգ՝ Փոքր Ասիա ու Հայաստան, թաղիք՝ գրեթէ ամէն կողմ:

4. Շինուածքի ու կառասիի ճարտարարուեստ. — *Նիւթնագործութիւնը ծաղկած է Անատոլ, յախճապակին՝ Բէօթահիա, ճարտարիւութիւնը՝ Կ. Պոլիս, Իզմիր, և այլն:*

5. Քիմիական ճարտարարուեստ. — *Բուսագործութիւն, ջրաներկ, կիսուածանիւր՝ ամէն կողմ, օճառագործութիւն՝ ծովեզերեայ կուսակալութիւններ ու կղզիներ:*

6. Զանազան ճարտարարուեստներ. — *Հանրիչ, մանեակներ, օղ, ոսկերչական գործեր և այլն:*

Գ. Վաճառականութիւն

Թուրքիոյ ներքին վաճառականութիւնն անշնչան է փոխադրութեանց դժուարութեան պատճառաւ: Ներքին վաճառականութիւնը տեղի կ'ունենայ ծովեզերեայ տեղերու մէջ:

1. Արտահանում. — *Օսմանեան Կայսրութիւնը կ'արտահանէ նախնական նիւթեր ու հողագործական բերքեր — արմաւ, պտուղ, ընդեղէն, իւղալից կորեկ, գինի, չամիչ, խաշոաէ, մամ, մեղր, ափիոն, ոսոն, գիսաւր, զարան, խոզակ, բամբակ, բուրդ, գորգ, ծխախոտ, ձար:*

2. Ներածում. — *Կը ներմուծէ գլխաւորապէս գաղթային բերքեր, գինի, ոգելից ըմպելի, հիւսուածեղէն, փերեզակի ապրանք, զգեստեղէն, կտաւեղէն, կարասիք, Բարիզեան զարդեղէններ, մեքենայ, մանր երկաթեղէն և այլն:*

Արտահանումն ու ներածումը գլխաւորապէս օսար չոգենաւներով տեղի կ'ունենան:

3. Հաղորդակցութեան միջոցներ. — *Հաղորդակցութեան մեջոցներու չգոյութիւնն ու անկանոնութիւնն են միակ արգելք վաճառականութեան, մանաւանդ ներքին վաճառականութեան զարգացման:*

Խճուղիները չատ քիչ են, բայ ի գլխաւոր քաղաքներէ, անոնք ալ՝ խղճալի վիճակի մէջ: Երկաթուղին ալ այնչափ զարգացած չէ. Փոքր Ասիոյ Արեւելեան երկրամասը, Հայաստան, Միջագետք գրկուած են երկաթուղիէ:

Միայն հետեւեալ տեղերը կան երկաթուղի.

1. Կ. Պոլիս-Էսքիրնի-Մուդաֆա բաշա (356 քլմ.):

2. Տիմոթեա—Տեսէ Ադամ (99 քլմ.):

3. Տեսէ Ադամ—Սեզանիկ (444 քլմ.):

4. Սեզանիկ—Սկիւպ—Միթրովիցա (329 քլմ.):

5. Սեզանիկ—Մանաստր (219 քլմ.):

6. Իզմիր—Տիմեր—Զիվրիզ (515 քլմ.):

7. Իզմիր — Աշաշեհիր — Ափիոն Գարահիսար (420 քլմ.):

8. Հայտար Բաշա—Էսքիշեհիր (315 քլմ.):

9. Էսքիշեհիր—Էնկիւրիւ (263 քլմ.):

10. Էսքիշեհիր—Գոնիա (435 քլմ.):

11. Մուտանիա—Պրուսա (42 քլմ.):

12. Պէյրուդ—Շամ—Համա (405 քլմ.):

13. Շամ—Հիմազ—Եւհեն (գետ ուսարատած չէ):

14. Եաֆա—Երուսաղէմ (100 քլմ.):

15. Մերսին—Ատանա (69 քլմ.):

Օսմանեան Կայսրութեան գազանները, սանճաքները, կուսակալութեանց կեդրոնները կապուած են պրպատարով ու հեռագրով:

Թղթատարութիւնը տեղի կ'ունենայ չոգենաւով, չոգեկառքով, սուրհանդակով (կառքով կամ ձիով) և քանի մը տեղեր ալ ուղտերով: Քանի մը վաճառաշահ քաղաքներու մէջ օսար նամակատուներ կան:

ԱՄՓՈՓՈՒՄ

Թուրքիոյ գլխաւոր հարստութիւնը կը կազմէ...— Բարերեր չեն... — Հողագործութիւնը ծաղկած է... — Հողագործութեան յետամնաց վիճակին պատճառներն են... — Ասիական Թուրքիա կ'արտադրէ... արմտիքները. — ... կ'արտադրեն ընտիր գինի. — Պտղատու ծառերն են... — Կաղին յաւաջ կ'ուգայ... — Շագանակ... — Ծովեզերքը յաւաջ կուգան... — Աւելի տաք տեղերու յատուկ են... — Օսմանեան Կայսրութեան ընդեղէններն են... — Հիւսելի տունկերը... — Իւղալից տունկերը... — Ներկագործական տունկերը... — Վարդենին յաւաջ կուգայ... — Խնկեղէն... — Համեմներն են... — Բուժիչ տունկերն են... — Ընտիր ծխախոտ կը գտնուի... — Մարգագետինները կը գտնուին ... — Անտառի ծառերն են... — Թթենի կը գտնուի... — Միջագետքի բնիկ բերքերն են.... — Ասորիքի... — Փոքր Ասիոյ... — Հայաստանի... — Ցարգի մերը կը գտնուին... — Նշանաւոր էշերը կը գտնուին... — Գոմէշ կը գտնուի... — Ոչխարը... — Ուղտաբուծութիւնը ծաղկած է... — Վայրի անասուններն են... — Շնագայլ կը գտնուի... — Առիւծ ... — Փոքր Ասիոյ մէջ... — Կապիկ... — Ջրաքիս... —

Մուշտակաւոր կենդանիներ… — Հանրածուխ… — Ծովափրփուր… — Փորր Ասիոյ ու Հայաստանի մէջ… — Մակեդեռնիոյ, Փորր Ասիոյ ու Միջագետքի մէջ… — Միջագետքի մէջ… — Հանքային ջուր ու ջերմուկ… — Աղօրիքը ծանօթ է… — Զիթահանութիւնը… — Միւս ճարտարարուեստներն են… — Հիւսուածոյ ճարտարարուեստը կը կազմեն… եւ ծաղկած են… — Գորգը… — Կ. Պոլսոյ ու Իզմիրի մէջ… — Ծովեզերեայ կուսակալութեանց ու կղզիներուն մէջ… — Օսմանեան Կայսրութիւնը կ'արտահանէ… — Կը ներմուծէ… — Օսմանեան կայսրութեան երկաթուղիներն են Եւրոպական Թուրքիոյ մէջ… — Փորր Ասիոյ մէջ … — Ասորիքի մէջ… եւ չկան… երկրամասերուն մէջ։

Ե. ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Օսմանեան Կայսրութիւնն Եւրոպական Թուրքիոյ մէջ ունի 7 կուսակալութիւն — Կ. Պոլիս, Էտիրնէ, Եանիա, Գոսովա, Մանաստր, Սելանիկ ու Շգոտրա։

Ասիական Թուրքիոյ մէջ՝ Այդըն, Ասանա, Արթիպեղագոս, Գաստեմունի, Գոնիա, Տրապիզոն, Եւհի, Էրզրում, Էնկիւրի, Հաւկայ, Հիմազ, Մամուրեդ-իւլ-Ազիզ, Մոռսուլ, Պաղտաս, Պասրա, Պէյրութ, Պիթլիս, Պրուսա, Սուրիա, Սիվաս, Վան, Տիարպէքիր։

Ափրիկէի մէջ՝ Ղարպ Դարապրուա ու Պենկազի նահանգը։

Ա. ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱ

1. Կ. ՊՈԼԻՍ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ

(Վերատեսութիւն)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — Կ. Պոլիս կուսակալութիւնը կը պարունակէ Կ. Պոլիս Քաղաքապետութիւնը։

Կլիման առողջ ու մեղմ է, թէև քիչ մը սաստ։

Ճարտարարուեստը բաղդատմամբ նուազ զարգացած է, կը պարունակէ մետաքսեայ ամիճ, ազօրիք, զառման, ալիւս, կղմինտր, նաւ, և այլն։ Կ'արտահանէ արմաւիք, իւղալից հատիկ, ձէթ, ափիոն, մոմոչ, մետաքս, բուրդ, գորգ, տորթ, և այլն։ Կը ներմուծէ չաքար, խոհուէ, ոգելից ըմպելիք, գրասա, բրդեղէն, բամբակեղէն, գեղեցիկ տեղէն, մետաղ, մետաքս, գոհարեղէն, ապակեղէն։

2. ԹԱՂԱՊԵՏԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ. — Կ. Պոլիս իր շրջակայներով բաժնուած է 10 Թաղապետական շրջանակի և իր յարակից տեղերն են. Եւրոպայի մէջ՝ Բիւյիւք Ճեքմեճէ, Ասիոյ մէջ՝ Իշիաևաց կղզիները, Կեպզէ, Պէյզոզ, Գարդալ ու Շիլէ։

3. Կ. ՊՈԼԻՍ Քաղաքապետութիւնը բաժնուած է երեք սանճագի. Սղտևսղոյ, Սկիւտար, Բերա։

4. Կ. ՊՈԼԻՍ՝ մայրաքաղաք Օսմանեան Կայսրութեան, կը բարձրանայ 7 բլուրներու վրայ Մարմարայի ու Ոսկեղջիւրի եղերքը։

ՈՒՐՈՑՆ ՍԱՆՃԱԳՆԵՐ

1. Զադալճա սանճագ (*)

1. Զադալճա *սանճագը կը տարածուի Մարմարայի հիւսիսային կողմը, Էտիրնէի ու Կ. Պոլիս սանճագին միջև։*

2. *Բնակիչներուն մեծ մասը Յոյն ու Թուրք է։*

3. *Գլխաւոր արտադրութիւններն են արմաւիք, պտուղ, հիւսեղի, ներկագործական ու հարեւանային տուներ և մածուն։*

Կը բաժնուի 3 գաւառի.

1. Զաթալճա = Մեդրա կ'արտադրէ գինի, արմաւիք։ 2. Սիլիվրի=Սելիւկրիա՝ նաւահանգիստ, նշանաւոր իր մածունով։ 3. Պէօյիւք Ճեքմեճէ՝ նաւահանգիստ։

2. Իզմիս սանճագ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — *Իզմիս=Թռիա եղի սանճագը կը գտնուի Մարմարայի արեւելեան կողմը, Սև ծովու, Դարդանէլի ու Խիւտավէնտիկեարի միջև։*

Գլխաւոր արտադրութիւններն են. արմաւիք, պտուղ, կաճեի, վուշ, շուշայ, գեհենախնձոր, թամբակ, ափիոն, ծխախոտ, և այլն։ Կ'ղկի ու Ստա Բազար գազանեղէն ունին անուան։ Կան մանկանէղի, կերի, գաճի հանքեր և չչահագործուած հանքածուխ, պղինձ, արծաթախառն կապար։

Գլխաւոր ճարտարարուեստներն են ոդոցպատրաստները, աղօրիները, խաղախորդպատրաստները, գիէսի, չուխայի, կտաւի գործարանները։ Ալիւսագործարանները թիւնը բաւական չահաւէտ է։

2. ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄ. — *Իզմիս սանճագի գլխաւոր տեղերն են.*

1. Իզմիս=Նիկոմիդիա՝ համանուն ծոցին եղերքը, գեղեցիկ գիւղով, բարձրաւանդակի մը վրայ, կեդրոն սանճագին, երկաթուղիով կապուած Հայտար Բաշայի, Էսկիւտարի ու Գոնիայի հետ։ Կ'արտահանէ գինի. նշանաւոր է նաւահանգիստ։ 2. Ստա Բազար՝ արմաւիք, կորեկ, խաղող, ծխախոտ, գեհենախնձոր և այլն։ 3. Սաբանճա՝ հողագործական կեդրոն։ 4. Եալովա՝ ջերմուկներ։ 5. Գալեհէր՝ հողագործական կեդրոն։ 6. Կէյվէ=Sոsեռն։ 7. Սապանճեկ՝ չուխայի գործարան։ 8. Պարտիզակ՝ խաղող, ծխախոտ, գինի։ 9. Արուաշ, հոս է Կ. Պոլսոյ Պաարխարքութեան Դպրեվանքը։

3. Պիղա սանճագ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — *Պիղա սանճագը Փորր Ասիոյ հիւսիսային արեւմտեան ծայրը՝ կը գտնուի Մարմարայի, Խիւտավէնտիկեարի, Էմէնիճի ծոցին, Արքիպեղագոսի ու Տարանդէլի նեղուցին միջև։*

Գլխաւոր արտադրութիւններն են. արմաւիք, ընդեղէն, շուշայ, պտուղ, ծխախոտ, և այլն։ Ջուրանց հագուրդ հանքերն են ածիւ (Անգլիա), արծաթախառն կապար ու պղինձ (Լաւրիոն), քրոմ, մանգանէզ, ծծումբ, նաև բազմաթիւ ջերմուկներ ու հանքային ջրեր։ Ճարտարարուեստն ոչ այնչափ զարգացած, առեղծագործութիւն, խաղախորդպատրան, բրուտագործութիւն ու օճառագործութիւն։ Վաճառականութիւնը հաղորդակցութեան դժուարութիւնէն միայն քիչ մը բանուկ է նաւահանգիստներուն մէջ։

2. ԳԼԽԱՒՈՐ ՏԵՂԵՐ. — *Պիղա սանճագը կը պարունակէ բազմաթիւ քաղաքներ որ երբեմն նշանաւոր էին։*

1. Տարսանէլ=Գալիի Սուլթանիէ՝ Տարսանոսի, Ալեքսոսի ու Ոսկերբերանի ուխտաւորներուն ծոցերը. նշանաւոր բերդաքաղաք, սանճագին կեդրոնը. հռչակաւոր է բրուտագործութիւնը, սակէ առած է իր «Զանազ գալէ» անունը։ 2. Պիղա=Պեկէ՝ մեծ ծովեզերեայ, նշանաւոր 1240ի ճակատամարտով ուր տղայ ունեցաւ Թաթար Ճէլալէտտին Մանկուբուրնեայ ու Գոնիոյի Սելճուգեան Ալաէտտին Քէյքուբատ սուլթանին միջև։ 3. Լափսաքի=Լամփսաք՝ նաւահանգիստ, ունի պինդ, սեխ։ 4. Էզիներ՝ Նէանդրիայի մօտ, հողագործ ու ճարտարարուեստ գիւղաքաղաք։ 5. Պայրամիչ՝ հողագործական, ճարտարարուեստ ու առեւտրական կեդրոն։ 6. Գուլ գալէ, Սիկեոնի մօտերը ամրոց՝ զոր Ֆաթիհ Սուլթան Մեհէմմէտ Բ. կառոյց։ 7. Հիսարլըզ՝ հին Տրոյիոյ աւերակներուն մօտ։

2. ԷՏԻՐՆԷ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — Էտիրնէ կուսակալութիւնը կը տարածուի Սև ծովու, Մարմարայի, Սելանիկի ու Բուլկարիի միջև և կը պարունակէ հին Թրակիոյ մէկ մասը։

Մեծ մասամբ Իսլամ են (Թուրք, Թաթար, Ալպանացի) և Յոյն։ Փոքրամասնութիւն են Պուլկարները, Հայերն ու Հրեաները։

Կլիման ձմեռը խիստ, ամառը տաք, բայց ցրեկուան մեծ մասը մեղմ և զով հով մը կը փչէ։ Հողը բարեբեր է ու լաւ մշակուած։ Կ'արտադրէ արմաւիք, գինի, ընդեղէն, ձիրեւնի, պտուղներ ու ծաղիկներ։ Լեռները թաւուտ են։ Մանաւանդ Էսկերասեղէն ու տուրի ճարտարարուեստը զարգացած է։ Ներհին վաճառականութիւնը հաղորդակցութեան դժուարութիւնէն քիչ բանուկ է։ կը ներմուծէ գաղթային բերքեր ու տարազագործուած ապրանքներ։ Կ'արտահանէ վարդի խէ, գինի, մեղր, մոմ, արմաւիք, ձէթ, ձմերուկ, սեխ, բամբակ, և այլն։

2. ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄ. — *Էտիրնէ կուսակալութիւնը կը բաժնուի 6 սանճագի. Էտիրնէ ու Գըրգ Քիլիսէ՝ հիւսիսային կողմը, Թեքիրտաղ՝ արեւելեան կողմը, Կեհիպղու և Տհտհ Ադամ՝ հարաւային կողմը, Կիւմիւլճինէ՝ արեւմտեան կողմը։*

Գլխաւոր հաղաքներ. — Ա. Էտիրնէ սանճագի մէջ.

1. Էտիրնէ=Ադրիանուպոլիս՝ համանուն կուսակալութեան ու սանճագին կեդրոնը, մեծ քա-

(*) Զաթալճայի ու Իզմիթի աշխարհագրութիւնները տես էջ 52։

զաք Մարիամայի ու Դունճայի գեսախառնուածը, երբեմն (1366—1453) *մայրաքաղաք Օսմանեան կայսրութեան, ունի գեղեցիկ մզկիթներ, մանաւանդ Սելիմ Բ.ինը, պատնէշներու և կայսերական պալատներու աւերակներ, խաղախորդարան, ընդարձակ չուկայ և հողագործական տրապզոնեան բանուկ առեւտուր: — 2. Մուսթաֆա-Բաշա՝ Մարիամայի եղերքը, ունի գեղեցիկ կամուրջ, մաքրանոց: — 3. Հաւզա՝ առեւտրական կեդրոն: 4. Ուզուն Քեօփրի՝ էրկէնխուի եղերքը, առեւտրական քաղաք:*

Բ. Գրզ Քիլիսեի մէջ.

1. Գրզ Քիլիսե՝ ամճագին կեդրոն, ունի դիմի ու գեղեցիկ մզկիթներ: — 2. Սկոպոս՝ ունի դիմի: — 3. Պազիլիգոյ, Աղաբոպոլի ու Միհիա՝ նաւահանգիստներ Սև ծովուն եղերքը:

Գ. Թեֆիրտաղի մէջ.

1. Թեֆիրտաղ=Ռոտոսթոյ՝ ամճագին կեդրոն, Մարմարայի եղերքը նշանաւոր նաւահանգիստ կ'արտահանէ արմաւիք ու բուրդ: — 2. Էրէդլի=Հերակլիա՝ Մարմարայի եղերքը, հին Պերինթոս: — 8. Զորլու=Տիւրուկ՝ առեւտրական քաղաք: — 4. Մալկարա՝ հողագործական քաղաք:

Դ. Կելիպոլուի մէջ.

1. Կելիպոլու=Կալիուպոլիս՝ կեդրոն, բերդաքաղաք ու վաճառաչահ Տարտանէլի եղերքը, կ'արտահանէ մեռաքս, բուրդ, մորթ, կորեկահատ, քիմոխա=սախկան: Օսմանցւոց առաջին ատացուածքն է 1356ին Եւրոպայի մէջ: — 2. Քեշան=Խարիսպոլիս՝ բարեբեր դաշտի մէջ: 3. Բերիպերի՝ Մարմարայի եղերքը փոքր նաւահանգիստ:

Ե. Տեսէ Աղաճի մէջ.

1. Տեսէ Աղաճ՝ կեդրոն, բերդաքաղաք ու նաւահանգիստ Արքիպելագոսի եղերքը, ունի աղած ձուկի ու արմաւիքի առեւտուր: — 2. Էնոս=Ասպիւնթոս՝ աննշան նաւահանգիստ Մարմարայի գեսաքերանը. մօտերը կը գտնուին Տրայանուպոլոյ աւերակները: —3. Ֆերեմիճ=Փերոմ՝ հողագործական կեդրոն:

Զ. Կիւմիւլճինայի մէջ.

1. Կիւմիւլճինա՝ Թարլըգ տաղի ստորոտը վաճառաչահ քաղաք: — 2. Մարոնիա՝ Արքիպելագոսի եղերքին առեւտրական կեդրոն: — 3. Խեչէ=Քաւալի՝ գեղեցիկ հովտի մը մէջ, նշանաւոր է ծխախոտը: — 4. Ենիճէ, նշանաւոր է ծխախոտը: — 5. Մագրի՝ հողագործական կեդրոն

3. ՍԵԼԱՆԻԿ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — Սելանիկ կուսակալութիւնը կը գտնուի հին Մակեդոնիոյ մէջ, Թոսովայի, Պուլկարիոյ, Էպիրնէի, Արքիպելագոսի ու Մանասդրի միջև:

Բնակիչներն են Իսլամ, Յոյն, Պուլկար, Սերվ, Հրեայ և այլն:

Երկիրը կը պարունակէ հովիտներ ու բարեբեր դաշտեր, ուր կը մշակուին արմտիք, եգիպտացորեն, բրինձ, ձիթենի, ծխախոտ, բամբակ, որթատունկ, ընդեղէն ու պտուղներ: Լեռները ծածկուած են գեղեցիկ անտառներով:

Բամբակեղէն, բեւռնխս, մետաղագործութիւն ճարտարարուեստները ծաղկած են: Կ'արտադրէ կաշի, ծխախոտ, արմաւիք, ընդեղէն. կը ներմուծէ տարազագործական ապրանք, գաղթային բերքեր, ոգելից ըմպելիք և այլն: Հաղորդակցութեան միջոցները բաղդատմամբ լաւ են. երկաթուղին կ'երկարի Սելանիկ—Միտրովիձա, Սելանիկ—Մանաստր, Սելանիկ—Տեսէ Աղաճ:

2. ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄ. — *Սելանիկ կուսակալութիւնը կը բաժնուի երեք ամճագի. Սելանիկ, Սերեզ, Տրամա:*

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐ. — Սելանիկի մէջ.

1. Սելանիկ=Թեսաղոնիկէ՝ ճարտարարուեստ ու վաճառաչահ քաղաք համանուն ծոցին եղերքը, կ. Պոլսէն ետք Եւրոպական Թուրքիոյ ամէնէն կարեւոր նաւահանգիստը. բնակիչներուն մեծ մասը Հրեայ: Ունի գեղեցիկ մզկիթներ, յաղթական կամարներ, գեղեղներ, և այլն: — 2. Նիազուսա՝ գիմի, ազօրիք, բամբակեղէն: — 3. Գարա Ճերհիսա=Բերիէ՝ չուխայի գործարան: — 4. Ենիճէ Վարսար՝ Մակեդոնիոյ հին մայրաքաղաք Պելայի աւերակներուն մօտերը: — 5. Վոտինա=Էգէ, Եղեսա՝ Մակեդոնիոյ թագաւորներուն դամբարանը: — 6. Տոիրան=Տոիրոս՝ համանուն դամբարանը: — 7. Կէրվէշի՝ Վարարի եղերքը, չերամաբուծական կեդրոն: — 8. Սդրումիձա=Տիբերոպոլիս՝ չերմուկներ:

Այս ամճագին կցուած է Աբոս թերակղզին ուր կը բնակին Յոյն, Ռուս, Սերվ ու Պուլկար բազմաթիւ վանականներ: Աթոսի կեդրոնն է Գարեխ գեղը՝ երկրին կառավարչանիստը:

Բ. Սերեզի մէջ.

1. Սերեզ՝ կեդրոն, հողագործական ու ճարտարարուեստական քաղաք: — 2. Նեւռոկոպ՝ վաճառաչահ քաղաք: — 3. Տեմիր Հիսար՝ երկաթ: — 4. Մեհեմիճ՝ գիմի: — 5. Ճուումա՝ Ջերմուկներ:

Գ. Տրամայի մէջ.

1. Տրամա՝ կեդրոն, վաճառաչահ քաղաք բարերեր դաշտի մէջ: — 2. Գաւաչա=Խրիսոպոլիս՝ համանուն ծոցին խորը, Դաւոսի աւերակներուն մօտ: — 3. Սարը Շապան, նշանաւոր է ծխախոտը:

4. ՄԱՆԱՍԴՐ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — *Մանասդր կուսակալութիւնը կը տարածուի Սելանիկի արեւմտեան կողմը, Յունաստանի, Եանիսայի, Շգոտայի ու Թոսովայի միջև:*

Բնակիչներն են Իսլամ, Յոյն, Թուճոյ-Վլախ, Պուլկար, Հրեայ և այլն:

Կլիմայն լեռնային տեղեր ցուրտ, բայց դաշտաւանի մէջ՝ բարեխառն:

Գլխաւոր արտադրութիւնները են ցորեն, եգիպտացորեն, խզաձից հատիկներ, ընդեղէն, ձէթ, պտուղ, ծխախոտ, թթենի և այլն: Լեռներն անտառուտ են. երէն առատ է: Կաշին, ազօրիքը և գորգագործութիւնը ծաղկած են:

Կ'արտահանէ ծխախոտ, բամբակ, արմաւիք, կաշի, անտառ, չինուածապայտ, և կը ներմուծէ մետաղ, տարազագործուած ապրանք և այլն:

2. ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄ. — *Մանասդր կուսակալութիւնը կը բաժնուի 5 ամճագի. Մանասդր, Սերվիչէ, Կորիձա, Տիպրէ, Էլպասան:*

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐ. — Ա. Մանասդրի մէջ.

1. Մանասդր=Պիթոլիա՝ կեդրոն, զինուորական կարեւոր դիրքով, գեղեցիկ չուկայներով: Էմիրնէի, Սելանիկի, Սկիւպի և Տուրքաձոյի ճամբուն վրայ: — 2. Բեսնի՝ նշանաւոր 1908 Յունուարի 11ի մեծ յեղափոխութեամբ: — 3. Բիլիբ՝ զինուորական ամուր դիրքով, ունի ոճնաւաճառ: — 4. Օխրիտա=Լիխնիտոս՝ համանուն լճին եղերքը, վաճառաչահ քաղաք, Պուլկարական թագաւորութեան նախկին մայրաքաղաքը: Շրջակայները կան արծաթի, պղնձի ու ծծումբի հանքեր: — 5. Ցոլորինա՝ վաճառաչահ քաղաք: — 6. Բրեզդա՝ համանուն լճին եղերքը:

Բ. Սերճիչէի մէջ.

1. Սերճիչէ=Սերվիա՝ կեդրոն, վաճառաչահ քաղաք: — 2. Գոզանի: — 3. Էլասոնիա=Ղոմսու: — 4. Բեդրոս=Պիդնա:

Գ. Գորիձայի մէջ.

1. Գորիձա՝ կեդրոն, ճարտարարուեստ ու վաճառաչահ քաղաք: — 2. Բեարիէ=Բաւդորիա՝ համանուն (հին Հերիրոն) լճին եղերքը: — 3. Բիլեա=Պելհոն:

Դ. Տեպրէի մէջ.

Տեպրէ՝ կեդրոն, Տրինի եղերքը, վաճառաչահ ու ճարտարարուեստ քաղաք:

Ե. Էլպասանի մէջ.

Էլպասան=Ալպասլուպոլիս՝ Տուրքաձոյ—Օխրիտա ճամբուն վրայ, գեղեցիկ դաշտի մէջ, վաճառաչահ քաղաք:

5. ԳՈՍՈՎԱ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — Գոսովա կուսակալութիւնը կը տարածուի Սելանիկի ու Մանասդրի հիւսիսային կողմը, Գարաաղի, Պռանայի, Սերվիոյ ու Պուլկարիոյ միջև:

Բնակիչներն են Պուլկար, Սերվ, Յոյն ու Իսլամ, որոնք կ'զբաղին խաչնարածութեամբ: Ճարտարարուեստն ու վաճառականութիւնն անշան են:

2. ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄ. — Գոսովա կը բաժնուի 6 ամճագի. Սկիւպ, Բրիչդիւա, Ենի Պազար, Իբէ, Դաչդրամ, Բրեզրեւիս:

Գլխաւոր քաղաքներ.

1. Սկիւպ=Սկոպիա՝ կեդրոն, զինուորական դիրքով, Վարարի եղերքը, վաճառաչահ քաղաք: — 2. Բրիչդիւա՝ նշանաւոր մզկիթներով: — 3. Ենի Պազար: — 4. Իբէ՝ գեղեցիկ հովտի մը մէջ: — 5. Դաչդրամ՝ բերդաքաղաք: — 6. Բրեզրեւիս՝ Տրինի եղերքը, ամուր դիրքով, հին Ուլպիանոնի մօտերը, նշանաւոր են եկեղեցիները, մզկիթներն ու չուկան:

6. ԵԱՆԻԱ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — *Եանիա կուսակալութիւնը կը գրաւէ Եւրոպական Թուրքիոյ հարաւային արեւմտեան ծայրը։*

Բնակիչներն են Ալպանիացի, Յոյն, Գոռոյ Վլահ ու Սերվ։

Միայն ծովեզերեայ գաշտաւայրները բարեբեր են, ուր յառաջ կուգան ցորեն, ուրիչ արմտիք, խաղող, լիմոն, նարինջ, ձէթ, ծխախոտ, եւայլն։ Երկրին մէջ մասին մէջ կան ընդարձակ արօտավայրեր ուր կը բուծանին ընտիր գրաստներ, մանաւանդ ձիեր։ Ծովեզերքի ձկնորսութիւնը հասոյթի բաւական աղբիւր է։

Աղաքը միայն կը կազմէ իր ճարտարարուեստը։

2. ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄ. — *Եանիա կուսակալութիւնը կը բաժնուի 4 սանճաղի. Եանիա, Էրկերի, Պերադ, Բրեւեզա։*

Գլխաւոր խաղաքներ. — Ա. Եանեայի մէջ.

1. Եանեա=*Եւռոփա՝ կեդրոն, բերդաքաղաք համանուն լճին եզերքը, Եղիւսեան գաշտին մէջ։* — 2. *Մեձոլոյ՝ վաճառաշահ քաղաք։* — 3. *Այտոնաղ=Պարամիդիա։* — 4. *Լեսոովիճ՝ վաճառաշահ քաղաք։* — 5. *Գոնիձա՝ Վլոռայի գեղեցիկ հովտին մէջ։*

Բ. Էրկերիի մէջ.

1. Էրկերի=*Արկիւրիճ՝ Տրինի եզերքը, կեդրոն, վաճառաշահ քաղաք։* — 2. Դեպելին=*Անդիկոնիա՝ բերդաքաղաք։* — 3. *Տեղվինոյ՝ գեղեցիկ դիրքի մէջ։* — 4. *Բրեւեզի՝ Վլոռայի եզերքը։*

Գ. Պերադի մէջ.

1. Պերադ=*Պուլճերիպոլիս՝ կեդրոն, վաճառաշահ քաղաք։* — 2. *Աւղոնա՝ համանուն ծովին եզերքը, օդը վատառողջ։*

Դ. Բրեւեզայի մէջ.

1. Բրեւեզա՝ *Արգայի ծովին մէկ բազկին եզերքը, հին Ակտիոնի դիմաց, հին Նիկոպոլոյ մօտիկ։* — 2. *Բարկա՝ փոքր նաւահանգիստ։* — 3. *Մարկարիդի՝ ծովեզերքին մօտ։*

7. ՇԳՈՏՐԱ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — *Շգոտրա կուսակալութիւնը կը գտնուի Եւրոպական Թուրքիոյ արեւմտեան կողմը՝ Գարատաղի, Գոռովայի, Մանաստրի ու Եանիայի միջև։*

Երկիրը լեռնոտ է՝ ծածկուած անտառներով ու արօտավայրերով։ Ունի բարեբեր հովիտներ ուր կ'աճին ցորեն, որթատունկ, թթենի ու ձիթենի։

Բնակիչներն են Ալպանիացի, Յոյն, Սերվ որ կ'զբաղին խաչնարածութեամբ ու որսորդութեամբ։

Ճարտարարուեստը ծաղկած չէ, բայց ի Շգոտրայէն ուր կան գիմարաններ։ Կ'արտահանեն չինուածեան ու վառելու փայտ, խեցեղէն, մուշտակ, մորթ, և կը ներմուծեն մեռաղ, հիւսուածեղէն ու գաղթային բերքեր։

2. ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄ. — *Շգոտրա կուսակալութիւնը կը բաժնուի երկու սանճաղի. Շգոտրա ու Տուրածոյ։*

Գլխաւոր խաղաքներ. — Ա. Շգոտրայի մէջ.

1. Շգոտրա՝ *համանուն լճին եզերքը, կեդրոն, վաճառաշահ քաղաք, կ'արտածէ ձկնեղէն ու ղէնք։ Նշանաւոր է Ռազափա հին դղեակը։* — 2. *Լէշ=Լիսոս, Ալեսիոյ՝ նաւահանգիստ։ Հոս է Սքանտերպերկի դամբարանը։*

Բ. Տուրածոյի մէջ.

1. Տուրածոյ=*Տիւռաֆիոն՝ կեդրոն, նաւահանգիստ։* — *Դիւռաձիա՝ դղեցիկ քաղաք։* — 3. *Բոդյա=Ագիիսար՝ Մերթվիներու պահ Սքանտերպերկի մայրաքաղաքն որ երկար առեն դիմադրեց Օսմանցւոց։*

ԱՄՓՈՓՈՒՄ

Եւրոպական Թուրքիոյ կուսակալութիւնները են... — *Ասիական Թուրքիոյ կուսակալութիւնները են...* — *Կ. Պոլսոյ կուսակալութիւնը կը պարունակէ...* — *Ճարտարարուեստն են...* — *Կ'արտահանէ...* — *Կը ներմուծէ...* — *Կ. Պոլսոյ Թագաւորական շրջանակները են...* — *Ցարակից տերերն են...* — *Կ. Պոլիս Քաղաքապետութիւնը բաժնուած է... սանճաղներու.* — *Օսմանեան կայսրութեան մայրաքաղաքն է...* — *Զաղալճա սանճաղը կը տարածուի...* — *Բնակիչներն են...* — *Կ'արտադրէ...* — *Քաղաքներն են...* — *Նաւահանգիստներն են...* — *Իզմիտ=Դոճա Էլի սանճաղը կը գտնուի...* — *Կ'արտադրէ...* — *Անտառ կը գտնուի...* — *Հանքերն են...* — *Գլխաւոր ճարտարարուեստն են...* — *Քաղաքներն են...* — *Պիղա սանճաղը կը գտնուի...* — *Կ'արտադրէ...* — *Հանքերն են...* — *Ճարտարարուեստը կը կազմեն...* — *Քաղաքներն են...* — *Նաւահանգիստներն են...* — *Պատմական քաղաքներն են...* — *Էտիրնէ կուսակալութիւնը կը գտնուի...* — *Բնակիչներն են...* — *Կլիմայն...* — *Հողը կ'արտադրէ...* — *Զարգացած է... ճարտարարուեստը.* — *Կ'արտահանէ...* — *Կը ներմուծէ...* — *Էտիրնէ կուսակալութեան սանճաղներն են...* — *Էտիրնէ սանճաղի քաղաքներն են...* — *Գլրգ Քիլիսէի քաղաքներն են...* *Թեքիրտաղի...* — *Կելիպոլուի...* — *Տետէ Աղաճի...* — *Կիւքիրտաղի...* — *Էտիրնէ կուսակալութեան հին քաղաքներն են...* — *Միւլթինայի...* — *Էտիրնէ կուսակալութեան հին քաղաքներն են...* եւ *հիմայ...* կը *կոչուին...* — *Քաղաքներու ծայնաշրջուած, թրքացած անուններն են...* — *Երկաթուղիով կապուած են...* *քաղաքները.* — *Սելանիկ կուսակալութիւնը կը գտնուի...* — *Բնակիչներն են...* — *Կ'արտադրէ...* — *Ճարտարարուեստն են...* — *Կ'արտահանէ...* — *Կը ներմուծէ...* — *Սելանիկ սանճաղի քաղաքները.* — *Սելանիկ սանճաղի քաղաքները.* — *Սելանիկ սանճաղի քաղաքները.* — *Երկաթուղին կ'երկարի...* — *Սելանիկ կուսակալութիւնը կը բաժնուի... սանճաղներու.* — *Սելանիկ սանճաղի քաղաքներն են...* — *Նաւահանգիստն է...* — *Հին քաղաքներն են...* եւ *հիմայ կը կոչուին...* — *Քաղաքներու ծայնաշրջուած, թրքացած անուններն են...* — *Մանաստր կուսակալութիւնը կը գտնուի...* — *Բնակիչներն են...* — *Կլիմայն...* — *Կ'արտադրէ...* — *Ճարտարարուեստը կը կազմեն...* — *Կ'արտահանէ...* — *Կը ներմուծէ...* — *Մանաստր սանճաղի քաղաքներն են...* — *Քաղաքներու ծայնաշրջուած, թրքացած անուններն են...* — *Գոռովա կուսակալութիւնը կը գտնուի...* — *Բնակիչներն են...* — *Գոռովա կը բաժնուի... սանճաղներու.* — *Գոռովայի գլխաւոր քաղաքներն են...* — *Եանիա կուսակալութիւնը կը գտնուի...* — *Բարեբեր է... եւ յառաջ կուգան...* — *Արօտավայր է...* — *Ձկնորսութիւնը...* — *Ճարտարարուեստն է...* — *Եանիա կուսակալութիւնը կը բաժնուի... սանճաղներու.* — *Եանիա սանճաղի քաղաքներն են...* — *Էրկէրիի...* — *Պերադի...* — *Բրեւեզայի...* — *Հին քաղաքներն են... եւ հիմայ կը կոչուին...* — *Շգոտրա կուսակալութիւնը կը գտնուի...* — *Երկիրը...* — *Կ'արտադրէ...* — *Բնակիչներն են...* — *Ճարտարարուեստը... Կ'արտահանէ...* — *Կը ներմուծէ...* — *Շգոտրա կը բաժնուի... սանճաղներու.* — *Շգոտրա սանճաղի քաղաքներն են...* — *Տուրածոյի...* — *Հին քաղաքներն են...*

ՎԵՐԱՏԵՍՈՒԹԵԱՆ ԽՏԱՑԵԱԼ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Եւրոպական Թուրքիոյ մէջ ո՞ր կուսակալութիւնները ծով չեն տեսներ։ Որո՞նք ծովեզերեայ են։ Մարմարա գետն ո՞ր կուսակալութիւնը կը թրջէ և ո՞ր քաղաքներէն կ'անցնի, վարսո՞ր։ Տրի՞նը։ Սգրուձա՞ն։ Սգրուձիձա՞ն։ Որո՞նք են Եւրոպական Թուրքիոյ լիճերն և ո՞ր սանճագներուն մէջ կը գտնուին։ Էտիրնէ կուսակալութեան մէջ ո՞ր լեռները կան։ Սելանիկ։ Մանաստր՞։ Գոռովայի՞։ Շգոտրայի՞։ Որո՞նք են Եւրոպական Թուրքիոյ նաւահանգիստները, ո՞ր կուսակալութեան մէջ և ո՞ր ծովուն եզերքը կը գտնուին։

Ո՞ր նաւահանգիստներն երկաթուղւոյ կայարան են։ Եւրոպական Թուրքիոյ մէջ ո՞ր քաղաքներն երկաթուղիով կապուած են։ Ո՞ր քաղաքներն ամրութիւններ ունին։ Ո՞ր կուսակալութիւնը բաղդատմամբ ամէնէն բարեբերն է։ Ճարտարարուեստն ո՞ր կուսակալութեանց մէջ ծաղկած է։ Ո՞ր քաղաքները ճարտարարուեստ են։ Որո՞նք հողագործական քաղաքներ են և ի՞նչ կ'արտադրեն։ Որո՞նք են Եւրոպական Թուրքիոյ նշանաւոր քաղաքները։ Երկրորդականնե՞րը։ Որո՞նք են Եւրոպական Թուրքիոյ ամէնէն կարեւոր բերքերն և ո՞ր կուսակալութիւնները կ'արտադրեն։ Որո՞նք են Եւրոպական Թուրքիոյ ամէնէն կարեւոր ճարտարարուեստն և ո՞ր քաղաքներու մէջ ծաղկած են։ Ցոյներն ո՞ր կուսակալութեանց մէջ ցրուած են։ Պուլկարնե՞րը։ Սերվե՞րը։ Ալպանիացի՞ները։ Գուձոյ-Վլահնե՞րը։ Որո՞նք են Եւրոպական Թուրքիոյ Քրիստոնեայ եկեղեցիները։ Եանիա կուսակալութիւնը պատմական ո՞ր երկրին կը համապատասխանէ։ Շգոտրա՞ն։ Գոռովա՞ն։ Մանաստրը՞։ Սելանիկը՞։ Էտիրնէ՞ն։ Որո՞նք են Եւրոպական Թուրքիոյ պատմական քաղաքները։ Որո՞նք են հին քաղաքները, հիմայ ի՞նչ կը կոչուին և ո՞ր կը գտնուին։ Ո՞ր հին քաղաքներու անուններն ծայնաշրջուած, թրքացած են։ Այս հին քաղաքներէն պատմութեան մէջ որո՞նք ծանօթ են մեզի։ Որո՞նք են Եւրոպական Թուրքիոյ գեռեզերեայ քաղաքները։ Որո՞նք գեռեզերք ու ծովեզերք չեն։ Ո՞ր քաղաքները զօրաբանակի կեդրոն են։ Ո՞ր քաղաքները լեռնոտ տեղ են։ Դաշտի մէջ։ Ո՞ր քաղաքները Պուլկարիոյ սահմանագլխի մօտ են։ Սերվիո՞յ։ Հերսէք-Պոսնայի՞։ Թարատաղի՞։ Յունաստանի՞։ Ո՞ր կուսակալութեանց մէջ կը խօսուի Յունարէնը։ Սերվերէ՞նը։ Պուլկարերէ՞նը։ Ալպաներէ՞նը։ Րումաներէ՞նը։ Ո՞ր կուսակալութեան մէջ Հայեր կը գտնուին։ Որո՞նք են Եւրոպական Թուրքիոյ Հայկական քաղաքներն և ո՞ր առաքնորդութեանց թեմերը կը կազմեն։

Բ. ԱՍԻԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱ

Ա. ՓՈՔՐ ԱՍԻՈՑ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. ԽԻՏԱՎԵՆՏԻԿԵԱՆ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — *Խիւտավենտիկեան կուսակալութիւնը կը պարունակէ մեծ մասամբ նախնեաց Միւսիա, Բիւթանիա ու Փռիւգիա երկիրները։*

Կը գտնուի Իզմիտի, Մարմարայի, Էնկիւրիի, Գուիեայի, Էրեկլիի, Արքիպելագոսի ու Պոլսոյ մէջև։

Կլիմային այլազան է, բայց ընդհանրապէս բաւական ու առողջարար։

Արմտիք, ընդեղէն, եգիպտացորեն, իղոպից

հատիկներ, բրենի ու պտուղներ են գլխաւոր արտադրութիւնները:

Երկիրը հարուստ է հանքերով զոր սակայն չեն շահագործած: Պալըքեսիրի մօտ Պաղիայի հանքերը կ'արտադրեն հանրածուռի ու արծաթախառն կապար, Էրդողդուլ ու Քեօթահիա ամենազեղուն մէջ՝ fրոմ, Իակի Շեհիրի մօտերը՝ ծովափրփուր որ աչխարհի մէջ եզական է:

Ջերմուկներն ու հանքային ջուրերը բազմաթիւ են:

Մեսամսեղենները, գորգերը, կիտուածանկարը, աղիւսը, յախճապակին, ծովափրփուրի, գայլասպի գործուածքները, աղօրիքները, գինիի ու իւղի գործարանները են իր գլխաւոր ճարտարարուեստը:

Հաղորդակցութեան ճամբաները բաղդատմամբ լաւ են. վաճառականութիւնն ալ բաւական բանուկ է:

2. ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄ. — Խնամաւեռութիւնը կազմած է 5 գաւառի. Պուրսա, Էրդողդուլ, Քեօթահիա, Աֆիոն Գարահիսար, Գարասի:

Գլխաւոր քաղաքներ. — Ա. Պուրսայի մէջ.

1. Պուրսա՝ Քեչիշ տաղի ստորոտը, կեդրոն, երբեմն մայրաքաղաք (1326—1366) Օսմանցւոց. ունի մեծաքանակ գեղեցիկ յիշատակարաններ և չրկակուցքն ալ՝ բազմաթիւ ջերմուկներ: — 2. Կեմլեխիկ՝ համանուն ծոցին խորը նաւահանգիստ. կ'արտադրէ քրոմ, ունի նաւաշէն ու հին բերդ: — 3. Միխալըճ=Միխեոպոլիս՝ թթենի, որթատունկ, պտուղ: — 4. Ուղուպաս=Լուպատիոն՝ հին պարիսպներ: — 5. Մուտանիա=Միւդիա՝ կեմլեչիկի ծոցին եզերքը, Պրուսայի նաւահանգիստ. մեծաքանդէն, կաւ, իւղ, արմաւիք, պտուղ, խաղող: — 6. Քեռնադի՝ հին բերդաքաղաք: — 7. Ադրանոս՝ արմաւիք, պտուղ. ունի աւերակներ:

Բ. Էրդողդուլի մէջ.

1. Պիլեճիկ=Բելեկիա՝ կեդրոն, Գարա-Տերէի եզերքը, չերամաբուծութեան կեդրոն: — 2. Քեօքլի՝ չերամաբուծութիւն ու դանակագործութիւն: — 3. Լեփկի=Լոպկի՝ Սագարիայի եզերքը: — 4. Կեօղ Պազար՝ մեծաքա, ափիոն, ևայլն: — 5. Իննեկեօղ՝ անտառ, Ջիմլի կոչուած հանքային ջուր, Տոմանիճի քրոմ: — 6. Իզնիկ=Նիկիա՝ ունի հնութիւններ:

Գ. Քեօթահիոյ մէջ.

1. Քեօթահիա=Կոտիևա՝ կեդրոն, բերդաքաղաք, խեցեղէն, անկուած: — 2. Իակի Շեհիր=Դորիլեում՝ Բուբաղ չայի եզերքը, ունի ծովափրփուր, ափիոն, բուրդ: — 3. Ուշագ=Անկիւրիա՝ բուրդ ու գորգ: — 4. Սիւնաւ=Սիննաուս:

Դ. Աֆիոն-Գարահիսարի մէջ.

1. Աֆիոն-Գարահիսար=Սիւնադա՝ բարեբեր հովտի մը մուտքը, ունի ափիոն ու աւերակ բերդ: — 2. Պոլիատիճ=Պոլիբատոն՝ բարեբեր դաշտի մէջ: — 3. Սաւնըզլը: — 4. Տիւեր=Կղեւէ:

Ե. Գարասիի մէջ.

1. Պալըքեսիր՝ կեդրոն, ճարտարարուեստ ու վաճառաշահ քաղաք, բարեբեր դաշտի մէջ, ունի ծարիր: — 2. Այվալըգ=Կիդոնիա՝ Էորչմիսի ծոցին եզերքը, բաւական բանուկ նաւահանգիստ: — 3. Էյտեմիշ=Ադրամիւտիոն՝ իւղ ու գինի: — 4. Էյտեմիշ=Արտակ՝ Կիւղիկոսի աւերակներուն մօտ: — 5. Պանտըրմա=Պանորմոս՝ նաւահանգիստ, ճարտարարուեստ ու վաճառաշահ քաղաք: — 6. Այտընճըգ՝ հողագործական քաղաք: — 7. Մանիսա=Պեւանեւտա՝ հանք, մեծ ոճնավաճառ: — 8. Մարմարա կղզի=Պրոկոնես՝ մարմարիոն:

2. ԱՅՏԸՆ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — Այտընի կուսակալութիւնը կը գտնուի Փոքր Ասիոյ հարաւային արեւմտեան կողմը:

Բնակիչներն են Յոյն, Իսլամ, Հայ ու Հրեայ:

Կլիման ընդհանրապէս առողջ ու գեղեցիկ, թէև ամառը քիչ մը տաք:

Հողը շատ բարեբեր ու լաւ ոռոգուած է. հողագործութիւնը ծաղկած է: Կը մշակեն մանաւանդ արմաւիք, եղիպտացորեն, խաղող, կիտրոն, նարինջ, լիմոն, պտուղ, մեկոն, մաուտակ ու ձխակոտ: Բաւական ապրանքութեամբ անասուն ունի: Բազմաթիւ են ընտանի անասուններ — եզ, գոմէշ, էշ, ջորի, ուղտ, ոչխար, այծ, ևայլն: Հողը կը պարունակէ բաւական քանակութեամբ զմնդիկ, քրոմ, նիքել, ծարիր, հանքածուխ, ծծումբ ևայլն. նաև բազմաթիւ հանքային ջուրեր ու ջերմուկներ: Ծովեզերքը կայ ընտիր ազահանք: Ծաղկած են գորգագործութիւնը, բամբակեղէն, մետաքսեղէն ու կտաւեղէն գործուածքներն ու խաղախորդարանը: Մատուռակի պատրաստութիւնը կը գրաւէ կարեւոր տեղ մը: Կ'արտահանեն հողագործական ու ճարտարգործական արտադրութիւններ և կը ներմուծեն կերպասեղէն, մետաղ ու գաղթային բերքեր: Ուր որ երկաթուղի չկայ, փոխադրութիւնը կը կատարուի ուղտերու կարաւաններով:

2. ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄ. — Այտընի կուսակալութիւնը կը բաժնուի 5 ամնճապի. Իզմիր, Սարուխան, Այտընի, Տենիզլի, Մենթեշէ:

Գլխաւոր քաղաքներ. — Ա. Իզմիրի մէջ.

1. Իզմիր=Զմիւռնիա՝ կեդրոն, Կ. Պոլսէն ետք Թուրքիոյ ամենէն մեծ նաւահանգիստը, մեծ առք Թուրքիոյ ամենէն մեծ նաւահանգիստը, մեծ չհասուսան մետաքսի ու մետաքսեղէնի, պրօնի, նախշուն բնէղէնի, ածխանի, մոմոյի (խոզկողնի պաուիճ), գիսաորի, չամիչի, թուղի և մրգի: Ունի վայկուչ չուկայ, մեծամարքամ, վաճառատուն ծովեզերքը: Ջուկէա է երկաթուղւոյ ցանցերուն: Հայերն ունին Ս. Աստիանոս հոյակապ եկեղեցին, Ս. Մեսրոպեան ու Ս. Հոիփսիմեան վարժարանները ու Ազգային հիւանդանոց՝ կառուցած Սպարթալեանեներէ: — 2. Պերկամա՝ Աստալանց հարստութեան հին մայրաքաղաքը: Հոս գտնուած է մագաղաթը: — 3. Գարաճա Յոյիա=Փոկիա՝ Յունական գաղթականութիւն մը, նաւահանգիստ, ունի ամրութեանց աւերակներ: — 4. Եվի Գունի՝ նշանաւոր իր ագահանքով: — 5. Մենեմէն՝ վաճառաշահ քաղաք: — 6. Չեշմէ՝ բանուկ նաւահանգիստ, ունի հանքային ջուր: — 7. Սիվրի Հիսար. ասոր նաւահանգիստն է Սիղահիկ (հին Թէոս): — 8. Չիչի՝ կողմինի ու կարոսի աւերակներուն մօտ: — 9. Սկաբանոփա=Գուշ ասաղ՝ բանուկ նաւահանգիստ: — 10. Այա-Սուլուգ=Եփեսոս՝ հոյակապ աւերակներ: — 11. Թերկ՝ վաճառաշահ քաղաք: — 10. Պայանտըր՝ վաճառաշահ քաղաք՝ գեղեցիկ դիրքով:

Բ. Սարուխանի մէջ.

1. Մանիսա=Միպիլեան Մագնեսիա՝ կեդրոն, վաճառաշահ քաղաք բարեբեր դաշտի մէջ, գեղեցիկ մզկիթներով: — 2. Սոմա=Գերմա՝ հանքածուխ, աւերակներ: — 3. Գըրգ Աղաճ՝ բամբակ, սեխ, ևայլն: — 4. Ագ Հիսար=Թիւատիրոն՝ մշակուած դաշտի մէջ, բամբակ, բուրդ: — 5. Գասապա՝ ցորեն, բամբակ, չամիչ, միրգ: — 6. Կերտիզ՝ գորգ: — 7. Գուլա՝ հողագործական կեդրոն: — 8. Ազաշեհիր=Փիլատելֆիա՝ ճարտարարուեստ ու վաճառաշահ քաղաք՝ հիմնուած 140ին (Ն. Ք.), ունի աւերակներ ու հանքային ջուր:

Գ. Այտընի մէջ.

1. Այտըն=Կիւզել Հիսար=Տրալա՝ բարեբեր ու մշակուած դաշտի մէջ, վաճառաշահ ու ճարտարարուեստ. նշանաւոր են իր խաղախորդարանն ու ջուրհակութիւնը: — 2. Սեւրէ՝ հին Մեղեսի մօտերը: — 3. Գըր Օվա՝ հողագործական կեդրոն: — 4. Պոզտողան՝ հողագործական կեդրոն: — 5. Նազիլլի՝ Մէանդրի եզերքը, Նիսա՝ քաղքին աւերակներուն մօտ, հողագործական ու վաճառաշահ կեդրոն:

Դ. Տենիզլիի մէջ.

1. Տենիզլի՝ բերդաքաղաք բարեբեր դաշտի մը եզերքը: — 2. Քոնաս=Կոդոսես՝ ունի աւերակներ: — 3. Բանարմար Գաղեսի=Հիերապոլիս՝ ունի հանքային ջուրեր և ընդարձակ ու գեղեցիկ աւերակներ: — 4. Սարայ Քիոյ՝ վաճառաշահ ու ճարտարարուեստ քաղաք: — 5. Պուդասան՝ մետաքսեղէն ու բամբակեղէն հիւսուածքներ:

Ե. Մենթեշէի մէջ.

1. Մուղա=Ազիլոա՝ կեդրոն: — 2. Պոտրում=Հաղիլարանիս՝ նաւահանգիստ: — 3. Միլաս=Միլասա: — 4. Մարմարիս=Փեսինոս՝ նաւահանգիստ կիպրոսի աւերակներուն մօտիկ: — 5. Մագրի=Տեղիսոս՝ նաւահանգիստ, ունի աւերակներ: — 6. Կիւեօնկի=Քաւարոս=Ստոնա՝ հին բարեբեր քաղաքը, ունի հետաքրքրական աւերակներ:

3. ՃԵԶԱՅԻՐԸ ՊԱՇԻՐ ՍԵՖԻՏ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — Ճեզայիրը Պահրը Սեֆիս կուսակալութիւնը կը պարունակէ Արքիպելագոսի Օսմանեան կղզիները, բայց ի նակէ Արքիպելագոսի Օսմանեան կղզիները, բայց ի Թասոսէն ու Սամոթրակէէն որ Խորին կուսակալութեան մասն են և Սամոսէն որ ինքնօրէն գաւառ մըն է:

Բնակիչներն են Յոյն, Իսլամ ու Հրեայ:

Կլիման ընդհանրապէս մեղմ ու առողջ է:

Փոքր կղզիներէն մեծ մասը լերկ ժայռեր են, բայց մեծերուն մէջ կը գտնուին բարևրեր տեղեր ուր կը մշակեն արմտիք, ընդեղէն, մանաւանդ պտուղ (խաղող, ձիթենի, թզենի, նարինջ, լիմոն, և այլն)։ Կը շահագործեն Իմպրոսի ու Քիոսի ծարիրի հանքերը, և չատերուն մէջ ալ կայ մարմարիոն։

Սպունգի որսորդութիւնը, չաղացպանութիւնը, խաղախորդարանները, կղմնարոցները, նաւաշինութիւնը, ձիթահանումը, օճառագործութիւնը կը կազմեն իր ճարտարարուեստը։

Կ'արտահանեն սպունգ, աղկեր, հողագործական արտադրութիւններ և կը ներմուծէ մնացեր քերքեր, մեռաղներ ու տարազագործուած ապրանքներ։

2. ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄ. — *Ձեզայիրը պարբը Սեֆիա կուսակալութիւնը կը բաժնուի 4 սանճագի. Հոդոս, Քիոս, Միտիլլի ու Լեմնոս։*

Գլխաւոր քաղաքներ. — Ա. Հոդոսի մէջ.

1. Հոդոս=Բաստրդ՝ կիպրոս։ — 2. *Սիմնի՝ սպունգ։* — 3. *Բասոս ու Բարբարոս։* — 4. *Քոս։*

Բ. Քիոսի մէջ.

1. Քիոս=Սագրզ՝ *նշանաւոր նաւահանգիստ, ունի մաունտարան։*

Գ. Միտիլլիի մէջ.

1. Միտիլլի=*Միտիլենի՝ ճարտարարուեստ քաղաք ու վաճառաշահ նաւահանգիստ, ունի գեղեցիկ բերդ։*

Դ. Լեմնոսի մէջ.

1. Լեմնոս՝ *նաւահանգիստ։* — 2. *Իմպրոս՝ լեռնային կղզի։* — 3. *Դենեոս՝ գիւղ։*

4. ՍԱՄՈՍ ԿՂԶԻ

Սամոս կղզին (468 քմ.) *ընդօրէն իշխանութիւն մըն է 1832էն ի վեր։ Կը կառավարուի Սուլթանէն կարգուած իշխանէ մը ու Ծերակոյտէ մը զոր կ'ընտրեն բնակիչները։ Մայրաքաղաքն է Վաթի։*

Կլիման լաւ ու առողջ է։ Լեռները ծածկուած են չոճիով ու նոճիով։ Բայց է առատ ու մարմարիոն որ կղզւոյն գլխաւոր հարստութիւնը կը կազմեն՝ կ'արտադրէ արմտիք, ձէթ, մոմ, խաղող, Լայլն։ Կ'արտահանեն գինի, չամիչ, կաշի, ձէթ, եղջիւր, Լայլն։ Կը ներմուծէ տարազագործական ապրանք, ալիւր, ծխախոտ ու գաղթային բերքեր։

5. ԳՈՆԻԱ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — *Գոնիա կուսակալութիւնը Փոքր Ասիոյ հարաւակողմն է և կը տարածուի Միւսաւենտիկեարի, Էնկիւրիի, Ատանայի, Այտընի ու Մէնտերէսի մէջև։*

Բնակիչներն են Իսլամ, Յոյն, Հայ, Գնչու Լայն։

Երկրին հիւսիսային կողմը ցուրտ է, հարաւակողմն ալ՝ ընդհանրապէս բարեխառն։

Հողագործական զարգացման մեծ մրցում կը տրուի. կ'արտադրէ ցորեն, եգիպտացորեն, վուշ, ձէթ, ափիոն, ծխախոտ, բամբակ, թթենի, որթատունկ ու պտուղներ։

Կը շահագործուին Պուլկար Տաղի (Տիւրէ արեւմտեան կողմը) արծաթախառն ու ոսկեխառն կապարի հանքերը։ Թուղ Կէօլ լիճէն կը հանուին բաւական քանակութեամբ աղ։ Պուրսուր ու Ատավա սանճաղներն ունին գեղեցիկ անտառներ։ Կը բուծանեն ուղտ և զանազան գրասներ։ Գլխաւոր ճարտարարուեստը կը կազմեն գորգագործութիւն, փսիաթ, շիրիմ, անասնուխի իղ, Լայլն։ Կ'արտահանեն հողագործական բերքեր, մաուսակ, մոմոչ, աստղձ, բուրդ, մորթ, գորգ, Լայլն։ Կը ներմուծեն մեռաղներ, կերպասեղէն և անզգաբերքեր։

2. ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄ. — *Գոնիա կուսակալութիւնը կը բաժնուի 5 սանճագի. Գոնիա, Նիյտէ, Պուրսուր, Սպարդա, Ատալիա։*

Գլխաւոր քաղաքներ. — Ա. Գոնիայի մէջ.

1. Գոնիա=*Իկոնիոն՝ անջրդի դաշտի մը մէջ, Սելճուգեանց մայրաքաղաք, ճարտարարուեստ ու վաճառաշահ քաղաք, որուն Մեվլեվի ակերվիշներուն, ունի աւերակներ և կը գործէ գորգ ու բամբակեղէններ։* — 2. Գարաման՝ *վաճառաշահ կեդրոն։* — 3. Ագ-Շեհիր=*Տիւրհոն՝ հողագործական կեդրոն։*

Բ. Նիյտէի մէջ.

1. Նիյտէ՝ *կեդրոն, հողագործական ու վաճառական քաղաք. ունի Սելճուգեան հնութիւններ։* — 2. Քիլիսէ Հիսար=*Թոփանէ։* — 3. Նեվշեհիր՝ *վաճառաշահ քաղաք։* — 4. Իւրկիւպ=*Պրոհիր՝ վաճառաշահ քաղաք։* — 5. Ազգարայ=*Նազիանզոս=Արեզպոս։*

Գ. Պուրսուրի մէջ.

1. Պուրսուր՝ *նոր քաղաք մը, հին Պոլիսորիոնի աւերակներուն մօտ, այգեւէտ բլրի մը կողքը, ունի խաղախորդարան, քեմիատան ու բանուկ վաճառականութիւն։* — 2. Կեօղ Հիսար՝ *առեւտրական քաղաք։*

Դ. Սպարդայի մէջ.

1. Սպարդա՝ *կեդրոն, գեղեցիկ դիրքով, Տաւրոս Տաղի ստորոտը, վաճառաշահ կեդրոն։* — 2. Էյիրտիր, *համանուն լճին հարաւային արեւմտեան ծայրը, սիրուն քաղաք մը, վաճառաշահ կեդրոն։*

Ե. Ատալիոյ մէջ.

1. Ատալիա՝ *կեդրոն, աւազափոր նաւահանգիստ. ունի աւերակ բերդ ու հնութիւններ։* — 2. Էրլաղ՝ *հողագործական կեդրոն։* — 3. Ֆիլիբիա՝ *նաւահանգիստ. ունի աւերակներ։* — 4. Գաչ՝ *հողագործական կեդրոն։* — 5. Ազիա՝ *նաւահանգիստ. ունի աւերակներ, ինչպէս Ալիսիրլոյ ու Միրա։*

6. ԷՆԿԻՒՐԻԻ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — *Էնկիւրիւ կուսակալութիւնը կը գտնուի Փոքր Ասիոյ կեդրոնը՝ Գաշտեմունիի, Սվասի, Ատանայի, Գոնիոյ, Նիյտէ ու Խիւսավենտիկեարի միջև։*

Բնակիչներն են Իսլամ, Հայ և Յոյն։

Գլխաւոր արտադրութիւններն են ասիմիֆ, եգիպտացորեն, ընդեղէն, ըրիւնձ, բամբակ, ծխախոտ, ափիոն, դեղնիւաս=ճէնթրի, շուշմայ, պտուղ, գինի։

Առանաբուծութիւնը ծաղկած է. նշանաւոր են գանգրահեր այծերը, եզներ, գոմէշներ, հէշեր, ձիեր և ուղտեր։ Հողը կը պարունակէ պղնձի ու արծաթախառն կապարի հանքեր։ Հանիպոն ջուրերն առատ են։ Կը շահագործուին իր հային ջուրերն ալ։ Աղուձակներն ու աղի ճահիճները։

Ճարտարարուեստն ու վաճառականութիւնն ալ այնչափ բանուկ չեն։ Հաղորդակցութեան ճամբայ-

ները քիչ ու դէշ։ Միայն Էնկիւրիւ երկաթուղիով կապուած է Կ. Պոլսոյ հետ։

2. ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄ. — *Էնկիւրիւ կուսակալութիւնը կը բաժնուի 5 սանճագի. Էնկիւրիւ, Եոզկատ, Զորում, Գայսերի, Դըր Շեհիր։*

Գլխաւոր քաղաքներ. — Ա. Էնկիւրիւի մէջ.

1. Էնկիւրիւ=Անկիւրէ՝ *համանուն գետակին եզերքը, հին Գալատիոյ մայրաքաղաքը, վաճառաշահ ու ճարտարարուեստ քաղաք. ունի հետաքրքրական աւերակներ, հին ամրութիւններ ու նշանաւոր մզկիթներ։ Մօտն է Հայոց Ս. Աստուածածնի վանքը։* — 2. Ազաչ՝ *այծ ու ոչխար։* — 3. Սդաւնու՝ *վաճառաշահ քաղաք, ունի հետաքրքրական աւերակներ ու արուեստական քարայրներ։* — 4. Պէյ Պազար՝ *սեխ, չամիչ, տանձ, բրինձ։* — 5. Նալըխան=Յուլիոպոլիս՝ *բրինձ, մեկոն, չերամաբուծութիւն։* — 6. Միւրի Հիսար=Պեսինունտ՝ *հնութիւններ։*

Բ. Եոզկատի մէջ.

1. Եոզկատ՝ *կեդրոն, Եւրոպական ոճով, հիմնուած Ժ.Ը. դարուն. ունի գեղեցիկ մզկիթներ ու ընտիր պտուղներ։* — 2. Պողազկեան։ — 3. Մատկն։ — 4. Նեֆեզ Քեոյ=Տարիոն՝ *հնութիւններ։*

Գ. Զորումի մէջ.

1. Զորում՝ *կեդրոն, վաճառաշահ քաղաք։* — 2. Սունկուրլու՝ *պտուղ։* — 3. Գարա Վազար՝ *արծաթախառն կապար։* — 4. Պողազ-Քեոյ=Պտերիոն՝ *Քեզացի հնութիւններ, քանդակագործ ժայռեր։* — 5. Ուչոմ՝ *նոյն հնութիւնները։*

Դ. Գայսերիի մէջ.

1. Գայսերի=Կեսարիա=Մազազա, Եւսեբիա՝ *կեդրոն, Արգէոսի ստորոտը լեռնադաշտի մը վրայ, հին Կապադովկիոյ մայրաքաղաք. ունի հին ամրութիւններ, աւերակներ։ Ընդարձակ չուկայով վաճառաշահ քաղաք։ Շրջակայները կան Հայոց Ս. Կարապետ վանքը՝ Ժառանգաւորաց վարժարանով, ծիրանաքարի, լուսակիսի, կրանիպի, գաճի, աղտորակի քարահանքեր ու հանքածուխ։* — 2. Թալաս՝ *ճարտարարուեստ քաղաք։* — 3. Տեվրիկ Գարահիսար՝ *հին ամրութիւններ։* — 4. Ինճեհու՝ *գինի, արուեստակեալ քարայրներ։* — 5. Եւերեկ։

Կեսարիոյ սանճագին մէջ բաց ի Ս. Կարապե-

ան Հայ վանքերն են. Թոմարզայի Ս. Աստուածածին, Տերեվանքի Ս. Սարգիս, Նիրզէի Ս. Գրիգոր ու Պլեկէսի Ս. Դաւիթ:

Ե. Գրբ Շեհիր մէջ.

1. Գրբ Շեհիր՝ կեդրոն, հնութիւններ ունի, ծագած են գորգագործութիւնն ու համեստագործութիւնը: — 2. Տեհեմ Մատհի՝ գորգ: — 3. Մեծուր=Մոկեսու՝ գորգ:

7- ԳԱՍԴԵՄՈՒՆԻ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — Գասդեմունի կուսակալութիւնը կը գտնուի Փոքր Ասիոյ հիւսիսային կողմը՝ Սև ծովու, Դրապիզոնի, Սվասի, Էնկիւրիի ու Իզմիտի մէջև:

Ժողովուրդին մեծ մասն Իսլամ է:

Հողագործութիւնը բաւական ծագած է. կ'արտադրէ արմտիք, եգիպտացորեն, կորեկ, ընդեղէն, բրինձ, աիիոն, բամբակ, ծխախոտ, գազի խեժ, գիսոր, բթենի, պտուղ, մեղր, մեղրամոմ, գինի, բուրդ, պրօլ ու մորթ: Հողը կը պարունակէ չհանագործուած մանկանէզի, երկաթի, ևիմիկի ու արծաթախառն կապարի հանքեր: Ունի բազմաթիւ հանքային ջուրեր, մանաւանդ Պոլու սանճաղին մէջ, աղուճակ ու ազի աղբիւրներ: Երկրին $^3/_4$ մասը ծածկուած է անտառներով:

Համեստագործութիւնը, ևառաչինութիւնը, ատաղձագործութիւնը, աղիւսագործութիւնը, հիւսնութիւնը, գինագործութիւնը, ոսկեձուլուկ գործուածքները կը կազմեն իր ճարտարարուեստը:

Կ'արտահանէ ատաղձ, արմտիք և ուրիչ հողագործական բերքեր, գբաատ, մոլթ, բուրդ, հաւկիթ, մոմ, գիսոր եւայլն: Կը ևերմուծէ տարազագործուած ապրանքներ, կերպասեղէններ, մընդաթերք եւայլն:

2. ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄ. — Գասդեմունի կուսակալութիւնը կը բաժնուի 4 սանճաղի. Գասդեմունի, Պոլու, Ջանղրը, Սիևոպ:

Գլխաւոր fաղաքներ. — Ա. Գասդեմունի մէջ.

1. Գասդեմունի=Գերմանիկոպոլիս՝ կէօքըրմագի եզերքը, ճարտարարուեստ ու վաճառաշատ քաղաք. նշանաւոր են խազախորգարանները, պղնձագործութիւնը, նախշուն բամբակեղէնները, բրդեղէններն ու ներկագործութիւնը: Ունի նշանաւոր մզկիթներ: — 2. Իևեսպոլու=Իևոսպոլիս՝ Նաւահանգիստ, կ'արտածէ խոզակ ու տաղձ: — 3. Զաֆրանպոլու=Թհոսորոսպոլիս, նշանաւոր են խազախորգարանը, թթենին, քրքումը, մեղրամոմը=մոմը, կաչին, խոզակը: — 4. Դոսխա՝ որթատունկ: — 5. Դաշ Քեօրիւ=Եւսպատորիա, Պոնպհոսպոլիս՝ ընդարձակ ու գեղեցիկ գաշտի մը մէջ. ունի հնութիւններ:

Բ. Պոլուի մէջ.

1. Պոլու՝ կեդրոն, բարերար հոմի մը մէջ, Բիւթանիոնի աւերակներուն մօտ, գեղնատաք առուտուր ունի: — 2. Էրեյլի=Պոնտական Հերակլիա՝ նաւահանգիստ. ունի հանքածուխ: — 3. Պարդըն=Պարթենիոս՝ վաճառաշատ քաղաք. նաւահանգիստ է կիւզէհէ: — 4. Կերեսէ=Կրատիա Փլաւիոպոլիս՝ սքանչելի պղեստաններու մէջ, վաճառաշատ ու ճարտարարուեստ քաղաք: — 5. Տիւզմէ=Դուզոե՝ ունի պարէզներ ու հնութիւններ: — 6. Սգմէ Շեհիր՝ կ'արտադրէ նաւաստաբ: — 7. Սկիւպ՝ Հիւսիոնի աւերակներուն մօտիկ: — 8. Մուտուրլու=Մոտրէ Կոմերիս: — 9. Տեղերեկ՝ գեղեցիկ հոմի մը մէջ: — 10. Ամասրա=Ամաստրիս:

Գ. Ջանղրըի մէջ.

1, Ջանղրը=Գանգրա՝ կեդրոն, բլրակի մը վրայ, բարերար ու մշակուած գաշտի մը մէջ, ունի հին պարէզներ: — 2. Գոչ-Հիսար՝ հողագործական կեդրոն: — 3. Դումխէ՝ վաճառաշատ քաղաք: — 4. Զերիզ՝ գեղեցիկ հոմի մը մէջ: — 5. Վիրան Շեհիր=Անդրապա:

Դ. Սիևոպի մէջ.

1. Սիևոպ՝ կեդրոն, բերդաքաղաք, Պոնտոսի մայրաքաղաք, Միհրդատի հայրենիքը, բաւական վաճառաշատ նաւահանգիստ, նշանաւոր իր Թուրք եւ Ռուս նաւային ճակատամարտով (1853): — 2. Պոյասա՝ կուսակալութեան ամենէն բերրի գաշտին մէջ:

8. ԱՏԱՆԱ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — Ատանա կուսակալութիւնը (հին Կիլիկիոյ մեծ մասը) կը գտնուի Սվասի, Էնկիւրիի, Հալէպի, Միջերկրականի ու Թոնէյի միջև:

Կիլիկիոյ կոտորածէն (1 Ապրիլ, 1909) առաջ Հայերը մեծամասնութիւն էին իրը 220,000, միւս բնակիչներն են Իսլամ, Յոյն, Ասորի, Քաղդէացի:

Կլիմայն ընդհանրապէս բարեխառն ու գեղեցիկ է, թէև ամառը տաք: Հողը շատ բարերար ու լաւ մշակուած է: Կ'արտադրէ արմտիք, եգիպտացորեն, բամբակ, խաղող, ձեւնի, նարինջ, սոմոչ, մեկնի, մատուտակ ու ծխախոտ: Բազմաթիւ են ընտանի անասունները (ձի, գոմէշ, էշ, ջորի, ուղտ, ոչխար, այծ, եւայլն): Հանքային հարստութիւններն են զմնդիս, քրոմ, նիքէլ, ծարիր, հանքածուխ, ծծումբ եւայլն և բազմաթիւ ջերմուկներ ու հանքային ջուրեր: Ծովեզերքը աքանչելի ազկեր կ'ոլան: Դորգագործութիւնը, բամբակեղէնը, մետաքսեղէնը, կտաւեղէնները, կաշեղէնը, ջաղացպատութիւնը, ալոցարանները, խաղախորդարանները ու մասուտակի պարարտութիւնը կը կազմեն գլխաւոր ճարտարարուեստը:

Կ'արտահանէ հողագործական ու ճարտարարուեստական արտադրութիւններ: Կը ևերմուծէ մենդաքերքեր, կերպասեղէն, մետաքսեղէն եւայլն: Բայց ի Մերսին—Ատանա երկաթուղիէն՝ ներքին փոխադրութիւնը տակի կ'ունենայ ուղտերով:

2. ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄ. — Ատանա կուսակալութիւնը կը բաժնուի 5 սանճաղի. Ատանա, Մերսին, Իչիլ, Դոզանլը, Ճեպկէն Պերեճիք:

Գլխաւոր fաղաքներ. — Ա. Ատանայի մէջ.

1. Ատանա՝ Սիհոնի եզերքը, բարերար, բայց վատառողջ գաշտի մէջ. կեդրոն, ունէր չուխայի գործարան, բամբակի մանարան, աղօրիքներ, մետաղներու, փայտի ու պտուղի մեծ վաճառանոց: Հայերը շատ կարեւոր դերը մը ըրած էին:

Բ. Մերսինի մէջ.

1. Մերսին=Զեֆերոիոն՝ նշանաւոր նաւահանգիստ համանուն խորշին եզերքը: — 2. Դարսոս=Տարսոն՝ Կիւդնոսի եզերքը. ունի բազմաթիւ Հայկական ու արաբական հնութիւններ, ամառ բերդ. կ'արտադրէ ցորեն, գարի, բամբակ, մոմ, չուչմայ, տորմն: — 3. Այաս=Եգհէ՝ նաւահանգիստ բազմաթիւ աւերակներով: — 4. Միսիս=Մաւեսիա:

Գ. Իչիլի մէջ.

1. Սելեւկէ՝ կեդրոն, Կալիկադնոսի=Կէօքսուի եզերքը, աւերակներ: — 2. Էրմենեկ=Գերմանիկոպոլիս՝ Իսաւրիոյ մայրաքաղաքը, աւերակներ: — 3. Այաշ, մօտերն են Ելեւսիայի, Սաբաստի ու Կորիկոսի աւերակները: — 4. Մարա՝ Մեզրայի աւերակները: — 5. Քիլիսէրիա=Գալեներես՝ նաւահանգիստ, ունի աւերակներ: — 6. Մոբ=Զեւնուղոպոլիս՝ ամրութիւններ:

Դ. Գոզանի մէջ.

1. Սիս=Փլաւիոպոլիս՝ կեդրոն, Հայ քաղաք, աթոռ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, մայրաքաղաք Ռուբինեանց: Դեռ կը տեսնուին իր ամուր գղեակի աւերակները: Մօտերը կան Անարզաբայի և ուրիշ բերդերու աւերակները: — 2. Հաճին՝ բարձրաւանդակի (1576 մ.) վրայ, Հայաքաղաք. ունի երկաթի հարուստ հանք, կը վինէ ընտիր գէնքեր. չրչակայները լաւ մշակուած են: — 3. Կարս՝ ճարտարարուեստ քաղաք. մօտերը կան չորս ամուր գղեակներու աւերակներ:

Ե. Ճեպկի Պերեճեքի մէջ.

1. Եարբուզ՝ կեդրոն, անտառախիտ լեռներու մէջ: — 2. Օսմանիէ՝ փայտի վաճառականութիւն: — 3. Բայաս՝ հին Իսոսի մօտերը, Հայոց ծոցին եզերքը:

9. ՍՎԱՍ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — Սվաս կուսակալութիւնը կը գտնուի Գասդեմունիի, Դրապիզոնի, Էրզրումի, Մամուրէդ-իւլ-Ազիզի, Ատանայի ու Էնկիւրիի միջև:

Երկիրն ընդհանրապէս լեռնոտ է: Հիւսիսային ու արեւելեան լեռնաշղթաներուն վրայ ձմեռը խիստ ու երկար, ամառը՝ կարճ ու բարեխառն, հարաւային ու արեւմտեան երկրամասին մէջ՝ ձմեռը բարեխառն ու ամառը՝ շատ տաք:

Հողագործութիւնը բաւական ծագած է. կ'արտադրէ եգիպտացորեն, կորեկ, ընդեղէն, արմտիք, սպտուղ, դեղնիւս, գազի խեժ, ծխախոտ, աիիոն, կանեփ, մեղր, մեղրամոմ եւայլն: Ունի արծաթախառն կապար (Գաբահիսար), մարմարիոն ու լուսակիճ: Պղնձի, երկաթի, հանքածուխի, ձնեհողի=քաղէնի հանքեր ունի, բայց չեն շահագործուիր և բազմաթիւ հանքային ջուրեր: Դորգագործութիւն, գուլպայագործութիւն (Սվասի, Զաբա) բրդեղէն (Կիւրէն), դանակեղէն, ոսկերչութիւն

(*Սվաս*), բամբակեղէն (*Սվաս, Գարահիսար, Ամասիա, Մարզուան*), ջաղացպանութիւն (*Ամասիա*), պղնձագործութիւն ու խաղախորդարան (*Դոգաթ*), զգարաններ ու ներկագործութիւն (*քանի մը տեղեր*) կը կազմեն իր ճարտարարուեստը:

Կ'արտահանեն հողագործական բերքեր, ոչխար, ձի, մեղրամոմ, մեղր, գորգ, դանակեղէն: *Կը ներմուծեն* բրինձ, արմտիք, կերպասեղէն, մանր եւ կաթնեղէն ապրանք: Փոխադրութիւնը *կը կատարուի* կառքերով եւ ուղտերով:

2. ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄ. — *Սվաս կուսակալութիւնը կը բաժնուի* 4 *գաւառակի. Սվաս, Դոգաթ, Ամասիա, Գարահիսար:*

Գլխաւոր *քաղաքներ*. — Ա. Սվասի մէջ.

1. Սվաս=*Սեբաստիա՝ Գըզըլ Ըրմաղի մօտ, կեդրոն, վաճառաշահ ու ճարտարարուեստ քաղաք, Սև ծով—Եփրատ գետ կարաւաններու ճամբուն վրայ: Սվասի մօտ է Ս. Նշան վանքը ուր կը նստի Հայոց առաջնորդը:* — 2. *Զարա՝ Գըզըլ Ըրմաղի եզերքը, գորգ:* — 3. *Կիւրիճ՝ Զարա տափ եզերքը, ճարտարարուեստ կեդրոն:* — 4. *Տարեւնիկ:* — 5. *Տիվրիկ՝ գեղեցիկ դիրքով, վաճառաշահ քաղաք:*

Բ. Դոգաթի մէջ.

1. Դոգաթ=*Եւդոկիա՝ Դոզանըզի եզերքը, կեդրոն, ճարտարարուեստ ու վաճառաշահ քաղաք. ունի հին բերդ: Մօտերն են Ս. Յովակիմ Անանեայ ու Ս. Ոսկերերաց Հայ վանքերը:* — 2. *Դուրմայ՝ հնութիւններ:* — 3. *Հերեմ՝ հողագործական կեդրոն:* — 4. *Զիլ՝ պատմական քաղաք:* — 5. Նիկսար=*Նեոկեսարիա՝ Դայլ գետի եզերքը, ունի հնութիւններ:*

Գ. Ամասիոյ մէջ.

1. Ամասիա՝ *կեդրոն, բարեկեր գաւառի մը մէջ, նշանաւոր են պտուղներն ու հնութիւնները:* — 2. *Մարզուան՝ բամբակեղէն. մօտն է Զարխափան Ս. Աստուածածին վանքը:* — 3. *Վեզիր Քէօբրիւ՝ հողագործական կեդրոն:* — 4. *Օսմանճըզ՝ Գըզըլ Ըրմաղի եզերքը:* — 5. Լատիկ=*Լաւոդիկէ՝ գեղեցիկ անտառներ ունի:*

Դ. Գարահիսարի մէջ.

1. Շապին Գարահիսար՝ *վաճառաշահ քաղաք, հին բերդաքաղաք. ունի լքուած հանքեր:* — 2. *Մեհէս՝ հողագործական քաղաք:* — 3. *Դոդուղ Հիսար=Կոդոնիա:* — 4. Էնեներես=*Նիկոպոլիս՝ վաճառաշահ քաղաք:*

ԼՕ. ԴՐԱՊԻԶՈՆ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — *Դրապիզոն կուսակալութիւնը կը գտնուի Փոքր Ասիոյ հիւսիսային արեւելեան կողմը. Գաղամոնիի, Սև ծովու, Կովկասիոյ, Էրզրումի ու Սվասի միջև:*

Կլիման առողջ ու բարեխառն ներքին մասերուն մէջ, բայց ծովեզերքը՝ մեծ մասամբ վատառողջ: Երկրին $^1/_6$*ը մշակուած,* $^1/_5$*ը կորգ,* $^1/_5$*ն անտառ է, մնացածն ալ ապառաժուտ, տեղ տեղ արօտավայրեր:*

Գլխաւոր արտադրութիւնները են եգիպտացորեն, ցորեն, կաղին, ընկոյզ, վուշ, ծխախոտ, ընդեղէն ու պտուղ: Թէեւ չատ մետաղներ ունի, բայց չեն չահագործուիր: Իր ճարտարարուեստին մէջ նշանակելի են խաղախորդարանները, մուճակագործութիւնը, օճառագործութիւնը, կղմինտրագործները, ալիւսարանները, ոսկերչութիւնը, նաւաշինութիւնը:

Կ'արտահանեն եգիպտացորեն, կտաւատաց, գրաստ, կաղին, ընկոյզ, լոբի, մեղրամոմ, կորգ, տուախ կաշի: Կը ներմուծեն տարազագործուած ապրանք, մետաղներ, ապակեղէն, քարեղ կաշի: Փոխադրութիւնը տեղի կ'ունենայ ջորիներով եւ ուղտերով: Շատ քիչ խճուղի ունի:

2. ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄ. — *Դրապիզոն կուսակալութիւնը կը բաժնուի* 4 *գաւառակի. Դրապիզոն, Սամսոն, Կիւմիւշխանէ, Լազստան:*

Գլխաւոր *քաղաքներ*. — Ա. Տրապիզոնի մէջ.

1. Տրապիզոն՝ *կեդրոն, երբեմն նշանաւոր նաւահանգիստ, բայց հիմայ լճկած է: Նշանաւոր են միջնաբերդը, մզկիթներն որ մեծ մասամբ նախկին եկեղեցի էին, վիմափոր վանքը:* — 2. *Կիրասոն՝ նաւահանգիստ:* — 3. *Սիւրմէնէ՝ նաւահանգիստ:* — 4. *Դրիսպոլ, Օրմու, Բաղիւնա՝ նաւահանգիստներ:*

Բ. Սամսոնի մէջ.

1. Սամսոն=*Ամիսոս՝ կեդրոն, վաճառաշահ նաւահանգիստ. 20 տարիէ ի վեր հետզհետէ կ'աճի իր վաճառականութիւնը:* — 2. *Զարշամ-*



պա=Թեմիսխիրա՝ Իրխի եզերքը, բարեբեր դաշտի մէջ, վաճառաշահ քաղաք: — 3. Իւնիհ=Ոնեհ՝ նաւահանգիստ. ունի հնութիւններ: — 4. Ֆաբաա=Փաբիանեհ՝ նաւահանգիստ: — 5. Պաֆրա=Պաւրե, նշանաւոր է ծխախոտը: — 6. Դեւրեհ՝ վաճառաշահ քաղաք: — 7. Սզամար=Ղեւոնդոպոլիս՝ նաւահանգիստ:

Գ. Կիւմիւշխանեի մէջ.

1. Կիւմիւշխանե=Արգիւրոպոլիս՝ կեդրոն, ամիւիթեատրոնաձեւ երեք բլրի վրայ, բարեբեր դաշտի մէջ, Դանիել հին քաղաքին մօտերը: — 2. Շիրան ու Գելգիս:

Գ. Լազստանի մէջ.

1. Ռիզէ՝ գեղեցիկ դաշտի մէջ նաւահանգիստ, առեւտրին կեդրոնն է: — 2. Աղինա՝ փոքր նաւահանգիստ:

ԱՄՓՈՓՈՒՄ

